

150-78

891 71  
4-78



21





25 SEP 2006

Հարգելի տեղապահ Գրքարանային հասցեագր-  
հատվածի Բ ժողովարան 1911 թ. ԿՆՆՆՆՆՆՆՆ  
12-Ի, Բ ա. հզ. հոգևածիք:

891.71  
4-78

Վ. ԿԱՐԱԼԵՆՎՈ

*(Handwritten signature)*

այ.

50


# ԿՈՅՐ ԵՐԱԺԻՇՏ

(Է Տ Ի Ի Դ)

Printed in Turkey

ԹԱՐԳՄ. ՄՈՌՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

(Արտատպած „Ի. Ռ. Մ. Ս. Յ.“ հանդիսինց)



61

Թ Ի Ը Լ Ի Ս

Տպարան Մ. Շարածե եւ Ընկ., Նիկ. 21.

1901

4.05.2013

Дозволено цензурою, Тифлисъ, 11-го Февраля 1900 года.



2963  
39

## ՅԱՌԱՀԱՄԱՆԻ ՏԵՂ

«Այոյր երաժիշտը» վլադիմիր Կարայենկոյի ամենապատուական երկերից մէկն է: Ռուսաց մամուլը, բնականաբար, չէր կտրող անուշադիր թողնել այդ: Եւ արդարեւ «Այոյր երաժիշտը» ենթարկուեց քննադատութեան և գանուեցան շատ ձայներ, որոնք ուզում էին սպացուցանել, թէ վիպակը որպէս գեղարուեստական արտադրութիւն թէպէտ պատուական կերտուածք է, բայց որպէս հոգեբանական էտիւզ սխալ հիմքի վրայ է արժարժուած: Եւ հեղինակը իւր վիպակի վեցերորդ հրատարակութեանը կցել է մի քանի տող՝ «Հեղինակից» վերնագրով, որը պատասխան է իւր քննադատներին: Կարևոր եւ համարում այդ պատասխանն ամբողջովին առաջ բերել:

| Ձգում եմ, որ արդէն հինգերորդ տպագրութեամբ լոյս տեսած վիպակի մէջ յաւելուած անեյն ու փոփոխութիւններ մտցնելը բաւական անսպասելի բան է, ուստի և հարկաւոր է, որ այդ բանը բացազրեմ: Սոյն էտիւզիս հիմնական հոգեբանական շարժառիթը կազմում է մեր մարմնակազմի գէպի լոյսն ունեցած բնազդական ձգտումը: Դրանից է առաջանում հերոսիս հոգեկան ձգնաժամն ու դրա լուծումը: | Թէ բանաւոր և թէ վրաւոր հակաճառութիւնների մէջ շատ անգամ հանդիպել եմ մի այսպիսի պատասխանի, որ ըստ երևութիւն բոլորովին հիմնաւոր է՝ նրանց կարծիքով այդ շարժառիթը երբէք չէ լինում ի ծնէ կտրի մէջ, քանի որ նա երբէք լոյսը տեսած չլինելով, չպէտք է զգայ էլ զրկանք այն բանի, որի մասին տեղեկութիւն չունի: Այս ենթադրատութիւնն ինձ ուղիղ չէ թւում.— Մենք երբէք թուչունի պէս թուած չենք, բայց ամենքս էլ գիտենք, թէ ինչպէս երկար ժամանակ մանկական և պատանեկական երազներում թուչնու զգացողութիւնը ստացւում է: Սակայն պէտք է խոստովանուեմ, որ այդ շարժառիթը իմ էտիւզիս մէջ մտաւ միմիայն ենթադրութեամբ, լոկ երեակայութեան թելադրութեամբ: Միայն մի քանի տարի յետոյ, երբ էտիւզս արդէն մի քանի տպագրութեամբ լոյս էր տեսել, աջող գիպուածով, ու.

դիտրութեանս մէկի միջոցին, առիթ ունեցոյ այդ բանը խոր-  
ձով դիտելու: Նրկու տիպարները (կոյրը և ի ծնէ կոյրը), որ ըն-  
թերցողը տեսնելու է. Զ. գլխում, նրանց տարբեր արամտղու-  
թիւնը, մանուկների գիպուածը, Նգորի խօսքերը երազի հա-  
սին—այս բոլորը ևս ուզողի կեանքից եմ ընդօրինակել յիշա-  
տակարանիս մէջ: Տամբովի թեմում մի վանքի զանգակտան  
մէջ, ուր գուցէ դեռ այժմ էլ երկու կոյր ժամհարներն այց-  
լուներին զանգակատուն են աւաջնորդում: Այդ ժամանակից  
սկսած ամեն անգամ, որ վիպակս նոր տպագրութեամբ լոյս էի  
ընծայում, այս դէպքը—որը, իմ կարծիքովս յիշեալ խնդրի մէջ  
վճռական նշանակութիւն ունի—ծանրացած էր խղճիս վրայ, և  
միայն վերստին հին նիւթին ձեռք դարնելու դժուարութիւնն  
էր, որ ինձ արգելք էր լինում այդ կտորը մտցնելու էտիւդիս  
մէջ: Այժմ դա ներկայ հրատարակութեան մէջ մուծած յաւե-  
լուածների ամենաէական մասն է կազմում: Մնացածն աւաջա-  
ցաւ ինքն իրան, որովհետեւ մի անգամ որ ձեռք տուի հին նիւ-  
թին, չէի կարող բաւականանալ միմիայն մեքենական յաւե-  
լուածով, և երեակայութեան աշխատութիւնը, արդէն իւր նախ-  
կին ուղին դատած լինելով, բնականաբար պիտի արտայայտուէր  
նաև վիպակիս կից մասերի վրայ:

Աոյն թարգմանութիւնը կատարուած լինելով բնագրի վե-  
ցերորդ տպագրութիւնի, բնականաբար իւր մէջ պարունակում  
է նաև հեղինակի ակնարկած յաւելուածները, որոնք նախորդ  
տպագրութիւնների մէջ պահասում էին:

Ի վերջոյ պէտք է խոստովանուեմ, որ մի այնպիսի հոգե-  
բաշխման էտիւդ, որպիսին «Աոյր երաժիշտն» է, թարգմանելու  
համար բաւական դժուարութիւն կրեցի. գժբաղտաբար մեր աշ-  
խարհաբաշխութեան չափազանց աղքատ է ոչ միայն վերացա-  
կան գաղափարներ արտայայտելու, այլ և գեղարուեստական  
նկարագրի նրբութիւնները պատկերացնելու համար: /

Հեղինակը գրուածքի մէջ մի քանի տեղ մտցրել է ծանօ-  
թութիւններ, անկարեօր չհամարեցի մի քանի ծանօթութիւններ  
ևս ևս աւելացնել ընթերցողների դիւրութեան համար. իսկ վի-  
պակի Բ. գլխի XII պարբերութեան մէջ առաջ բերելով ժողո-  
վրդական երգի հատուածը հայերէն թարգմանութեամբ, աւե-  
լացրի նաև ռուսերէնը՝ մալառոսների լեզուի մասին մի ամե-  
նաչնչին գաղափար տալու դիտարութեամբ:

Թարգմանիչ.



## ԿՈՅՐ ԵՐԱԺԻՇՏ

(Էտիւդ)

Ա. ԳԼՈՒԽ.

### I

✓ Հարաւ-արեւմտեան Ռուսիայի հարուստ ընտանիք-ներից մէկում, մի խաւար գիշերուայ կիսին աշխարհ եկաւ մանուկը: Խորին մոռացութեան մէջ պառկած էր նորաւի մայրը. բայց երբ սենեակում լսուեց նորածին մանկան առաջին խաղաղ և վշտալի ճիչը, նա անկողնում աչքերը փակ պառկած տեղը սկսեց շարժուել: Մօր շրթունքները մի բան էին շշնջում. իսկ սրա քնքոյշ, համարեա դեռ մանկական գծազրուեթիւն ունեցող գէմքի վրայ երևաց տանջանքի անհամբեր շարժումներ, ինչպէս որ երևում է երես առած երեխի գէմքին, երբ իրեն համար մի անսովոր վիշտ է կրում:

Տատմէրը իւր ականջը խոնարհեցրեց նրա շրթունքներին, որ մի բան էին շշնջում: —

— Ինչո՞ւ... նա ինչո՞ւ է..., հաղիւ լսելի ձայնով հարցնում էր հիւանդը:

Տատմէրը հարցը չհասկացաւ: Մանուկը նորից

13  
—  
2. 20

ճշաց: Սուր տանջանքի ստուեր անցաւ հիւանդի երեսով և արտասուքի խոշոր կաթիլը դուրս ծորեցաւ նրա խուփ աչքերից:

— Ինչո՞ւ... ինչո՞ւ է... կրկին կամաց շշնջում էին նրա շրթունքները:

Տատմէրն այս անգամ հարցը հասկացաւ և հանդիստ պատասխան տուեց.

— Հարցնում էք, թէ ինչո՞ւ է երեխան լաց լինում: Միշտ այդպէս է լինում, հանգստացէք:

Բայց մայրը չհանգստացաւ: Եւ ամեն անգամ, որ մանուկը ճչում էր, նա ցնցւում էր և շարունակ ցատկոտ անհամբերութեամբ կրկնում.

— Ինչո՞ւ... այդպէս... այդպէս սարսափելի է:

Տատմէրը մանկան ճչի մէջ ոչ մի առանձին բան չէր նկատում և տեսնելով, որ մայրը կարծես անորոշ մոռացութեան մէջ է խօսում և հաւանականօրէն, ուղղակի գառանցում է, թողեց նրան ու սկսաւ երեխի հետ լինել:

+ Մանկամարդ մայրը լուեց և միայն ժամանակ առ ժամանակ մի ծանր տանջանք, որ ոչ մի շարժումով կամ խօսքով չէր կարող դուրս ժալթքել, արտասուքի խոշոր կաթիլներ էր քամում նրա աչքերից: Արտասուքը խիտ, սև արտևանունքի միջից դուրս ծորելով կաթիլ-կաթիլ, հանդարտ գլորւում էր նրա մարմարինի նման դժգոյն այտերի վրայով:

Գուցէ մօր սիրտը զգում էր, որ նորածին մանկան հետ աշխարհ էր եկել մի մութ, անփարատելի վիշտ, որը օրրանի վրայ կախուած՝ մինչև զերեզման պիտի ուղեկից լինէր այդ դեռաբոյս կեանքին:

Սակայն գուցէ և դա իրօք գառանցանք էր: Այսպէս թէ այնպէս երեխան կոյր ծնուեց:

II.

Սկզբում ոչ ոք չնկատեց այդ: Մանուկը նայում էր այն ազօտ և անորոշ հայեացքով, որով առհասարակ մինչև մի որոշեալ ժամանակ նայում են բոլոր նորածինները: Օրերը միմեանց ետևից անցնում էին. նորածինն արդէն մի քանի շաբթական էր: Նրա աչքերը պարզուեցան, հայեացքի պղտոր փառն անցաւ և բիբը որոշուեց: Բայց մանուկը գլուխը չէր դարձնում դէպի լուսաւոր ճառագայթի կողմը, որ թռչունների ուրախ ծղվղոցի ու հէնց պատուհանի առաջ, գիւղական խիտ սարտիզում տատանուող կանաչ աճարքենու սօսաւիւնի հետ թափանցում էր սենեակը: Մայրն արդէն առողջացել էր և առաջինն ինքն եղաւ, որ վրդովուած նկատեց մանուկի դէմքի տարօրինակ արտայայտութիւնը, որ անշարժ էր և մի տեսակ ոչ մանկական լըջութիւն ունէր:

Նորատի կինը սարսափահար տատրակի նման նայում էր մարդկանց երեսին ու հարցնում.

— Ասացէք, ինչո՞ւ նա այդպէս է:

— Ինչպէս է որ, — անտարբերութեամբ հարցնում էին կողմնակի մարդիկ: — Նա ոչնչով չէ տարբերում նոյն հասակի ուրիշ մանուկներից:

— Տեսէք, ինչպէս նա տարօրինակ կերպով ձեռներով մի բան է որոնում...:

— Դեռ ևս մանուկը չէ կարողանում իւր ձեռների շարժումները տեսութեան տպաւորութիւններին համակերպել, — պատասխանեց բժիշկը:

✓ — Բայց ինչո՞ւ միշտ մի ուղղութեամբ է նայում...: †  
Նա... նա... կո՞յր է, — յանկարծ մօր կրծքից դուրս պլրծաւ այդ սարսափելի կասկածը, և ոչ ոք չկարողացաւ նրան հանգստացնել:

Բժիշկը մանկանը իւր գիրկն առաւ, արագութեամբ լսի կողմը դարձրեց և աչքերին նայեցաւ: Նա թեթեակի շփոթուեց և մի քանի աննշան խօսքեր ասելով հեռացաւ՝ խոստանալով, որ երկու օրից կրկին կգայ:

Մայրը երեխին իւր կրծքին սեղմած լաց էր լինում ու զնդահար եղած թուչնի նման թրպրտում, իսկ մանկան աչքերը դարձեալ նոյն անշարժ և դժնի հայեացքն ունէին:

Բժիշկը, իրաւի, երկու օրից եկաւ իւր հետ բերելով նաև աչագէտ գործիք: Նա ճրագ վառեց, որը հեռացնում ու մօտեցնում էր մանուկի աչքերին, նայում էր նրանց և, վերջապէս, շփոթուած ասաց.

— Գժբազդաբար, տիկին... դուք չէք սխալուել...  
Արդարև մանուկը կոյր է և այն էլ՝ անբուժելի...:

Մայրը հանգիստ թախիժով լսեց այդ տեղեկութիւնը:

— Ես այդ վաղուց զիտէի, — ասաց նա կամացուկ:

### III

Այն ընտանիքը, որի մէջ աշխարհ եկաւ մանուկը, բազմանդամ չէր: Բացի իշեալ անձերից, նա բողկացած էր նաև հօրից ու »քեռի Մակսիմից«, ինչպէս անուանում էին նրան ամենքը՝ թէ տնեցիք և թէ նոյն իսկ օտարները: Հայրը նման էր Հարաւ-արևմտեան Ռուսիայի միւս հազարաւոր գիւղական կալուածատէրերին. նա մի բարեհոգի, կարելի է ասել բարի մարդ էր. լաւ պահում էր բանուորներին և շատ սիրում էր նոր ազօրիքներ շինել ու եղածները վերաշինել: Այդ զբաղմունքը համարեա թէ ամբողջովին խլում էր նրա բոլոր ժամանակը, ուստի և նրա ձայնը տան մէջ միայն չալտնի, որոշեալ ժամերին էր լսոււմ, որը պատահում էր ճաշին, նախաճաշին ու համանման դիպուածներում:

Սյդ ժամանակ նա միշտ այս միևնույն անփոփոխելի նախադասութիւնն էր կրկնում. «ինչպէս ես, հոգիս, լաւ ես», որից յետոյ սեղան էր նստում և այլ ևս համարեա թէ ոչինչ չէր խօսում և հազիւ երբեմն մի որ և իցէ տեղեկութիւն կը հազորդէր կաղնուց շինուած դլանի կամ ատամնաւոր անուռի մասին: Հասկանալի է, որ նրա խաղաղ ու անպաճոյճ գոյութիւնը շատ սակաւ պիտի արտայայտար իւր որդու հոգեկան կազմի վրայ:

Մինչդեռ քեռի Մակսիմը, զրա հակառակ, բոլորովին ուրիշ մարդ էր: Մեր նկարագրած դէպքից մի տասը տարի առաջ քեռի Մակսիմը ամենավտանգաւոր կռուարարի հռչակ էր վայելում ոչ միայն իւր կալուածքի շրջակայքում, այլ և Կիևի «կոնտրակտներում»<sup>1)</sup>: Քոլորն էլ զարմանում էին, թէ ինչպէս է եղել, որ ամենայն կողմից յարգելի մի ընտանիքի մէջ, ինչպիսին պաննի<sup>2)</sup> Պոպելսկու (ի ծնէ Յացենիո) ընտանիքն էր, մի այդպիսի սարսափելի եղբայր էր գուրս եկել: Ոչ ոք չգիտէր, թէ ինչպէս պէտք է նրա հետ վարուել և ինչով նրան հաճելի լինել: Պաների հաճոյախօսութեան նա կոպտութեամբ էր պատասխանում, իսկ շինականների վրայ մի այնպիսի կամայականութիւն էր բռնեցնում ու հետներն էլ այնպէս կոշտ վարուում, որ ամենախաղաղ շէտխտիչն<sup>3)</sup> անգամ անպատճառ ապտակներով կը պատասխանէր: Վերջապէս քեռի Մակսիմը, ի մեծ ուրախութիւն բոլոր բարեմիտ մարդկանց, չգիտեմ ինչ բանի համար սաստիկ զայրանալով Աւստ-

<sup>1)</sup> Տեղական բարբառով «կոնտրակտ» կոչում էր Կիևի երբեմն հռչակաւոր տօնավաճառանոցը: Ծ. 2.

<sup>2)</sup> Լեհերէն պան նշանակում է պարոն, աղայ, պաննի—տիկին և օրիորդ, պանիչ—տիրոջ որդի: Ծ. Թ.

<sup>3)</sup> Շէտխտիչ—լեհական ազնուական: Շէտխտիչները XV դարում սկսան գերակշիռ դեռ խաղալ իրենց երկրի պատմու-

րիացիները վրայ, գնաց Խտալիա. այնտեղ միացաւ իրեն նման խռովարար ու հերետիկոս Գարիբալժուն, <sup>1)</sup> որը, ինչպէս տեղական կալուածատէր—պաները զարհուրելով պատմում էին, սատանայի հետ եղբայրացած նոյն իսկ «պապեթին» <sup>2)</sup> կոպէկի նշանակութիւն չէր տալիս: Իհարկէ, Մակսիմն այսպէսով լաւիտենական կորըստի մատնեց իւր անհանգիստ ու աղանդաւոր հոգին, բայց դրա փոխարէն «կոնտրակտները» նուազ անկարգութիւններով էին վերջանում, իսկ շատ ազնիւ մայրիկներ էլ դադարեցան իրենց գաւազները վիճակի մասին անհանգիստ լինելուց:

Երևի աւտորիացիներն էլ խիստ զայրացած էին քեռի Մակսիմի վրայ: Ժամանակ առ ժամանակ, կալուածատէր-պաների ի հնուց անտի սիրելի «Համբաւաբեր» լրագրի հաղորդած տեղեկութիւնների մէջ Գարիբալժուն ամենայանդուզն մարտիկների թւում լիշուում էր նաև քեռի Մակսիմի անունը, մինչև որ վերջապէս մի անգամ էլ պաները նոյն «Համբաւաբերից» տեղեկացան, որ նա իւր ձիով ընկել է պատերազմի դաշտում: Կատաղած աւտորիացիները, որ հաւանօրէն, վաղուց արդէն ատամ էին սրած այդ վնասաբեր վոլնցու <sup>3)</sup> վրայ (համարեա որի շնորհիւ, իւր հայրենակիցների ասելով, դեռ ևս կանգուն էր մնում Գարիբալժին), դմակի նման թիքայ-թիքայ էին արել նրան:

---

Թեան մէջ և հայրենիքի կործանման պատճառ դարձան սոսկալի երկպառակութիւն ձգելով: Ծ. Թ.

<sup>1)</sup> Գարիբալժին Խտալիայի ազատութեան և միութեան ամենանշանաւոր հերոսներից մէկն է. ծն. 1807 թ. վախճան. 1882 թ.

<sup>2)</sup> «Պապեթ», պապ, կաթոլիկ եկեղեցու պետը: Ծ. Թ.

<sup>3)</sup> Վոլըյն—հնում առանձին իշխանութիւն էր. միայն 1793 թ. անցաւ Ռուսիայի տիրապետութեան տակ. ներկայումս Վոլընսկայա նահանգի մեծ մասն է կազմում: Ծ. Թ.

— Վատ վախճան ունեցաւ Մակսիմը, — ասացին պաներն ու այդ բանը վերագրեցին սուրբ Պետրոսի յատկապէս դէպի իւր տեղակալը ցոյց տուած հովանաւորութեանը: Մակսիմին մեռած էին համարում:

Բայց բանից երևաց, որ աւստրիական թրերն անկարող էին եղել Մակսիմի միջից դուրս վանելու նրա յամառ հոգին, որը մնացել է նրա, թէև սաստիկ վնասուած, մարմնի մէջ: Քարիբալդու խռովարարներն իրենց արժանաւոր ընկերակցին դուրս էին բերել կոտորածից, մի տեղ հիւանդանոց տարել, և ահա, մի քանի տարուց լետույ, Մակսիմն անակնկալ կերպով եկաւ իւր քրոջ տունն, ուր և մնաց:

Այժմ արդէն մենամարտներն այլ ևս նրա բանը չէին: Նրա աջ ոտը բոլորովին կտրուած էր, ուստի և անթացուպով էր ման գալիս, իսկ ձախ ձեռքը վնասուել ու միայն մի կերպով ձեռնափայտին լենուելու էր պէտք գալիս: Նոյն իսկ ինքն աւելի լրջացել, խաղաղ բնաւորութիւն էր ստացել. և դեռ սուր լեզուն էր միայն, որ դեռ ևս ժամանակ առ ժամանակ անվրէպ գործում էր, ինչպէս երբեմն իւր սուրը: Նա «կոնտրակտներ» գնալուց դադարեց, հասարակութեան մէջ շատ քիչ էր մտնում և ժամանակի մեծ մասն անց էր կացնում իւր ընթերցարանում գրքեր կարդալով, որոնց մասին ոչ ոք ոչինչ չգիտէր, միայն ենթադրում էին, թէ պէտք է որ դրանք անաստուածական գրքեր լինէին: Նա մի բան էլ էր գրում, բայց որովհետև այդ գրուածքներն երբէք տեղական „Համբաւաբերի“ մէջ լոյս չէին տեսնում, ուստի և ոչ ոք լուրջ նշանակութիւն չէր տալիս դրանց:

Այն միջոցին, որ նոր էակը աշխարհ եկաւ գիւղական տան մէջ ու սկսեց աճել, արդէն արծաթագոյն ակիքը նոր-նոր սկսել էր երևալ քեռի Մակսիմի կարճ

խուզած մազերի մէջ: Անթացուպերի անընդհատ ճշն-  
շումից նրա ուսերը վեր էին բարձրացել, մարմինը քա-  
ռակուսի ձև ստացել: Նրա օտարոտի կերպարանքը,  
կիտած խոժոր յօնքերը, անթացուպերի թրխոցը, ծխա-  
խտի ծխի բարդերը, որոնցով նա միշտ շրջապատուած  
էր, որովհետև չիբուխը բերանից չէր բաց թողնում, —  
այս ամենը վախեցնում էր կողմնակի մարդկանց. միայն  
այդ անկար զինուորականին մօտիկ անձերը զիտէին,  
որ նրա այդ կտրատուած մարմնի մէջ բարի ու ջերմ  
սիրտ է բաբախում, իսկ խիտ ու կոշտ մազերով ծած-  
կուած քառակուսի մեծ գլխի մէջ գործում է անհասն-  
գիստ միտքը:

Սակայն նոյն իսկ մօտիկ անձերն էլ չէին իմանում,  
թէ այդ միջոցին ինչ խնդրով էր զբաղուած նրա միտ-  
քը: Նրանք միայն տեսնում էին, որ քեռի Մակսիմը,  
կապոյտ ծխով շրջապատուած, երբեմն ամբողջ ժամեր,  
միգամած հայեացքով ու խիտ յօնքերը խոժոռ կիտած,  
անշարժ մնում էր նստած: Մինչդեռ հաշմանդամ մար-  
տիկը մտածում էր, թէ կեանքը կռիւ է և նրա մէջ  
անկար մարտիկների համար տեղ չկայ: Նա մտածում  
էր, թէ ինքն առ միշտ դուրս է ընկած մարտիկների  
շարքից և աւելորդ բեռն է դարձել վիրաւորեալների  
կառքի մէջ. նրան թւում էր, թէ ինքը նման է մի  
ասպետի, որին կեանքը ձիուց գլորելով հողին է հաւա-  
սարացրել: Միթէ փոքրոգութիւն չէ՞ ոտնատակ զնա-  
ցած սողունի նման փոշու մէջ թաւալելը. փոքրոգու-  
թիւն չէ՞ յաղթականի ասպանդակը բռնած՝ նրանից իւր  
սեփական գոյութեան թշուառ մնացորդը աղերսազին  
խնդրել:

Մինչ քեռի Մակսիմը սառնասիրտ արիութեամբ  
քննում էր այս հրատապ միտքը՝ կշռադատելով ու հա-  
մադրելով բոլոր թեր ու ղէմ փաստերը, նրա աչքերի

առաջ սկսեց առփայլել նոր էակը, որին ճակատագիրն արգէն իսկ որոշել էր անկար ծնուել: Սկզբում նա ուշադրութիւն չէր դարձնում կոյր երեխայի վրայ, բայց լետոյ, երեխայի ու իւր սեփական վիճակի տարօրինակ նմանութիւնը հետաքրքրեց նրան:

— Զը՛մ... հը՛, — մտախոհ ասաց նա աչքի ծայրով երեխային նայելով, — սա նոյնպէս անկար զինուոր է: Եթէ երկսիս միացնէին, իցէ թէ մի բանի պիտանացու մարդուկ դառնայինք:

Այնուհետեւ նրա հայեացքն աւելի ու աւելի յաճախ սկսեց կոնգ առնել երեխայի վրայ:

#### IV

Երեխան կոյր ծնուեց: Ո՞վ էր նրա զժբաղդութեան պատճառը: Ոչ ոք: Այստեղ ոչ միայն ում և իցէ «չար կամքի» ստուերն իսկ չկար, այլ և հէնց զժբաղդութեան պատճառն էլ ծածկուած է կեանքի խորհրդաւոր և բարդ գործառնութիւնների մէջ, մի խոր տեղ: Մինչգեւ ամեն անգամ, որ մայրը իւր կոյր որդուն չէր մտիկ տալէս, սիրտը սուր ցաւից մորմոքում էր: Ի հարկէ, սոյն դէպքում նա տանջւում էր որպէս մայր, որ իւր զաւակի արատին կարեկից էր լինում և մռայլ կերպով նախազգում այն ապագան, որ սպասում էր մանուկին: Սակայն բացի այս նախազգացումից նորատի կնոջ սրտի խորքում մարմաջում էր նաև այն գիտակցութիւնը, թէ զժբաղդութեան պատճառը, որպէս ահաւոր հնարաւորութիւն, գտնուում էր նրանց մէջ, որոնք կեանք էին տուել նրան...: Այսքանս բաւական էր, որ գեղեցիկ, բայց լուսազուրկ աչքերով փոքրիկ էակը ընտանիքի կեդրոնը, նրա անգիտակցական բռնակալը դառնար և տան մէջ ամեն բան նրա ամենամանր քմահաճոյքներին յարմարէր:

Ո՛վ գիտէ ժամանակով ինչ դուրս գար այդ երե-  
խայից, որ իւր քամբախտութեամբն արդէն անառիթ  
ցասկոտութեան էր տրամադրուած, և որի մէջ բոլոր  
շրջապատողներն էլ ձգտում էին եսամոլութիւն գար-  
գացնել, եթէ որ տարօրինակ ճակատազիրն ու աւստ-  
րիտական սրերը քեռի Մակսիմին չստիպէին գիւղ՝ իւր  
քրոջ մօտ տեղափոխուել:

Տան մէջ կոյր մանուկի ներկայութիւնը աստիճա-  
նաբար և անզգալապէս ուրիշ ուղղութիւն տուեց հաշ-  
մանդամ մարտիկի գործունեայ մտքերին: Նա դարձեալ  
ամբողջ ժամեր նստում էր չիբուխը ծխելով, բայց այժմ  
նախկին խոր և բուրբ ցաւի տեղ նրա աչքերի մէջ  
հետաքրքիր դիտողի խորաքննին արտայայտութիւն էր  
երևում: Եւ որքան քեռի Մակսիմը ուշ ուշով դիտում  
էր, այնքան յաճախ խոժոռում էին նրա խիտ լոնքե-  
րը և նա աւելի սաստիկ էր փուհ-փուհացնում իւր չի-  
բուխը: Վերջապէս նա մի անգամ վճռեց միջամտել.

— Այս երեխան, — ասաց նա ծուխն օղակ-օղակ  
թողնելով, — ինձանից անհամեմատ աւելի դժբաղդ է  
լինելու: Երնէկ ծնուած չլինէր:

Նորատի կինը գլուխը կտխ գցեց և արտասուքի  
կաթիլը գլորուեց նրա ձեռագործի վրայ:

— Քու կողմից խստասրտութիւն է, որ ինձ լիշեց-  
նում ես այդ, Մակս, — ասաց նա ցած ձայնով. — Առանց  
նպատակի լիշեցնել...

— Ես ճշմարտութիւնն եմ ասում, — պտտասխա-  
նեց Մակսիմը: — Ձեռք ու ոտք չունիմ, բայց աչք ու-  
նիմ: Երեխան աչք չունի, իսկ ժամանակով էլ ոչ ձեռք  
կունենայ, ոչ ոտք, ոչ կամք...

— Ինչո՞ւ:

— Հասկացիր միտքս, Աննա, — աւելի քնքշութեամբ  
ասաց Մակսիմը: — Ի գուր տեղը քեզ խիտ բան չեմ

ասիւ: Երեխան ջղային նուրբ կազմուածք ունի: Առայժմ դեռ ամենայն հաւանականութիւն կայ նրա միւս ընդունակութիւններն այն աստիճանի զարգացնելու, որ գէթ մասամբ կարող լինին նրա կուրութեան փոխարինել: Բայց դրա համար վարժութիւն է հարկաւոր, իսկ վարժուել կարելի է միմիայն անհրաժեշտութիւնից ստիպուած: Անմիտ հոգածութեամբ նրանից խլուած է ուժգնութիւն գործ դնելու անհրաժեշտութիւնը, որով ոչնչանում է նրա մէջ եղած առաւել կատարեալ կեանք ունենալու հաւանականութիւնը:

*Մշտ.* Մակսիմի քոյրը խելացի կին էր, ուստի և կարողացաւ զսպել իւր մէջ այն անմիջական դրդմանը, որը, մանուկի ամեն մի ճիչը լսելիս, նրան ստիպում էր գլխապատառ դէպի նա վազել:

Այս խօսակցութիւնից մի քանի ամիս յետոյ երեխան ազատ և արագ չոչ էր անում սենեակներում, ամեն մի ձայնի վրայ ահանջը սրում և մի տեսակ, ուրիշ երեխաներին ոչ-յատուկ արագութեամբ շօշափում էր ձեռքն ընկած ամեն մի առարկայ:

## V

Նա շատ շուտով սկսաւ իւր մօրը ճանաչել նրա քայլուածքից, շորի խշշոցից և էլի մի տեսակ, միայն իրեն մատչելի, իսկ ուրիշներին անըմբռնելի նշաններից. — որքան ուզում է սենեակում մարդ լինէր, սր կողմն ուզում է տեղափոխուէին, դարձեալ նա միշտ առանց վրիպելու այն կողմն էր ուղղուում, ուր որ իւր մայրն էր նստած լինում: Երբ որ մայրն անակնկալ կերպով խտտում էր նրան, նա իսկոյն հասկանում էր, որ մօր գրկուածն է: Բայց երբ ուրիշներն էին խտտում, մանուկը իւր թաթիկներով արագապէս շօշափում էր իրեն գրկողի դէմքը. նա նոյնպէս շուտով ճանաչում

էր զայեակին, քեռի Մակսիմին, հօրը: Իսկ երբ անծանօթ մարդու ձեռք էր ընկնում, այն ժամանակ մանրիկ ձեռների շարժումներն աւելի դանդաղանում էին. երեխան զգուշութեամբ և ուշադրութեամբ ձեռները ման էր ածում անծանօթ դէմքի վրայով և այդ միջոցին նրա դէմքի գծերը լարուած ուշադրութիւն էին արտայայտում. նա, ասես թէ, իւր մատներէի ծայրիկներով խորամուխ եղած «մտիկ էր տալիս»:

Նա բնութեամբ շտտ առոյգ և աշխոյժ երեխայ կը դառնար. բայց ամիսները յաջորդում էին իրար և կուրութեան կնիքը աւելի ու աւելի դրոշմւում էր յանկան խառնուածքի վրայ, որ սկսել էր որոշ կերպարանք ստանալ: Եարժումների աշխուժութիւնը կամաց-կամաց անհետանում էր. նա սկսեց առանձնացած անկիւններ քաշուել, ուր ամբողջ ժամեր նստում էր հանգիստ, դէմքի գծերը սառած, ասես թէ մի բանի ականջ դնելիս լինէր: Երբ սենեակում խաղաղ էր լինում և իրար փոխանակող բազմազան ձայները նրա ուշադրութիւնը չէին գրաւում, նա, վարտամունքն ու ապշութիւնը իւր գեղեցիկ և ոչ-մանկական լուրջ դէմքին, կարծես թէ մի բան էր խորհում:

Քեռի Մակսիմը գլխի ընկաւ, մանուկի ջղալին նուրբ և հարուստ կազմուածքը գեր ի վեր էր հանդիսանում և ասես թէ շօշափման ու լսելիքի զգայութիւնների ըմբռնողութեամբ ձգտում էր մի որոշ չափով իւր տպաւորութիւնների պակասորդը լրացնել: Նրա շօշափողութեան զարմանալի նրբութիւնն ապշեցնում էր բոլորին: Մինչև անգամ ժամանակ-ժամանակ այնպէս էր թւում, թէ նոյն իսկ գոյների ըմբռնողութիւնն էլ օտար չէր նրա համար՝ երբ նրա ձեռքը պայծառ գոյնի կտորտանք էին ընկնում, նա իւր բարակ մատներն աւելի երկար էր պահում նրանց վրայ

և զարմացած ուշադրութեան արտայայտութիւն էր անցնում նրա դէմքի վրայ: Սակայն, ժամանակ անցնելով, աւելի ու աւելի պարզուեց, որ առաւելապէս նրա ականջի ըմբռնողութիւնն է զարգանում: Նա շուտով կատարելապէս ուսումնասիրեց սենեակները՝ նրանց արձակած ձայներից, զանազանում էր տնեցիների քայլուածքը, անկար զինուորական քեռու աթոռի ճրոճը ու ճրոցը, իւր մօր ձեռքի դերձանի համաչափ, խուլ շշուկը, պատի ժամացույցի համահաւասար չիչխկոցը: Երբեմն, պատի երկարութեամբ սողալով, ուշադրութեամբ ականջ էր դնում ուրիշների համար անլսելի թեթեւ շշուկին և ձեռքը բարձրացնելով մեկնում էր պատի ծաղկաթղթի վրայ վազող ճանճի ետևից: Երբ ճանճը վախեցած վեր էր կենում տեղից և թռչում էր, ցաւագար տարակուսանքի արտայայտութիւն էր երեւում կոյրի երեսին: Նա չէր կարողանում ճանճի խորհրդաւոր անհետացման մասին հաշիւ տալ իրեն: Բայց վերջերին այդպիսի դէպքերում էլ նրա դէմքը պահպանում էր խելացի ուշադրութեան արտայայտութիւնը. նա գլուխը շուռ էր տալիս ճանճի թռած կողմը. նրա սուր ականջն իսկոյն ըմբռնում էր օդի մէջ ճանճի թևերի պատճառած նուրբ ձայնը:

Կոյրին շրջապատող ցուրտն, հնչող ու շարժուն աշխարհը գլխաւորապէս ձայնի ձևով էր թափանցում նրա փոքրիկ գլխի մէջ և այդ ձևերով էլ ձուլւում էին նրա մտապատկերները: Մի առանձին արտայայտութիւն սառչում — մնում էր նրա դէմքի վրայ, այնպիսի արտայայտութիւն, որ բնորոշ է լսելու համար լարուած ուշադրութեանը՝ ներքին ծնօտը թեթեւակի ձգւում էր, յոնքերը կիտւում, գլուխը խոնարհում ու երկարած բարակ վզի վրայ առաջ մեկնում: Այդ միջոցին գեղեցիկ, բայց անշարժ մնացած աչքերը մի տե-

սակ դժնի և միանգամայն սրտաշարժ տեսք էին տալիս կոյրի դէմքին:

## VI

Կոյր մանկան կեանքի երկրորդ ձմեռը իւր վախճանին էր մօտենում: Գուրսը ձիւնն արդէն հալւում էր, գարնանային վտակները խոխոջում էին, իսկ միւնոյն ժամանակ մանուկն էլ, որ ամբողջ ձմեռը տկարութեան պատճառով սենեակից չէր դուրս եկել և մաքուր օդի երես չէր տեսել, սկսաւ կազդուրուել:

Պատուհանների երկրորդ փեղկերը վերցրին և գարունը կրկնապատկած ուժով ներս խուժեց սենեակը: Գարնանային զեղածիժաղ արեգակը նայում էր լուսազեղ պատուհաններից, աճարքենու տակաւին մերկ ճիւղերն օրօրւում էին. հեռուն սեին էին տալիս՝ արտերը, որոնց վրայ տեղ-տեղ երևում էին հալչող սպիտակ ձիւնի բծերը, իսկ տեղ-տեղ էլ հազիւ նշմարելի կերպով երևում էր նորածիլ կանաչ արօտը: Ամենայն ինչ առաւել ազատ և ուրախ էր շնչում, ամենքի վրայ էլ գարունը վերանորոգուած և կենսական առույգ ոյժի հոսանք էր արտափայլում:

Կոյր մանուկի համար գարունը միայն իւր ձեւընթաց աղմուկի ձևով էր սենեակ մտնում: Նա լսում էր, թէ ինչպէս գարնանային ջրերից կազմուած վտակները քարերի միջից թռչկոտալով, սսես թէ իրար ետեւից ընկած, վազում էին փափկած հողը խոր պեղելով. պատուհանների միւս կողմը աճարքենիքն իրար ընդհարուելով շշնջում էին միմեանց հետ և ապակիներից թեթևակի դիպչելուց չիկչիկում: Իսկ տանիքից կախ ընկած սառցի կտորներից թափուող գարնանային կաթիլները, որ առաւօտեան վերահաս ցրտից սառել ու այժմ արևից հալուել էին, հազարաւոր հնչուն ձայներ

արձակելով շտապ-շտապ զլորւում էին ցած: Այս ձայ-  
ները սենեակն էին թափանցում նման յատակի վրայ  
շաղ ձգուող պայծառ ու քաջահնչիւն մանրիկ քարի  
կտորտանքի, որ արագօրէն միաձուլւող բեկբեկ ձայ-  
ներ են արձակում: Ժամանակ առ ժամանակ այս աղ-  
մուկի ու զողանջիւնների միջով հեռաւոր բարձունքից  
ներդաշնակ կերպով հասնում էին կռունկների կռն-  
չիւնն ու կամաց-կամաց լռում. հէնց իմանաս հան-  
դարտ հալուելիս լինէին օդի մէջ:

— Բնութեան այս վերակենդանացումը ցաւագար վա-  
րանմունքի ձևով էր արտայայտւում մանուկի գէմքի  
վրայ: Նա ճիգ թափելով կիտում էր լոնքերը, վիզը  
ձգում, ախանջ դնում և այնուհետև, կարծես ձայների  
անհասկանալի խռնումից խռովուած, լանկարծ, մօրը  
որոնելով, մեկնում էր ձեռքը և գիրկն ընկնելով պինդ  
սեղմւում նրա կրծքին:

— Այս ինչ է եղել սրան, — հարցնում էր մայրն  
ինքն իրեն և ուրիշներին:

Քեռի Մակսիմն ուշադրութեամբ դիտում էր մա-  
նուկի գէմքը և չէր կարողանում բացադրել նրա ան-  
հասկանալի վրդովմունքը:

— Նա... չէ կարողանում հասկանալ, — գլխի էր  
ընկնում մայրը՝ իւր որդու գէմքին ցաւագար վարան-  
ման և հարցական արտայայտութիւն նկատելով:

Սրդարև խռովուած ու անհանգիստ էր երեխան.  
նա մերթ աշխուժով նոր հնչիւններ էր ըմբռնում,  
մերթ զարմանում, որ առաջուայ հնչիւնները, որոնց  
նա արդէն սկսել էր ընտելանալ, լանկարծ լռում էին  
և զնում մի տեղ կորչում:

## VII

Պարնանային խառնափնթորութեան քաօսը լռեց:

Արևի ջերմ ճառագայթների տակ բնութեան աշխատանքն աւելի ու աւելի կանոնաւոր ընթացք էր ստանում. կեանքն ասես թէ լարւում էր. նրա առաջխաղաց ընթացքն աւելի սրարշաւ էր դառնում՝ երկաթուղու ճեպընթաց գնացքի նման: Նորաբոյս արօտն սկրսեց մարգագետիններում կանաչել. կեչու կոկոնների հոտը փռուել էր օդի մէջ:

Որոշեցին մանկանը մօտակայ գետի ափը՝ դաշտ տանել: Մայրը իւր որդու ձեռքիցն էր բռնած: Կողմից, իւր անթացուպերին հեցած, գնում էր քեռի Մակսիմը. նրանք դէպի գետափնեայ բլրակն էին դիմում, որն արդէն բաւական չորացել էր արևից ու քամուց: Բլուրը խիտ արօտի դալարի մէջ ծփում էր, այդ տեղից մարդու առաջ բացւում էր հեռաստանի տեսարանը:

Պայծառ օրուայ լոյսը խփեց մօր և Մակսիմի աչքերին: Արևի ճառագայթները տաքացնում էր նրանց դէմքը. գարնանային քամին, կարծես իւր աներևութ թևերը տատանելով քշում, հեռացնում էր այդ ջերմութիւնը և նրա տեղ թարմ զովութիւն տալիս: Օդը յագեցած էր մի բանով, որ քնքշանքի, խոնջութեան աստիճան արբեցուցիչ էր:

Մայրն զգաց, թէ ինչպէս մանկան փոքրիկ ձեռքը պինդ սեղմուեց իւր ձեռքի մէջ, բայց գարնան արբեցուցիչ հունչը նրան նուազ զգալուն էր դարձրել այս մանկական յուզման արտայայտութեան համար: Նա լիակուրծ ~~էր~~ էր և առանց լետ նայելու առաջ գնում: Ստիպւն եթէ նա ետևը դառնար, մի օտարոտի արտայայտութիւն պիտի տեսնէր մանկան դէմքի վրայ: Երեխան համր ապշութեամբ իւր բաց աչքերը դէպի արևն էր դարձնում: Նրա շրթունքները բացուել էին, նա ջրից հանած ձկան նման, արագ ամպե-

րով կուլ էր տալիս օդը. մերթ ընդ մերթ ցաւազար  
հիացման արտայայտութիւնը դուրս էր ցայտում նրա  
անօգ-շուար գէմքի վրայ, մի տեսակ նեարդային բաղ-  
խումներով անցնում էր գէմքի վրայից՝ առ վայրկեան  
մի լուսաւորելով նրան, և անմիջապէս նորից տեղի  
տալիս երկիւղի և անզիտակ հարցման աստիճանին հա-  
սած զարմացման արտայայտութեան: Միայն աչքերն էին  
միևնույն միապաղաղ և անշարժ անլոյս հայեացքով մը-  
տիկ տալիս:

Բլրակին հասնելով երեքն էլ միասին նստան գետ-  
նին: Երբ մայրը մանկան աւելի յարմարաւոր կերպով  
նստեցնելու դիտաւորութեամբ նրան բարձրացրեց գետ-  
նից, մանուկը դարձեալ ջղաձգաբար նրա շրջագոգեստից  
բռնեց. ասես թէ նա իւր տակ հող զգալիս չլինէր և  
վախենում էր, թէ մի գուցէ մի տեղ գահավէժ լինի:  
Բայց մայրն այս անգամ էլ չնկատեց նրա խռովայոյգ  
շարժումը, որովհետև նրա աչքերն ու ուշադրութիւնը  
գարնանալին հրաշալի պատկերին էին յառած:

Կէս օր էր: Կապոյտ երկնակամարի վրայ հանդարտ  
գլորում էր արևը: Բլրից, ուր նրանք նստած էին,  
երևում էր սաստիկ յորդացած գետը. նա արդէն քշել  
տարել էր իւր սառցի կտորները և միայն ժամանակ  
առ ժամանակ ջրի երեսին տեղ-տեղ լողում ու հալչում  
էին նրանց վերջին մնացորդները, որ սպիտակ բծի  
նման աչքի էին ընկնում: Փոս ընկած մարգագետիննե-  
րում ջուրը լցուած՝ ընդարձակ ծովածոցեր էր կազմել.  
փոքրիկ սպիտակ ամպերը շուռ ընկած կապուտակ երկնա-  
կամարի հետ արտափայլելով նրանց մէջ, հանդարտ  
լողում էին ջրի խորքում ու անհետանում, ասես թէ  
նրանք էլ սառցի բեկորների նման հալչելիս լինէին:  
Երբեմն-երբեմն արևի տակ լողալով սահում, անցնում  
էր քամուց առաջացած թեթև ծուփը: Հեռուն, գետի



միւս կողմը. սեւին էին տալիս ցեղերը, որոնցից բարձ-  
րացող գոլորշին տատանուտ ու թափանցիկ մշուշ կազ-  
մելով ծածկում էր թէ հեռուն գտնուած յարդածածկ  
խրճիթները և թէ սեւին աուող անտառի կապոյտ շեր-  
տը: Կարծես երկիրը շունչ էր առնում, և նուիրական  
խնկան ծխի նման բարդ-բարդ մի բան վերառաքում  
դէպի երկինք:

Բնութիւնը, որպէս տօնախմբութեան համար պա-  
տրաստուած մեծ տաճար, փռուել էր շուրջանակի: Սա-  
կայն կոյրի համար դա անպարփակելի խաւար էր մի-  
այն, որ անսովոր կերպով լալեկոծւում, շարժւում, դը-  
ղորդ հանում և հնչում էր իւր շուրջը՝ ձգուել-երկա-  
րելով դէպի նա, ամենայն կողմից հպելով նրա հոգուն  
դէռ շփորձած, անսովորական տպաւորութիւններով,  
որոնց զեղումից ցաւազար բաբախում էր մանկական  
սչրտը:

Հէնց առաջին քայլի ոխից, որ տաք օրուայ ճա-  
ռագայթները նրա երեսին դիպան, քնքուշ մորթը տա-  
քացրին, նա իւր անլոյս աչքերը դէպի արևն էր դարձ-  
նում կարծես զգալով, թէ դէպի սր կեղրոնն է ձրգ-  
տում իրեն շրջապատող ամենայն ինչ: Նրա համար ոչ  
այս թափանցիկ հեռաստանը գոյութիւն ունէր, ոչ կա-  
պուտակ երկնակամարը, ոչ լայնածաւալ հորիզոնը: Նա  
միայն զգում էր, թէ ինչպէս մի տեսակ նիւթական,  
փաղաքուշ և ջերմ բան քնքուշ, տաքացնող հպումով  
շօշափում էր իւր դէմքը: Այնուհետև զովարար և թե-  
թե մէկը, թէև աւելի նուազ թեթեւ քան արևի ճա-  
ռագայթների ջերմութիւնը, իւր դէմքից հեռացնում  
էր այդ քնքշանքք և թարմ զովութիւն պատճառելով  
անցնում նրա վրայից: Մանուկը սենեակներում շուր-  
ջանակի դատարկութիւն զգալով՝ վարժուած էր ազատ  
շարժուելու: Բայց այստեղ նրան պատեցին մի տեսակ

մերթ քնքշաբար գուրգուրող, մերթ խտուտ ածող ու արբեցուցիչ ալիքներ, որոնք զարմանալի կերպով լաջորգում էին իրար: Ասես թէ մէկը արագութեամբ հալածելիս լինէր արևի տաքացնող հպումները, մինչ քամու հոսանքը (հնչելով նրա ականջի մէջ՝ շրջապատում էր նրա դէմքը, քունքերը, գլուխը՝ մինչի ծործորակը, շրջապատում էր նրան չորս բոլորքից. կարծես թէ աշխատում էր խլել մանուկի գիտակցութիւնը և մոռացութեան խոնջութիւն ձգելով վրան՝ ընդգրկել նրան, յափշտակել, տանել տարածութեան մէջ մի տեղ, որ ինքը չէր տեսնում սակայն: Ս. հա այդ ժամանակ երեսի ձեռքը պինդ սեղմում էր մօր ձեռքը, իսկ սիրտը մարում էր և, ասես թէ հենց այն է՝ բաբախելուց պիտի դադարի բոլորովին:

Երբ նրան նստացրին, փոքր ինչ հանգստացաւ կարծես: Այժմ, չնայելով որ նրա ամբողջ էութիւնը լցուած էր տարօրինակ զգացողութեամբ, բայց և այնպէս կարծես թէ սկսել էր առանձին հնչիւնները տարբերել: Մութ, գուրգուրող ալիքներն անարգել սլանում էին առաջուայ պէս և նրան թւում էր, թէ դրանք մտնում են իւր մարմնի ներսը, որովհետև իւր և եկող արեան բաբախումներն այդ ալիքների բաղխումների հետ էին բարձրանում ու իջնում: Բայց այժմ դրանք մերթ արտուտի պայծառ գեղգեղանքն էին բերում իրենց հետ, մերթ կանաչած փոքրիկ կեչու մեղմ սօսաւիւնը և մերթ գետի հազիւ լսելի ճղփիւնը: (Ծիծեռնակը մօտակայքում զարմանազան բոլորակներ գծելով օդի մէջ՝ սուլում էր թեթև թևով, տղզում էին մըթ. զուկներն և այս ամենի վրայից երբեմն-երբեմն լսում էր գութանաւորի երկարաձիգ ու տխուր հորովէլը) որ կէս վերստ հեռուն հերկի վրայ իւր ձիերին դահ էր անում:

Բայց երեխան չէր կարողանում այս հնչիւններն ըմբռնել, չէր կարողանում նրանց միացնել, մի համատկերի (պերսպեկտիւ) մէջ դասակարգել Պրանք մերթխաղաղ, անորոշ, մերթ բարձրագոյ, պայծառ, խլացուցիչ կերպով միմեանց ետեւից կարծես ընկնում, թափանցում էին նրա փոքրիկ խաւար գլխի մէջ: Երբեմն-երբեմն էլ նրանք միաժամանակ խոնւում էին և անհաճոյ միաւորմամբ անհասկանալի աններդաշնակութիւն կազմում: Իսկ դաշտերից փչող քամին շարունակ սուլում էր նրա ականջին և նրան թուում էր, թէ ալիքներն աւելի արագ են վազում և ծածկում բոլոր միւս ձայները, որոնք այժմ կարծես մի այլ աշխարհից էին գալիս և երէկեան աւուր յիշողութեան տպւորութիւն էին անում: Եւ քանի ձայները նսեմանում էին, այնքան էլ մի տեսակ խախտող խոնջանքի զգացողութիւն զեղում էր երեխի կրծքի մէջ: Գէմքը ջղայնորէն ձգձգում էր, աչքերը մերթ փակում էին, մերթ նորից բացւում, և բոլոր գծագրութեան վրայ երևում էր հարցում, մտքի և երևակայութեան ծանր ճիգ: Նրա դեռ անկայուն և նորանոր զգացողութիւններով զեղուն գիտակցութիւնը սկսում էր ընկճուել. այդ գիտակցութիւնը դեռ մաքառում էր ամեն կողմից ներս խուժող տպւորութիւնների դէմ՝ աշխատելով կանգուն մնալ նրանց միջև, նրանց ի մի ամբողջութիւն ձուլել և այդպէսով տիրանալ նրանց, յաղթահարել նրանց: Բայց այդ բանը մանկան խաւար ուղեղի ուժից բարձր էր. այդ աշխատանքի համար նրան տեսողական պատկերացումը պակասում էր:

Եւ ձայներն իրար ետեւից թռչում, ընկնում էին դեռ էլի չափազանց խայտաբղէտ, չափազանց հնչական կերպով... Մանկան պաշարող ալիքներն աւելի ու աւելի ուժգնութեամբ վեր էին բարձրանում՝ դուրս թռու-

չելով շրջապատող հնչական և աղմկալի խաւարից և կրկին նոյն խաւարի մէջ գնալով տեղի տալիս նորանոր ալիքների, նորանոր հնչիւնների...: Նրանք աւելի արագ, աւելի բարձր, աւելի չարատանջ կերպով բարձրացնում էին նրան, տարուբերում, օրօրում...: Մի անգամ էլ այս նսեմացնող քօսի վրայով անցաւ մարգկային ձայնի երկար ու տխուր հնչիւնը և տպալանկարծ ամեն ինչ լռեց:

Երեխան թեթեւակի հառաչեց և մէջքի վրայ վեր բնկաւ արօտի մէջ: Մայրն արագութեամբ շուռ եկաւ նրա կողմը և նոյնպէս ազազակեց՝—մանուկը տժգոյն, ուշաթափ պառկած էր արօտի վրայ:

### VIII

Այս գէսլբը սաստիկ վրդովեց քեռի Մակսիմին, Մի քանի ժամանակից ի վեր նա սկսել էլ բնախօսութեան, հոգեբանութեան և մանկավարժութեան վերաբերեալ գրքեր բերել տալ և իրեն յատուկ եռանդով ուսումնասիրել այն ամենը, ինչ որ գիտութիւնը տալիս է մանկական հոգու խորհրդաւոր աճման ու զարգացմամբ վերաբերմամբ:

Այս զբաղմունքն աւելի ու աւելի գրաւում էր նրան և այդ պատճառով էլ կեանքի կռուի համար տպիկար լինելու, «փոշու մէջ թաւալող որդի», և «զինուորական հիւանդաբարձ կառքի» մասին մտաքերն արդէն վաղուց աննկատելի կերպով ցնդել էին: Ծեր զինուորականի քառակուսի գլխից: Դրանց տեղը մտախոհ ուշադրութիւնն էր բռնել այդ գլխի մէջ. մինչև անգամ երբեմն երբեմն նոյն խկ վարդակարմիր անուրջքներ ջերմացնում էին նրա ծերացող սիրտը: Քեռի Մակսիմն աւելի ու աւելի համոզոււմ էր, որ բնութիւնը մանկանը տեսութիւն զլանալով, ուրիշ

կողմերից չէր զրկել նրան. դա մի էակ էր, որ զարմանալի լրութեամբ և ուժով ըմբռնում էր իրեն մատչելի եղած արտաքին տպաւորութիւնները: Եւքեռի Մակսիմին թուում էր, թէ ինքը կոչուած է զարգացնելու մանկան ընդոծին ընդունակութիւնների ստղմերը, որպէս զի մտքի ճիգով և իւր ազդեցութեամբ հաւասարակշռէ կոյր բազդի անիրաւութիւնը, որպէս զի կեանքի մէջ արդար գործի մարտիկների մէջ իրեն փոխարէն դնէ մի նորակոչ զինուոր, որի վրայ ոչ ոք երբէք ոչինչ չօյս չպիտի ունենար, եթէ իւր ազդեցութիւնը չլինէր:

«Ո՛վ զիտէ, — մտածում էր Գարիբալդիի գնդի ծերունի զինուորականը, — նիգակով ու սրով հօ չեն կրուում միայն: Գուցէ սա, որ անարգար կերպով զրկուած է բազդից, ժամանակով իրեն մատչելի գէնքը բարձրացնէ ուրիշներին, կեանքի մէջ բազդազուրկներին պաշտպանելու համար, և այն ժամանակ զուր տպրած չեմ լինիլ աշխարհում ես, որ հաշմանդամ ծերունի զինուոր եմ...»:

Նոյն իսկ քառասնական և յիսնական թուականների ազատախոհներն էլ զերծ չէին «ընութեան խորհրդաւոր նախասահմանութիւնների» մասին եղած սնտիապաշտութիւնից: Ուստի զարմանալի չէ, որ քանի մանուկը զարգանում էր և աւելի ու աւելի արտակարգ ընդունակութիւններ ցոյց տալիս, այնքան էլ քեռի Մակսիմը համոզուում էր, որ հէնց կուրութիւնն էլ այդ «խորհրդաւոր նախասահմանութեան» արտայատուութիւններից մէկն է: «Բազդազուրկը՝ զրկանք կրողներին համար» — ահա այն նշանաբանը, որ նա նախապէս զրեւ էր իւր սանիկի մարտադրօշի վրայ:

IX

Մանուկը, գարնանային առաջին զրօսանքից լե-  
տոյ, մի բանի օր զառանցանքի մէջ էր: Նա մերթ ան-  
շարժ ու լուռ էր մնում իւր անկողնի մէջ, մերթ մի  
բան էր փնթփնթում ու մի բանի ականջ դնում: Եւ  
այդ բոլոր ժամանակը վարանման բնորոշ արտայայտու-  
թիւնը չէր հեռանում նրա գէմքից:

— Ճշմարիտ, նա այնպէս է մտիկ անում, հէնց  
իմանաս աշխատում է մի բան հասկանալ՝ բայց չէ  
կարողանում,—ասում էր նորատի մայրը:

Մակսիմի մտքի մէջ էր ընկնում և գլուխը շար-  
ժում: Նա հասկացաւ, որ մանկան տարօրինակ լուզու-  
մը և անահնկալ նուազիլը բացազրոււմ էր տպաւորու-  
թիւնների առատութեամբ, որոնց նրա գիտակցութիւնն  
անգօր էր կարգի բերել, ուստի վճռեց այնպէս անել,  
որ առողջացող մանուկն այդ տպաւորութիւններն աս-  
տիճանաբար, այսպէս ասած, իրենց բաղադրիչ մասե-  
րին բաժանուած ստանայ: Հիւանդի պառկած սենեակի  
պատուհանները պինդ փակած էին: Այնուհետեւ, բանի  
նա կաղզուրում էր, պատուհաններն էլ առ ժամա-  
նակ բաց էին անում. ապա նրան ման էին ածում  
միւս սենեակներում, գուրս էին տանում սրահը, բակը,  
պարտէզը: Եւ ամեն անգամ, որ կոյրի երեսին վրդով-  
մունք էր արտայայտում, մայրը նրան բացազրում  
էր նրան զարմացնող ձայները:

— Այդ հովուի փողն է հնչում անտառի ետեւից,—  
ասում էր նա,—իսկ այս ծտերի երամի ճռուողի մի-  
ջից թիւկատարի ձայնն է լսում...: Արագիլն է կռան-  
չում իւր անուի <sup>1)</sup> վրայ նստած: Նա հէնց նորերս

1) Մալաուսիայում և Լեհաստանում արագիլների համար  
երկար սիւներ են տնկում ու վրան հին անիւ անց կացնում.

հեռաւոր երկրներէից թուել-եկել է ու իւր նախկին տեղում բուն դնում:

Սե մանուկը իւր երախտագիտութեամբ փալլող երեսը գարձնում էր մօրը, բունում էր նրա ձեռքը, գլխով անում ու շարունակում էր մտախոհ և խելացի ուշադրութեամբ ականջ դնել:

X

Մանուկն ամեն բան, որ իւր ուշադրութիւնը գըրաւում էր, հարց ու փորձ էր անում, և մայրը. բայց աւելի յաճախ քեռի Մակսիմը, նրան պատմում էր այս կամ այն ձայնն հանող զանազան առարկաների կամ կենդանիների մասին: Մօր պատմածները. որ աւելի կենդանի ու վառ էին լինում, աւելի էլ տպաւորութիւն էին գործում մանկան վրայ. սակայն այդ տպաւորութիւնն երբեմն շատ ցաւատանջ էր լինում: Նորատի կինը, ինքն էլ տանջուելով, խանգակած գէմքով, անզօր գանգատաւոր և վշտահար աչքերով աշխատում էր իւր մանկանը գաղափար տալ գոյների ու ձևերի մասին: Երեխան լարում էր ուշադրութիւնը, յոնքերը կիտում. մինչև անգամ մանր կնճիռներ էին երևում նրա ճակատին: Երևում էր, որ մանկական գլուխը աշխատում էր իւր ոյժից վեր մի խնդիր լուծել. նրա խաւար երևակայութիւնը չարչարում էր՝ ջանալով անուղղակի հիմունքներով նոր մտապատկերներ ստեղ-

ահա դրա վրայ է թուշունը իւր բունը դնում: Թ. 2.

Հայաստանի զիւղերումն ևս չեն գլանում արագիլին բուն շինելու համար յարմարութիւններ տալ և երբէք նրա բունը չեն քանդում, նրան վնաս չեն տալիս. մեղք է: Սե արդարևարագիլը զիւղացու ցանքսի համար ամենաօգտակար թուշունն է. նա ոչնչացնում է վնասակար միջատները: Մ. Թ.

✓  
գեղ.

ծել, բայց ոչինչ չէր դուրս գալիս: Այդպիսի դէպքերում քեռի Մակսիմը միշտ դժգոհուած թեամբ խոժոռուած էր դէմքը. իսկ երբ արտասուէր դուրս էր ցայտում մօր աչքերից և իսկ մանկան դէմքը կեղրոնացած ճրգունքից գունատուում էր, նա ինքն էլ միջամտում էր խօսակցութեանը, բրոջը հեռացնում և իւր պատմութիւններն էր սկսում: Նա իւր այդ պատմութիւններին մէջ որքան հնարաւոր էր միայն տարածական ու ձայնակա՛ն պատկերացման օգնութեան էր դիմում: Կոյրի դէմքն աւելի հանգիստ կերպարանք էր ստանում:

— Բայց ինչպէս է, մեծ է, — հարցնում էր նա արագիլի մասին, որ իւր սեան վրայ նստած թմբկի դանդաղ բեկբեկուն ձայներ էր արձակում:

Եւ երեխան բաց էր անում իւր թևերը: Նա սովորաբար այդպիսի հարցմունքների միջոցին իւր թևերը կամաց կամաց հեռացնում էր իրարից, իսկ քեռի Մակսիմը նրան յայտնում էր, թէ երբ պէտք է կանգ առնէր: Այժմ նա բոլորովին բաց էր արել իւր փոքրիկ թևերը. բայց քեռի Մակսիմն ասաց.

— Այ, նա աւելի մեծ է: Նրան որ ներս բերենք ու յատակի վրայ դնենք՝ դուռնը աթոռի մէջքից բարձր կը լինի:

— Մեծ... — մտախոհ ասաց երեխան: — Իսկ թրխկատարը — ըհը, — և նա իւր միացրած օփերը փոքր ինչ հեռացրեց իրարուց:

— Այո, թրխկատարն այդչափ էր...: Բայց դրա փոխարէն մեծ թռչուններն էլ կրէք այնքան լաւ չեն երգում, ինչքան փոքրները: Թրխկատարն աշխատում է, որ իւր երգը բոլորին էլ հաճելի լինի: Իսկ արագիլը լուրջ թռչուն է. նա իւր բոյնի մէջ մի ոտի վրայ կանգնած դիտում էր իւր չորս կողմը, հէնց գիտենաս իւր բանուորների վրայ չարացած տէր լինի, բարձրա-

ձայն քրթմնջում է առանց ուշադրութիւն դարձնելու, որ իւր ձայնը խռպոտ է և ուրիշներն էլ կարող են լսել:

Մանուկն այս նկարագրութիւնները լսելով ծիծաղում էր զուարթագին և առ ժամանակ մոռանում մօր պատմածները հասկանալու համար արած իւր ծանր փորձերը: Սակայն թէև այս պատմութիւնները նրան աւելի էին զրաւում, բայց նա իւր հարց ու փորձերով աւելի մօրն էր դիմում, քան թէ քեռի Մակսիմին:

1972 թ. մայիս 19 ԳԻՒԼԻ

---

Բ. ԳԼՈՒԽ.

I

Մանկան խաւար դուլիսը հարստանում էր նորա- նոր մտապատկերներով. խիստ նրբացած լսողութեան շնորհիւ նա աւելի ու աւելի խորն էր թափանցում իրեն շրջապատող բնութեան մէջ: Առաջուայ նման խորին, անթափանց խաւարը տիրած էր վերևն ու շուրջը. այս խաւարը սեւթոյր ծանր ամպի նման կախուած էր նրա ուղեղի վրայ, և թէև դա ծննդեան օրից էր պատած նրան, թէև ըստ երևոյթին, մանուկն արդէն պէտք է ընդելացած լինէր իւր դժբաղդ վիճակին, սակայն մանկական բնոյթքը մի տեսակ բնագրով անդադար ճիգ էր թափում այդ մռայլ քօղից ազատուելու: Իէպի անյայտ լոյսը խոյանալու այս անգիտակցական ուժգնութիւնները, որ ոչ մի բոպէ մանուկից չէին հեռանում, անորոշ, տանջուող ճգունքի արտայայտու-

Թեան ձևով աւելի ու աւելի խորը տպաւորում էր նրա գէմքի վրայ:

Բայց և այնպէս նրա համար էլ էին լինում պարզ գոհունակութեան, մանկական պայծառ ցնծութեան րոպէներ. և այդ պատահում էր այն ժամանակ, երբ որ նրան մատչելի արտաքին տպաւորութիւնները նոր, զօրեղ զգացողութիւն էին պատճառում նրան, անտեսանելի աշխարհի նոր երևոյթների հետ էին ծանօթացնում: Մեծ և զօրեղ բնութիւնը լիովին փակուած չէր մնում կոյրի առաջ: Այսպէս, օրինակ, երբ մի անգամ նրան տարել էին գետի վրայ խոնարհած բարձր քարափը, նա գէմքի մի առանձին արտայայտութեամբ ականջ էր դնում ներքևը խորքում հասող գետի խաղաղ վշշոցին, սրտի թալկութեամբ բռնում էր մօր շրջագգեստից և ականջ դնում, թէ ինչպէս իւր ոտների տակից պոկ եկած քարերը գլորում էին ներքև: Այդ օրուանից նա խորութիւնը երևակայում էր որպէս ջրի խաղաղ վշշոց քարափի ստորոտում կամ որպէս ներքև գլորուող մանր քարերի երկչոտ շշուկ:

Հեռաստանը նրա ականջում հնչում էր որպէս անորոշակի մարող երգ. իսկ երբ գարնանային որոտն աղմկալի թնդիւնով անցնում էր երկնքի երեսով բոլոր տարածութիւնը լցնելով ու ցասկոտ զղորդով ամպերի ետևը կորչում, կոյր մանուկը երկիւղած սարսափով ականջ էր դնում այդ զղորդին և նրա սիրտը լայնանում էր, իսկ գլխում փառահեղ մտապատկեր էր ծրնում երկնային բարձունքի լայնածաւալութեան մասին:

Այսպէսով ուրեմն նրա համար արտաքին աշխարհի գլխաւոր անմիջական արտայայտութիւնը ձայներն էին. միւս տպաւորութիւնները միայն լրացուցիչ էին լսելիքի ստացած տպաւորութիւնների համար և նրա

մտասյատկերները ձուլուամ, որոշ կերպարանք էին ստանում լսողութեան տպաւորութեան համար:

Երբեմն, կէս օրուայ շոգին, երբ շուրջ ամեն ինչ լուամ էր, երբ մարդկանց երթևեկութիւնը հանդարտում էր և բնութեան մէջ տիրում այն առանձին խաղաղութիւնը, որի տակ զգացւում է միայն կենսական ոյժի անընդհատ, անձայն ընթացքը, այգալիսի ժամանակ մի բնորոշ արտայայտութիւն էր երևում կոյրի երեսին: Թուամ էր, թէ արտաքին խաղաղութեան ազդեցութեան տակ նրա հոգու խորքից դուրս էին գալիս միայն իրեն մատչելի հնչիւններ, որոնց ասես թէ լարուած ուշադրութեամբ ականջ էր դնում: Այգալիսի վայրկեաններին նրան մտիկ տալիս կարելի էր կարծել, թէ նոր ծնունդ առնող մի անորոշ միտք, որպէս երգի աղօտ մեղեգի հնչում է նրա սրտում:

## II

Մանուկն արդէն հինգ տարեկան էր: Նիհար էր, թոյլ, բայց բոլոր տան մէջ կարողանում էր ազատ ման գալ, նոյն իսկ վագել: Նրան նայողը տեսնելով, թէ ինչպէս նա հաստատ քայլեր էր փոխում սենեակի մէջ կամ շուռ էր գալիս հէնց այն տեղերքում, ուր որ հարկաւոր էր, և ազատօրէն էլ գտնում իրեն հարկաւոր եղած առարկաները, անշուշտ պիտի կարծէր, եթէ բանը չիմանար, թէ իւր անջևինը ոչ թէ կոյր է, հապա ինքն իւր մէջ տարօրինակ կերպով կեդրոնացած, մտախոհ և անորոշ հեռուն դիտող աչքերով մի տղայ: Սակայն բակում մեծ դժուարութեամբ էր ման գալիս և ձեռնափայտն առջևից թրխկթրկացնում: Իսկ երբ ձեռին փայտ չէր ունենում, այն ժամանակ զետնի վըրայ սողում էր և ամեն մի ճանապարհին պատահած առարկայ ձեռներով արագ-արագ ուսումնասիրում:

III

Ամտարային խաղաղ երեկոյ էր: Քեռի Մակսիմը նստած էր պարտիզում: Հայրը, ըստ սովորականին, հեռու դաշտում գործի էր: Բակում ու շուրջը լուսթիւն էր. գիւղը սկսել էր քնել. ծառաների սենեակում բանուորների ու սպասաւորների զրոյցը նոյնպէս լուել էր: Արդէն կէս ժամ կը լինէր, որ մանկան պառկացրել էին:

Վէսքուն պառկած էր նա: Ահա քանի ժամանակից ի վեր այդ խաղաղ ժամի հետ նրա մտքում մի տարօրինակ լիշողութիւն էր սկսել կապնուել: Իհարկէ, նա չէր տեսնում, թէ ինչպէս միտնում էր կապոյտ երկինքը, ինչպէս աստղագարդ կապուտակի վրայ գըծագրուելով օրօրում էին ծառերի սև կատարները, ինչպէս խոժոռ կերպարանք էին ստանում բակի շուրջ կառուցած շէնքերի կատարները, ինչպէս կապոյտ մառախուղը լուսնի և աստղերի ոսկեփայլ լոյսի հետ գեղւում էր երկրի երեսին: Բայց ահա քանի օր է, որ նա քնում էր մի առանձին, կախարդիչ տպաւորութեան տակ, որի մասին, սակայն, նա յաջոչդ օրը չէր կարողանում իրեն հաշիւ տալ:

Երբ նիրհն աւելի ու աւելի թանձրանում էր նրա գիտակցութեան վրայ, երբ բոլորովին խաղաղում էր հաճարքենիների խուլ սօսաւիւնը և նա դադարում էր որոշել եւ գիւղի շների հեռաւոր հաջոցը, եւ գետի միւս կողմից լսուող սոխակի դալլալլիկը, եւ հանդում արածող յովտակի վզից կախած բոժոժների մեղամաղձոտ զնգզնգոցը, — երբ բոլոր առանձին հնչիւնները հետզհետէ նսեմանում ու կորչում էին, նրան այնպէս էր թւում, թէ այդ ամենը ձուլուելով մի կանոնաւոր, ներդաշնակ ամբողջութիւն է կազմում և պատուհա-

նից խաղաղ ներս թռչում և անորիշ, բայց զարմանալի հաճելի անուրջներ սփռելով երկար սաւառնում անկողնի վրայ: Առաւօտները քնքշանքով լի զարթնում էր ու հետաքրքրութեամբ մօրը հարցնում.

— Այդ ինչ բան էր... երէկ... ինչ էր...:

Մայրը բանը չէր հասկանում և կարծում էր, թէ երագները խռովում են իւր մանկան: Նա ինքն իւր ձեռքով անկողին էր դնում երեխին, հոգածութեամբ վրան խաչակնքում, և երբ մանուկը սկսում էր նիրհել, հեռանում էր, և ոչ մի առանձին բան չէր նկատում: Սակայն մանուկը միւս օրը նորից խօսք էր բաց անում երեկոյեանից իրեն հաճելի կերպով լուզող մի բանի մասին:

— Ի՞նչ լաւ բան է, մայրիկ ջան, ինչ լաւ է: Բայց ինչ բան է դա:

Որպէս զի այդ հանելուկը կարողանայ լուծել, մայրը որոշեց այդ երեկոյ աւելի մնալ նրա անկողնի մօտ: Նա կուրի մահճակալի մօտ աթոռի վրայ նստած մեքենաբար գործում էր ձեռագործի օղակներն ու ալկանջ դնում իւր Պետրոսի համաչափ շնչառութեան: Թւում էր, թէ երեխան արգէն բոլորովին քնած է, երբ մթնում լսուեց նրա ցած ձայնը.

— Այստեղ ես, մայրիկ:

— Այո, այո, զաւակս...

— Հեռացիր, խնդրեմ. այն քեզանից վախում է և մինչև այժմ չէ գալիս: Քիչ էր մնում բոլորովին քշնէի, իսկ այն դեռ չկայ...

Զարմացած մայրը մի տեսակ օտարոտի զգացումով լսում էր այդ կիսաքուն, խղճալի շշունչը: Մանուկը մի այնպիսի վստահութեամբ էր խօսում իւր երազական անուրջների մասին, որ կարծես իրականութիւն լինէին: Բայց և այլպէս մայրը վեր կացաւ, կռա-

ցաւ համբուրեց որդուն և կամացուկ դուրս եկաւ որոշելով պարտիզի կողմից աննկատելի կերպով մօտենալ բաց պատուհանին:

Գեռ իւր պտոյտը չէր արել, որ հանելուկը պարզուեց, Նա յանկարծ լսեց սրնգի խաղաղ գեղգեղուն հնչիւնները, որ ախոռից դուրս գալով միախառնում էին հարաւային երեկոյի շշուկին: Իսկոյն գլխի ընկաւ, որ հէնց այս պարզ մեղեդիի անպաճոյճ գեղգեղանքն է եղել, որ նիրհի բանդազուշական ժամին հանդիպելով այնպիսի քաղցր լիշողութիւններ էին ծնեցրել մանկան մէջ:

Նա ինքն էլ կանգ առաւ. մի առ վայրկեան կանգնեց ու ականջ դրեց մալոռուսիական երգի հոգեբուղիս նուազին և, բոլորովին հանգստանալով, գնաց պարտիզի մութ ծառուղու կողմը՝ քեռի Մակսիմի մօտ:

— Ի՞նչքան լաւ է աճում Իօխիմը, մտածեց նա: —  
Ձարմանալի բան. որքան նուրբ զգացմունք կայ այդ արտաքուստ կոպիտ գեղջուկի մէջ“:

#### IV

✓ Եւ ճշմարիտ որ լաւ էր աճում Իօխիմը: Նրա համար նոյն իսկ ջութակ ածելն էլ մի դժուար գործ չէր. և լիրաւի, մի ժամանակ ոչ ոք օղետանը կիրակի օրերը նրանից լաւ „կողակ“ կամ լեհական զուարթ „կրակովեակ“ <sup>1)</sup> չէր կարող ածել: Երբ նա մի անկիւնում նստարանի վրայ նստած ածիլած կզակով պինդ սեղմում էր ջութակը, բարձր գդակը կարիճի պէս ծործորակին կտորում ու կեռ կնտկնտոցը ջութակի առաձգական լա-

<sup>1)</sup> Կազակ կամ կազաչոք և կրակովեակ պարի եղանակներ են, առաջինը կազակ, խազախ և երկրորդը կրակով (քաղաք) անուններից առած: Մ. Թ.

ըրբին խփում, դժուար թէ օղետանը մի մարդ լինէր, որ կարողանար իւր տեղը նստած մնալ: Մինչև անգամ մի աչքանի ծերունի հրէան, որ Իօխիմի հետ հակաբամբ էր ածուծ, մինչև անգամ նա էլ վերին աստիճանի ոգևորում էր: Նրա անձուռնի գործին ասես թէ ուժաթափ էր լինում իւր ծանր բամբային հնչիւններով Իօխիմի ջութակի թեթև, երգակ և ոստոսաուն եղանակի ետևից հասնելու համար գործ դրած ճգունքից, մինչդեռ ինքը ծերուկ Եանկէլը, ուսերը բարձր վեր-վեր գցելով, թասակ ծածկած ճաղատ գլուխը պրտրտացնում էր և կայտուուն ու աշխոյժ մեղեդիի բախումների համեմատ բոլոր մարմնով ցատկոտում: Իսկ ինչ ասենք ժողովրդի համար, որի ոտներն արդէն ի հնուց այնպէս են կազմուած, որ պարերգի զուարթ ձայների հէնց առաջին հնչիւնը լսելուն պէս իրենք իրենց սկսում են ճկուել ու տոփել:

Բայց այն օրից, որ Իօխիմը սիրեց հարևան պանի տնասուն աղախին Մարիային, այլ ևս զադարեց նաև ուրախ ջութակը սիրելուց: Արգարև ջութակը նրան չօգնեց ժիր աղջկայ սիրտը գրաւելու, և Մարիան իւր տիրոջ սենեկապանի գերմանական անբեխ դէմքը գերադասեց գեղջուկ-երաժշտի բեխաւոր մուտթից: Այդ օրուանից օղետանն ու երեկոյթներում այլ ևս չէր լրսւում նրա ջութակի ձայնը: Նա իւր ջութակը ախոռում մի ցցից կախ արեց, և ուշադրութիւն չէր դարձնում, որ իւր երբեմն սիրելի գործիքի լարերը խոնաւութիւնից ու անխնամ մնալուց շարունակ մէկը միւսի ետեւից տրաքտաքւում էին: Իսկ նրանք մի այնպիսի օրհասական բարձր ու խղճալի դողանջիւնով էին տրաքւում, որ նոյն իսկ ձիերն էլ կարեկցաբար խրխնջում էին և զարմացմամբ զայրագնած գլուխները տիրոջ կողմը շուռ տալիս:

Իօխիմը ջուժակի տեղ մի կարպատեան <sup>1)</sup> լեռնցի  
անցորդից փայտէ սրինգ զնեց: Ինչպէս երևում է նա  
համոզուած էր, որ սրնգի հոգեշունչ մեղմ գեղգեղան-  
քըն աւելի է համապատասխանում իւր գառն վիճա-  
կին, աւելի լաւ է արտայայտում իւր մերժուած սրտի  
թախիծը: Սակայն լեռնցու սրինգը նրա յոյսերը չար-  
դարացրեց: Մօտ տասը սրինգ փոփոխեց, ամեն կերպ  
փորձեց՝ կտրատում էր, ջրի մէջ թրջում ու արևում  
դնում չորացնում, կտուրից բարակ փոկով կախ անում,  
որպէս զի քամուն տայ, բայց ոչինչ չէր օգնում. լե-  
ռնցու սրինգը խախտի սրտին չէր հնազանդուում: Ուր  
որ հարկաւոր էր երգել, սրինգը սուլում էր միայն, և  
ճշում էր՝ երբ նա թալկաբեր գողգոջ էր ակնկալում.  
մի խօսքով բոլորովին նրա տրամադրութեան չէր յար-  
մարւում: Վերջապէս նա խիստ զայրացաւ բոլոր թա-  
փառաշրջիկ լեռնականների վրայ և լիովին համոզուե-  
լով, որ նրանցից ոչ ոք չէ իմանում լաւ սրինգ շինել,  
որոշեց ինքն իւր ձեռքովը շինել: Մի քանի օր շարու-  
նակ յոնքերը կիտած թափառում էր դաշտերում ու  
ճահիճներում, մօտենում էր ամեն մի ուռիքի թփի,  
մի առ մի տնտղում ճիւղերը, մի քանիսը կտրում,  
բայց էլի, ինչպէս երևում է, իւր ուզածը չէր գըտ-  
նում: Յոնքերը առաջուայ պէս թախծազին կիտած նա  
դարձեալ տռաջ էր զնում իւր խուզարկութիւնները  
շարունակելով: Վերջապէս նա ընկաւ մի տեղ, ուր գե-  
տակը զանգաղ էր հօսում: Այգտեղ ջուրը հագիւ հագ  
տատանում էր նուենուֆարների կատարները, խիտ առ

<sup>1)</sup> Կարպատեան լեռնաշղթան կիսաշրջանով պատում և  
մասամբ էլ ներս է մտնում Ունդարիան և Տրանսիլվանեան.  
այդ լեռնաշղթայի շարունակութիւնը երկու ճիւղով մտնում է  
նաև Վոլըյն. դա է պատճառ նաև Գնեպը, Բուզ, Գնեստըր դե-  
տերի մէջ կազմուած յայտնի խութերի: Ծ. Թ.

խիտ բուսած ուռիները, մութ և խաղաղ խորութեան մէջ գլուխները խոնարհած, չէին թողնում այստեղ քամի խաղայ: Իօխիմը ձեռներով թփերը լետ-լետ արեց, մօտեցաւ գետակին, մի առ վայրկեան կանգ առաւ և կարծես համոզուեցաւ, որ հէնց այստեղ պիտի գտնէր իւր որոնածը: Նրա ճակատի կնճիռները պարզուեցան: Կօշքի ճտքից հանեց փոկով կապած ծալովի դանակը և ուռիքի տխրագին շշնջացող թփիկներէ վրայ ուշադիր հայեացք ձգելով, վճռաբար մօտեցաւ մի բարակ, ուղիղ, ողողուած գահաւանդի վրայ օրօրուող ուռենու բնի: Նա, չգիտեմ ինչի, մատներով շիկացրեց ուռենու վրայ, գոհութեամբ մտիկ տուաւ, թէ ինչպէս դա առաձգաբար շորորուեց օդի մէջ, ականջ դրեց նրա տեբևների շշուշին և գլխով դրական նշան արեց:

— Հէնց էս է որ կայ, — գոհութեամբ փնթփնթաց Իօխիմը և առաջուայ կտրած բոլոր շիւղերը ջուրը ձգեց:

Հիանալի սրինգ դուրս եկաւ: Ուռը չորացրեց, տաքացրած երկաթէ թելով միջուկը այրեց, այրելով էլ վեց հատ կլորիկ ծակ բաց արաւ, եօթներորդը առ ի շեղ կտրեց, ծայրերից մինը փայտէ լեզուակով պինդ փակեց և լեզուակի վրայով մի նեղ թեք ճեղք միայն թողեց: Այնուհետև մի ամբողջ շաբաթ սրինգը բարակ փոկով կախած էր արևի ջերմ ճառագայթների ու զրդզրուն քամու հունչի տակ: Ապա դանակով սրինգը մի լնւ մաքրեց, առկալով լղկեց ու կոշտ մահուդի կտորով էլ մի պինդ արորեց: Սրնգի վերևի մասը կլոր էր, մէջ տեղից սկսուում էին հարթ, կարծես լղկած կոպարներ, որոնց վրայ տաքացրած երկաթի ոլորուն կտորտանքով զանազան խորիմաստ զարդեր էին տաճած: Մի քանի անգամ ձայնաշարերի եօթներեակը արագ-արագ գեղգեղացնելով նա լուզուած գլուխը շարժեց, կոկորդը

Անտրա  
ս. առաջը

V

մաքրեց և շտապով անկողնի մօտ մի թագուն տեղ  
պահեց: Նա չէր ուզում իւր երաժշտական առաջին  
փորձը ցերեկուայ ժխորով անել, մինչդեռ հէնց նոյն  
երեկոյեան քնքուշ, տխրազգած, գեղգեղուն և դողդօջ  
գլխոցներ դուրս գեղուեցան ախոռից: Իօխիմը բոլորո-  
վին գոհ էր իւր սրնգից: Ասես թէ սրինգը իւր մասը  
լինէր: Հէնց իմանաս սրնգի արձակած ձայները իւր  
սեփական ջերմացած ու քնքշանքով լի կրծքիցն էին  
դուրս գալիս, և նրա զգացմունքի ամեն մի զալարուած-  
քը, նրա թախիժի ամեն մի լեղլեղանքն անմիջապէս  
դողդողում էին սրնգի մէջ, յուշիկ պոկ գալիս նրանից  
ու մէկը միւսի ետեւից զիւզիլ տարածւում երեկոյեան  
գիւրազգաստ-ուշագրաւ պահուն: )

V

Այժմ Իօխիմը իւր սրնգի վրայ սիրահարուած՝ նրա  
հետ իւր մեղրամիսն էր անցկացնում: Յերեկը որպէս  
հարկն է կատարում էր ձիապանի պարտաւորութիւն-  
ները, ձիանքը ջուրն էր տանում, լծում էր, ուղեկ-  
ցում էր պանին կամ Մակսիմին: Ար ժամանակ առ ժա-  
մանակ աչքը մօտակայ գիւղի կողմը չէր ձգում, ուր  
տպրում էր խոտասիրտ Մարեան, թախիժը սկսում էր  
կրծել նրա սիրտը: Բայց հէնց որ երեկոն վրայ էր  
հասնում, ամբողջ աշխարքս մտահան էր անում, մին-  
չև սևայոն աղջկայ պատկերն իսկ ասես թէ մշուշով  
էր ծածկւում: Այդ պատկերը իւր որիշութիւնը կորց-  
րած՝ մի տեսակ նսեմ ստուերի մէջ էր նկարւում նրա  
առաջ, և այն էլ այն չափով, որ նրա հրաշալի սրնգի  
եղանակին մտախոհ-թախծալի բնաւորութիւն էր ներ-  
շնչում:

Հէնց նոյն երեկոյեան էլ Իօխիմը գոյնսիսի երա-

ժըշտական լափշտակութեամբ համակուած պառկել էր ախոռում ու իւր բոլոր զգացմունքներն արտայայտում էր սրնգի վրայ դողդող մեղեդիներ գեղգեղելով: Երաժիշտն արդէն բոլորովին մտահան էր արել ոչ միայն խոտասիրտ գեղեցկուհուն, այլ և իւր սեպհական գոյութիւնն անգամ մոռացել էր, որ լանկարձ ցնցուելով վեր կացաւ ու անկողնի վրայ նստաւ: Սմենազգացուած պահուն էր, որ նա զգաց, թէ ինչպէս մէկը իւր փոքրիկ ձեռքի թեթեւ մատներն արագութեամբ անց կացրեց իւր դէմքի վրայով, սահեցրեց ձեռների վրայով և չետոյ սկսեց մի տեսակ հապճեպով սրինգը շօշափել: Միևնոյն ժամանակ իւր կողքին լսեց մէկի արագ, լուզուած, կարճ շնչառութիւնը:

— Նալլաթ չար սատանին, ասաց նա ու սովորական չարխափանի աղօթքը մըմնջաց, ապա իսկոյն հարցրեց. — չարո՞ց ես թէ բարոց, ուղեղով իմանալ, թէ դիւշական զօրութեան հետ հօ գործ չունի՞:

Բայց նոյն րոպէին ախոռի բաց դռնով ներս ընկաւ լուսնի լոյսը և նա տեսաւ, որ սխալուել է: Իւր տախտի մօտ կանգնած էր կոյր պանիչը և իւր թաթիկները անյագաբար դէպի ինքն է մեկնում:

Մի ժամից մայրը, որ ուզում էր իւր քնած որդուն մտիկ տալ, նրան իւր անկողնում չգտաւ: Սկըգբում վախեցաւ, բայց մայրական նրբամտութեամբ հասկացաւ, թէ ո՞ւր պէտք է իւր որդուն որոնէր: Շատ շփոթուեց Իօխիմը, երբ շունչ քաշելու համար կանգ առնելով տեսաւ, որ «ողորմած պանին» ախոռի դրանը կանգնած է: Ինչպէս երևում է պանին մի քանի ընկալե այդտեղ կանգնած ականջ է դնելիս եղել նրա ածելուն և իւր գաւակին դիտում. իսկ կոյր մանուկը Իօխիմի կարճ մուշտակի մէջ փաթաթուած, նստած էր

տախտի վրայ և զեռ շարունակում անյազաբար ականջ  
գնել ընդհատուած երգին:

VI

Այդ օրուանից սկսած մանուկն ամեն իրիկուն ա-  
խուռը՝ Իօխիմի մօտն էր գնում: Նրա մտքովն անգամ  
չէր անցնում խնդրելու, որ Իօխիմը ցերեկն էլ մի բան  
ածի: Թւում էր, թէ նա անկարող էր ենթադրել, որ  
ցերեկուայ ժխորի ու շարժման միջոցին հնարաւոր է  
այդպիսի մեղմ մեղեդիներ նուագել: Բայց հէնց որ մու-  
թը չէր կոխում, Պետրոյսը տենդային անհամբերու-  
թեան մէջ էր ընկնում: Երեկոյեան թէյն ու ընթրիքը  
նրա համար նշան էին, թէ մօտ է ցանկալի ըոպէն,  
և մայրը, որին մի տեսակ բնազդուժով դիւր չէին գա-  
լիս այս երաժշտական փորձերը, բայց և այնպէս չէր  
կարողանում արգիլել, որ իւր սիրելի որդին սրնգահա-  
րի մօտ գնայ ու քնելուց առաջ մի երկու ժամ նրա  
մօտ ախուռում անցկացնի: Այդ ժամերը մանկան ամե-  
նաերջանիկ ժամերն էին դարձել, և մայրը սաստիկ  
նախանձով տեսնում էր, թէ ինչպէս երեկոյեան ստա-  
ցած տպաւորութիւնները նոյն իսկ յաջորդ օրուայ ըն-  
թացքում էլ իշխում էին մանկան վրայ, ինչպէս իւր  
զգուանքներն այլ ևս առաջուայ նման չէին զբաւում  
նրան, ինչպէս իւր զոգը նստած ու զրկախառնած մի-  
ջոցին էլ մի տեսակ մտազբաղ կերպարանքով Իօխիմի  
երէկուայ երգն է մտաբերում:

Այդ ժամանակ նրա միտն ընկաւ, որ մի քանի  
տարի առաջ Կիւեում պանի Ռադեցկու պանսիօնում ու-  
սանելիս ինքն ևս, ի միջի այլ „հաճելի արուեստների“  
երաժշտութիւն էլ էր ուսումնասիրել: Ծիշոն !ասած,  
այդ լիշողութիւնը, ինքն ըստ ինքեան առած, մի այն-

քան էլ հաճելի լիշատակ չէր թողել իւր մէջ, քանի որ դա կապուած էր գերմանացի պառաւ ուսուցչուհի օրիորդ Կլապսի անուան հետ, որ մի չափազանց նիհար, շատ սոսկական և, որ գլխաւորն է, խիստ ցասկոտ կին էր: Այս չափազանց մաղձատ օրիորդը, որ մեծ աջողութեամբ «կոտրատում էր» իւր աշակերտուհիներին մատները նրանց անհրաժեշտ ճկունութիւն տալու համար, միևնոյն ժամանակ էլ զարմանալի աջողութիւն ունէր իւր սանիկներին մէջ երաժշտական կայծի ամենայն զգացմունք սպանելու: Այս վեհերկոտ զգացմունքն արդէն պաննի Կլապսի ներկայութիւնից իսկ անհետանում էր, էլ չենք խօսում նրա գործարած մանկավարժական միջոցների մասին: Այդ էր պատճառը, որ Աննա Միխայլովնան պանսիօնից դուրս գալուց լետոյ, նոյն իսկ ամուսնանալուց լետոյ, չէր էլ մտածել, որ իւր երաժշտական վարժութիւնները վերսկսի: Բայց այժմ խախօլ-սրնգահարի ածածը լսելով զգում էր, որ դէպի նա տածած նախանձի հետ իւր հողու մէջ կամաց-կամաց զարթնում է կենսատու մեղեդիի զգացողութիւնը, իսկ գերմանուհու պատկերը նսեմանում: Այս ամենի հետևանքն այն եղաւ, որ պանի Պոպէլսկայան իւր ամուսնուն խնդրեց, որպէս զի քաղաքից մի դաշնամուր բերել տայ:

— Գու կամքդ է, սիրելիս, — պատասխանեց օրինակելի ամուսինը: — Գու, կարծեմ, մի այնքան էլ երաժշտութեան սէր չունէիր:

Նոյն օրն և եթ նամակ ուղարկեցին քաղաք: Բայց մինչև որ դաշնամուրը քաղաքից կը գնէին ու կը բերէին գիւղ, առ նուազն երկու-երեք շաբաթ կանցկենար: Մինչդեռ ամենայն իրիկուն հնչում էին մեղեդու հրաւերները և երեխան գլխապատառ շտապում

էր դէպի ախոռ՝ առանց նոյն իսկ մօրից թողալու-  
թիւն խնդրելու:

Ախոռատան լատուկ անախորժ հօտը միախառնու-  
ում էր չոր արօտի և խամ կաշուց պատրաստած փո-  
կի սուր հօտի հետ: Զիանքը խշշացնելով հանդարտ  
ծամում էին վանդակապատի ետեւից կորզած խոտը:  
Երբ սրնգահարը կանգ էր առնում, որպէս զի շունչ  
քաշի, ախոռում որոշակի լսում էր պարտիզի հաճար-  
քենու շշունչը: Պետրիկը կախարդուածի նման նստած  
էր լինում ու լսում:

Նա երբէք երաժշտին չէր ընդհատում, բայց երբ  
Իօխիմը ինքն էր կանգ առնում և երկու-երեք բոսի-  
լուութիւն տիրում, այն ժամանակ երեխի համը հիւ-  
ցումը փոխուում էր անյազ տենչի: Նա ձեռքը մեկնում  
էր դէպի սրինգը, գողգոջուն ձեռներով վերցնում ու  
շրթունքներին մօտեցնում: Եւ որովհետեւ այդ միջոցին  
նրա շունչը բռնւում էր, ուստի և սրնգի ձայները  
սկզբում գողգոջ ու թօյլ էին դուրս գալիս: Բայց լե-  
տու քիչ քիչ սկսաւ այդ պարզ գործիքին վարժուել:  
Իօխիմը նրա մատները դնում էր ծակերի վրայ. և թէև  
նրա մանրիկ ձեռները հազիւ էին այդ ծակերին հաս-  
նում, բայց շուտով սովորեց ձայնաշարի ձայները հաս-  
նել: Եւ ամեն մի ձայն ասես թէ իւր անհատական  
բնաւորութիւնը, իւր սեպհական կերպարանքն ունէր.  
նա արդէն զիտէր, թէ սրնգի ո՞ր ձայնն ո՞ր մատի մէջ  
է ապրում, ո՞րտեղից հարկաւոր է արձակել այդ ձայնը,  
և մի մի ժամանակ, որ Իօխիմը ծանր-ծանր մի որ և է  
պարզ եղանակ չէր նուագում, երեխի մատներն էլ սկը-  
սում էին հետը միատին շարժուել: Նա բոլորովին ու-  
րոշակի կարողանում էր եղանակի լաջորդական ձայնե-  
րը պատկերացնել իրենց սովորական տեղերում զե-  
տեղուած:

VII

Վերջապէս ուղիղ երեք շաբաթից դաշնամուրը քաղաքից բերին: Պետրոյսը կանգնած էր բակում և ուշադրութեամբ լսում, թէ ինչպէս բանուորներն իրար անցած պատրաստուում էին „երաժշտական գործիքը“ ներս տանելու: Երևի շատ ծանր պիտի լինէր դա, քանի որ նրան վեր բարձրացնելիս սալը ճռճուում էր, իսկ մարդիկ տնքոնքում ու ծանր շունչ քաշում: Ահաւասիկ նրանք համաշօփ, ծանր քայլերով առաջ շարժուեցան. նրանց ամեն մի քայլափոխին գլխներից բարձր մի բան տարօրինակ կերպով զօղանջում էր, քրթմնջում ու զնգզնգում: Երբ տարօրինակ գործիքը բնդունարանում լատակի վրայ էին դնում, նա դարձեալ խուլ զօղանջին արձակեց, հէնց իմանա սաստիկ զայրադնած՝ մէկին սպառնալիքներ տալիս լինէր:

Այս ամենը երեխին վախի նման մի զգացում էր պատճառում, և նրան չէր տրամադրում նոր բերած անշունչ, բայց և ցասկոտ հիւրի օգտին: Նա հեռացաւ գնաց պարտեզ և չլսեց, թէ ինչպէս գործիքը ոտների վրայ հաստատեցին, ինչպէս քաղաքից եկած դաշնակ լարոյր բանալիքով լարում էր նրան. ստեղունքը փորձում ու մետաղէ լարերը յարմարեցնում: Երբ ամեն բան պատրաստ էր, մայրը պատուիրեց Պետրոյսին ներս կանչել:

Այժմ արդէն Աննա Միխայլովնան Վեննայի ամենալաւ վարպետի շինած գործիքով զինուած կանխաւ տօնում էր իւր յաղթանակը, որ տանելու էր գիւղական անպաճոյճ գործիքի վրայ: Նա հաւատացած էր, որ իւր Պետրոյսն այժմ արդէն կը մոռանայ ախոռն էլ, սրնգահարին էլ, և իւր բոլոր հաճոյքը իրենից կստանայ: Ծիծղուն աչքերով մտիկ տուեց մայրը Մակ-

սիմի հետ վեհերկոտու թեամբ ներս մտնող երեխին ու Իօխիմին, որը թոյլաու թիւն էր խնդրել հեռու երկրից բերած գործիքի ձայնը լսելու, և այժմ ամօթխածու թեամբ աչքերը խոնարհած, ցցունքը (քեաքուլը) կախ արած կանգնած էր դրան կողքին: Երբ որ քեռի Մակսիմն ու Պետրոյսը նստեցին բազմոցի վրայ, մայրը յանկարծ բազխեց դաշնակի ստեղունքը:

Նա ածում էր այն պիէսը, որ օրիորդ Կլապսի առաջնորդութեամբ կատարելապէս ուսումնասիրել էր պաննի Ռաբեցկու պանսիօնում: Պա մի այնքան էլ աղմկալի բան չէր, բայց բաւական մանուածապտոյտ, մատների բաւական ճկունութիւն պահանջող հատուած էր: Աննա Միխայլովիան հրապարակական հարցաքննութեան միջոցին այդ պիէսի շնորհիւ առատ գովասանք էր վաստակել թէ իրեն և թէ մանաւանդ իւր ուսուցչուհու համար: Ոչ ոք չի կարող հաստատապէս ասել, բայց շատերը գլխի էին ընկել, որ պաննի Եացենկոն հէնց այդ կորճատե քառորդ ժամուայ միջոցին, որ այդ խրթին պիէսն էր ածում, կարողացել էր հրապուրել լուսկեաց պան Պոպելսկուն: Այժմ գեռատի կինը միւսնոյն բանն էր ածում մի ուրիշ յաղթանակ տանելու գիտակցական հաշուով.— նա ցանկանում էր աւելի զօրեղ կերպով զբաւել իւր որդու փոքրիկ սիրտը, որ արդէն հրապուրուած էր գեղջկական սրինգով:

( Սակայն այս անգամ նրա ակնկալութիւններն ի դերև ելան, Վեննայի գործիքն անգօր եղաւ Ուկուայնայի <sup>1)</sup> ուռի կտորի դէմ մաքառելու: Ծշմարիտ է,

1) Հնում Ուկրայնա կոչուում էին Մոսկովայի թագաւորութեան մէջ սահմանի մօտ եղած գաւառները: Ներկայումս այդ անունը մնացել է միայն Մալաուսիայի համար, որ կրօպական Ռուսիայի Հարաւային մասն է, իսկ ժողովուրդն էլ կոչւում է մալաուս:

Վեննայի <sup>1)</sup> դաշնամուրը զօրաւոր միջոցներ ունէր, թանկագին փայտ, հիանալի լարեր, Վեննայի վարպետի պատուական գործ, քնդարձակ բարձրահունչ ձայների հարստութիւն ունէր նա: Բայց Ուկրայնայի սրինգն էլ իւր դաշնակիցներն ունեցաւ, որովհետեւ նա իւր տանն էր, Ուկրայնայի հարազատ բնութեան մէջ: >

Քանի զեռ Իօսիմն այդ սրինգը իւր դանակով չէր կտրել ու միջուկն էլ շիկացրած երկաթով դաղել, նա տատանուում էր այստեղ, արդէն մանկան ծանօթ մայրենի զետակի մօտ, նրան փալփայում էր նոյն Ուկրայնայի արևը, որ ջերմացնում էր և իրեն, մանկանը, միևնոյն Ուկրայնայի քամին էլ փչում էր վրան, մինչև որ Ուկրայինցի սրնգահարի սուր աչքը նրան նկատեց ողողուած գահաւանդի վրայ: Եւ այժմ օտար երկրացի եկուորի համար գժուար էր մաքառել տեղական հասարակ սրնգի հետ, քանի որ այդ սրինգը կոյր մանկան համար երևան էր եկել նիրհման խաղաղ ժամին, երեկոյեան խորհրդաւոր շշուկի, քուն մտնող հաճարքենիների սօսաւիւնի միջոցին՝ Ուկրայնայի ամբողջ հայրենի բնութեան հետ միացած:

Բացի դրանից, պանի Պոպէլսկայան շատ հեռու էր Իօսիմի հմտութեանը հաւասարուելուց: Նշմարիտ է, նրա բարակ մատները թէ՛ աւելի ճկուն էին և թէ՛ դիւրաշարժ, նրա աճած մեղեդին աւելի բարդ ու փաթթամ, իսկ օրիորդ Կլապսն էլ շատ աշխատանք էր թափել իւր աշակերտուհուն գժուարին գործիքի վրայ աճել սովորեցնելու համար. բայց դրա փոխարէն Իօսիմն էլ երաժշտական բնատուր զգացմունք ունէր. նա եւ սիրում էր, և տխրում. իսկ թէ՛ սիրելիս և թէ՛ տրտելիս գիմում էր հարազատ բնութեան: Նրան անսպա-

1) Աւստրիայի մայրաքաղաքն է:

ճոյճ եղանակներ սովորեցնողը եղել է այդ բնութիւնը, դրա անտառի աղմուկը, տափաստանի արօտի խաղաղ շշուկը, այլ և հայրենի մտախոհ, հինաւուրց երգը, որը դեռ իւր մանկական օրրանի մէջ էր լսել:

Այո, Վեննայի գործիքին դժուար էր յաղթել գեղջկական սրնգին: Եւ ըստէ անգամ չանցած Քեռի Մակսիմը իւր անթացուպով յատակին խփեց ուժգին: Աննա Միխայլովնան քեռի Մակսիմի կողմը դարձաւ և Պետրիկի դժգոյն դէմքի վրայ տեսաւ նոյն արտայայտութիւնը, որով մանուկը գարնանային առաջին զբօսանքի անցն անմոռանալի օրը վէր էր ընկել արօտի մէջ:

Իօխիմը կտրեկցաբար մտիկ տուեց մանկանը, ասլա արհամարհական հայեացք գցեց գերմանական երաժշտական գործիքի վրայ ու իւր կոպիտ կօշիկներով ընդունարանի յատակը թրխթրխկացնելով հեռացաւ զնաց:

VIII



Այս անաջողութիւնը շատ արտասուք պատճառեց խեղճ մօրը՝ արտասուք ու ամօթ: Ի՞նչ, «ողորմած պանի» Պսպէլսկայեան, որ «ընտիր հասարակութեան» բուռն ծափահարութեան էր արժանացած, իրեն այսպէս բոլորովին յաղթուած զգաց, և այդ էլ ումնլից: Մի որ և իցէ ձիապան Իօխիմից ու նրա տխմար ծուանից: Եւ երբ մտաբերեց անաջող նուազածութիւնից լետոյ խախտի <sup>1)</sup> արտայայտած արհամարհալից հայեաց-

1) Խախտ կոչում են Մալաուսիայի բնիկներին, որոնք սովորութիւն ունէին իրենց գլխի կատարից թողնել մի փունջ մազ՝ ծամ արած, ցցունք (քեաքուլ), ըստ երևութին մողոյների իշխանութեան ժամանակից մնացած սովորութիւն: Դրանից էլ առած երկիրը կոչում են խախտիցիա, տղամարդկանց՝ խախտ, իսկ կանանց՝ խախուչկա: Ծ. Թ.

քը, բարկութիւնից նրա երեսը կրակ կտրեցաւ, և անկեղծօրէն ատեց այդ «զգուելի գեղջուկին»:

Բայց և այնպէս ամեն իրիկուն, երբ գաւակը դէպի ախոռն էր վազում, նա բաց էր անում պատուհանը, կռթնում ու անյազաբար ականջ դնում: Սկզբում նա արհամարհական զայրոյթով էր ականջ դնում և աշխատում էր միայն ծաղրելի կողմեր գտնել այդ «տըխմար շվշվոցի» մէջ: Բայց տակաւ առ տակաւ — նա ինքն էլ չէր կարողանում իրեն հաշիւ տալ, թէ ինչպէս եղաւ այդ — տխմար շվշվոցը, սկսեց տիրել իւր ուշադրութեանը, որից լետոյ արդէն սկսեց ազահաբար ունկընդրել մաախոհ — տխուր եղանակներին: Այն ժամանակ նա ինքն իրեն հարց էր տայիս, թէ ինչո՞ւմն է գրանց հրապոյրը, նրանց կախարդական գաղտնիքը, և կամաց-կամաց այդ կապոյտ երեկոները, իրիկնագէմի անորոշ սուտերն ու բնութեան հետ երգի ունեցած զարմանալի ներգաշնակութիւնը՝ նրան այդ հարցը պարզեցին:

«Այո, — մտածում էր նա ինքն էլ յաղթահարուած ու նուաճուած, — այստեղ մի բոլորովին այլատեսակ, անկեղծ զգացմունք կայ... մի դիւթական բանաստեղծութիւն, որ ձայնախագերով կարելի չէ սովորել»:

Եւ դա ճշմարիտ էր: Այդ բանաստեղծութեան գաղտնիքն այն կապն էր, որ կար վաղուց մեռած անցեալի և յաւետ կենդան, յաւետ մարդկային սրտին ազդող ու այդ անցեալին վկայ բնութեան միջև: Իսկ նա, այդ ճարպով անձնաճանի կօշիկներ հագած, կոշտացած ձեռներ ունեցող կոպիտ գիւղացին, իւր սրտում կրում էր այդ ներգաշնակութիւնը, բնութեան այդ կենդանի զգացումը:

Եւ Աննա Միրայլովնան զգում էր, որ իւր մէջ գոռոզ «պանին» խոնարհում էր գեղջուկ ձիապանի ա-

ուաջ: Նա մոռանում էր Իօխիմի կոպիտ հագուստը, նրա վրայից փչող կուշարի հոտը, և երգի յուշիկ գեղգեղանքի միջից իւր առաջ գծագրւում էր նրա հեգահամբոյր դէմքը, մոխրագոյն աչքերի քնքուշ հայեացքը, երկար բեխերի տակ խաղացնող վեհերկոտ-ծաղրական ժպիտը: Ժամանակ առ ժամանակ բարկութեան բոցը նորից երևան էր գալիս նորատի կնոջ դէմքի ու քունքերի վրայ, — նա զգում էր, որ իւր որդու ուշադրութիւնը գրաւելու համար կռիւ մղելով՝ այդ «գեղջուկին» հաւասարուել, նրա հետ մի գծի վրայ էր կանգնած, և նա, այդ «գեղըցին», լաղթել էր իրեն:

Իսկ պարտիզի ծառերը շշնջում էին նրա գլխի վերևը. կապոյտ երկնքում հրհրատում էր գիշերը և կապոյտ շամանգաղի նման սփռւում երկրիս երեսին, և միևնոյն ժամանակ Իօխիմի երգերի արտայայտող ջերմ թխտիծը զեղում էր մանկամարդ կնոջ հոգու մէջ: Նա աւելի ու աւելի խոնարհւում էր և աւելի ու աւելի սովորում հասու լինել անմիջական և զուտ անարուեստ բանաստեղծութեան անպաճոյճ գաղտնիքին:

## IX

Այո, զուտ, վառ զգացում ունէր գեղըցի Իօխիմը: Իսկ ինքը: Մթթէ այդ զգացումից ոչ մի կաթիլ չունի ինքը: Բայց ինչ ջերմութիւն է ուրեմն իւր կրծքի մէջ, և ինչի՞ այդքան յուզուած բաբախում է սիրտը և աչքերն ակամայ արտասուքով լցւում: Միթէ զգացում չէ՞ դա, սիրոյ կիզիչ զգացում չէ՞ դէպի իւր բախտագուրկ կոյր որդին, որ իրենից խոյս է տալիս, Իօխիմի մօտ գնում, և որին ինքը չէ կարողանում կենդանի վայելչութիւն պատճառել:

Նա չիշեց իւր նուագածութիւնից մանկան դէմքի վրայ երևան եկած ցաւի արտայայտութիւնը և աղե-

խարշ արտասուքի կաթիլները թափուեցան նրա աչքերից. նա ժամանակ առ ժամանակ հազիւ հազ զսպում էր իրեն խեղդող, դուրս ժայթքելու պատրաստ հեկեկանքը:

Խեղճ մայր: Չաւակի կուրուժիւնը իրեն համար էլ մշտական, անընթեռի ցաւ էր դարձել: Այդ արտայայտում էր թէ՛ իւր ցոյց տուած ցաւագար-չափազանցացրած քնքշութեան մէջ, և թէ՛ ամբողջապէս իրեն կլանած այն զգացման մէջ, որ հազարաւոր անտեսանելի լարերով իւր վշտահար սիրտը կապում էր մանկական տանջանքի ամեն արտայայտութեան հետ: Այդ պատճառով էլ այն, որ ուրիշին զայրոյթ կպատճառէր միայն՝ — գեղջուկ-սրնգահարի հետ ունեցած այս տարօրինակ մրցումը՝ — ամենագօրեղ-չափազանցացրած կիզիչ տանջանքների աղբիւր դարձաւ նրա համար:

Այսպէս, տոանց նրան թեթեւութիւն պատճառելու, անցնում էր ժամանակը, թէև դա անօգուտ էլ չմնաց նրա համար, — նա ինքն էլ սկսաւ իւր մէջ զգալ մեղեդիի ու բանաստեղծական զգացման այն կենդանի հոսանքը, որ արտայայտում էր խախօլի երգի մէջ և այնքան կախարդել էր իրեն: Այն ժամանակ նրա մէջ յուս ծագեց: Անձնավստահութեան յանկարծական զեղման ընդհատումն նա մի քանի անգամ մօտենում էր դաշնամուրին և կափարիչը բաց անում, որպէս զի ստեղների քաղցերգահրախումներով խեղդէ մեզմ սրբնդի ձայնը: Բայց ամեն անգամ էլ անվճռականութեան ու ախօթիսած վեհերկօտութեան զգացումը նրան ետ էր կասեցնում այդ փորձերից: Նա մտաբերում էր իւր մանկան տանջանք արտայայտող դէմքն ու խախօլի արհամարհական հայեացքը, և մթութեան մէջ ամօթից այրւում էին նրա այտերը, իսկ ձեռքը երկչոտ անյազութեամբ անց էր կացնում դատարկ օդի մէջ, ստեղների վերևից:

Բայց և այնպէս օր օրի վրայ նրա մէջ աւելանում էր իւր ներքին ոյժի մի տեսակ գիտակցութիւն և, չարմար ժամանակները, երբ մանուկը երեկոյեան գէմ խաղ էր անում հեռաւոր ճեմելիքում կամ զբօսնելու էր գնում, նստում էր դաշնամուր ածելու: Առաջին փորձերից մի այնքան էլ գոհ չէր նա՝ — ձեռները իւր ներքին գիտակցութեան չէին հնազանդուում. գործիքի հնչիւնները սկզբում խորթ էին թւում իւր տրամադրութեան: Բայց կամաց-կամաց այդ տրամադրութիւնը աստիճանաբար աւելացող ամբողջականութեամբ ու թեթեւութեամբ ձուլուում էր այդ հնչիւնների հետ. խախտիլի գասերն իզուր չանցան, իսկ մայրական ջերմ սէրն ու այն զգաստ ըմբռնողութիւնը, որով հասկացել էր, թէ ինչ բանն էր այդքան զօրեղ կերպով իշխել երեխի սրտին, նրան հնարաւորութիւն տուին այդ դասերը շատ շուտով իւրացնելու: Այժմ նրա մատները ոչ թէ ճարճատուն մանուածապտոյտ «պիէսներ» էին ածում, հապա մեկմ երգեր, Ուկրաինայի տխուր «խոհերը» մայրական սիրան ամոքելով հնչում էին ու լալիս մութ սենեակներում:

Վերջապէս նա այնքան վստահութիւն ստացաւ, որ դուրս եկաւ յայտնի պատերազմ, և ահա, երեկոները մի տարօրինակ մրցութիւն սկսուեց կալուածատիրոջ տան և Խօխիմի ախոռի միջև: Մի կողմից լեռընկած ծղոտածածկ ախոռից դուրս էին թռչում սրնգի գեղգեղուն դայլալիկները, իսկ միւս կողմից հաճարքենիների սաղարթի արանքով լուսնի լոյսի արտափայլմունքից ցոլացող տիրական տան բաց պատուհաններից սլանում էին դաշնամուրի լիահնչիւն երգեցիկ դաշնակները:

Սկզբում ոչ երեխան և ոչ էլ Խօխիմը չէին ուզում ուշադրութիւն դարձնել ապարանքի խրթնածածուկ

գործիքի վրայ, որի մասին նրանք նախապաշարուած էին: Մինչև անգամ երբ Իօխիմը կանգ էր առնում, մանուկը կիտում էր յոնքերն ու անհամբերութեամբ նրան զօռ անում:

— Դէ, դէ, ածիր:

— Բայց դեռ երեք օր չանցած Իօխիմը սկսեց իւր այդ դադարներն աւելի ու աւելի յաճախ կրկնել: Նա շուտ շուտ սրինգը մի կողմն էր դնում և առաւելող հետաքրքրութեամբ ականջ դնում դաշնամուրի ձայներին. այդպիսի միջոցներին մանուկն էլ էր ականջ դրնում ու մոռանում էր իւր բարեկամին զրգել, զօր անել: Վերջապէս Իօխիմը մտախոհ կերպով ասաց.

— ОТО-ЖЕ ЯКЪ ГАРНО... Бачь, яка воно штука...

Իսկ յետոյ էլ, նոյն մի բանի ունկնդրող մտազբաղ-մտամոլոր կերպարանքով, երեխին գիրկն առաւ ու պարտիզի միջով գնաց դէպի ընդունարանի բաց պատուհանը:

Նա կարծում էր, թէ «ողորմած պանին» իւր սեփական զուարճութեան համար էր միայն ածում ու իրենց վրայ ուշադրութիւն չէ դարձնում: Մինչդեռ Աննա Միխայլովնան լռել էր իւր օտիւս-սրնգի դադարելը, տեսնում էր իւր յաղթանակը, և նրա սիրտն ուրախութիւնից բաբախեց:

Միևնոյն ժամանակ լիովին հանգաւ նաև նրա դէգի Իօխիմը տաժած զայրոյթը: Նա երջանիկ էր և խոստովանում, որ այդ երջանկութիւնը Իօխիմին է պարտական՝ — նա սովորեցրել էր իրեն, թէ ինչպէս պէտք էր մանկանը կրկին դէպի ինքը հրապուրել, և եթէ այժմ իւր զաւակը նոր տպաւորութիւնների ահագին գանձեր ստանար, պէտք է նրանք երկուսն էլ գեղջուկ սրնգահարին, իրենց ընդհանուր ուսուցչին շնորհապարտ լինէին:

WJM

X

Վ

Պատնէշը խորտակուած էր: Միւս օրը երեխան վեհերոտ հետաքրքրութեամբ ներս մտաւ ընդունարան, ուր նա ոտք չէր դրել այն օրուանից, երբ քաղաքացի օտարոտի հիւրը, որ սարսափելի ցասկոտ-ճչուն էր թուացել իրեն, բուն էր դրել այդտեղ: Իսկ այժմ այդ հիւրի երէկուայ երգերը քաղցրացրել էին նրա ունկը և դէպի գործիքն ունեցած յարաբերութիւնը փոխել: Առաջուայ վեհերկօտութեան վերջին մնացորդներով մօտեցաւ այն տեղին, ուր դաշնամուրն էր դրած, մի փոքր հեռու կանգ առաւ ու ահանջ դրեց: Ընդունարանում ոչ ոք չկար: Մայրը գործը ձեռին միւս սենեակում նստած էր գահաւորակի վրայ և, շունչը բռնած, նայում էր ու զուարճանում նրա ամեն մի շարժումով, մանկան ջղախին դէմքի վրայ երևացող զգացումների ամեն մի փոփոխութեամբ:

Հեռուից ձեռները մեկնած՝ նա շօշափեց դաշնամուրի յղիած մակերևոյթը և իսկոյն երկչոտութեամբ ետ-ետ քաշուեցաւ: Մի երկու անգամ այս փորձն անելով, նա աւելի մօտ գնաց և սկսաւ ուշադրութեամբ զննել գործիքը, մինչև գետին խոնարհեցաւ, որպէս զի դաշնամուրի ոտները շօշափէ և ազատ կողմերից անցաւ դաշնամուրի սլտոյտքը: Վերջապէս նրա ձեռները յղիած ստեղներին դիպան:

Լարի մեղմ հնչիւնը անվստահ կերպով թրթռաց օդի մէջ: Երեխան երկար ժամանակ ունկնդրած լսում էր հնչիւնի տատանումները, որոնք մօր լսելիքի համար անհետացած էին, և ապա խորին ուշադրութեամբ շարժեց միւս ստեղներ: Այնուհետև նա իւր ձեռքը անցկացրեց ամբողջ ստեղնաշարի վրայով և հասաւ բարձր

հնչման ձայներին: Նա ամեն մի ձայնը հանելուց լետոյ կանգ էր առնում, և ձայները երերւում էին, դողդողում և օգի մէջ մարում: Կոյրի դէմքը լարուած ուշադրութեան հետ արտայայտում էր նաև գոհունակութիւն: Ըստ երևութին նա զօրաբճանում էր ամեն մի ձայնով, և արդէն տարրական ձայների վերաբերմամբ, որ ապագայ մեղեդիի բաղադրիչ մասերն էին կազմելու, ցոյց տուած զգաստ ուշիմութիւնը առհասարակ էր, որ նա արուեստագէտ պիտի դառնար:

Բայց միևնոյն ժամանակ թւում էր, թէ կոյրը մի տեսակ առանձին յատկութիւն էլ էր տալիս ամեն մի հնչիւնին՝ երբ որ նրա մասների տակից դուրս էր թռչում բարձր աստիճանի ուրախ և պայծառ հնչիւնը, նա իւր զուարթացած դէմքը վեր էր բարձրացնում, ասես թէ դէպի վերև ճանապարհ գնելիս լինէր այդ բարձրահնչիւն թռչող ձայնին: Ընդհակառակն, բամբի թաւ, հազիւ լսելի ու խուլ դողդողոցի վրայ խոնարհեցնում էր ականջը. նրան թւում էր, թէ այդ ծանր հնչիւնը պէտք է որ անպատճառ խոնարհ գլորուելիս լինի երկրի վրայով և ցիրուցան լինելով յատակի վրայ, գնայ հեռաւոր անկիւններում անհետանայ:

## XI

Քեռի Մակսիմը լոկ համբերատար էր դէպի այս բոլոր երաժշտական փորձերը: Որքան էլ տարօրինակ թուի, բայց և այնպէս մանկան այսքան որոշակի ցոյց տուած հակումները երկու տեսակ մտքեր էին ծնեցնում անկար գինուորականի մէջ: Մի կողմից երաժշտական բուռն ձգտումն ապացոյց էր նրա անկասկածելի ընդոժին երաժշտական ընդունակութիւններին և, այսպէսով, մասամբ էլ որոշում էր նրա հնարաւոր ապա-

գան: Միւս կողմից հիասթափման անորոշ զգացումը խառնուում էր այդ գիտակցութեանը:

— Ի հարկէ, — մտածում էր նա, — երաժշտութիւնը նոյնպէս մեծ ոյժ է, որի միջոցով հնարաւոր է ամբոխի սրտին տիրել: Նա, կոյրը, կարող է հաւաքել հարիւրաւոր հազնուած-զուգուած պճնասէր պարոններ ու տիկիներ, ու նրանց համար ածել զանազան տետակ... «վայսեր» ու «նօկտիւրներ» <sup>1)</sup> (ուղիղն ասած, քեռի Մակսիմի երաժշտական հմտութիւնը «վայսերից» ու «նօկտիւրներից» դէնը չէր գնում), իսկ նրանք մանրիկ թաշկինակներով կ'սրբեն իրենց աչքի արտասուքը: Ե՛հ, գրողը տանի. այդ չէր իմ ուզածս. բայց ինչ արած: Երեխան կոյր է, թող ուրեմն կեանքի մէջ դառնայ այն, ինչ որ կարող է: Բայց ասես թէ աւելի լաւ էր, որ երգն ընտրէր: Երգը լոկ անորոշակի հեշտացած ականջին չէ սնունդ տալիս: Նա պատկերներ է տալիս, մարդուս գլխում միաք ծնեցնում, իսկ սրտում արիութիւն:

— Ե՛յ, Իօխիմ, — ասաց նա մի երեկոյ կոյրի ետեւից Իօխիմի մօտ գնալով: — Արի, դէն զցի քու այդ սուլիչդ: Դա վայել է փողոցի երեխաներին կամ դաշտի գառնարածներին, իսկ դու՛հօ ահագին մարդ ես, չնայելով որ այդ տխմար Մարիան բոլորովին քեզ ոչխար է

<sup>1)</sup> «վայսեր» երոզական պար է, բայց իսկապէս՝ գերմանական է և  $\frac{3}{4}$  կաճ  $\frac{3}{8}$  բաղաձուլ ունի. յայտնի են Շարաուս-հօր, բայց առաւել Շարաուս-որդու վայսերը: Վերջինս վայսերի թագաւոր մականունն էր ստացած:

«Նօկտիւրներ» — երաժշտական սուանձին տեսակ պիէսներ են, որոնք մեղկ — անրջային բնաւորութիւն ունեն, բայց որոշ ձև չունին և սովորաբար գիշերային խաղաղութեան ժամանակ են ածուում: Դրա ծագումը հին չէ. այլ Ֆիլդի և Շոպէնի ժամանակից:

Մ. Թ.

դարձրել: Թիու. մինչև անգամ քու տեղդ ես եմ ամա-  
չում, Աստուած վկայ: Աղջիկը քեզնից երես է դարձ-  
րել, իսկ դու թթուե՛լ, մնացել ես: Հէնց մի գլուխ շրվ-  
վացնում ես ու շվվացնում, հէնց իմանաս ցանցն ըն-  
կած լոր լինիս:

Իօխիմը լսեց զայրագնած պանի այս երկար կշտամ-  
բանքն ու մթնում ինքն իրեն ծիծաղեց նրա անառիթ  
ցասման վրայ: Բայց երախաներ ու գառնարած բառե-  
րը թեթևակի վիրաւորանք պատճառեցին նրան:

— Այդպէս մի ասէք. պանէ, — խօսեց նա: — Ուկ-  
րայնայում ոչ մի հովուի մօտ այսպիսի սրինգ չէք գրա-  
նիլ, ուր մնաց գառնարածների մօտ...: Եղածները բո-  
լորն էլ սուլիչներ են միայն, մինչգետ սա... այ, ինք-  
ներդ զատեցէք:

Նա իւր մատները բոլոր ծակերի վրայ գրեց ու  
սրնգի վրայ միևնոյն ձայնի առաջին և երկրորդ ութ-  
ներեակի հնչիւններն արձակեց. ու ինքը զուարճանում  
էր այդ լիահնչիւն ձայներով: Մաքսիմը թքեց:

— Թիւ. քո տունը չքանդուի. բոլորովին ցնդուել  
է այս գետգան: Ինչի՞ն է քու սրինգդ: Դրանք ամեն-  
քըն էլ մէկ բան են՝ — սրինգներն էլ, կանայքն էլ՝ քու  
Մարիայիդ էլ հետը հաշուած: Ա՛յ ինչ եմ ասում թէ  
մի երգ երգէիր... մի լաւ պապենական հին երգ:

Մակսիմ Եացենկոն, որ մալառոս էր, շատ պարզ  
վարմունք ունէր զիւղացիների ու ծառաների հետ: Նա  
յաճախ կանչվառում ու հայհոյում էր, բայց ոչ ոք չէր  
վիրաւորում նրանից, ուստի և ծառաները թէև պատ-  
կառում էին նրանից, բայց միևնոյն ժամանակ բոլորո-  
վին ազատօրէն էին վարում հետը:

— Ինչ ասեմ, — պատասխանեց Իօխիմը պանի ա-  
ռաջարկութեանը: — Մի ժամանակ ես էլ ուրիշներից  
պակաս չէի երգում: Բայց իցէ թէ մեր գեղջկական եր-

գըն էլ ձեզ դիւր չգայ, պանէ,— թեթևակի խայթեց նա իւր խօսակցին:

— Է՛հ, դուրս ես տալիս, էլի, — ասաց Մակսիմը, — լաւ երգը սրնգի թափն է. միայն պէտք է երգել իմանալ: Ապա, Պետրուսիկ, թող Իօսիմը երգէ, մենք լսենք: Բայց կը հասկանան արդեօք...:

— Գեղջկական երգ պիտի ասէ, — հարցրեց երեխան: — Գեղջկական լեզուն հասկանում եմ:

Մակսիմը հռուչեց:

— Է՛հ, տղաս: Գեղջկական երգեր չեն դրանք...: Այլ հօր, ազատ ազգի երգեր են: Քու մայրական պապերդ նրանց երգում էին Գնեսպրի ու Դօնի տափաստաններում և Սև ծովի վրայ...: Է՛հ, մի ժամանակ դու էլ այդ կը հասկանաս. իսկ այժմ ես ուրիշ բանից եմ վախում:

Արդարև, Մակսիմը վախենում էր, որ մի ուրիշ բան անհասկանալի կը մնայ երեխի համար: Նա կարծում էր, թէ վիպական երգի պայծառ պատկերները մարդուս օրտին ազդելու համար անպատճառ տեսողական պատկերացումն է հարկաւոր: Նա վախենում էր, որ մանկական խաւար գլուխը անկարող կլինի ըմբռնելու ժողովրդական բանաստեղծութեան պատկերաւոր լեզուն: Նա մոռացել էր, որ հին բայանները և Ուկրալինայի կորգարներն ու փանդիւ ածողները <sup>1)</sup> մեծ մասամբ կոյրեր էին: Ծշմարիտ է, թէև շատ անգամ

<sup>1)</sup> Ժողովրդական երգիչներ ու նուագաժողովներ եղել են բոլոր ազգերի մէջ ևս. հին ժամանակները մեզանում յայտնի են եղել Գողթան երգիչները, իսկ այժմ աշուղները: Հնում յայտնի էին Յունաստանում ռապսօդները, Սկանդինաւիայում սկայդները, Սլաւոնների մէջ բայանները: Ներկայումս Ռուսիայում աշուղները կոչւում են կորգար կամ բանդուրիսա (բանդուրան քնարի նման մի գործիք է 8—24 լարով): Մ. Թ.

1/0p = Լուսնայի քայտի  
20h = , , կրասրասրակոչի

աղքատութիւնը , հաշմանդամութիւնը մարդկանց ստիպում էին քնար կամ փանդիւ ձեռք առնել՝ նրանցով ողորմութիւն հաւաքելու համար: Բայց դրանք բոլորն էլ հօ խուստ ձայնով աղքատներ ու մուրացկաններ չէին միայն, և դրանք բոլորն էլ ծերութեան հասակում հօ չէին կուրացել: Կուրութիւնը տեսանելի աշխարհս ծածկում է խաւարչտին քօղով, որը, իհարկէ, իջնում է ուղեղի վրայ և դժուարացնում ու ճնշում նրա աշխատութիւնը, բայց և այնպէս ժառանգական պատկերացումներից և ուրիշ ճանապարհներով ստացուած տպաւորութիւններից ուղեղը մթութեան մէջ ստեղծում է իւր սեպհական աշխարհը, — թէև տխուր, վշտակոծ և շամանդազով պատած, բայց և ոչ զուրկ իւրատեսակ, անորոշ բանաստեղծութիւնից:

## XII

Մակսիմն ու երեխան նստեցին խոտի վրայ, իսկ Իօսիմը թեք ընկաւ իւր նստարանի վրայ (այս դիրքն աւելի էր համապատասխանում նրա արուեստգիտական տրամադրութեան) և, փոքր ինչ մտածելուց լեռոյ ըսկըսաւ երգել: Պատահաբար էր թէ զգաստ բնագրամամբ՝ խիստ աջող էր նրա ընտրութիւնը: Նա այս պատմական պատկերն էր ընտրել.

Ой, тамъ на горѣ, тай женщины жнутъ... <sup>1)</sup>

Ով որ լսել է ժողովրդական այս սքանչելի երգը պատշաճաւոր կերպով ասելիս, անշուշտ նրա լիշողութեան վրայ խորը տպաւորուած կլինի այդ երգի բարձր, երկար, ասես թէ պատմական լիշողութեան թախիծով

<sup>1)</sup> է՛յ, էս սարի վրէն, սարի վրէն  
Հնձուորները հունձ են անում.

համակուած տարօրինակ եղանակը: Նրա մէջ ոչ անց-  
քերի նկարագիր կայ, ոչ արիւնահեղ կոտորածներ և  
ոչ էլ քաջազնական սխրագործութիւններ: Դա ոչ էլ  
կազակի հրաժեշտն է իւր սիրուհուն, ոչ յանգուզն  
ասպատակութիւն է և ոչ էլ կապոյտ ծովի ու Գանու-  
բի վրայ մակուիկներով կատարած արշաւանք: <sup>1)</sup> Դա մի  
վաղանցուկ պատկեր է միայն, որը որպէս վաղանցուկ  
անուրջ, որպէս պատմական անցեալի մասին տեսած է-

<sup>1)</sup> Մալաուսիան մի ընդարձակ տափաստան լինելով  
միշտ ենթակայ էր թշնամիների յարձակման: Թէպէտ ուսաց  
իշխանութիւնը Գնեպրի արիւն հիմնուեց, բայց յետոյ հաստա-  
տուելով հիւսիս-արեւելքում, Մոսկուայում, անզօր եղաւ այդ  
երկիրը իւր իշխանութեան տակ պահել: Մալաուսիան նախ  
ընկաւ Լիտուայի, ապա և Լեհաց թագաւորների ձեռքը, որոնք  
ամենայն հնար գործ էին դնում ժողովրդին կաթովիկ դարձ-  
նել: Ապուածատէրները սկսան խօսել լեհերէն, կրօնը փոխե-  
ցին, ժողովարգն էլ ճորտ դարձրին: 1596 թ. մտաւ միարա-  
բութիւնը, որով ամեն տեղ եկեղեցու մէջ պիտի ճանաչուէր  
պատիլ գերիշխանութիւնը: Մի կողմից կրօնական ու տնտե-  
սական սոսկալի ճնշումները, միւս կողմից թաթարների և  
ուրիշների ասպատակութիւնները խիղար և ազատատէր մարդ-  
կանց ստիպեցին ասպատանել ասպանով տեղեր և միացած ու-  
ժով կուռել իրենց հալածողները դէմ. այդտեղ մեծ դեր կատա-  
րեցին կազակները. դրանք ազատ մարդիկ էին և միայն թա-  
գաւորի իշխանութիւնն էին ճանաչում: Դրանք XV դարում  
մարտիկները մի ընկերութիւն կազմեցին Գնեպր գետի խու-  
թերում, Խորտից կղզում և մօտակայքում և սկսան ասպատա-  
կել Ղրիմու թաթարներն երկրները, Ան ծովի արիւրը: Նրանք  
յաճախ ասպտամբում էին Լեհաստանից և միացած Թիւրքիայի  
հետ կուռում էին սարսափելի կոտորածներ ու աւերածոյք գոր-  
ծելով. բայց մեծ մասամբ, վերջ ի վերջոյ, ընկճում էին. շատ  
անգամ էլ միտցած լեհաց հետ պատերազմում էին Ռուսիայի  
դէմ: Եւ թէպէտ 1654 թ. կազակները Մալաուսիայի հետ մը-  
տան Ռուսիայի իշխանութեան տակ, բայց չզաղարեցան անկա-  
խութիւն ձեռք բերելու համար նորից ասպտամբել: Մ. Թ.

րազի մի բեկոր, առ վայրկեան մի վերակենդանացել է մալաուսի լիշողութեան մէջ: Ներկայիս մի հասարակ և սոսկական օր յանկարծ նրա երևակայութեան մէջ նկարուել է այդ անորոշ, նսեմ և անհետացած պատկերը, որը տողորուած է այն առանձին թախիծով, որով համակուած է արդէն կորած հայրենի անցեալը: Անհետացած, բայց ոչ բոլորովին կորած անցեալը: Այդ անցեալն են լիշեցնում գեռ ևս բարձր կանգնած շերիմների բլրակները (խուրդան)<sup>1)</sup>, որոնց մէջ հանդուած են կազակների ոսկերրտիքը, ուր կէս գիշերին կրակներ են վառուում, որտեղից գիշերները ծանր թառանջ է լուում: Պրա մասին խօսում է և ժողովրդական ավանդութիւնն ու տակաւ առ տակաւ լռող ժողովրդական երգը.

Ой, тамъ на горі, тай женці жнуть  
 А по-підъ горою, по-підъ зеленою  
 Козаки идуть,  
 Козаки идуть!..<sup>2)</sup>

Պալարագեղ **Կ**րան վրայ հնձուորները հունձ են անում: Իսկ լեռան ստորոտում, ներքևում, կազակ շօրքն է անցնում:

Մո կսիմ Եացենկոն խորին ուշադրութեամբ լուում

1) Խուրդան թուրք-մոզովական բառ է և ամբողջիւն է նշանակում: Խուրդանների ուսումնասիրութիւնից կրեւում է, որ դրանք գամբարաններ են. դրանց մէջ գտնուած են հարիւրաւոր սարգկանց կմաղքներ ևւ մեծ մասամբ պատկանում են Ռուսիայի անդրպատմական շրջանին: Մ. թ.

<sup>2)</sup> Ե՛յ, էս սարի վրէն, սարի վրէն

Հնձուորները հունձ են անում:

Կանաչ սարի, սարի փեշէն

Կազակներ անցնում

Կազակներ անցնում...:

էր այս տխուր եղանակը: Նրա երեւակայութեան մէջ  
ծնուեց այս, ասես արեւմտոցի մեղամաղձային ճաճանչ-  
ներով լուսաւորուած պատկերը, որ առաջացել էր զար-  
մանալի կերպով երգի բովանդակութեան հետ միա-  
խառնուող հրաշալի եղանակից: Լերան վրայ, խաղաղ  
դաշտերում երևում են հնձուորների պատկերները՝ ան-  
ձայն խոնարհած արտերի վրայ: Իսկ ներքեւ, հովտի  
երեկոյեան ստուերների հետ միախառնուած անշշուկ  
անցնում են գնդերը:

По переду Дорошенко  
Веде своє війско, війско запорожське,  
Хорошенько. <sup>1)</sup>

Եւ պատմական երգի երկարող հնչիւնը ծփում է,  
դողանջում և օդի մէջ լսում, որպէս զի այնուհետեւ  
կրկին դողանջէ և աղջամուղջի միջից նորանոր պատ-  
կերներ դուրս քաշէ...:

## XII.

Մանուկը մռայլ ու տխուր դէմքով լսում էր եր-  
գը: Երբ երգիչը երգում էր լերան մասին, որի վրայ  
հնձուորները հունձ են անում, երեւակայութիւնը՝ Պետ-  
րոյին անմիջապէս դէպի ծանօթ քարափի բարձունքը  
տարաւ: Նա այդ քարափը ճանաչեց նրանից, որ ներ-  
քեւում հոսում է գետը՝ քարերին բաղխող հազիւ լսե-  
լի ալիքները վշտացնելով: Նա գիտէ նոյնպէս, թէ ինչ  
բան է հնձուորը, նա լսում է մանգաղների գնդգնդո-  
ցը ու տապալուող հասկերի խշխշոցը:

<sup>1)</sup> Զօրքի առաջ, դուրս անցած

Գորոչնիկոն դաշաղ զօրքը, դուշաղ զօրքը  
Սուաջ տանում:

Իսկ երբ երգի մէջ սկսան նկարագրել, թէ ինչ էր կատարուում լերան ստորոտում, կոյր ունկնդրին երևակայութիւնն անմիջապէս լերան գազաթից հովիտ իջեցրեց...

Մանգաղների զնգզնգոցը դադարեց, բայց երեխան գիտէ, որ հնձուորներն այստեղ են, լերան վրայ. նրանք մնացին, բայց հնձելու ձայնը չէ լսուում, որովհետեւ նրանք բարձր են, նոյնքան բարձր, որքան և մայրիները, որոնց աղմուկը լսում էր նա քարափի տակ կանգնած: Իսկ ներքևը, գետափին լսուում է ձիանոնց անընդհատ, միակերպ տրոփը...: Նրանք շատ են, այնտեղ, լերան ստորոտում մթութեան մէջ տարածուած է խուլ աղմուկը: Այդ կազակներն են գալիս:

Պոյր մանուկը գիտէ նոյնպէս, թէ ինչ է նշանակում կազակ: Ծերունի Խվեդկոյին ամենքն էլ «ծեր կազակ» են անուանում. նա ժամանակ առ ժամանակ ապարանքն է գալիս: Խվեդկոն շատ անգամ էր Պետրոյսին իւր ծնկներին նստացրել ու դողդոջուն ձեռներով նրա մագերը շոյել: Երբ երեխան իւր սովորութեան համեմատ ձեռները նրա դէմքին էր քսում, այն ժամանակ իւր դիւրազգաց մատներով շօշափում էր ծեր կազակի խորխոր կնձիռները, քաշ ընկած մեծ-մեծ բեխերը, ներս ընկած ալտերը և ալտերի վրայ ծերունու արտասուքը: Երգի հնչիւնների ազդեցութեամբ մանուկն այսպիսի կազակներ էր երևակայում այնտեղ, ներքևը, լերան ստորոտում: Նրանք էլ Խվեդկոյի նման՝ երկար բեխերով, նոյնպէս կզացած, նոյնպէս ծերունի, նստած են ձիանը: Նրանք անկերպարան ստուերների նման շարժուում են խաւարի մէջ և նոյնպէս, Խվեդկոյի նրման, մի բանի համար լաց են լինում. նրանք գուցէ լաց են լինում նրա համար, որ թէ լերան վրայ և թէ հովտում սփռուած են Իօսիմի երգի ախուր, եր-

կայն հառաչները—հառաչներ այն «անտես-անճանանջ կազակի» համար, որ իւր նորատի կինը փոխել է պատերազմական տառապանքների հետ:

Մակսիմը բաւական է մի հայեացք միայն ձգէր, որ հասկանար, թէ երեխի դիւրազգած բնոյթքը, չնայելով կուրուլթեան, ընդունակ էր երգի բանաստեղծական պատկերներն ըմբռնելու:

Այսպէս էր օրինակ Գորոչենկոյի ապստամբութիւնը, որը յիշուած է սոյն գրքոյկի մէջ: Նա ուզում էր միանալ թիւրքիայի հետ, բայց ուսուաց և լեհաց միացեալ զօրքերը յետ մղեցին սուլթանի զօրքերին: Միևնոյն կերպով XVIII դարում ուզում էր Մազեպան շուեղացոց օգնութեամբ ապստամբել, բայց նոյնպէս անաջող անցաւ: 1775 թ. Եկատերինա կայսրուհին վերջացրեց սեչը, կազակները ցիր ու ցան եղան և ապա կազմեցին ներկայ կազակ զօրքի մի մասը:

Ընդհանրապէս կազակները ազատասէր մարդիկ էին, որ փախչելով իրենց իշխանների ու կալուածատէրների ձեռքից, բնակութիւն էին հաստատում Ռուսաց լիթաղաւորութեան սահմանների վրայ: Նրանք կամաց-կամաց կազմակերպուելով խումբեր էին կազմում և երկրի սահմանները պահպանում, շատ անգամ նաև երկրների տիրում, ինչպէս օրինակ Երմակը իւր խմբով Սիբիրին տիրելով ընծայաբերեց Ռուսիային: Մ. Թ.

*Imolo ref. d. yzaranak  
1906 u. 1890.*

Գ. ԳԼՈՒԽ.

I

Մակսիմի նախագծած կարգ ու կանոնի շնորհիւ կոյրին ամեն բանի մէջ, ուր որ հնարաւոր էր, ինքն իւր գլխին էին թողել; և այդ շատ լաւ արդիւնք ունեցաւ: Տանը նա ամենևին անօգնական չէր թւում,

ամեն կողմ ամենայն վստահութեամբ ման էր գալիս, ինքը իւր սենեակը կարգի էր ձգում, խաղալիկներն ու իրերը որոշ կարգով դասաւորում: Բացի այդ, նրան մաաշէլի եղածին չափ, Մակսիմն ուշադրութիւն էր դարձնում նաև նրա մարմնական մարզանքների վրայ՝ — նա մարմնամարզութեամբ էր պարապում, իսկ վեց տարեկան միջոցին Մակսիմը նրան մի հանդարտ և փոքրիկ ձի ընծայեց: Սկզբում մայրը երեւակայել անգամ չէր կարող, թէ իւր կույր որդին ձի հեծնել կը կարողանայ, և իւր եղբօր հնճարքը կատարեալ խելացնորութիւն էր համարում: Բայց անկար զինուորականը գործ դրեց իւր բոլոր ազգեցութիւնը, և երկու երեք ամսից կույրը թամբի վրայ պինդ նստած խնդազին արշաւում էր Խօխիմի կողքից, որը միայն պտուտ անելու տեղերումն էր կարգազրութիւն անում:

Այսպէսով կուրութիւնը նրա մարմնական կանոնաւոր զարգացման արգելք չեղաւ և մանուկի բարոյական կազմի վրայ դրա գործած ազգեցութիւնը որքան հընարաւոր էր, թուլացաւ: Նրա հասակը իւր տարիքին համեմատ բարձր էր և վայելչակազմ. դէմքը փոքր ինչ դժգոյն էր, դժերը նուրբ և արտայայտիչ: Սև մազերն աւելի ևս շուք էին տալիս դէմքի սպիտակութեան, իսկ խոշոր, մութ, հազիւ շարժուող աչքերը նրան իւրատեսակ, մի անզամից ուշադրութիւն գրաւող արտայայտութիւն էին տալիս: Ունքերի վրայի թեթև ծալքը, գլուխը փոքր ինչ առաջ ձգելու սովորութիւնը, դէմքի վրայից ժամանակ առ ժամանակ մի տեսակ ամպի նման անցնող թախիծի արտայայտութիւնը՝ — ահա սրանք էին միայն, որով կուրութիւնը արտայայտուում էր նրա արտաքին կերպարանքի վրայ: Ծանօթ տեղերում նրա շարժումներն ինքնավստահ էին, բայց էլի նկատելի էր, որ ընդօժին աշխույժը ճնշուած է և միայն ժամա-

նակ առ ժամանակ է արտայայտուում ջղային բաւական բուռն ուժգնութիւններով:

## II

Այժմ լսողութեան տպաւորութիւնները բոլորովին տիրապետող նշանակութիւն էին ստացել կոյրի կեանքի մէջ, ձայնական ձևերը նրա մտքի գլխաւոր ձևերն, մտաւոր աշխատութեան կենդրոնն էին դարձել: Նա երգերն ուսանում էր՝ խորամուխ լինելով նրանց գիւթիչ եղանակներին, և բովանդակութեանը ծանօթանում՝ նրան մեղեդու թախիժով, զուարթութեամբ կամ մտախոհութեամբ գեղանկարելով: Նա առաւել ևս ուշադրութեամբ ըմբռնում էր շրջապատող բնութեան ձայները և, ազօտ զգացողութիւնները միախառնելով մայրենի երգերի սովորական եղանակներին, երբեմն-երբեմն կարողանում էր դրանց համախմբելով՝ յանպատրաստից ստեղծել մի եղանակ, որի մէջ զժուար էր որոշել, որտեղ է վերջանում ժողովրդական, ականջի սովոր եղանակը և որտեղ է սկսւում սեպհական ստեղծագործութիւնը: Նա ինքն էլ չէր կարող իւր երգերի մէջ ջոկել այդ երկու տարրերը—այնքան անբաժանելի կերպով միաձուլուած էին նրանք: Նա շատ շուտով սովորում էր այն ամենը, ինչ որ աւանդում էր մայրը, որ դաշնամուր ածել էր սովորեցնում, բայց նա սիրում էր նաև Իօսիմի սրինգը, Գաշնամուրն աւելի ճոխ, աւելի հնչական ու աւելի լիահնչիւն էր, բայց դա սենեակումն էր դրած, մինչդեռ սրինգը կարելի էր հետը դաշտ տանել, և նրա զեղզեղանքն այնպէս անբաժան միախառնուում էր տափաստանի մեղմ հառաչանքին, որ երբեմն Պետրոյսն ինքն էլ չէր կարողանում որոշել, թէ հոյն էր հե-

ուսից աղօտ խոհեր սփռում, թէ՛ ինքն էր այդ հառաչ-  
ները դուրս բերում սրնգի միջից:

Երաժշտութեան այս հրապույրը նրա մտաւոր ա-  
ճելութեան կեդրոն դարձաւ. դա լցնում և բազմատե-  
սակ էր դարձնում նրա գոյութիւնը: Մակսիմը դրանից  
օգուտ էր քաղում նրան իւր հայրենիքի պատմութեա-  
նը ծանօթացնելու համար, և այդ ամբողջ պատմու-  
թիւնը, որ ձայներից էր հիւսուած, անցաւ կոյրի երե-  
ւակայութեան միջով: Երգով հետաքրքրուած լինելով,  
նա սկսաւ ծանօթանալ նաև նրա մէջ երգուած հերոս-  
ների վիճակով, նրանց ճակատագրով, իւր հայրենիքի  
ճակատագրով: Այստեղից նրա մէջ հետաքրքրութիւն զար-  
թեցաւ դէպի գրականութիւնը, և ինք տարեկան հա-  
սակում Մակսիմը սկսաւ իւր առաջին դասերն աւան-  
դել նրան: Մակսիմի հմտաբար աւանդած դասերը,  
(որոնց համար նա ստիպուած եղաւ կոյրերին կրթելու  
համար գործածուող յատուկ ձևերն ուսումնասիրելու),  
շատ դիւր եկան տղին: Դրանք նոր տարրեր էին մըտ-  
ցնում նրա հոգեկան տրամադրութեան մէջ, այսինքն  
որոշակութիւն ու պարզութիւն, որոնք հաւասարակըշ-  
ուում էին երաժշտութեան նսեմ տպաւորութիւնները:

Այսպէսով երեխան ամբողջ օրը զբաղուած էր.  
կարելի չէր գանգատուել, թէ նա նուազ տպաւորու-  
թիւն է ստանում: Թւում էր. թէ լիալիը կեանքով էր  
ապրում նա՛ ինչքան որ դա մատչելի էր նրան: Թւում  
էր դարձեալ, թէ նա իւր կուրութիւնն անգամ չէ  
զգում:

Մինչդեռ մի օտարօտի, ոչ-մանկական թախիժ  
բայց և այնպէս երևում էր նրա բնաւորութեան մէջ:  
Մակսիմն այդ վերագրում էր մանուկների ընկերու-  
թեան պակասութեանը և աշխատում էր այդ պակա-  
սը լրացնել:

Ապարանք բերուած գիւղացի մանուկները քաշուած էին և չէին կարողանում ազատ բացուել: Բացի տան անսովոր կարգ ու սարքից, նրանց քիչ չէր շփոթեցնում նաև «պանիչի» կուրուծիւնը: Նրանք վեհերկոտութեամբ նայում էին նրան և, մի կողմ հաւաքուած, լուռ էին մնում կամ անհամարձակ կերպով շշնշում իրար մէջ: Բայց երբ նրանց ազատ բաց էին թողնում պարտիզում կամ դաշտում, աւելի ազատ էին դառնում և իրենց համար խաղեր յօշիւնում, բայց այդպիսի միջոցին էլ կոյրը անմասն էր մնում խաղին և տխուր լսում ընկերների ուրախ վաղվըզոցը:

*պս* Երբեմն էլ Իօսիմը մանուկներին հաւաքում էր գլխին ու սկսում զուարճալի հեքեաթներ և պատմութիւններ անել: Գիւղացի մանուկները, որոնց ծանօթ էին խախօլների խենդուլիկ դւերն ու խարբալ-վհուկները, այդ պատմութիւնները լրացնում էին իրենց սեպհական պաշարից և ժամանակը շատ զուարճալի էր անցնում: Կոյրը մեծ ուշադրութեամբ լսում էր նրանց և հետաքրքրուած էլ էր, բայց ինքը սակաւ էր ծիծաղում: Ըստ երևութին կենդանի խօսքի սրութիւնները մեծ մասամբ անմատչելի էին մնում նրա համար, և իրօք—նա ոչ պատմողի աչքերի խորամանկ փոքրիկ կրակները կարող էր տեսնել, ոչ ծիծաղուն կնճիւղները, ոչ երկար ընչացքների քաշքշոցը:

*այս*

*912 հարկ 20 տար*

### III

3

Մեր նկարագրած ժամանակից փոքր ինչ առաջ փոխուել էր մօտի կից կալուածքի «պոսսեսորը» <sup>1)</sup>: Նախկին անհանգիստ հարևանի տեղ, որը նոյն իսկ խա-

<sup>1)</sup> Հարաւ-արևմտեան Ռուսիայում բաւական տարածուած է կապալով կալուածք վեր առնելը: Կապալառուն (տեղական

զողաբարոյ պան Պոպելսկու հետ էլ դատի մէջ էր մտած մի ինչ որ արտ արածացնելու խնդրի պատճառով, այժմ մերձաւոր ագարակում իւր կնոջ հետ ապրում էր ճերուհի Եակուլսկին: Չնայելով որ երկու ամուսինների տարիքը միասին հաշուած հարիւրից պակաս չէր լինիլ, բայց նրանք համեմատաբար դեռ մօտերքս էին ամուսնացել, որովհետեւ պան Եակուլը երկար ժամանակ չէր կարողանում կապալի համար հարկաւոր գումարը հաւաքել, ուստի և այդ պատճառով էլ ուրիշների դռներում „տնտեսի“ պաշտօն էր կատարում: Իսկ պանի Ագնեշկան, երջանիկ վայրկեանի ակնկալութեամբ, որպէս պատուաւոր սենեկապանուհի ապրում էր Ն Ն գրաֆուհու մօտ: Երբ որ վերջապէս հասաւ այդ երջանիկ ըպպէն և հարսն ու փեսան ձեռք ձեռքի տուած եկեղեցի մտան, արդէն վայելչատես փեսի ընչացքի ու քեաքուլի կէսը բոլորովին սպիտակել էր, իսկ հարսի ամօթխածութեամբ կարմրատակած դէմքը նոյնպէս արծաթափայլ խոպոպներով էր զարդարուած:

Սակայն այդ հանգամանքն արգելք չեղաւ ամուսնական երջանկութեան և լամած սիրոյ պտուղն եղաւ ժիակ դուստրը, որ համարեա թէ կոյրին տարեկից էր: Ծերութեան օրերում հաստատելով իրենց բոյնը, որի մէջ նրանք, թէև պայմանական կերպով, կարող էին իրենց լիակատար տէր համարել, ճերուհիներն ապրում էին խաղաղ ու համեստ, ասես թէ այդ հանգստութեամբն ու առանձնական կեանք վարելով ուզում էին իրենց վարձատրել այն ծանր կեանքի համար, որ անց

բառով «պոստեսոր») կառավարչի նման մի բան է դառնում: Նա կալուածքի տիրոջը մի որոշ գումար է վճարում, և այնուհետև իւր ձեռներէցութիւնից է կախուած շատ կամ նուազ եկամուտ ստանալը: Ծ. 2.

էին կացրել օտարների մօտ: Նրանց վերցրած առաջին կապալի գործը մի այնքան էլ աջող չէր գնացել, ուստի և այժմ նրանք փոքր ինչ սահմանափակել էին իրենց ձեռնարկութիւնը: Սակայն այս նոր բնակարանում էլ ինչպէս իրենց սիրտն էր ուզում, այնպէս տեղաւորուեցան: Անկեանը, ուր բաղեղներով զարդարուն սրբերի պատկերներն էին դրուած, պառաւն «արմաւենու» և «մոմերի» <sup>1)</sup> հետ պահում էր փոքրիկ տոպրակներով արօտներ ու արմտիք, որոնցով նա բժշկում էր իւր ամուսնուն և իրեն գիմող գիւղացի կանանց ու տղամարդկանց: Այդ արօտների հոտով լցուել էր ամբողջ խրճիթը և ամեն մի այցելուի լիշողութեան մէջ անլուծանելի կերպով միաւորուում էր դա այն լիշատակի հետ, որ այցելուն ստանում էր այդ փոքրիկ մաքուր տնակի, դրա խաղաղութեան և կարգ ու սարքի, և այն երկու ձերուկների մասին, որոնք մեր ժամանակուայ համար անսովոր հանգիստ կեանք էին վարում այդտեղ:

Այս ձերուկների ընկերակցութեամբ էր մեծանում նրանց միամօր աղջիկը, մի փոքրիկ աղջիկ՝ երկայն գեղձան ծամով և կապոյտ աչքերով, որոնք ամենքին էլ հէնց առաջին ծանօթութիւնից զարմացնում էին իրենց մի տեսակ արտասովոր լրջութեամբ, որը զեղուած էր նրա

1) «Արմաւենու» ճիւղը համապատասխան է ռուսական «ուռի» ճիւղին, իսկ «մոմերը», որ «զրոմնիցա» են կոչւում, թափուում են մեղրամօմից և վառում են խիստ փոթորիկների միջոցին, նոյնպէս հոգեվարքների ձեռքն են տալիս: Մ. Հ.

Իսկ հայոց մէջ սովորութիւն կայ (Խրիմ եւ Նոր-Նախիջևան) Մաղկազարդին եկեղեցուց բերած ուռիքը պահել և ստատիկ քամու ժամանակ այրել, որ քամին դադարի. իսկ մօմ չեն պահում. և եթէ պահում են—Նրուսաղեմից բերածը, որ վառում են բերդի մահուան միջոցին:

ամբողջ կերպարտնքի վրայ: Թւում էր, թէ ծնողների տարածամ սիրոյ խաղաղութիւնը գտեր բնաւորութեան վրայ արտափայլել էր այդ ոչ-մտնկական խոհականութեամբ, շարժումների կանոնաւոր ու սահուն հանգարտութեամբ, կապուտ աչքերի մտախոհութեամբ ու խորութեամբ: Նա երբէք օտարներից խոյս չէր տալիս, երեսանների հետ ծանօթանալուց չէր քաշւում և մասնակցում էր նրանց խաղերին: Բայց մի այնպիսի անկեղծ ներողամտութեամբ էր անում այս ամենը, որ սեսս թէ այդ բաներն իրեն համար բոլորովին կարևոր չլինէին: Իրօք, նա լիովին գոհ էր իւր սեպհական ընկերակցութիւնից՝ զբօսներէս, ծաղիկներ հաւաքելիս, իւր խրճիկի հետ գրոյց անելիս. և այս ամենը նա մի այնպիսի լրջութեամբ էր անում, որ երբեմն թւում էր թէ ձեր առջևինը ոչ թէ երեսայ է, հասկա մի փոքրիկ հասակաւոր կին:

#### IV

Մի անգամ Պետրոյսը գետի մօտ բլրակի վրայ մենակ էր: Արևը մայր էր մտնում, օդի մէջ հանգստութիւն էր աիրում, միայն երեկոյեան տուն վերադարձող նախրի ձայնն էր գալիս, որը հեռաւորութեան պատճառով մեղմանում էր: Երեսան նոր էր դադարել ածելուց և ամառային երեկոյի կիսանիւրհ խոնջութեան անձնատուր եղած, ձգուել էր արօտի վրայ: Նա մի առ վայրկեան ինքնամոռացութեան մէջ էր ընկել, երբ մէկի թեթև ոտնաձայնը նրա նիրհը խանգարեց: Նա տհաճութեամբ բարձրացաւ արմուկների վրայ և ականջ դրեց: Քայլերը կանգ առան բլրակի ստորոտում: Քայլուածքը նրան անծանօթ էր:

— Այ տղայ, — յանկարծ լսեց նա մի մանկական

ձայն: — Չգիտե՞ս ո՞վ էր հէնց նոր այստեղ սրինգ ածողը:

Կոյրը չէր սիրում, որ իւր առանձնութիւնը խանգարեն: Ուստի և փոքր ինչ կոպտութեամբ պատասխանեց այդ հարցին:

— Ես էի...

Թեթև, զարմացական բացականչութիւն եղաւ այդ խօսքին պատասխան, և անմիջապէս էլ աղջկայ ձայնը պարզամիտ քաջալերական եղանակով աւերացրեց.

— Ինչքան լու էր:

Կոյրը լուռ մնաց:

— Ինչի՞ չէք հեռանում, — հարցրեց նա ապա լսելով, որ իւր անկոչ խօսակիցը դեռ կանգնած է:

— Ինչի՞ ես վաճառում ինձ, — հարցրեց աղջիկը իւր մաքուր միամիտ-զարմացած ձայնով:

Մանկական այս խաղաղ ձայնի հնչիւններն ախորժ տպաւորութիւն գործեցին կոյրի լսելիքի վրայ. բայց և այնպէս նա իւր առաջուայ եղանակով պատասխանեց.

— Չեմ սիրում, որ մօտս մարդ է գալիս...

Աղջիկը ծիծաղեցաւ:

— Ա՛յ քեզ բան... մի սրան մտիկ: Միթէ սաղ աշխարհքս քունն է և դու կարող ես մարդկանց արգելել, որ երկրի վրայ ման չգան:

— Մայրիկս ամենքին էլ հրամայել է, որ ինձ չմօտենան:

— Մայրիկդ, — մտախոհութեամբ կրկնեց աղջիկը:

— Իսկ իմ մայրիկս ինձ թող է տուել գետի մօտերքը զբօսնելու...:

Երեխան, ընդհանուրի զիջողամտութիւնից փոքր ինչ երես առած, այսպիսի հաստատ ընդիմաբանութեան սովոր չէր: Բարկութեան գրգիռը ջլալին կոհակով ան-

ցաւ նրա դէմքի վրայով. նա բարձրացաւ տեղից և արագ-արագ և գրգռուած ասաց.

— Հեռացէք, հեռացէք, հեռացէք...

Չգիտեմ, թէ ինչպէս կվերջանար այս բանը, թէ որ այդ միջոցին ապարանքից չլսուէր Իօխիմի ձայնը, որ կոյրին թէյի էր կանչում: Պետրոսը արագ-արագ բլրակից գէպի վայր վազեց:

*պէջ.*

— Օհ, ինչ փիւ տղայ է, — այս ցասկոտ բացականչուած թիւնը լսեց նա իւր ետեկից:

V.

Յաջորդ օրը մանուկը, միւսնոյն տեղում նստած, մտաբերեց երէկուայ ընդհարումը: Այդ լիշողութեան մէջ զայրոյթ չկար այլ ևս: Ընդհակառակն, մինչև անգամ նա ցանկանում էր, որ կրկին գար այն աղջիկը, որի ձայնի նման հաճելի, խաղաղ ձայն դեռ երբէք չէր լսել նա: Իւր ծանօթ երեխաները բարձրաձայն գոռում էին, ծիծաղում, կուռում, լաց լինում, բայց նրանցից ոչ ոք այսքան հաճելի ձայնով չէր խօսում: Նա սկսաւ վշտանալ, որ վիրաւորել էր անծանօթ աղջրկան, և նա, հաւանականօրէն, այլ ևս երբէք չի վերադառնալ:

Յիրաւի, աղջիկը երեք օր բոլորովին չեկաւ: Իսկ չորրորդ օրը Պետրոսը ներքեւում, գետի ափին լսեց նրա ոտնաձայնը: Նա համրաքայլ առաջ էր գնում. գետափի կոպիճները թեթեակի շշուկ էին հանում նրա ոտների տակ. աղջիկը կամացուկ լեհական մի երգ էր երգում:

*պէջ.*

— Բան եմ ասում, — ձայն տուեց Պետրոսը, երբ աղջիկը եկաւ, նրան հաւասարուեց: — Ե՞լի դուք էք:

Աղջիկը պատասխան չտուեց: Խճաքարերը դարձեալ

խշխշում էին նրա ոտները տակ: Նա երգում էր և նրա կեղծ անհոգ ձայնի մէջ դեռ կոյրն զգում էր այն վերաւորանքը, որ ինքը հասցրել էր նրան:

Բայց մի քանի քայլ անելով անձանօթ աղջիկը կանգ առաւ: Երկու-երեք բոպէ լուռօթեամբ անցաւ: Այդ միջոցին նա իւր ձեռքում հաւաքած վայրի ծաղիկներից փունջ էր կազմում, իսկ կոյրը պատասխանի էր սպասում: Նա աղջկայ այս կանգ առնելն ու դրան յաջորդող լուռօթիւնը դիտաւորեալ արհամարհանքի վերագրեց:

— Միթէ չէ՞ք տեսնում, որ ես եմ, — մեծ արժանիքով պատասխանեց աղջիկն իւր ձեռին բռնած վայրի ծաղիկների փունջը կազմել-վերջացնելով:

Այս պարզ հարցը ցաւ պատճառեց կոյրի սրտին: Ոչինչ չպատասխանեց նա, միայն նրա ձեռները, որ յենած էին գետնին, շղաձգաբար բռնեցին գետնի արօտը: Բայց խօսակցութիւնը սկսուած էր արդէն, և աղջիկը, դեռ էլի նոյն տեղում կանգնած ու իւր փնջով զբաղուած՝ հարցրեց նորից.

— Քեզ ո՞վ սովորեցրեց այդպէս լաւ սրինգ անել:

— Իօխիմը սովորեցրեց, — պատասխանեց երեխան:

— Շատ լաւ: Բայց ինչո՞ւ այդպէս բարկացկոտ ես:

— Ես... ձեզ վրայ չեմ բարկանում, — ցած ձայնով ասաց նա:

— Դէ, ուրեմն ես էլ չեմ բարկանում...: Եկ միասին խաղ անենք:

— Ես չեմ կարող ձեզ հետ խաղ անել, — շփոթուած պատասխանեց կոյրը:

— Չես կարող... ինչո՞ւ:

— Ա՛յնպէս:

— Բայց ինչո՞ւ ախր:

— Հէնց անպէս, — հազիւ լսելի ձայնով պատասխանեց նա և աւելի շփոթուեց:

Երբէք ոչ մինի հետ նա դեռ ևս առիթ չէր ունեցել իւր կուրուժեան մասին խօսելու, և աղջկայ միամիտ խօսակցութեան ձևը, որ հաստատաբար առաջարկում էր իւր հարցերն ու պնդում, բռն թ ցաւ էին պատճառում նրան:

Անճանօթ աղջիկը բլուրն ի վեր բարձրացաւ:

— Ինչ ծիծաղելի տղայ ես, — ներողամիտ վշտակցութեամբ խօսեց աղջիկը՝ նրա կողքին արօտի վրայ պաղկելով: — Երևի այդ նրանից է, որ դու դեռ ինձ չես ճանաչում: Ա՛յ, կը ճանաչես և էլ չես վախիլ ինձանից: Իսկ ես ոչ ոքից չեմ վախում:

Նա այս ասում էր անհոգ պարզութեամբ, և կորը լսեց, թէ ինչպէս աղջիկը մի կոյտ ծաղիկ լցրեց իւր գոգնոցի մէջ:

— Որտեղից էք հաւաքել այդ ծաղիկները, — հարցրեց նա:

— Սյնտեղից, — գլխով արեց նա իւր ետևը ցոյց տալով:

— Մարգագետնից:

— Ո՛չ, ան տեղից:

— Ուրեմն անտառից: Իսկ ինչ ծաղիկներ են:

— Միթէ դու ծաղիկ չես ճանաչում...: Վա՛հ, ինչ տարօրինակ տղայ ես դու... Չճմարիտ շատ տարօրինակ տղայ ես...:

Երեխան մի ծաղիկ առաւ ձեռքը. նա մատներով արագութեամբ ու թեթևութեամբ շօշափեց ծաղիկ տերևներն ու պսակը:

— Սա եղածաղիկ է, — ասաց նա, — բայց այն սա մանուշակ է:

Յետոյ նա միևնույն եղանակով ուզեց ծանօթանալ

իւր խօսակցի հետ՝— ձախ ձեռքով բռնեց աղջկայ ուսից, իսկ աջով սկսեց շօշափել նրա մազերը, ապա արտևանունքը, և մատներն արագապէս անց կացրեց դէմքի վրայով, տեղ-տեղ կանգ առնելով և ուշադրութեամբ ուսումնասիրելով իրեն անձանօթ զիմազծերը:

Այնքան անակնկալ և արագ կատարեց այս ամենը, որ աղջիկը զարմանքից ապուշ կտրած, ոչ մի խօսք չկարողացաւ ասել: Նա միայն աչքերը լայն-լայն բացած, որոնց մէջ արտայայտուած էր սարսափի նման մի զգացմունք, նայում էր նրան: Նա միայն այժմ նկատեց, որ մի տեսակ օտարօտի բան կար իւր նոր ծանօթի դէմքի վրայ: Մանկան դժգոյն և նուրբ զիմազծերը, որ լարուած ուշադրութիւն էին արտայայտուած, մնացել էին սառած և ասես թէ բոլորովին չէին սաղ գալիս նրա անշարժ հայեացքին: Նրա աչքերն ուղղուած էին մի կողմ և ոչ մի կապ չունէին իւր վարմունքի հետ, և դէպի մուտքը խոնարհող արեգակի լոյսը տարօրինակ կերպով ցոլանում էր նրա աչքերի մէջ: Այս ամենը մի առ վայրկեան ծանր մղձաւանջ թուաց աղջկան:

Իւր ուսն ազատելով տղի ձեռներից, նա լանկարծ վեր թռաւ տեղից և լաց եղաւ:

— Ինչի ես ինչ վախեցնում, անպիտան տղայ,— բարկացած ասաց նա արտասուքի միջից:— Ես ինչ եմ արել քեզ... ինչք համար...

Պետրոյսը ալշած, գլուխը ցած քաշած նստել էր նոյն տեղում, և մի տարօրինակ զգացմունք՝ գայլույթի և ստորացման զգացմունքներն իրար խառնուած, կիզիչ ցաւով լքցրել էր նրա սիրտը: Կեռ առաջին անգամն էր, որ նա զգում էր խեղանդամի ստորացումը. նա առաջին անգամն էր հասկացաւ, թէ իւր մարմնական արատը ոչ միայն վշտակցութիւն, այլ և վախ կա-

2796  
H. 10. 10  
V. 10. 10  
C. 10. 10

րող է ազգել: Ի հարկէ, նա կարող չէր իրեն ճնշող այդ ծանր զգացմունքի մասին պարզ հաշիւ տալ ինքն իրեն, բայց հէնց այդ գիտակցութեան անորոշ ու աղօտ լինելու պատճառով էլ նրա կրած տանջանքը չէր նուազում: Սուր ցաւի ու վիրաւորանքի զգացմունքը եկել կաշկանդել էր նրա կոկորդը, և նա վեր ընկաւ արօտի վրայ ու լաց եղաւ: Նրա լացը քանի գնում սաստկանում էր, ջրաձգային հեկեկանքներն ամբողջապէս ցնցում էին նրա փոքրիկ մարմինը, մանաւանդ որ մի ընդոճին հպարտութիւն ստիպում էր նրան ճնշել այդ զգացմունքի արտայայտութիւնը: Աղջիկը, որ արգէն բլրակից ներքեւ էր վազել, լսեց այդ խուլ հեկեկանքներն ու զարմացած ետեւը նայեցաւ: Տեսնելով, որ իւր նոր ծանօթը երեսի վրայ գետնին փռուած դառնապէս լաց է լինում, կարեկցութիւն զգաց, կամացուկ նորից բլուրը բարձրացաւ ու կանգնեց նրա մօտ:

— Այ տղայ, — ասաց նա ցած ձայնով, — ինչքէ ես լաց լինում: Չլինե՞ կարծում ես թէ գանգատ եմ անելու: Ի՛է, լաւ, մի լաց լինիր, ոչ ոքին չեմ ասիլ:

Այս կարեկցական խօսքերն ու քնքշութիւնն աւելի ևս սաստկացրին մանկան լացի գրգիռը: Այն ժամանակ աղջիկը պայտեց նրա կողքին. կէս ըոպէ այսպէս մը նալուց յետոյ նա կամացուկ կպաւ կոյրի մագերին, շօյնց գլուխը և տպա, մայրական քնքուշ վճռականութեամբ, որը հանգստացնում էր իւր պատժուած երեխային, բարձրացրեց նրա գլուխն ու սկսաւ թաշկինակով սրբել արտասուածոր աչքերը:

— Ի՛է, լաւ, լաւ, հերիք է, ասաց նա հասակաւոր կնոջ եղանակով:— Արգէն վաղուց է ես քեզ վրայ չեմ նեղանում: Տեսնում եմ, որ զղջում ես ինձ վախացնելուդ համար...

— Ես քեզ վախեցնել չէի ուզում, — ասաց նա խո-

քը թառանջ քաշելով, որպէս զի զսպէ իւր ջղալին  
գրգիռները:

— Լաւ, լաւ: Ել չեմ նեղանում... Խօ մէկ էլ չես  
անիլ:— Նա տղին վեր կացրեց տեղից և աշխատում  
էր իւր կողքին նստացնել:

Պետրոյսը հնազանդուում էր: Այժմ նա նստած էր  
առաջուայ նման երեսն արևմտոց դարձրած, և երբ որ  
աղջիկը նորից նայեցաւ նրա դէմքին, որ կարմրաւուն  
ճառագայթներով էր լուսաւորուած, դարձեալ տարօ-  
րինակ թուեցաւ նրան այդ դէմքը: Երեխի արտասու-  
քի կաթիլները դեռ ևս նրա աչքերի մէջ ցամաքած  
չէին, բայց այդ աչքերը դարձեալ անշարժ էին առա-  
ջուայ նման. դէմքի գծերը շարունակ շարժուում էին  
ջղալին գրգռմունքից, բայց դրանց մէջ միևնույն ժա-  
մանակ էլ արտայայտուում էր ոչ-մանկական խորին ու  
ծանր վիշտ:

— Բայց և այնպէս շատ տարօրինակ տղայ ես դու,  
— ասաց աղջիկը մտախոհ կարեկցութեամբ:

— Ես տարօրինակ տղայ չեմ, — ասաց Պետրոյսը  
խղճալի ծամածուլութեամբ: — Ոչ, ես տարօրինակ չեմ ..  
ես... ես — կոյր եմ:

— Կո՛ւ ոյր, — երգելու նման երկարելով կրկնեց աղ-  
ջիկը և նրա ձայնը դողդողաց, հէնց իմանաս կոյրի ցած  
ձայնով արտասանած այդ տխուր խօսքը անջնջելի հա-  
րուած հասցրած լինէր նրա փոքրիկ կանացի սրտին: —  
Կո՛ւ ոյր, — կրկնեց նա աւելի ևս բեկբեկ ձայնով և, ա-  
սես թէ աշխատելով պաշտպանութիւն որոնել կարեկ-  
ցութեան անընկճելի զգացումից, որ ամբողջովին հա-  
մակել էր իրեն, նա յանկարծ ձեռները փարեց երեխի  
վզով և դէմքը խոնարհեց դէպի նա:

Այս անակնկալ ցաւալի յայտնութիւնից ապշած,  
փոքրիկ կինը անկարող եղաւ կանգնած մնալ իւր լըր-

ջութեան քարձրութեան վրայ, և յանկարծ վշտահար  
և իւր վշտի առաջ անգօր կանգնած մի մանուկ դար-  
ձաւ ու սկսաւ ինքն էլ աղիողորմ ու անմխիթար լաց  
լինել:

## VI

Մի բանի ըստէ լուռ անց կացաւ:

Աղջիկը լաց լինելուց դադարեց և երբեմն երբեմն  
միայն, չը կարողանալով իրեն զսպել, հեկեկում  
էր: Նա արտասուելից աչքերով նայում էր, թէ ինչ-  
պէս արեգակը ասես թէ արեւմտոցի հրաշէկ մթնուորտի  
մէջ թաւալուելով խորասուզում էր հորիզոնի մթին  
գծի տակ: Մի անգամ էլ առփայլեցաւ հրեղէն գնդի  
ոսկեգոյն հատուածը, ապա դուրս ցայտեցին երկու-  
երեք ջերմ կայծեր, և յանկարծ հեռաւոր անտառի  
մութ գծերը դուրս եկան միապաղաղ կապտագոյն ե-  
րիցի նման:

Գետի կողմից գոլը փչեց և իրիկնապահի հանգու-  
ցիչ խաղաղութիւնը ցոլացաւ կոյրի դէմքի վրայ: Նա  
գլուխը կախ նստած, ըստ երևութին, զարմացած էր  
աղջկայ ցոյց տուած այդ ջերմ կարեկցութեան վրայ:

— Ես... քեզ... խղճում եմ, — վերջապէս ասաց  
աղջիկը դեռ էլի հեկեկալով՝ ուզելով իւր թուլութեան  
պատճառը բացատրել:

Ապա նա փոքր ինչ իրեն զսպելով փորձեց խօ-  
սակցութիւնը մի այնպիսի կողմնակի նիւթի վրայ դար-  
ձնել, որին երկուսն էլ կարողանային անտարբերու-  
թեամբ վերաբերուել:

— Արևը մայր մտաւ, — ասաց նա մտախոհ:

— Ես չեմ իմանում, թէ ինչ տեսակ բան է դա, —  
վշտալի ձայնով պատասխանեց տղան: — Ես արևը

միայն զգուճ եմ...

— Արևի՛ ինչ եղածը չը գիտես:

— Այո:

— Հապա... Հապա մօրդ... նո՞յնպէս չգիտես:

— Մօրս գիտեմ: Ես միշտ հեռուից ճանաչում եմ

նրա քայլուածքը:

— Այո, այո, ուղիղ է: Ես էլ եմ կարողանում փակ

աչքերով մօրս ճանաչել:

Խօսակցութիւնն աւելի խաղաղ կերպարանք ստացաւ:

— Գիտէք, — ասաց կոյրը փոքր ինչ աշխուժով, — ախր ես արևը զգուճ եմ և գիտեմ, թէ՛ երբ մայր մտաւ:

— Ինչի՞ց գիտես:

— Նրանից որ... գիտես...: Ես ինքս էլ չեմ իմանում ինչից...:

— Հա՛-հա՛, — ասաց աղջիկն ըստ երևութիւն բոլորովին գոհ մնալով այդ պատասխանից, և նրանք երկուսն էլ լռեցին:

— Ես կարգալ էլ գիտեմ, — նորից խօսեց Պետրոսը, — իսկ շուտով գրչով գրել էլ կը սովորեմ:

— Այդ ինչպէս..., — սկսեց աղջիկը և յանկարծ, չը ցանկանալով այդ նուրբ հարց ու փորձը շարունակել, լռեց: Երեխան նրա միտքը հասկացաւ:

— Ես մտաներով եմ կարգում իմ գիրքս, — բացատրեց նա:

— Մտաներո՞վ: Ես երբէք չէի կարող մտաներով կարգալ սովորել: Նոյն իսկ աչքով էլ վատ եմ կարողում ես: Հայրս ասում է, որ կանայք գիտութիւնը լաւ չեն կարող հասկանալ:

— Իսկ ես մինչև անգամ Ֆրանսերէն էլ կարող եմ կարգալ:

— Ֆրանսերէն... Այն էլ մտաներով... Ինչ խելօք

տղայ ես, — անկեղծօրէն զմայլեցաւ աղջիկը:— Բայց ես վախեմ թէ մըսես: Տես ինչպիսի մառախուղ է պատել գետը:

— Հապա դ՛ն:

— Ես չեմ վախում: Ինձ ի՛նչ կարող է լինել:

— Էհ, ես էլ չեմ վախում: Միթէ կարելի՞ բան է, որ տղամարդը կնոջից շուտ մըսի: Քեռի Մակսիմն ասում է, որ տղամարդը ոչնչից չպիտի վախենայ. ոչ ցրտից, ոչ սովից, ոչ կայծակից, ոչ սև-սև ամպերից:

— Մակսիմը... այն՝ որ անթացուպով է ման գալիս...: Տեսել եմ: Սարսափելի մարդ է:

— Ոչ, ամենևին սարսափելի չէ: Նա — բարի է:

— Ոչ, սարսափելի է, — համոզուած կրկնեց աղջիկը:

— Նրան չես ճանաչում, որովհետև չես տեսել:

— Ինչպէս թէ չեմ ճանաչում, քանի որ նա է ինձ ամեն բան սովորեցնողը:

— Ծեծ՛ում է:

— Երբէք չէ ծեծում և չի էլ գորգուում վրաս... երբէք...

— Այդ լաւ է: Միթէ կարելի է կոյր տղի ծեծել: Մեղք է հոգու:

— Նա ոչ ոքի էլ չի ծեծում, — ասաց Պետրոյսը փոքր ինչ անուշադիր, որովհետև նրա սուր ականջին դիպել էր Իօսիմի ոտների ձայնը:

Յիրաւի, մի վայրկեան լետոյ ագարակը գետափից բաժանող բլրաշարքի գագաթին երևաց խախօլի լաղթանդամ պատկերը և նրա ձայնը երեկոյեան լուսթեան մէջ որոտաց հեռուն:

— Պա՛նի-չու՛ն:

— Քեզ են կանչում, — ասաց աղջիկը տեղից վեր կենալով:

— Այո: Բայց ես չէի ուզիլ գնալ:

— Գնա, գնա. վաղը կ'գամ: Այժմ քեզ սպասում են, ինձ էլ նույնպէս:

## VII

Աղջիկը ճշտութեամբ կատարեց իւր խոստումը և աւելի շուտ, քան թէ կ'ուսար Պետրոսը: Հէնց միւս օրը, երբ իւր սենեակում Մակսիմի հետ սովորական ժամին դասի էր նստած, յանկարծ նա գլուխը բարձրացրեց, ականջ դրաւ և աշխուժով ասաց.

— Թոյլ տուր մի ըստէ գնամ: Աղջիկը եկաւ:

— Ի՞նչ աղջիկ, — զարմացաւ Մակսիմը և հետեւեց տղին դէպի դուրս գնացող դուռը:

Եւ յիրաւի, հէնց այդ ըստէին ազարակի բակը մըտաւ Պետրոսի երէկուայ ծանօթ աղջիկը և տեսնելով Աննա Միխայլովնային, որ անց էր կենում բակով, համարձակ կերպով ուղղակի մօտեցաւ նրան:

— Ի՞նչ ես ուզում, աղջիկս, — հարցրեց Աննա Միխայլովնան կարծելով, թէ նրան բանի են ուղարկել:

Փոքրիկ կինը լրջօրէն ձեռքը մեկնեց նրան և հարցրեց.

— Այն կոյր տղան Ձերն է... հո՛:

— Այո, իմս է, հոգիս, իմս է, — պատասխանեց պանի Պոպէլսկայան, հրճուանքով նայելով նրա վճիտ աչքերին ու համարձակ վարմունքին:

— Գիտէ՞ք, մայրիկս ինձ թոյլ տուաւ նրա մօտ գալու: Կարո՞ղ եմ նրան տեսնել:

Այդ միջոցին Պետրոսն ինքը վազեց եկաւ նրա մօտ, իսկ զստիկոնի վրայ երևաց Մակսիմը:

— Երեկուայ աղջիկն է, մայրիկ: Քեզ արդէն պատմել եմ, — ասաց տղան բարեւելով իւր ծանօթուհուն: — Բայց ես այժմ դաս ունիմ:

— Դէ լաւ, այս անգամ քեռի Մակսիմը կ'արձակէ քեզ, — ասաց Աննա Միխայլովնան, — ես ինքս կը խնդրեմ: Իսկ այդ միջոցին փոքրիկ կինը, որ ըստ երևութիւն բոլորովին ազատ էր զգում իրեն, ընդառաջ գնաց Մակսիմին, որ իւր անթացուպերով մօտենում էր նըրանց, և ձեռք տալով ասաց նրան վեհանձն հաւանութեան եղանակով:

— Այդ լաւ է, որ Դուք կուր տղին չէք ծեծում: Նա ինձ ասել է այդ:

— Մթթէ, տիկին, — ծաղրական լրջութեամբ հարցրեց Մակսիմը իւր լայն ձեռքի մէջ առնելով աղջկայ մանրիկ ձեռքը: — Որչափ շնորհապարտ եմ սանիցս, որ կարողացել է Ձեզ նման մի գեղանի անձի տրամադրել յօգուտ իմ:

Եւ Մակսիմը ծիծաղեց շոյելով նրա ձեռքը, որ բռնած էր իւր ձեռների մէջ: Իսկ աղջիկը իւր սլարդ, բաց հայեացքով գեռ էլի նայում էր նրան, որը միանգամայն գրաւել էր իւր կնատեաց սիրտը:

— Հապա մի տես, Աննուսիա, — ասաց նա քրոջը՝ օտարգտի ժպիտը երեսին: — Մեր Պետրոյսը սկսել է անկախօրէն ծանօթներ ճարել: Եւ, համաձայնիր, Անիա... չնայելով, որ կուր է, բայց և այնպէս լաւ ընտրութիւն է արել, այնպէս չէ:

— Իրանով ի՞նչ ես ուզում ասել, Մակս, — խստութեամբ հարցրեց նորատի կինը և ալ կարմիրը ծածկեց նրա գէմքը:

— Հանաք եմ անում, — կարճ պատասխանեց եղբայրը տեսնելով, որ իւր հանաքով շարժել էր քրոջ սրտի ցաւազար լարը, մերկացրել էր նրա մայրական կանխատեսող սրտում շարժուող ծածուկ միտքը:

Աննա Միխայլովնան աւելի ևս շառագունեցաւ և շտապով կռացաւ ու ջերմ քնքշութեամբ ուժգին գըր-

կախառնեց այջկան, որը դարձեալ նոյն պարզ, թէպէտ  
փոքր ինչ զարմացած հայեացքով ընդունեց այդ անա-  
կընկալ բուռն փաղաքշանքը:

### VIII

Այդ օրից ամենամօտ լարաբերութիւններ սկսուե-  
ցան հարեան կապալառուի տնակի ու Պոպէլսկու ապա-  
րանքի միջև: Աղջիկը, որի անունը Եւեղինա էր, ամեն  
օր գալիս էր ապարանք, իսկ մի փոքր ժամանակից նա  
էլ դարձաւ Մակսիմի աշակերտ: Սկզբում այս միատեղ  
ուսուցանելու ծրագիրը մի այնքան էլ դիւր չէր գա-  
լիս պան Եասկուլսկուն: Նախ որ նա այն կարծիքի էր,  
թէ այն էլ բոլորովին բաւական է, եթէ կինը կա-  
րող կը լինի սպիտակեղէնի հաշիւն ու տնային ելլածտից  
մատեանը պահել, երկրորդ նա զուտ կաթնով էր և  
կարծում էր, թէ Մակսիմը հակառակ «հայր-պապէժի»  
ակնյայտնի կամքին չպէտք է Աւստրիացիների դէմ  
կռուած լինէր: Աերջապէս նա հաստատապէս համո-  
զուած էր, որ երկնքում կալ Աստուած, իսկ Աօլտէրն<sup>1)</sup>  
ու վտէրականները դժոխքում եռ են գալիս կարէ կա-  
րասի մէջ. իսկ այդպիսի վիճակ է սարսուժ նաև, շա-  
տերի կարծիքով, Մակսիմին: Սակայն աւելի մօտիկ ծա-  
նօթանալով տեսաւ, որ այդ հերետիկոսն ու խռովա-  
րարը շատ քաղցր բնաւորութեան ու մեծ խելքի տէր  
մարդ է, ուստի հէնց այդ պատճառով էլ նա զիջաւ:

1) Աօլտէրը պատկանում է այն վայրուն էնցիկլոպեդիստ-  
ների խմբին, որոնք Դիդրոյի և Կ'Ալամբերգի զլխաւոր խմբա-  
գրութեամբ 1751—1772 թիւը Պարիզում հրատարակեցին հըռ-  
չակաւոր ֆրանսիական էնցիկլոպեդիայի (համագիտական բառա-  
բանը, որը իւր ժամանակի յառաջագէմ դաղափարների արտա-  
յայտիչ լինելով, հիմն ի վեր տապալեց բոլոր հին հայեացք-

Բայց և այնպէս դարձեալ շատ հանգիստ չէր հին շրեախտիչի սիրտը, ուստի և նա իւր աղջկան առաջին անգամ դասի բերելով պատշաճ համարեց նրան մի հանգիստաւոր ու փքուն ճառ ասել, որը սակայն աւելի Մակսիմի համար էր նշանակուած:

— Այ ինչ կայ, Վելիա, — ասաց նա իւր աղջկայ ուսից բռնելով, բայց աչքերը նրա ապագայ ուսուցչին ուղղելով: — Միշտ մտիդ լինի, որ երկնքում կայ Աստուած, իսկ Հռոմում նրա սուրբը «պապէժը»: Ես եմ, Վալենտին Եասկուլսկիս քեզ այս ասողը, և դու պէտք է հաւատաս ինձ, որովհետեւ ես քու հայրդ եմ, — այս primo:

Այս ասելով նա մի նոր ազդու հայեացք էլ ձգեց Մակսիմի կողմը. Պան Եասկուլսկին առանձնապէս շեշտում էր իւր արտասանած լատիներէն բառերի վրայ ուղեւորով հասկացնել, թէ ինքն էլ շատ հեռու չէ գիտութիւնից և իրեն խաբելը հեշտ չէ:

— Secondo, ես — փառաւոր տոհմադրոշ կրող շրեախտիչ եմ, իսկ իզուր չէ տոհմադրոշիս վրայ «խուրձ և ազաւախ» հետ նաև կապույտ լուսանցքում խաչ նկա-

---

ները՝ հասարակական, սոցիալական, քաղաքական, կրօնական: Այդ իսկ պատճառով բոլոր ազատ հայեացքների տէր մարդկանց, թէպէտ նրանք յիշեալ բառարանի խմբագրութեանը մասնակից էլ եղած չլինէին, էնցիկլոպեդիստ էին անուանում: Վօլտերը ծն. 1694 թ. և իւր կրթութիւնը ստացել է ճիզուխաների մօտ, որոնց ամենաոխերիմ թշնամին դարձաւ նա. իւր հատու լեզուն ու գրիչը քանի անգամ նրան պատճառ դարձան բանտ նստելու, երկրից տարագիր լինելու: Նա գրում էր տրագեդիաներ ու դանազան յօդուածներ, որոնց մէջ անխնայ հարուածելով կեանքի չարիքն ու ստութիւնը, արծարծում էր իւր հայեացքները. նրա «Իրիլիստիայական նամականին» այրեցին հակակրօնական ուղղութեան պատճառով: Վախճ. 1778:

րուած: Եսակուլսիկները լաւ սսպետ լինելով Հանգերձ շատ անգամ սուրի փոխարէն աղօթագիրք են առել ձեռները և երկնային խնդիրներում փոքր ի շատէ բան հասկացել, ահա թէ ինչու պէտք է դու ինձ հաւատաս: Իսկ մնացած բաներում, ինչ որ վերաբերուում է orbis terrarum-ին, այսինքն այն բոլորին, որ աշխարհային է, հետևիր պան Մակսիմ Եացենկոյի ասածին և լաւ սովորիր:

—Մի վախենաք, պան Վալենտին,—ժպտալով պատասխանեց նրա ճառին Մակսիմը,—մենք Քարիբբալգիի բանակի համար պանսիներ չենք ժողովում:

## IX.

Երկսի համար էլ շատ օգտակար եղաւ միատեղ ուսանիլը: Պետրոյան, իհարկէ, առաջընթաց էր, բայց դա արգելք չէր մրցման: Բացի այդ նա շատ անգամ աղջկան օգնում էր դասը սովորելու, իսկ աղջիկն էլ երբեմն շատ աջող ձևեր էր գտնում բացադրելու համար այնպիսի բաներ, որոնք զժուար հասկանալի էին լինում նրա, կոյրի համար: Բացի այդ, աղջկայ ընկերակցութիւնը մի առանձին, ուրոյն բան էր մտցնում կոյրի պարագամունքի մէջ. նրա մտաւոր աշխատութեանը մի տեսակ հաճելի գրգռման առանձին գոյն էր տալիս:

Առ հասարակ բարեհաճ բաղդի ճշմարիտ նուէր էր այս բարեկամութիւնը: Այժմ արդէն կատարեալ առանձնութիւն չէր որոնում տղան. նա գտել էր այն ընկերակցութիւնը, որ հասակաւորների սէրը կարող չէր տալ նրան, և հոգեկան զգաստ անգործութեան ըուպեններում նրա համար հաճելի էր աղջկայ մօտիկութիւնը. նրանք միշտ միասին էին քարափը կամ գետեզըը գնում:

Երբ Պետրոյսն ածուժ էր իւր սրինգը, աղջիկը անմեղ  
հիացմամբ ականջ էր դնում նրան, իսկ երբ գաղարում  
էր ածելուց, նա սկսում էր կոյրին պատմել շրջապա-  
տող բնութիւնից ստացած իւր մանկական վառ տպա-  
ւորութիւնները: Իհարկէ, նա այդ չէր կարողանում հա-  
մապատասխան բառերով լիալիր ամբողջութեամբ ար-  
տալալտել, բայց դրա փոխարէն կոյրը նրա պատմուած-  
քից, նրա ձայնի եղանակից ըմբռնում էր նկարագրած  
ամեն մի երևոյթի բնորոշ կողմը: Այսպէս օրինակ, երբ  
սր աղջիկը խօսում էր երկրիս երեսին տարածուած խո-  
նաւ և խաւարչտին գիշերուայ մթութեան մասին, նա  
աղջկայ վեհերկոտ ձայնի զսպուած հունչի մէջ ասեա  
թէ լսում էր այդ մթութիւնը: Իսկ երբ Եվելինան իւր  
մտախոհ գէմքը վեր բարձրացնելով նրան հաղորդում  
էր՝ «աս, ինչպիսի՜ ամպ է գալիս, ի՜նչ սև, սևաթուր  
ամպ» — նա կարծես անմիջապէս մի սառն հոփն էր ըզ-  
գում և իւր ընկերուհու ձայնի մէջ լսում էր մի տեղ,  
հեռաւոր բարձունքներում երկնքի երեսից սողացող հրէ-  
շի վախ ազդող շշուկը:

---

Գ. ԳԼՈՒԽ.

I

Կան բնաւորութիւններ, որոնք կարծես ի սկզբանէ  
անտի կոչուած են թախծի և խնամածութեան հետ  
խառն՝ սիրոյ խաղաղ քաջագործութեան համար, — բնա-  
ւորութիւններ, որոնց համար ուրիշների վիշտն ամո-  
քելը կարծես թէ իրենց միջնորդար, կենսական պա-

Հանջն է կազմում: Բնութիւնը նրանց կանխօրէն պարզ  
գեւել է անվրդով բնաւորութիւն, առանց որի կեանքի  
սոսկական քաջազործութիւնն անհնար է. բնութիւնը  
նախատեսութեամբ մեղմել է նրանց անձնական բուռն  
յուզերը անձնական կեանքի պահանջները՝ այդ յուզերն  
ու պահանջները ստորագրելով նրանց բնաւորութեան  
տիրապետող կողմերին: Այդպիսի անհատներն, յաճախ,  
չափազանց սառն, չափազանց խոհեմ, զգացումից զուրկ  
են թւում: Նրանք խուլ են մեղսական կեանքի բուռն  
հրապույրներին, և պարտականութեան տխուր ճանա-  
պարհով ընթանում են նույնպէս խաղաղ, ինչպէս և անձ-  
նական ամենապայծառ երջանկութեան ճանապարհով:  
Նրանք թւում են սառն՝ որպէս լեռների ձիւնապատ կա-  
տարները— և նրանց նման էլ վեհ են: Կեանքի վատ-  
թարութիւնները փռուած են նրանց օտների տակ. նույն  
խակ զրպարտութիւնն ու բամբասանքը ցած են գլոր-  
ւում նրանց ձիւնափայլ զգեստի վրայից, որպէս ցեխի  
ցայտերը կարապի թեւերից...

Պետրոյսի փոքրիկ բարեկամուհին այս տիպարի բո-  
լոր կողմերն ունէր իւր մէջ, մի տիպար, որ կեանքն  
ու դաստիարակութիւնը շատ հազիւ են մշակում,— դա  
ինչպէս տաղանդը, ինչպէս հանճարը միայն ընտրեալ  
բնաւորութիւններին է վիճակուում և վաղ էլ արտա-  
յայտուում է: Կուրի մայրը հասկանում էր, թէ զիպուա-  
ծը ինչ բաղդ էր ուղարկել իւր որդուն այս մանկական  
բարեկամութեամբ: Այդ հասկանում էր նաև ծերունի  
Մակսիմը, որին թւում էր, թէ այժմ արդէն իւր սա-  
նիկն ունի այն ամենը, ինչ <sup>այդ</sup> ~~երբեք~~ զեռ պակասում էր  
և թէ այսուհետև նրա հոգեկան զարգացումը առաջ  
կ'գնայ հանգարտ, հաւասար և ոչնչով չխանգարուող ճա-  
նապարհով...:

Բայց դառն մոլորութիւն էր այդ:

II

Մակսիմը կարծում էր, թէ մանկան կեանքի առաջին տարիներում նրա հոգեկան աճելու թիւնը բոլորովին իւր ձեռքն է, թէ այդ աճելու թիւնը կատարւում է եթէ ոչ իւր անմիջական ազդեցութեամբ, գէթ, լամենայն դէպս, նրանց ոչ մի նոր կողմը, նրա հոգեկան շրջանում ձեռք բերուած ոչ մի բան իւր դիտողութիւնից և վերահսկողութիւնից կարող չէ խոյս տալ: Բայց երբ հասաւ մանկան կեանքի այն շրջանը, որ մանկութեան և պատանեկութեան անցողական սահմանն է կազմում, Մակսիմը տեսաւ, թէ որքան անհիմն են եղել իւր այդ մանկավարժական անձնապատասան ցնորքները: Համարեա թէ ամեն մի շաբաթ իւր հետը բերում էր մի նոր, երբեմն կոյրի վերաբերմամբ մի անակնկալ բան, և երբ Մակսիմը ճիգ էր թափում մանկան մէջ երևան եկած մի որ և իցէ նոր գաղափարի կամ պատկերացման աղբիւրները գտնել, բոլորովին մնում էր շուար: Մի աներևոյթ գորութիւն աշխատում էր մանկական հոգու խորքերում՝ այդ խորքերից երևան հանելով հոգեկան ինքնուրոյն աճելութեան անակնկալ երևոյթները. և Մակսիմը խորին ակնածութեամբ կանգ էր առնում կեանքի այդ խորհրդաւոր գործողութեան առաջ, որոնք այսպէս միջամտում էին իւր մանկավարժական աշխատութեանը: Բնութեան այս գարկերը, նրա ձրի յայտնութիւնները, ըստ երևութին, մանկանը այնպիսի պատկերացումներ էին մատակարարում, որոնք կարող չէին նրան անձնական փորձով մատչելի դառնալ, և Մակսիմը այստեղ ըմբռնում էր կեանքի երևոյթների այն անբախտելի կապը, որը հազարաւոր գործառնութիւնների տրոհուելով անցնում է առանձին կեանքերի լաջորդական կարգի միջով:

Սկզբում այս դիտողութիւնը վախեցրեց Մակսիմին: Տեսնելով, որ միմիայն իւր ձեռին չէ մանկան մտաւոր կազմը, որ այդ կազմի մէջ երևում է իրենից անկախ և իւր ազդեցութեան շրջանից խուսափող մի բան, նա սկսաւ երկիւղ կրել իւր սանիկի վիճակի մասին, նա վախեցաւ, թէ մի՛ գուցէ այնպիսի պահանջներ ծնուին նրա մէջ, որ միայն անյազ տանջանքների պատճառ դառնան կոյրի համար: Եւ նա փորձում էր գտնել այդ, անյայտ տեղից դուրս ցայտող աղբիւրների ակունքը, որպէս զի խցէ նրանց առ միշտ... կոյրի բարօրութեան համար:

Այս անակնկալ առկայծումները չխուսափեցին և մօր ուշադրութիւնից:

Մի անգամ առաւօտեան Պետրիկը անսովոր լուգամբ վազեց նրա մօտ:

— Մայրիկ, մայրիկ, — կանչեց նա, — ես երազ տեսայ:

— Ի՞նչ տեսար, զաւակս, — հարցրեց նա և նրա ձայնը տխուր կասկած էր արտայայտում:

— Երազումս տեսայ, որ... քեզ և Մակսիմին եմ տեսնում, և էլի... որ ամեն բան տեսնում եմ...: Ինչքան լաւ, ինչքան լաւ էր, մայրիկ ջան:

— Էլ ի՞նչ տեսար, զաւակս:

— Չեմ իիշում:

— Իսկ ինչ իիշում ես:

— Ոչ, — պատասխանեց տղան մտախոհութեամբ: — Բոլորն էլ մոռացել եմ...: Բայց և այնպէս ես տեսայ, ճիշդ եմ ասում, տեսայ... — աւելացրեց նա բոպէական չուրթիւնից յետոյ, և նրա դէմքը մռայլեց իսկոյն: Եւ արտասուքի կաթիլները փայլեցին նրա անոյցս աչքերի մէջ...:

Այս բանը մի քանի անգամ դարձեալ կրկնուեց և ամեն անգամ տղան աւելի ու աւելի տխրում էր և վրդովւում:

III

Մի անգամ Մակսիմը բազումն անցնելիս լսեց, որ ընդունարանից, ուր սովորաբար երաժշտութեան դասերն էին տրուում, երաժշտութեան տարօրինակ փորձերի ձայներ են գալիս: Այդ փորձերը երկու ձայնից էին կազմուած միայն: Նախ արագութեամբ իրար չաջորդող, համարեա ի մի ձուլուած հարուածներից դողդողում էր վերին կարգի ամենաբարձր պայծառ մի հընչիւնը. լետոյ լանկարծ դրան փոխանակուած էր բամբի ստորին որոտը: Հետաքրքրուելով իմանայ, թէ ինչ էր նշանակուած այս տարօրինակ փորձերը, Մակսիմը կողի տալով անցաւ բակը և մի բոպէից լետոյ մտաւ ընդունարան: Նա դրան մէջ արձանացած կանգ առաւ հետեւեալ անսպասելի պատկերի առաջ:

Տղան, որ արդէն տասներորդ տարին էր թեւակոխել, ցածլիկ աթուռի վրայ նստած էր մօր օտների մօտ: Նրա կողքին, վիզը ձգձգած և երկար կտուցը չորս կողմը դարձնելով կանգնած էր մի ձեռնասուն ջահիլ արագիլ, որ Խօխիմն էր ընծայել «պանիչին»: Տղան ամեն առաւօտ իւր ձեռքով կերակրում էր արագիլին և թռչունը ամեն տեղ ուղեկցում էր իւր նոր ընկեր-տիրոջը: Պետրոյսն այժմ մի ձեռքով բռնել էր արագիլը, իսկ միւս ձեռքը, սաստիկ մտազբաղ ուշադրութեան արտայայտութիւնը գէմքին, զգուշութեամբ անց էր կացնում թռչունի վզի երկարութեամբ, ապա և իրանի վրայով: Հէնց այդ միջոցին մայրը բոցավառ, լուզուած գէմքով և ախուր նայուածքով, արագութեամբ խփում էր գաշնամուրի մատին և միապաղաղ բարձր հնչիւն հանում: Միևնոյն ժամանակ նա նստած տեղից թեթեւակի ծռուելով ցաւազար ուշադրութեամբ դիտում էր իւր որդու գէմքը: Իսկ երբ տղի ձեռքը պայծառ սպի-

տակ փետուրների վրայից սահելով հասնում էր այն-  
տեղ, ուր այդ փետուրները թևերի ծայրերին անմիջա-  
պէս սևի էին փոխուում, Աննա Միխալովնան ձեռքն  
անմիջապէս միւս ստեղծի վրայ էր տանում և բամբի  
ցած ձայնը խուլ որոտում էր սենեակի մէջ:

Մայր ու որդի, երկուսն էլ, այնքան խորասուզուած  
էին իրենց զբաղմունքի մէջ, որ չնկատեցին Մակսիմի  
գալը, մինչև որ նա ինքն էլ զարմանքից սթափուելով,  
ընդհատեց այդ վարժութիւնը հարցնելով.

— Սա ինչ բան է, Աննուսիա:

Նորտաի կինը Մակսիմի փորձող հայեացքին հան-  
դիպելով ամաչեց՝ հէնց իմանաս լանցագործութեան մի-  
ջոցին խտապահանջ ուսուցիչը վրայ հասած լինէր:

— Այ, գիտես, — շփոթուած ասաց նա, — Պետրոսն  
ասում է, թէ կարողանում է փոքր ինչ ջոկել արագլի  
գոյնի տարբերութիւնը, միայն թէ չէ կարողանում պարզ  
ըմբռնել, թէ ինչո՞ւմն է այդ տարբերութիւնը...: Ճիշդ  
եմ ասում, առաջին անգամ ինքը սկսեց այդ մասին խո-  
սել, և ինձ թւում է, թէ այդ ուղիղ է...:

— Ե՛, յետոյ ի՞նչ...

— Աչինչ, ես ուզեցի նրան . փոքր ինչ... ձայնե-  
րի զանազանութեամբ բացատրել այդ տարբերութիւ-  
նը...: Մի նեղանալ, Մակս, բայց ճշմարիտ, կարծում  
եմ, որ դա շատ նման է...

Այս անակնկալ գաղափարը այնպէս ապշեցրեց Մակ-  
սիմին, որ նա սկզբում չէր իմանում, թէ ինչ ասէր  
բրոջը: Նա կրկնել տուեց փորձերը և, գիտելով կոյրի  
դէմքի լարուած արտայայտութիւնը, գլուխը շարժեց:

— Գիտես ինչ, Աննա, — ասաց նա երբ որ բրոջ հետ  
մենակ մնաց, — չպէտք է մանուկի մէջ այնպիսի հար-  
ցեր ծնեցնես, որոնց դու երբէք, երբէք չպիտի կարո-  
ղանաս լրիւ պատասխան տալ:

Բայց ախր առաջին անգամ հէնց երեխան ինքը սկսեց խօսել այդ մասին... ուղիղ եմ ասում... ընդհատեց Աննա Միխայլովնան:

— Այդ միևնույնն է: Մի բան է միայն մնում երեխին՝ որ իւր կուրուժեանն ընտելանալ, իսկ մենք պէտք է ձգտենք, որ նա լոյսի մասին մոռանալ...: Ես աշխատում եմ, որ ոչ մի արտաքին դրդիչ նրա մէջ անպատուղ հարցեր չծնեցնէ, և եթէ որ հնարաւոր լինէր հեռացնել այդ դրդիչները, այն ժամանակ երեխան չէր զգալ իւր զգայարանքի պակասը, ինչպէս որ մենք, որ բոլոր հինգ զգայարանքներն ունենալով չենք վշտանում, որ վեցերորդը չունինք:

— Մենք տխրում ենք... - ցած ձայնով պատասխանեց նորատի կինը:

— Ա՛նիա:

— Մենք տխրում ենք, — յամառութեամբ պատասխանեց նա, — մենք շատ անգամ տխրում ենք անհնարինի մասին մտածելով:

Սակայն քոյրը խոնարհեցաւ իւր եղբօր պատճառաբանութեան առաջ. բայց այս անգամ Մակարիմը սխալոււմ էր՝ աշխատելով արտաքին դրդիչ պատճառները հեռացնել, նա մոռանում էր այն զօրեղ դրդիչները, որ ինքը բնութիւնն էր ձգել մանկական հոգու մէջ:

#### IV

«Աչքը հոգու հայելին է» ասում են: Գուցէ աւելի ուղիղ կ'լինէր, եթէ աչքը նմանեցնէինք պատահանի, որով պայծառ, փայլուն գունաւոր աշխարհիս տպաւորութիւնները շեղոււմ են հոգու մէջ: Ո՛վ կարող է ասել, թէ մեր հոգեկան կազմուածքի ո՞ր մասն է լոյսի տպաւորութիւնից կախուած:

Մարդս — կեանքերի անսահման շղթայի մի օղակն

է, և այդ շղթան նրա միջոցով խոր անցեալից գալով շարունակոււմ է դէպի անսահման ապագան: Եւ ահա, օրհասական դիպուածով, այդ օղակներից մէկի, կոյր երեխայի, այդ պատուհանները փակ էին՝ կեանքն ամբողջապէս խաւարի մէջ պիտի անց կենայ: Բայց միթէ սա նշանակոււմ է, թէ նրա հոգու մէջ առ միշտ կրտրուած են այն լարերը, որոնց շնորհիւ մարդուս հոգին արձագանգ է տալիս լոյսի տպաւորութիւններին: Այ. և այդ խաւար գոյութեան միջոցով էլ պէտք է շարունակուէր և յաջորդ սերունդներին աւանդուէր լոյսն ըմբռնելու ներքին ընդունակութիւնը: Նրա հոգին մարդկային լիալիր (կոյս) հոգի էր՝ իւր բոլոր ընդունակութիւններով. և որովհետեւ իւրաքանչիւր ընդունակութիւն ինքն իւր մէջ ունի գոհացում ստանալու ձգտում, ուստի և երեխայի խաւար հոգու մէջ ևս ապրում էր անյագ ձգտումն դէպի լոյս:

Խորհրդաւոր խորութեան մէջ, մի տեղ, անձեռնմըխելի մնացել էին ժառանգաբար ստացած և «հնարաւորութիւններ» նսեմ գոյութեան մէջ նիրհող ուժերը, որոնք հէնց առաջին լուսաւոր ճառագայթից պատրաստ էին նրան ընդառաջելու: Բայց պատուհանները փակ են մնում. երեխայի ճակատագիրը որոշուած է՝ նա երբէք տեսնելու չէ այդ ճառագայթը. նրա ամբողջ կեանքը խաւարի մէջ կ'անց կենայ...

Բայց այդ խաւարը լի էր ուրուականներով:

Եթէ երեխայի կեանքը կարիքի և վշտերի մէջ անցնելիս լինէր, գուցէ այն ժամանակ նրա ուշքը դառնար տանջանքների արտաքին պատճառների վրայ: Բայց նրա մերձաւորները նրանից հեռացրել էին այն ամենը, որ կարող էր վիշտ պատճառել նրան: Կատարեալ հանգիստ և անգորրութիւն էին տուել նրան: Սակայն հէնց նրա հոգու մէջ տիրող այդ խաղաղութիւնն էր նպաս-

տում, որ նրա ներքին անգոհացումն առաւել ևս ըզ-  
գալի էր դառնում: Նրան շրջապատող լուսթեան և  
խաւարի միջից յարուժիւն էր առնում մի ինչ որ կա-  
րիքի աղօտ անլուռ գիտակցութիւն, որ գոհացում էր  
որոնում, երևան էր գալիս հոգու մէջ նիբհոյ և ելք  
չգտնող ոյժերը ձևակերպելու ձգտում:

Եւ ահա սրանից էլ ծնունդ էին առնում մի տե-  
սակ անորոշ նախազգացումներ և բուռն արտայայտու-  
թիւններ, նման թուչելու այն ձգտման, որ ամէն մէկո  
Յանկական հասակում զգացել ենք և որն այդ տարի-  
քում հրաշալի երազներով է արտայայտուում:

Վերջապէս դրանից էին բղխում մանկական մտքի  
բնազգական խոնջութիւնները, որոնք, որպէս ցաւագար  
հարցեր, ցուանում էին նրա դէմքի վրայ: Այս ժառան-  
գական, բայց անձնական կեանքում անձեռնմխելի մնա-  
ցած լուսոյ պատկերացման «հնարաւորութիւնները» որ-  
պէս ուրուականներ անկերպարան, աղօտ և մութ բար-  
ձրանում էին մանկական գլխում՝ չարատանջ և անորոշ  
ճիգեր առաջացնելով:

Բնութիւնը անգիտակցական բողոք էր հանդիսա-  
նում այս անհատական զիպուածի դէմ, որով ընդհա-  
նուր օրէնքը խանգարուած էր:

V

Այսպէսով, որքան էլ որ Մակսիմն աշխատէր հե-  
ռացնել բոլոր արտաքին գրգռիչները, երբէք չէր կարող  
ոչնչացնել գոհացում չստացած կարիքի ներքին ճնշու-  
մը: Ամենաշատը, որ նա իւր շրջահայեցութեամբ կա-  
րող էր անել, այդ այն էր, որ կոյրի մէջ այդ կարիք-  
ները ժամանակից առաջ չզարթնեն, որ նրա տանջանք  
ները չսաստկանան: Իսկ մնացեալի մէջ՝ երեխայի ծանր

վիճակը պէտք է առաջանար ըստ կարգին՝ իւր բոլոր  
դաժան հետեւանքներով:

Եւ նրա ճակատագիրը սեւաթուր ամպի նման կու-  
տակուում էր: Տարեց տարի նրա ընդոժին առուզուժիւ-  
ներն ևս, նման նուազող ալիքի, աւելի ու աւելի անհե-  
տանում էր, մինչ նրա հոգու մէջ անորոշ, անընդհատ  
հնչող տխուր տրամադրութիւնը զօրանում էր և ար-  
տայայտուում խառնուածքի մէջ: Ծիծաղը, որ նրա ման-  
կական հասակում կարելի էր լսել ամեն մի նոր ա-  
ռանձնապէս պայծառ տպաւորութեան միջոցին, այժմ  
առաւել և առաւել պակաս էր լսուում: Այն ամենը, որ  
ծիծաղուն էր, զուարթ, իւր վրայ երգիծական կնիք կը  
բոււմ, հազիւ մտաչելի էր նրան. մինչդեռ ամեն մի  
նսեմ, անորոշ-տխուր և մուսլ-մեղամաղձալին բան, որ  
արտայայտուում է հարաւային բնութեան մէջ և ար-  
ձագանգ գտնուում ժողովրդական երգերում, զարմանալի  
լրութեամբ ըմբռնոււմ էր նա: Նրա աչքերը լցոււմ էին  
արտասուքով ամեն անգամ, երբ լսոււմ էր, թէ ինչպէս  
«գերեզմանը դաշտում քամու հետ է խօսուում», <sup>1)</sup> և հէնց  
ինքն էլ սիրում էր գնալ դաշտ և այդ զրոյցը լսել:  
Առանձնանալու հակումն աւելի ու աւելի զօրանում էր  
նրա մէջ, և երբ, պարսպմունքից ազատ ժամերին,  
մենակ գնում էր իւր առանձին զբօսանքներն անելու,  
տնեցիներն աշխատում էին չգնալ այն կողմը, որպէս զի  
նրտ առանձնութիւնը չխանգարեն: Նստում էր տափաս-  
տանում մի որևիցէ խուրդոնի վրայ, կամ գետափին բըլ-  
րակի գլխին, կամ վերջապէս լաւ ծանօթ քարափի վը-  
րայ, և լսում լոկ տերևների սօսափիւնը և արօտի  
շշուէնչը կամ տափաստանում փչող հովի անորոշ թա-  
ռանչը: Եւ այս ամենը առանձնապէս ներգաշնակոււմ

Handwritten note at the top right.

Handwritten notes on the right margin, including 'Handwritten text' and 'Handwritten text'.

✓ 1) Въ полі могоыла зъ вітромъ говорила.

В тихомъ передезелье,

էր նրա հոգեկան տրամադրութեան խորութեան հետ: Նա այստեղ բնութիւնը հասկանում էր լրիւ, ամբողջապէս, որքան որ դա մատչելի էր նրա ըմբռնողութեանը: Այստեղ բնութիւնը ոչ մի որոշ և անյուժանելի հարցերով չէր վրդովում նրան. այստեղ այդ հովը ուղղակի գեղում էր նրա հոգու մէջ, իսկ արօտն ասես թէ կարեկցական հանգուցիչ խօսքեր է շնչում, և երբ պատանու հոգին շրջապատող խաղաղ ներդաշնակութեամբ համակուած քնքշանում էր բնութեան ջերմ գուրգուրանքից, նա զգում էր, թէ ինչպէս մի բան բարձրանում է իւր կրծքի միջից, որ աւելի ու աւելի յորդանում է և սփռում ամբողջ էութեան մէջ: Այն ժամանակ նա երեսի վրայ վեր էր ընկնում խոնավեկ զով արօտի վրայ և հանգարտ լաց լինում. բայց այդ արտասուքի մէջ դառնութիւն չկար: Իսկ երբեմն էլ վեր էր առնում իւր սրինգը և իւր տրամադրութեան ու տափաստանի խաղաղ ներդաշնակութեան յարմարաւոր մտախոհ մեղեգիներ ածելով բոլորովին մոռացութեան մէջ ընկնում:

Հասկանալի է, որ ամեն մի մարդկային ձայն, որ այսպիսի տրամադրութեան մէջ լսւում էր, ցաւագար, խիստ աններդաշնակ ներգործութիւն պիտի ունենար նրա վրայ: Այդպիսի բոլէներում միմիայն ամենամօտիկ և մտերիմ հոգու հետ կարելի է հազորդակցել: Իսկ աղան միայն մի հատ այդպիսի բարեկամ ունէր — հարևան կապալառուի դեղձան մագերով աղջիկը...:

Եւ այդ բարեկամութիւնն աւելի ու աւելի սերտանում էր կատարեալ փոխադարձութեամբ: Եթէ էլ ւելինան իրենց փոխադարձ յարաբերութեան մէջ մտցնում էր իւր անվրդովութիւնն, իւր խաղաղ զուարթութիւնը, կոյրին ծանօթացնում էր շրջապատող կեանքի նորանոր երանգների հետ, կոյրն էլ իւր կողմից նրան

Համակում էր... իւր վշտով: Երևում է կոյրի հետ ունեցած առաջին ծանօթութիւնը արիւնահեղ վերք էր պատճառել փոքրիկ կնոջ զգայուն սրտին՝— հանեցէք վերքից հարուածող դաշոյնը— և վերքը արիւնաքամ կը լինի: Առաջին անգամ տափաստանում բլրակի վրայ ծանօթանալով կոյրի հետ, մանկահասակ կինը համակրութեան սուր տանջանք էր զգացել իւր սրբտում, և այժմ կոյրի ներկայութիւնն աւելի ու աւելի անհրաժեշտ էր դառնում նրա համար: Անջատման միջոցին կարծես թէ վերքը նորից էր բացւում, ցաւը նորոգւում, և նա շտապում էր դէպի իւր փոքրիկ բարեկամի մօտ, որպէս զի անդադրում հոգածութեամբը իւր սեփական տանջանքներն ամոքէ:

## VI

Մի անգամ աշնանային մի տաք երեկոյ երկու ընտանիքներն ևս նստած էին տան առաջ փոքրիկ հրապարակի վրայ և զուարճանում էին աստղալից երկընքով, որի խորին կապուտակը կապտին էր տալիս և հըրհրատում: Կոյրը, ըստ սովորականին, ընկերուհու հետ իւր մօր կողքին էր նստած:

Մի առ վայրկեան բոլորն էլ լռել էին: Ապարանքի շուրջ բոլորովին լուռ էր. միայն ժամանակ առ ժամանակ տերեւներն զգաստութեամբ սթափուելով, քրթմնջում էին անմեկին և անմիջապէս լռում:

Այդ միջոցին մի ասուպ, մուք կապուտակի խորքում որտեղից որ էր պոկ եկաւ և պայծառ շերտ կազմելով անցաւ երկնքի երեսովն ու խաղաղ հանգաւ՝ առ վայրկեան մի իւր ետեւից ֆոսֆորային հետք թողնելով: Բոլորն էլ աչքերը վեր բարձրացրին: Մայրը, որ Պետ-

ընկի հետ ձեռք ձեռքի տուած նստել էր, զգաց, թէ  
ինչպէս նա սթափուեց ու ցնցուեց:

— Այդ քնչ... էր, — հարցրեց նա մօրը վրդովուած  
դէմքով:

— Ասող էր, վայր ընկաւ, զաւակս:

— Այ՛ն, ասող էր, — մտախոհ աւելացրեց տղան: —  
Հէնց այդպէս էլ կարծում էի:

— Արտեղից կարող էիր այդ իմանալ, զաւակս, —  
հարցրեց մայրը և նրա ձայնի մէջ տխուր կասկածանք  
էր արտայայտուած:

— Ա՛յ, նա ուզիդ է ասում, — մէջ մտաւ Եւեղինան:  
— Նա շատ բան «հէնց այնպէս» գիտէ:

Կոյրի մէջ այս աւելի ու աւելի զարգացող զգաս-  
տութիւնն արդէն ապացոյց էր, որ նա նկատելի կեր-  
պով մօտենում է մանկութեան և պատանեկութեան  
միջև եղած տազնապալից տարիքին: Բայց նրա աճե-  
լութիւնը դեռ ևս խաղաղ էր կատարուած: Մինչև ան-  
գամ թւում էր, թէ նա արդէն ընտելացել է իւր վի-  
ճակին, և նրա տարօրինակ կանոնաւորուած թախիժը,  
— թէպէտ և առանց լուսանցքի, բայց և առանց սուր  
արտայայտութեան, — որ նրա կեանքի սովորական կը-  
նիքն էր կազմում, այժմ մեղմացել էր փոքր ինչ:  
Բայց դա լոկ ժամանակաւոր խաղաղացման շրջան էր:  
Բնութիւնը կարծես զիտամբ է այդ հանգիստը շնոր-  
հում, — այդ միջոցին նորատի մարմնակազմը հաստատ-  
ւում է և ամրանում նոր փոթորիկի հանդէպ: Այդ  
խաղաղացմանց միջոցին նորանոր հարցումներ են հա-  
ւաքւում ու հասունանում: Մի դրդումն — և բոլոր հո-  
գեկան հանգիստը մինչի խորը կտատանուի, տակն ու  
վրայ կը լինի, որպէս ծովը՝ լանկարծահաս ալեկոծու-  
թեան բաղխումներէր:



I

Սյուսպէս մի քանի տարի էլ անցաւ:

Խաղաղ ապարանքում ոչինչ չփոխուեցաւ: Գար-  
ձեալ հաճարքենիները առաջուայ նման շաշում էին  
սլարտիզում, միայն նրանց սաղարթը կտրծես թէ աւե-  
լի մթազնած, աւելի խտացած լինէր, դեռ էլի սպիտա-  
կին էին տալիս հրապուրիչ պատերը, միայն այժմ նը-  
րանք թեթեակի ծռուել ու նստել էին. առաջուայ նը-  
ման խոժոռած նայում էին յարդեայ երգիկները. նոյն  
իսկ Խօխիմի սրինգի ձայնը միևնոյն ժամերին լսում  
էր ախոռից. միայն թէ այժմ ինքը Խօխիմն էլ, որ սպի-  
տակել էր ու ապարանքում ձերացած մնացել էր ամու-  
րի, աւելի գերադասում էր լսել կոյր պանիշի ածածը, —

*շախչ*

Մտկսիմն աւելի ևս ալեւորել էր: Պոպէլսիկներն ու-  
րիշ գաւակ չունէին, ուստի և կոյր անդրանիկը, առա-  
ջուայ պէս, դարձեալ կազմում էր այն կեդրոնը, որի  
շուրջ խմբուած էր ապարանքի ամբողջ կեանքը: Նրա  
պատճառով ապարանքը քաշուեյ-փակուել էր իւր նեղ  
զրջանի մէջ և բաւականանում էր իւր սեպհակոսն խա-  
ղաղ կեանքով, որին միացել էր նաև հարեան կապա-  
լառուի խրճիթի ոչինչ նուազ խաղաղ կեանքը: Եւ այս-  
պէսով Պետրոսը, որ արդէն պատանի էր դարձել, մե-  
ծացաւ որպէս ջերմանոցի ծաղիկ, պաշտպանուած հե-  
ռաւոր կեանքի կողմնակի խիստ ներգործումներից:

Նա, ինչպէս և առաջ, կանգնած էր ահագին խա-  
ւար աշխարհի կեդրոնում: Նրա վերևը, նրա շուրջը,

ամեն կողմից պատած էր անսահման և անծայր խաւարը. զգաստ և նուրբ կազմուածքն ընդառաջում էր ամեն մի տպաւորութեան, նման առաձգաբար լարուած լարի, որ միշտ կազմ ու պատրաստ է դողող հնչիւններ արձակելու: Կոյրի տրամադրութեան մէջ յայտնապէս արտայայտուած էր այդ զգաստ սպասողութիւնը— նրան այնպէս էր թւում, թէ խաւարը հէնց այն է իւր ձեռները մեկնելու է դէպի ինքը և իւր մէջ շարժելու է մի այնպիսի բան, որ թալկալիւր նիրհում է հոգու մէջ և պատրաստ է զարթնելու:

Բայց ապարանքի արդէն ծանօթ տաղտկալի ու սովորական խաւարը ազմկուած էր միայն հին պարտիզի քաղաքուշ շշուռնչով, որ անորոշ, օրօրող, հանգստաբեր խոկմունք էր ազգում: Հեռաւոր աշխարհի մասին կոյր պատանին լոկ երգերից, պատմութիւններից, գրքերից էր զաղափար կազմում: Պարտիզի մտախոհ շշուռնչով և ապարանքի առօրեայ հանգիստ կեանքով շրջապատուած, նա հեռաւոր կեանքի փոթորիկների ու լելեկոճումների մասին ուրիշների պատմածից էր տեղեկութիւն ստանում: Եւ այս ամենը նրան պատկերանում էր մի տեսակ կախարդական շամանգաղի միջից որպէս երգ, որպէս աւանգութիւն, որպէս հեքեաթ:

Կարծես թէ լաւ էր այսպէս: Մայրը տեսնում էր, որ իւր որդու հոգին ասես պարսպով պաշտպանուած, նիրհում է մի տեսակ թէպէտ արհեստական, բայց հանդարտ, հմայական կիսաքունի մէջ ընկած: Եւ նա չէր ուզում խանգարել այդ հաւասարակշռութիւնը. վախենում էր այդ խանգարել:

Ելելինան, որ աննկատելի կերպով մեծացել ու կազմակերպուել էր, այս հմայուած հանգստի վրայ նայում էր իւր պարզ աչքերով, որոնց մէջ ժամանակ առ ժամանակ նկատում էր տարակուսանքի, ապագայի

վերաբերմամբ հարցի պէս մի բան, բայց ոչ երբէք անհամբերութեան ստուերն անգամ: Պոպելսկի-հայրը բոլորովին կարգի էր ձգել կալուածքը, բայց այդ բարի մարդը իւր որդու ապագայի վերաբերմամբ ոչ մի հոգս չէր քաշում իհարկէ: Նա սովոր էր տեսնել, թէ ինչպէս ամեն բան ինքն իրեն է կատարուում: Միայն Մակսիմն էր, որ իւր բնաւորութեան համաձայն, դժուարութեամբ էր տանում այդ հանգիստը, և այն որպէս մի ժամանակաւոր բան, որ ակամայ իւր նախազօծի մէջն էր մտնում: Նա անհրաժեշտ էր համարում մի առ ժամանակ թողտալ, որ պատահու հոգին հանգստանալ, ամբանայ, որպէս զի կարող լինէր զիմանալ կեանքի խիստ չփմանը:

Մինչդեռ այնտեղ, այս զիւթական շրջանից դուրս կեանքը եւ էր գալիս, ալեկոծւում, աղմկւում: Եւ ահա, վերջապէս, հասաւ ժամանակը և ծերունի դաստիարակը վճռեց քակտել այդ շրջանը, բանալ ջերմոցի դուռը, որպէս զի դրսի օդի թարմ հոսանքը կարողանայ ներս խուժել:

*Աստուծոյ  
բարեկէցութիւն.*

II

Որպէս առաջին փորձ քեռի Մակսիմն իւր մօտ հրաւիրեց իւր հին ընկերոջը, որ Պոպելսկու ապարանքից 70 վերստ հեռու էր ապրում: Մակսիմն առաջ էլ էր ելբեմն-երբեմն նրա մօտ գնում, բայց այժմ գիտէր, Ստաւրուչենկոյի մօտ հիւր են եկած նաև երիտասարդներ, ուստի և նրան նամակ գրեց ու ամբողջ խումբը իւր մօտ հրաւիրեց: Այդ հրաւերը սիրով ընդունուեց: Ծերուկները վաղնջուց բարեկամութեամբ կապուած էին իրար հետ, իսկ երիտասարդութիւնը դեռ չէր մոռացած Մակսիմ Եացենկոյի մի ժամանակ բաւական հռչակ վայելած անունը, որի հետ կապուած էին որոշեալ աւանդութիւններ ու լիշատակներ (տրագիցիա): Ստաւրուչենկոյի որդկերանցից մէկն ուսանում

էր Կիւլի համալսարանի լեզուաբանական բաժնում, որ այն ժամանակներն ամենաընդունուած ճիւղն էր: Իսկ միւսը Պետերբուրգի երաժշտական բարձրագոյն դպրոցում երաժշտութիւն էր ուսումնասիրում: Նրանց հետ եկաւ նաև մի ջահել կազէտ, որը հարևան կալուածատէրերից մէկի որդին էր:

Ստաւրուչենկոն մի ալևոր, պնդակաղմ ծերունի էր զազախի երկար ընչացքներով ու զազախի լայն շալվարով: Նա իւր թուլթունով լքցրած քիսան ու չիբուխը կախած ունէր զօտկից, խօսում էր միայն մալաուսերէն, և երբ անց էր կենում իւր երկու որդկերանց հետ մէկտեղ, որոնք հազած ունէին սպիտակ թիկնոց ու մալաուսական նիւշած շապիկ, հէնց իմանաս Գոգոլի Քարաս Բուլբան լինէր իւր որդկերանց հետ: Սակայն Գոգոլի հերոսին լատուկ ումանտիզմի <sup>1)</sup> հօտն անգամ չկար նրա վրայ: Ընդհակառակն, նա շատ լաւ գործնական կալուածատէր էր և միշտ եօլա էր գնացել իւր ճորտերի հետ, իսկ այժմ էլ, ճորտութիւնը <sup>2)</sup> բար-

<sup>1)</sup> XVI դարի կիսում Ֆրանսիայում սկսուեց ևւ ամբողջ եւրոպայում տարածուելով ծաղկեցաւ կեղծ-կլասիկ ուղղութիւնը գրականութեան ու կեանքի մէջ. գրողներն աշխատում էին ըստ ամենայնի նմանուել հին յունական ևւ հռոմէական հեղինակներին ոչ միայն ըստ ձևի, այլ ևւ ըստ բովանդակութեան, որ իրական կեանքի պահանջներին բոլորովին չէր համապատասխանում: XIX դարի սկզբին նախ Գերմանիայում, ապա ևւ միւս եւրոպական պետութիւնների մէջ սկսուեց մի նոր ուղղութիւն, ումանտիզմը, որ բողոք էր անցեալ դարու ուղղութեան դէմ: Այստեղ էլ զգացմունքն ու երեւակայութիւնը՝ շատ անգամ առողջ դատողութեան հակառակ, առաջին տեղն էր բռնում: Ֆրանսիայում այդ ուղղութիւնը արտայայտուեց շատ խիստ կերպով՝ կեանքի բոլոր պայմանների մէջ: Բաւական է յիշել Վիկտոր-Հիւգոյի անունը, որ զօրեղ յեղափոխական էր կեանքի ևւ գրականութեան մէջ: Ռուսիայում առաջին անգամ ումանտիզմը գրականութեան մէջ ժուկովսկին մրտցրեց: Թ.

<sup>2)</sup> Դարերի ընթացքում Ռուսիայի ազատ երկրագործ ժողովուրդը մի կողմից անտեսական պայմաններից ստիպուած, միւս կողմից կալուածատէրներին շնորհուած արտօնութիւններ-

ձուելուց լետոյ, շատ լաւ էլ յարմարուել էր նաև նոր պայմաններին: Նա ճանաչում էր ժողովրդին, ինչպէս կալուածատէրները ճանաչում էին իրեն, այսինքն նա գիտէր իւր գիւղի ամեն մի գիւղացուն, ճանաչում էր նրանց ամեն մէկի կովը և համարեա թէ գիտէր ինչքան աւելորդ փող կալ գիւղացու քսակի մէջ:

Բայց եթէ նա Բուլբայի նման իւր որդիերանց հետ չէր ըմբշամարտում, դրա փոխարէն էլ անդադար և խիստ կատաղի վիճաբանութեան էր բռնուում նրանց հետ. ոչ ժամանակ էին հարցնում և ոչ տեղը: Ամեն տեղ, ամենը լինէին թէ հիւր գնացած, ծերունու և երիտասարդների միջև ամենաչնչին պատճառով անվերջ վէճեր էին ծագում: Սովորաբար վէճը սկսուում էր նըրանով, որ ծերունին ծաղրելով խայթում էր «Լոգէպլիստ պանիչներին». պանիչները տաքանում էին, ծերունին էլ էր տաքանում, և այդ ժամանակ բարձրանում էր մի սարսափելի աղժուկ, որի միջոցին երկու կողմն էր իւր փայը ստանում էր:

Սա «Հայրերի ու զաւակների»<sup>1)</sup> միջև եղած յայտնի անհամաձայնութեան արձագանգն էր. միայն այդ երևույթն այստեղ աւելի մեղմ ձևով էր արտայայտուում:

րի պատճառով բոլորովին ճորտ, ստրուկ, մարդկային ամեն մի իրաւունքից զրկուած մի էակ գարձաւ այն անձի ձեռքը, որի հողի վրայ ապրում էր: Այդ բանը մանաւանդ օրինական հաստատութիւն ստացաւ 1592 թ. սկսած եւ ապա քսնի գնաց զարգացաւ: Մալաոսիայում ճորտութիւնը մտաւ միայն 1783 թ. մայիսի 3-ի օրէնքով: XVII դարու վերջում եւ XVIII-ի սկզբում առաջին անգամ ձայներ լսուեցան գիւղացիների օգտին, եւ ժամանակի ընթացքում նրանց տրուեցան շատ մասնաւոր իրաւունքներ մինչև որ 1861 թ. փետր. 19-ին երջ. Ալէքսանդր II կայսրը բոլորովին վերացրեց ճորտութիւնը ամբողջ Ռուսաց պետութեան միջից: Այնուհետև գիւղացիների մարդկային իրաւունքները տարէ ցտարի ընդարձակուեցան: Ծ. Թ.

<sup>1)</sup> Հայրերի ու զաւակների, այսինքն հին եւ նոր սերնդի հայեացքների տարբերութեան շնորհիւ ծագած անհամաձայնութեանց պատկերը նկարագրուած է յայտնի վիպասան Տուրգենևի «Отцы и Дети» (Հայրերն ու Զաւակները) վէպի մէջ: Ծ. Թ.

Երիտասարդները մանկութիւնից ուսումնարան տրուած լինելով, միայն արձակուրդի կարճ միջոցին էին գիւղերէս տեսնում, ուստի և նրանք շօշափելի կերպով չէին ճանաչում ժողովուրդը, ինչպէս այդ ճանաչում էին հայր-կալուածատէրները: Այն միջոցին, որ հասարակութեան մէջ բարձրացաւ «ժողովրդասիրութեան» ալիքը, երիտասարդները գիմնազիօսի բարձր դասարաններումն էին գտնուում. և նրանք սկսան ուսումնասիրել ժողովուրդը. բայց այդ ուսումնասիրութիւնը գրքերից ըսկըսան: Իսկ երկրորդ քայլն արին սկսելով ուսումնասիրել «ժողովրդի սգու» արտագրութիւնները՝ նրա ստեղծագործութեան մէջ: Այն ժամանակները Հարաւ-Արեւմտեան Ռուսիայում խիստ սովորական բան էր տեսնել պանիչներին սպիտակ թիկնոցով և նշխած շապիկ հագած ժողովրդի մէջ շրջելիս: Տնտեսական պայմանների ուսումնասիրութեան վրայ առանձին ուշադրութիւն չէին դարձնում: Պանիչները գրի էին առնում ժողովրդական տաղերի ու երգերի բառերն ու եղանակները, ուսումնասիրում էին աւանդութիւնները, համեմատում էին պատմական փաստերն ու ժողովրդի յիշողութեան մէջ դրանց թողած հետքերը. առ հասարակ գիւղացու վրայ նայում էին ազգայնական ռոմանտիզմի բանաստեղծական հայեացքով: <sup>1)</sup> Ասենք այդ բանը շատ խորթ չէր նաև ծերունիների համար, բայց և այնպէս երբէք չէին կարողանում երիտասարդների հետ մի որևիցէ համաձայնութեան լանգել:

— Դէ մի դրան լսիր, — ասում էր Ստաւրուչենկոն նենգաբար արմուկով Մակսիմին հրելով, երբ ուսա-

<sup>1)</sup> Թոմանտիզմը սուսաց կեանքի մէջ արտայայտուեցաւ նաև ազգայնական ուղղութեամբ, որի մէջ սրաւեանատէրները իրենց ամբողջական տեսութեամբ առաջնակարգ դեր խաղացին: Երբ Պետրոս Մեծը հսկայական հարուածով խորտակեց Ռուսիան Արեւմտեան Եւրոպայից անջատող պատնէշը, գիտութեան հոսանքը յորձանք տուաւ դէպի Ռուսիա եւ օտարազգի-

նորը բոցավառ դէմքով և հրացայտ աչքերով ճամարտակուճ էր:— Տես, շան լակոտը, ոնց որ գրում է, այնպէս էլ խօսում...: Հէնց գիտենաս գրուստ որ գիտնական լինի: Բայց հապա, խելօք զաւակս, մի պատմես, թէ ոնց էր իմ նեչիպորս քեզ խաբել...: Հ՛ը...:

✕ Ծերունին շօյում էր իւր բեխերը և զուտ-խախտական հեգնութեամբ մի յարմարաւոր դէպք պատմելով, քրքչում: Պատանինները կարմրում էին, բայց իրենք էլ յետ չէին մնում: «Եթէ նրանք այսինչ գիւղացի նեչիպորին կամ Խվէգիօյին չեն ճանաչում, դրա փոխարէն ամբողջ ժողովուրդն են ուսումնասիրում նրա կեանքի ընդհանուր արտագրութիւններով. նրանք խընդրին նայում են ամենաբարձր հայեցակէտից, որով միայն հնարաւոր է եզրակացութիւններ և գաղափարի ընդհանուր միաւորութիւն առաջ բերել. նրանք մի հայեացքով պարփակում են հեռաւոր պարզանկարները (պերսպեկաիւ) <sup>1)</sup>, մինչգեռ հին և սոսկական կեանքի

դաստիարակների ազդեցութիւնը գերակշիռ հանգիսացաւ. ուստական միտքը ստրկութեան աստիճանի ճնշուած էր: Սկսուեցան բողոքներ ևւ դարուս 30 ական թուերին ծնունդ առաւ սլաւեանասիրութիւնը, որ 40—50-ական թուերին ծաղկելով կամաց-կամաց ծայրահեղութիւնների մէջ ընկաւ, մասերի բաժանուեց ևւ անհետացաւ: Սլաւեանասէրների գաղափարի հիմնաքարը կազմում է ժողովրդի ողու ուսումնասիրութիւնը՝ քաղաքական, հասարակական, կրօնական, մտաւոր, հոգեկան ևւ լեզուի արտագրութեամբ: Իսկ դրա համար անհրաժեշտ էր մտնել ժողովրդի մէջ: Սլաւեանասէրներին շարժեք է շփոթել համասլաւեանականների հետ, որոնք ձգտում են բոլոր սլաւեանցիների միութեան:

Մ. Թ.

1) Պերսպեկաիւ խօսքի հայերէնը չունինք. մաթեմատիքական տերմինաբանութեան ուսուցանում է տափարակի վրայ կանոնաւորապէս գետեղել առարկայի գծերն ու կէտերը: Իսկ օգային պերսպեկաիւր սովորեցնում է այն կանոնները, որի համաձայն առարկաները փոփոխութեան են ենթարկուում իրենց գծագրութեան ևւ լոյսի ու գոյնի սաստկութեան կողմից: Պերսպեկաիւ բառը գործ է ածուում շատ տեղ փոխարեւակաւ մշտքով որպէս կանոնաւոր, համաչափ, բոլոր մասերի համապատասխան տեսութիւն, նկար:

Մ. Թ.

մէջ փտած գործնական մարդիկ ջաղացը թողած չախ-  
շախի ետևիցն են ընկած»:

Սակայն ծերունու համար անհաճոյ չէր նաև որդի-  
կերանց խորիմաստ ճառերը լսել:

— Իսկոյն երևում է, որ զուր չեն ուսումնարա-  
նում սովորել, — ասում էր նա ինքնագոհ կերպով ուն-  
կնդիրներին նայելով:— Բայց և այնպէս պէտք է ա-  
սեմ, որ իմ Խվեղկոս ձեզ երկսիդ էլ ջուրը կտանէ,  
ծարաւ յետ կրերէ, ա՛յ թէ ինչ...: Իսկ ես, հը՛մ, ես  
նրան, այդ սասանի պոչին, քիսիս մէջ կկոխեմ ու ջէբս  
կդնեմ...: Ասել է որ դուք էլ միւսնոյնն էք իմ առա-  
ջըս, ոնց որ լակոտները քաւթառ շան առաջ:

### III

Հէնց այժմս էլ նոր էր այդպիսի վէճերից մէկը  
խաղացել: Մեծերը գնացին ներս և բաց պատուհան.  
նրից ժամանակ առ ժամանակ լսում էր, թէ ինչպէս  
Ստաւրուչենկոն յաղթական եղանակով զանազան ծի-  
ծաղաշարժ դէպքեր էր պատմում, իսկ ունկնդիրներն  
ուրախ-ուրախ ծիծաղում:

Երիտասարդները պարտիզում մնացին: Ուստեոյը  
իւր թիկնոցը փռեց տակը, գլխարկը յետ քաշեց  
ու մի տեսակ գիտաւորեալ ազատ ձևով ձգուեցաւ  
արօտի վրայ: Նրա մեծ եղբայրը թումբի վրայ նըս-  
տած էր Էվելինայի կողքին: Կազետը, իւր հա-  
մազգեստի բոլոր կոճակները կարգին կոճկած, տե-  
ղաւորուել էր նրա մօտ, իսկ փոքր ինչ հետու,  
պատուհանի զիտին յենած, գլուխը քաշ նստած  
էր կոյրը, — նա մտածում էր հէնց նոր դադարած վէ-  
ճի մասին, որ խորպպէս յուզել էր իրեն:

— Գուք ինչ էք կարծում այն ամենի մասին, պան-  
նա Էվելինա, որ խօսուեց այստեղ, — հարցրեց երիտա-  
սարդ Ստաւրուչենկոն իւր հարևանուհուն. — կարծեմ  
դուք ոչ մի խօսք չասացիք:

— Այդ ամենը շատ լաւ էր, այսինքն այն, ինչ որ  
Ձեր հօրն ասացիք: Միայն...

— Միայն... ի՞նչ:

Ազջիկն անմիջապէս չպատասխանեց: Նա ձեռ-  
գործը դրեց ծնկներին, ձեռքով շօյեց վրայից և գլու-  
խը թեթեակի խոնարհելով, սկսաւ մտախոհ կերպա-  
րանքով նայել դրան: Գծուար էր հասկանալ, թէ ար-  
գեօք իւր պատասխանն էր մտածում, թէ՛ այն, որ  
հարկաւոր էր գործուածքի համար փոքր ինչ աւելի  
խոշոր նիշացանց առնել:

Իսկ երիտասարդներն անհամբերութեամբ նրա պա-  
տասխանին էին սպասում: Ուսանողը բարձրացաւ ար-  
մուկների վրայ և իւր հետաքրքրութիւնից կենդանա-  
ցած դէմքը ազդեալ կողմը շարձեց: Եվելինայի հարե-  
ւանն իւր խաղաղ, փորձող հայեացքն յառել էր նրա  
վրայ: Կուրը փոխեց իւր ազատ գիրքը, շտկուեցաւ և  
դէմքը խօսակիցներից շուռ տալով՝ գլուխն առաջ ձգեց:

— Բայց, — կամացուկ ասաց Եվելինան կրկին իւր  
գործուածքը շփելով, — ամեն մարդ, պարոններ, այս  
կեանքի մէջ իւր ճանապարհն ունի:

— Տէր Աստուած, — խստութեամբ ասաց երիտասար-  
դը, — ինչ խոհեմութիւն: Բայց Դուք քանի՞ տարեկան  
էք իսկապէս, սիրուն պաննուհիկ:

— Տասնևօթ, — պատասխանեց ազջիկը պարզ կերպով  
և իսկոյն էլ միամիտ — յաղթական հետաքրքրութեամբ  
հարցրեց. — իսկ Դուք կարծում էիք աւելի եմ, այնպէս չէ:

Երիտասարդները ծիծաղեցան:

— Եթէ Ձեր տարիքի մասին ինձ հարցնէին, — աս-  
աց նրա հարեանը, — խիստ պիտի տատանուէի տաս-  
ներեք և քսաներեք տարիքի միջև: Ծիշտ եմ ասում,  
երբեմն Դուք բոլորովին երեխայի էք նմանում, բայց  
դատողութիւն էք անում խելացի պառիկի նման:

— Լուրջ խնդիրներում, Գաւրիլո Պետրովիչ, լուրջ

էլ պէտք է դատել, — վարդապետական եղանակով ասաց փոքրիկ կինը կրկին աշխատանքը ձեռք առնելով:

Առ վայրկեան մի բոլորն էլ լռեցին: Եվելինայի ասեղը կրկին համաչափ շարժում էր նխշացանցի վրայով, իսկ երիտասարդները հետաքրքրութեամբ դիտում էին խոհեմ աղչկայ փոքրիկ պատկերը:

#### IV

Եվելինան, ի հարկէ, Պետրոսին առաջին անգամ հանդիպելուց յետոյ յայտնի կերպով մեծացել ու կազմակերպուել էր, բայց նրա կերպարանքի վերաբերմամբ ուսանողի արած նկատողութիւնը բոլորովին ուղիղ էր: Առաջին անգամ այս փոքրիկ, նիհարկեկ աղչկայ վրայ նայելիս թւում էր, թէ դա դեռ փոքրիկ աղիկ է, բայց նրա համաչափ ու կանոնաւոր շարժումները մէջ շատ անգամ հասուն կնոջ լրջութիւն էր արտայայտւում: Նոյն տպաւորութիւնն էր անում նաև նրա դէմքը: Կարծեմ միայն սլաւեան կանույք են այդպիսի դէմք ունենում: Կանոնաւոր, գեղեցիկ զիմազծերը որոշում են կանոնաւոր, սառն գծերով, կապոյտ աչքերը նայում են միապաղաղ, անգործ, կարմրութիւնը հազիւ է երևում այդ դժգոյն այտերի վրայ, բայց դա այն սովորական դժգունութիւնը չէ, որ ամեն մի բոպէ պատրաստ է կիզիչ կրքի բոցով վառուելու, — դա աւելի ձիւնի սառն սպիտակութիւնն է: Եվելինայի ուղիղ ձգուած շէկ մազերը հազիւ ջոկւում էին մարմարեայ քունքերի վրայ, և ծանր ծամ հիւսուած ընկել էին ետևը, որի ծանրութիւնից, մասն դալու միջոցին, նրա դլուխն ասես թէ լեւ էր թեքւում:

Կայրը նոյնպէս մեծացել էր ու այրացել: Ով որ այդ միջոցին նայէր նրան լիշեալ խմբից այդպէս հեռու նստած՝ յուզուած ու գեղեցկատեսիլ՝ իսկոյն կնկատէր այդ ինքնատիպ դէմքը, որի վրայ այնքան ակն-

դէպքու - հար.  
դէպքուս - հարյցե

չայտնի կերպով արտափայլում էր հոգեկան ամեն մի շարժում: Սև մազերը գեղեցիկ ալիքներով կախուած էին դուրս ընկած ճակատի վրայ, որ վաղաժամ կնճիւներով էր պատած: Այտերի վրայ արագութեամբ բացավառւում էր թանձր կարմրութիւնը և նոյնպէս արագութեամբ էլ սփռւում էր կաթնագոյն դժգունութիւնը: Ներքին շրթունքը, որի անկիւնները հագիւ նկատելի կերպով ներքև էին քաշուած, ժամանակ առ ժամանակ ջղաձգաբար ցնցւում էր տարօրինակ կերպով, լոնքերը զգաստօրէն լարւում էին և շարժւում, իսկ խոշոր, գեղեցիկ աչքերը, որոնք նայում էին միտապաղազ և անշարժ հայեացքով, երիտասարդի գէմքին մի տեսակ ոչ բոլորովին սովորական մռայլ գոյն էին տալիս:

— Ուրեմն, — ծաղրական եղանակով ասաց երիտասարդը մի փոքր լռելուց լետոյ, — սլաննա է՛վելինան կարծում է, թէ այն ամենը, ինչ որ մենք այստեղ խօսեցինք, կնոջ խելքին անմատչելի է, թէ կնոջ բաժինը — մանկանոցի ու խոհանոցի նեղ շրջանն է:

Երիտասարդի ձայնի մէջ զգացւում էր ինքնագոհութիւն (այդ ժամանակներն այդպիսի բառերը գեռ բոլորովին նոր էին) և վէճի բռնուելու հեգնութիւն. մի քանի րոպէ ամենքն էլ լռեցին և ջղալին կարմրութիւնը պատեց աղջկայ գէմքը:

— Շատ էք շտապում Ձեր եզրակացութիւններն անելու, ասաց նա: — Ես այստեղ խօսուածը ամենքն էլ հասկանում եմ. ուրեմն կնոջ խելքին մատչելի է դա: Խօսքս իմ անձի վերաբերմամբ էր միայն:

Նա լռեց և գլուխը քաշ գցեց իւր ձեռագործի վրայ մի այնպիսի ուշադրութեամբ, որ երիտասարդն այլ ևս սիրտ չարեց իւր հարցերը շարունակելու:

— Ձարմանալի է, — մթմթածաց նա, — կարելի է կարծել, թէ դուք արդէն իսկ չափած ու ձևած լինիք Ձեր ամբողջ կեանքը մինչի վերեզման:

— Ի՞նչ զարմանալու բան կայ այստեղ, Գաւրիլո

Պետրովիչ, — ցած ձայնով պատասխանեց օրիորդը. — կարծում եմ, որ Իլիա Իվանիչն անգամ (կաղեփի անունն է) պէտք է գծագրած լինի իւր ուղին. իսկ նա հօ ինձանից երիտասարդ է:

— Ուղիդ է, — ասաց կաղեփն այդ հրաւերից գոհ մնալով: — Դեռ մօտերքս կարդացի Ն-ի կենսագրութիւնը: Նա էլ որոշ նախագծով էր զործում. — քսան տարեկան ամուսնացաւ, իսկ քսանհինգ տարեկան ժամանակն արդէն զօրաբաժնի հրամանատար էր:

Ուսանողը նենգամտութեամբ ծիծաղեց. աղջիկը թեթեալի շոտագունեցաւ:

— Այ, տեսնում էք, — մի ըուպէից ասաց Եվելինան ձայնի մի տեսակ պաղ խստութեամբ, — ամեն մարդ իւր ճանապարհն ունի:

Այլ ևս ոչ ոք չհակաճառեց: Երիտասարդների խմբի մէջ տիրեց լուրջ լուռութիւն, որի մէջ ակնյայտնի պարզութեամբ զգացւում էր տատամսոտ երկիւղ, — ամենքն էլ նսեմ կերպով հասկացան, որ խօսքը անձնական նուրբ կէտի էր հասել, որ այդ պարզ խօսքերի տակից հնչում էր մի ինչ որ տեղ զգաստ ձգւած լար...:

Եւ այս լուռութեան մէջ պարզ լուռւմ էր միայն մթազնոդ և, ասես թէ մի բանից դժգոհ, հինաւուրց պարտիզի սօսաւիւնը:

V

Այս ըուրը խօսակցութիւնները, այս վէճերը, այս եռուն, թարմ հարցապնդումների, յօյսերի, ակնկալութիւնների և կարծիքների այլքը՝ — այս բոլորն անակընկալ ուժգին հասանքով խուժեցին կուրի վրայ: Սկզբում ոգևորուած զմայլման արտայայտութեամբ ականջ էր դրնում նրանց, բայց նա շուտով նկատեց, որ այդ կենդանի կոհակը անց է կենում իւր մօտով, որ դա ոչ մեառնչութիւն չունի իւր հետ. իրեն հարցեր չէին տալիս, իւր կարծիքը չէին հարցնում. տեսաւ, որ ինքք

կանգնած է մենակ մի տեսակ տխուր առանձնութեան մէջ: Եւ այդ առանձնութիւնն աւելի ևս տխուր էր թւում մանաւանդ այժմ, երբ կեանքը աղմկալից էր անցնում ապարանքում:

Քայց և այնպէս նա շարունակում էր ականջ դնել այն ամենին, որ այսքան նոր էր իրեն համար, և նրա խիստ կիտուած լոնքերը, դժգոյն դէմքն ու ժգին ուշադրութիւն էին արտայայտում: Քայց մռայլ էր այդ ուշադրութիւնը. մտքի ծանր և դառն աշխատանք էր թաղնուած նրա տակ:

Մայրը տխրամած աչքերով նայում էր իւր որդուն: Եւ ելինայի աչքերը կարեկցութիւն և անհանգստութիւն էին արտայայտում: Միայն Մակսիմն էր, որ կարծես չէր նկատում, թէ ինչ տպաւորութիւն է գործում կոյրի վրայ այն տղմկալի հասարակութիւնը, և հիւրերին սիրայօժար հրաւիրում էր յաճախակի այցելել ապարանք՝ երիտասարդներին խոստանալով, որ միւս անգամ նրանց համար ազգագրական հարուստ նիւթ պատրաստած կլինի:

Հիւրերը խոստացան նորից գալ և զննցին: Մնաք բարև ասելիս երիտասարդները սրտագին թոխում էին Պետրոսի ձեռքը: Նա ուժգնութեամբ պատասխանում էր նրանց ձեռք սեղմելուն, և երկար ժամանակ ունկընդրած լսում էր, թէ ինչպէս հեռացող կառքի անիւները դղրդում էին ճանապարհին: Յետոյ նա արագութեամբ շուռ եկաւ և հեռացաւ-զնաց պարտէզ:

Հիւրերի գնալուց լետոյ ապարանքում ամեն բան խաղաղեց. բայց այդ խաղաղութիւնը կոյրին մի տեսակ առանձին, անսովոր և տարօրինակ էր թւում: Ասես թէ այդ անդորրութեան մէջ զգացում էր, որ ապարանքում մի շատ նշանաւոր բան էր կատարուել: Լուռ ծառուղիներում, ուր միայն հաճարիքն ու ետսամանիքն էին շշնշում, կարծես կոյրը դեռ լսում էր հէնց նո-

րերս եղած խօսակցութիւնների արձագանգը. բաց պատուհանից նրա ականջին հասնում էր, թէ ինչպէս մայրն ու Եվելինան ընդունարանում մի բանի մասին վիճում էին Մակսիմի հետ: Մօր ձայնի մէջ աղերս և տանջանք նկատեց նա: Եվելինայի ձայնը զայլույթ էր արտայայտում, իսկ Մակսիմը կործես կրքով, բայց անյողողղէ կերպով լետ էր մղում կանանց յարձակումը: Պետրոսի մօտենալուն պէս այդ խօսակցութիւններն անմիջապէս դադարում էին:

Մակսիմը գիտակցաբար, անխնայ հարուածով բաց արաւ առաջին խրամատն այն պարսպի մէջ, որ մինչև այժմ շրջապատել էր կոյրի աշխարհքը: Առաջին աղմկալի և խռովարոյզ կոհակն արդէն յորձանք էր տուել այդ խրամատի միջով. և այդ առաջին հարուածի ուժգին ընդհարումից զողողաց պատանու հոգեկան հաւասարակշռութիւնը:

Այժմ նրան նեղ էր գալիս իւր հմայական շրջանը: Նրան տաղտուկ էր ազգում ապարանքի անդորրութիւնը, հնաւուրց պարտիզի ծոյլ սօսաւիւնն ու շշուկը, պատանեկական հոգու միահանդույն քունը: Խաւարը թովում էր նրան իւր նոր գիւթական ձայներով և գրաւիչ կենդանացման անձկալի իրարանցմամբ խնուելով տարուբերում էր նրա առաջ և նոր, անմեկին պատկերներ ձևակերպում:

Խաւարը կանչում էր նրան, հրապուրում, նրա հոգու մէջ նիրհած հարցապնդումները զարթեցնում. և այդ առաջին հրաւերի հետևանքը եղաւ արտաքուստ նրա գէմքի դժգունութիւնը, իսկ հոգու մէջ — բուժ, թէպէտ գեռ անսրիշ տանջանքը:

Այս չարագուշակ նշանները չվրիպեցան կանանց աչքից: Մենք, աչք ունեցողներս, ուրիշների հոգեկան շարժումների արտայայտութիւնը տեսնում ենք նրանց գէմքի վրայ, ուստի և սովորում ենք մերը թազցնել:



երբեմն քրոջը՝ բարկութեամբ իւր անթացուպերով յատակը թրխկացնելով...:

Բայց նա շատ հազիւ էր բարկանում. մեծ մասամբ քրոջ փաստերին պատասխանում էր մեղմ և ներողամիտ ցաւակցութեամբ, մանաւանդ որ քոյրն ամեն անգամ որ մենակ էր մնում, վիճաբանութեան մէջ միշտ զիջանում էր նրան. բայց այդ արգելք չէր, որ նա շուտով դարձեալ նորոգէր խօսակցութիւնը: Սակայն երբ վիճաբանութիւններին ներկայ էր լինում նաև Եվելինան, բանն աւելի ծանր կերպարանք էր ստանում: Այդպիսի դէպքում ծերունին աւելի լաւ էր համարում լուռ մընայ: Ասես թէ նրա և նորատի աղջկայ մէջ մաքառումն էր սկսուելու, և նրանք երկուսն էլ նոր-նոր ուսումնասիրում էին հակառակորդին՝ աշխատելով մեծ խնամքով ծածկել իրենց զէնքերը:

## VI

Երբ երկուշաբաթից երիտասարդներն իրենց հօր հետ նորից եկան, Եվելինան սառն անտարբերութեամբ ընդունեց նրանց: Բայց նրա համար գոժուար էր չհամակուել այդ գրաւիչ և նորատի կենդանացմամբ: Երիտասարդներն ամբողջ օրերով թափառում էին գիւղի մէջ, որսի էին գնում, գաշտերում գրի էին առնում հնձուք կանանց և տղամարդկանց երգերը, իսկ երեկոյեան ամբողջ խումբը հաւաքւում էր պարտիզում, ապարանքի պատի տակ շինուած թումբի վրայ:

Մի այդպիսի երեկոյ Եվելինան ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս եղաւ, որ խօսակցութիւնը դարձեալ նուրբ խնդիրների վրայ դարձաւ: Ինչպէս եղաւ այդ, սով էր առաջինը սկսողը— ոչ Եվելինան և ոչ էլ մէկ ուրիշը կարող էր ասել այդ: Որպէս աննկատելի կերպով հանգել էր վերջալոյսը և երեկոյեան սառւերներն սկսել էին սո-

դոսկալ պարտիզի մէջ, որպէս աննշմարելի եղանակաւ սո-  
խակը իւր երեկոյեան երգն էր սկսել թփերի միջից, այդ-  
պէս աննկատելի կերպով կատարուել էր նաև այդ բանը:

Ռ. սասնօղը խօսում էր բորբոքուած, պատանեկական  
այն բուռն աշխուժով, որ առանց կշռագատութեան, ա-  
ռանց մտածելու ընդառաջ է սլանում դէպի անյայտ ա-  
պագան: Մի առանձին դիւթական ոյժ, կոչի համարեա  
մի անընկճելի ոյժ կար դէպի ապագան և նրա հրա-  
շալիքները տածած այդ հաւատի մէջ:

Նորատի ազդիկը լուզուեց հասկանալով, որ այդ կոչը,  
գուցէ առանց գիտակցական հաշուի, այժմ անմիջապէս  
դէպի իրեն էր ուղղուած:

Նա լսում էր՝ գլուխը ցած խոնարհած ձեռագործի  
վրայ: Նրա աչքերը բոցավառեցան, դէմքը շառագունե-  
ցաւ, սիրտը բաբախում էր... Ապա աչքերի փայլը հան-  
գաւ, շրթունքները սեղմուեցան, իսկ սիրտը սկսեց աւե-  
լի և սուժգին բաբախել, և ահի արտայայտութիւն երևաց  
նրա սպրդնած դէմքի վրայ...:

Եւ նա վախեցաւ, որովհետև կարծես յանկարծ իւր  
աչքերի առաջ քաշած խաւար պատը բաժանուեցաւ և  
այդ լուսաշաղկի միջից ցոլացաւ ընդարձակ, եռուն և  
գործօն կեանքի հեռաւոր հեռանկարը:

Այո, այդ աշխարհը վաղուց հրապուրում է նրան:  
Նա այդ առաջ չգիտէր, բայց հնաւուրց պարտիզի ստուե-  
րում, մեկուսացած նստարանի վրայ, ժամերով նստում  
էր նա անիրագործելի ցնորքների անձնատուր եղած: Ե-  
րևակայութիւնը նրա առաջ պատկերացնում էր պայծառ,  
հեռաւոր նկարներ, և դրանց մէջ կոյրը տեղ չունէր...:

Այժմ այդ աշխարհը մօտեցել էր իրեն. դա ոչ միայն  
հրապուրում էր, այլ և մի ինչ որ պահանջ էր անում:

Նա մի արագ հայեացք ձգեց Պետրոսի կողմը և մի  
բան խոցեց իւր սիրտը: Պետրոսը նստած էր անշարժ և  
մտախոհ. նրա ամբողջ կերպարանքն ասես թէ ծանրա-

ցած լինէր, և այդ բանը մնալլ բժի նման գրոշմուեց նորատի աղջկայ լիշողութեան մէջ: «Նա... ամեն բան հասկանում է» - կայծակի արագութեամբ անցաւ նրա մըտքովը, և աղջիկը մի տեսակ ցրտութիւն զգաց: Արիւնը սրտին խփեց, իսկ դէմքի վրայ ինքն էլ յանկարծական դժգունութիւն զգաց: Նրան մի առ վայրկեան թուաց, թէ ինքն արդէն այնտեղ, այդ հեռաւոր, եռուն աշխարհումն է, իսկ Պետրոսն ահա հէնց այնտեղ նստած է մենակ, գլուխը քաշ գցած. կամ ոչ... այնտեղ, բլրակի վրայ, դետի ափին է այն կոյր մանուկը, որի վրայ ինքն այն երեկոյեան լաց էր եղել...

Եւ նա զարգանդեց: Նրան այնպէս թուաց, թէ մէկը պտորաստուում է իւր հին վէրքի միջից դուրս քաշել դաշոյնը:

Նա լիշեց Մակսիմի երկնային հայեացքները: Ահա թէ ուրեմն ինչ էին նշանակում այդ լուռ հայեացքները: Մակսիմն իրենից լաւ է գիտացել իւր տրամադրութիւնը. նա հասկացել է, որ իւր սրտում դեռ ևս կարող է մտքառում, ընտրութիւն տեղի ունենալ, որ դեռ ինքն իւր վրայ վստահ չէ...: Բայց ոչ, — Մակսիմը սխալում է: Եւ ելինան հասկանում է իւր արած առաջին քայլը, իսկ յետոյ կտեսնէ, թէ դեռ ուրիշ ինչ կարելի է կեանքից վերցնել:

Նա ծանր և դժուար թառանջ քաշեց, կարծես դժուարին աշխատանքից յետոյ շունչ առնելիս լինէր, և չորս կողմը նայեցաւ: Կարող չէր ասել, թէ լուռութիւնը երկնային ժամանակ է, որ տիրած էր, վաղձեց էր ուսանողը լուռ, այլ ևս ուրիշ բան խօսել էր...: Նա նայեցաւ այն կողմը, ուր մի վայրկեան առաջ նրստած էր Պետրոսը:

Բայց Պետրոսն այլ ևս իւր առաջուկ տեղում չկար:

VII

Այն ժամանակ Էւելինան հանգիստ կերպով ծալեց ձեռագործը և վերկացաւ տեղից:

— Ներեցէք, պարոններ, ասաց նա հիւրերին:—  
Մի առ ժամանակ ձեզ մենակ եմ թողնելու:

Նա գնաց մութ ծառուղու երկարութեամբ:

Միմիայն Էւելինային չէր, որ վրդովել էր այդ երեկոն: Ծառաստանի պտոյտքում, ուր նստարան կար դրուած, աղջիկը յուզուած ձայներ լսեց: Մակսիմը խօսում էր քրոջ հետ:

— Այո, այս դիպուածում մտածելով Պետրոսի մասին, ոչ նուազ հոգս եմ քաշում նաև աղջկայ համար,— խտտութեամբ ասում էր ծերունին:— Մի միտք արա, նա դեռ երեխայ է և չգիտէ ինչ է կեանքը: Չեմ ուզում հաւատալ, թէ դու ուզում լինիս նրա անգիտութիւնից օգտուել...:

Երբ Աննա Միխայլովնան պատասխանեց, նրա ձայնից զգացում էր, որ արտասուել է:

— Հապս եթէ, Մակս... եթէ Էւելինան...: Ի՞նչ կ'լինի այն ժամանակ զաւակիս վիճակը:

— Թող ինչ ուզում է լինի,— հաստատութեամբ և խոթողաձ պատասխանեց հնաւուրց զինուորականը:— Այդ էլ այն ժամանակը կ'նայենք: Յամենայն դէպս նրա վրայ պէտք չէ ծանրանայ այն գիտակցութիւնը, թէ ինքը խորտակել է ուրիշի կեանքը...: Հէնց նոյն իսկ մեր խղճի վրայ ևս...: Լաւ միտք արա, Անիա,— ասաց նա աւելի մեղմ կերպով:

Ծերունին բռնեց իւր քրոջ ձեռքը և քնքշութեամբ համբուրեց: Աննա Միխայլովնան խոնարհեց իւր գլուխը:

— Ի՞նչ... խեղճ զաւակս...: Երանի երբէք հանդիպած չլինէր նրան...:

Աղջիկն աւելի զգաց, քան թէ լսեց այդ խօսքերը՝ —  
այնքան կամաց դուրս պրծաւ մօր շրթուներէն իւր  
թառանչը:

Եւելինայի դէմքը կարմրատակեցաւ: Նա ահամայ  
կանգ առաւ ճեմելիքի պտուղի մօտ... Եթէ այժմ դուրս  
գալու լինի, նրանք երկուսն էլ պիտի տեսնեն, որ ծա-  
ծուկ ահանջ է դրած եղել նրանց գաղտնի մտքերին...:

Բայց մի քանի րոպէից Նա հպարտութեամբ բարձ-  
րացրեց գլուխը: Նա չէր ուզում ծածուկ ահանջ գնել  
նրանց խօսակցութեանը, և լամենայն դէպս, կեղծ ա-  
մօթքը չպիտի լինի իւր ճանապարհից կասեցնողը: Մա-  
նուանդ որ այդ ծերունին էլ շատ է բանի մէջ մտնում:  
Ինքն էլ կարող է իւր կեանքը տնօրինել:

Նա դուրս եկաւ շաւղի պտուղից և անվրդով ու  
գլուխը բարձր բռնած անցաւ երկու խօսակիցների մօտով:

Մակսիմն ահամայ քաշեց իւր անթացուպելը, որ-  
պէս զի նրան ճանապարհ տայ, իսկ Աննա Միխայլով-  
նան սիրոյ, համարեա պաշտելու և երկիւղի մի տեսակ  
ճնշուած արտայայտութեամբ նայեցաւ նրան:

Նա իբրև մայր կարծես զգաց, որ այս հպարտ, զեղ-  
ձան մազերով աղջիկը, որ հէնց նոր այնպիսի ցասկոտ-  
կուռի պատրաստ կերպարանքով անցաւ, բազդ կամ ան-  
բազդութիւն էր բերում իւր զաւակի ամբողջ կեանքի  
համար:

### VIII

Պարտիզի հեռաւոր կողմում մի հին, անխնամ թո-  
ղած ջրաղաց կար: Անիւները վաղուց է դադարել էին  
պտտելուց, մամուռը պատել էր նրա գլանները, և ջու-  
րը մի քանի բարակ, անլուռ հնչուն հոսանքներով հո-  
սում էր ջրարգելի արանքներից: Սա կոյրի սիրած տեղն

էր: Նա այստեղ ամբողջ ժամերով նստում էր հողակոյտի վրայ ու ականջ դնում ծորող ջրի զրոյցին. և նա այդ զրոյցը շատ գեղեցիկ կերպով կարողանում էր արտայայտել դաշնամուրով: Բայց այժմս դա բոլորովին չէր զբաղեցնում կոյրին...: Սիրտը դառնութեամբ լցուած, ներքին ցաւից այլակերպուած գէմքով, նա արագ-արագ ման էր գալիս շաւիղի վրայ:

Կոյրը լսեց աղջկայ թեթեւ քայլափոխի ձայնը և կանգ առաւ: Եւելինան ձեռքը դրեց նրա ուսին ու լրջօրէն հարցոյց.

— Սի ինձ ասա, Պետրոս, այս բնչ է եղել քեզ: Ինչի՞ ես այսպէս տխուր:

Կոյրն արագութեամբ շուռ եկաւ ու սկսաւ դարձեալ քայլել շաւիղի վրայ: Եւելինան էլ նրա կողքովն էր գնում:

*Այլ* Աղջիկը հասկացաւ նրա լանկարծական շարժումները պատճառն ու լռութիւնը, և մի առ վայրկեան գլուխը քաշ գցեց: Ապարանքից երգի ձայն էր գալիս: Երկտասարդական, զօրեղ ձայնը, տարածութեան մէջ մեղմացած, սէր և երջանկութիւն էր երգում, և այդ ձայնի հնչիւնները, խլացնելով պարտիզի ծոյլ շշուկը, տարածւում էին լռութեան մէջ...:

Այնտեղ երջանիկ մարդիկ պայծառ և լիալիր կեանքի մասին էին խօսում. Եւելինան ինքն էլ մի քանի ըսպէս առաջ նրանց մէջն էր՝ արբեցած այդ կեանքի ցնորքներով, որի մէջ կոյրի համար տեղ չկար: Նա մինչև անգամ չէր էլ նկատել կոյրի հեռանալը, և ո՞ գիտէ, որքան երկար պիտի թուած լինէին նրան՝ այս մենակ վշտի ընկերները...:

Այս մտքերն էին պաշարել աղջկան այն միջոցին, երբ նա Պետրոսի հետ կողք կողքի ճեմում էր ծառուղիով: Երբէք նրան այնքան գոռաւր չէր թուացել կոյ-

*այսպէս  
շշուկային*

րի հետ խօսակցութիւն սկսելը, նրա տրամադրութեան  
իշխելը: Բայց և զգում էր, որ իւր ներկայութիւնը կա-  
մաց-կամաց մեղմացնում է կոյրի մոռալ մտախոհութիւնը:

Յիրաւի, կոյրի քայլուածքն աւելի դանդաղ դարձաւ,  
դէմքն առաւել խաղաղ: Նա իւր կողքին լսում էր Է-  
ւելինայի քայլերը և կամաց-կամաց հոգու սուր ցաւը  
մեղմանում էր՝ տեղի տալով մի այլ զգացմունքի: Նա  
այդ զգացմունքի մասին հաշիւ չէր տալիս իրեն, բայց  
զա ծանօթ էր նրան և դիւրութեամբ էլ ենթարկւում  
էր դրա բարեբար ազգեցութեանը:

— Խնչ է եղել քեզ, — կրկնեց Էւելինան իւր հարցը:

— Խնչ պիտի լինի, — պատասխանեց կոյրը դառնու-  
թեամբ, — այն, որ ինձ թւում է, թէ ես բոլորովին ա-  
ւելորդ եմ այս աշխարհում:

Տան կողմից լսուող երգը մի առ ժամանակ դադա-  
րեց և մի քիչ չետոյ մի նոր երգ սկսուեց: Երգի ձայնը  
հազիւ էր լսելի լինում. երիտասարդը հին «խոհերից» էր  
երգում՝ նմանելով գուսանների մեղմ եղանակին: Եր-  
բեմն-երբեմն ձայնն ասես թէ բոլորովին լոււմ էր, մտա-  
խոհութեան ըուլէ հասնում, նսեմ անուրջքը տիրում  
էր մարդուս երեւակայութեանը, և ապա մեղմ մեղեդին  
վերստին լսելի դառնում տերեւների սօսաւիւնի միջից...:

Կոյրն ակամայ կանգ առաւ և ականջ դրեց:

— Գիտես, — ասաց նա տխրագին: — Երբեմն ինձ թը-  
ւում է, թէ ծերունիներն իրաւունք ունին դանդատուե-  
լու, որ քանի գնում աշխարհս տարէց տարի փչանում  
է: Հին ժամանակները մինչև անգամ կոյրերի համար  
էլ լաւ էր: Այն ժամանակ ես էլ, փոխանակ դաշնամու-  
րի, կ'սովորէի փանդիւ ածել ու քաղաքէ քաղաք, գիւ-  
ղէ գիւղ ընկած կ'ըջէի...: Մարդկանց բազմութիւնը  
կ'խռնուէր իմ չորս բոլորքս և ես կ'երգէի՝ նրանց հա-  
րերի գործերը, նրանց փառքն ու քաջագնութիւնները:

Այն ժամանակ գոնէ ես էլ մի նշանակութիւն կ'ունենայի կեանքի մէջ: Իսկ այժմ: Մինչև անգամ այդ փոքրիկ, ճշացող ձայնով կազետը, մինչև անգամ նա էլ, լսեցի՞ր, ամուսնանալու, զօրաբաժնի հրամանատար լինելու մասին է խօսում: Նրա վրայ ծիծաղեցան. իսկ ես... իսկ ինձ մինչև անգամ այդ էլ անմատչելի է:

Աղջկայ կապույտ աչքերը երկիւղից լայն-լայն բացուեցան և արտասուքի կաթիլները փայլեցին նրանց մէջ:

— Ուսանողի ճառն է ազդել քու վրայ, — ասաց նա շփոթուած՝ ջանալով անհոգ կատակի ձև տալ իւր ձայնին:

— Այո՛, — մտքի մէջ ընկած ասաց Պետրոսն ու աւելացրեց: — Նա շատ ախորժելի ձայն ունի: Գեղեցիկ է:

— Այո՛, լաւ է, — մտախոհ, համարեա քնքշութեամբ հաստատեց Էւելինան, բայց յանկարծ գլխի ընկնելով, մի տեսակ զայրացմամբ աւելացրեց խիստ կերպով. — Ոչ, նա ամենեւին դիւր չէ գալիս ինձ: Չափազանց անձնապաստան է և հէնց ձայնն էլ անախորժ է ու խիստ:

Պետրոսը զարմացած լուծ էր այս զայրոյթի զբրդիւր: Աղջիկը ոտքը գետնին խփեց ու շարունակեց.

— Բոլոր ասածները լիմարութիւն է: Գիտեմ, այս ամենը Մաքսիմի սարքածն է: Ա՛խ, ինչպէս այժմ ատում եմ նորան:

— Ինչէր ես ասում, Վելիա, — զարմացած հարցրեց կոյրը: — Ի՞նչն է Մաքսիմի սարքածը:

— Ատում եմ, ատում եմ Մաքսիմին. — յամառութեամբ կրկնեց աղջիկը: — Նա իւր հաշիւներով ոչնչացրել է իւր մէջ զգացմունքի ամեն մի նշոյլ...: Մի, մի խօսիլ ինձ նրանց մասին...: Եւ ո՞վ է նրանց իրաւունք տուել ուրիշի վիճակը տնօրինելու:

Նա յանկարծ ուժգնօրէն կանգ առաւ, հուպ տուեց իւր բարակ ձեռները, այնպէս որ մատները չըջրթացին, և սկսաւ երեխի նման լաց լինել:

Կոյրն ապշած ու կարեկցաբար բռնեց նրա ձեռքից: Այս անվրդով և միշտ ինքն իրեն զսպող աղջկայ յուզմունքը բոլորովին անսպասելի էր և անբացատրելի: Պետրոսը միաժամանակ ունկնդրած լսում էր թէ նրա լացը և թէ այդ լացի տարօրինակ արձագանգը, որ հընչում էր իւր սրտի մէջ: Նա լիշեց առաջուայ տարիները՝—ինքը նստած էր բլրի վրայ՝ դարձեալ այսպէս վըշտաբեկ, իսկ Էւեղինան իւր կողքին լաց էր լինում, ինչպէս այժմս...:

Բայց յանկարծ Էւեղինան քաշեց իւր ձեռքը, և կոյրը դարձեալ զարմացաւ՝—աղջիկը ծիծաղում էր:

—Ինչ լիմարն եմ եղել: Եւ ինչի՞ համար էի լաց լինում:

Նա աչքերը սրբեց ու յետոյ սկսաւ յուզուած ու բարի ձայնով խօսել:

—Ո՛չ, պէտք է արգարագատ լինել: Նրանք երկուսն էլ պատուական երիտասարդներ են: Եւ այն, ինչ որ այս բոպէին խօսում էին, այդ էլ էր լաւ: Բայց հօ այդ ամենքի համար չէ:

—Ով որ կարող է՝ ամենքի համար է, —ասաց կոյրը:

—Գտտարկ բան է, —պատասխանեց աղջիկը որոշակի, թէև նրա ձայնի մէջ ժպիտի հետ արտայայտուում էր նաև դեռ նոր թափուող արտասուքը: Ահա հէնց Մակսիմը, քանի կարողանում էր՝ պատերազմում էր, իսկ այժմ ապրում է՝ ինչպէս որ կարողանում է: Ուրեմն մենք էլ...

—Մենք մի ասիլ: Քու բանդ բոլորովին ուրիշ է:

—Ոչ, ուրիշ չէ:

—Ինչի՞:

—Որովհետև... Դէ նրա համար, որ դու հօ ինձ հետ պսակուելու ես, հետևաբար նշանակում է, որ մեր կեանքն էլ միատեսակ կ'լինի:

Կոյրը զարմացած կանգ առաւ:

— Ե՛ս... քեզ հետ...: Ուրեմն դու ինձ... գալիս ես...

— Ի հարկէ, ի հարկէ, անշուշտ, — պատասխանեց աղջիկը հապճեպ շփոթութեամբ: — Ի՛նչքան անհասկացող ես: Միթէ՛ երբէք մտքովդ անցած չէր այդ: Շատ հասկանալի բան է: Ել ո՛ւմ հետ ես ամուսնանալու, եթէ ոչ ինձ հետ:

— Ի հարկէ, — մի տեսակ տարօրինակ եսականութեամբ համաձայնեցաւ կոյրը: Բայց իսկոյն աւելացրեց.

— Ասիր, Ալեքիա, — ասաց նա Էլեելինայի ձեռքը բռնելով. — հէնց նոր նրանք տուած էին՝ մեծ քաղաքներում աղջկերքն ամեն բան էլ սովորում են. քու առաջդ էլ կարող էր ընդարձակ ճանապարհ բացուել... Իսկ ես...

— Դու ի՛նչ:

— Իսկ ես... կոյր եմ, — վերջացրեց նա բոլորովին անկապ կերպով:

Եւ կոյրը դարձեալ լիշեց իւր մանկութիւնը, գետի խողազ ճգփիւնը, Էլեելինայի հետ առաջին ծանօթութիւնը, և «կոյր» բառը լսելիս նրա լացը...: Նա բնագդմամբ զգաց, որ այժմ էլ նոյնպիսի վերք է հասցնում նրան, և կանգ առաւ: Մի քանի վայրկեան լռութիւն տիրեց. միայն ջրարգելից հոսող ջուրն էր գլգլում խողազ ու փաղաքուշ: Էլեելինան ձայն ծպուտ չէր հանում՝ կարծես անհետացած լինէր: Եւ լիրաւի, աղջկայ գէմքը ջղաձգաբար ցնցուեց, բայց նա զսպեց իրեն, և երբ սկսեց խօսել, նրա ձայնը կատակով էր ու զուարթ հրնչում:

— Ի՛նչ անենք որ կոյր ես, — ասաց նա. — Եթէ մի աղջիկ կոյրի սիրէ, պետք է ուրեմն նրա հետ էլ ամուսնանայ: Միշտ այդպէս է լինում, մենք ինչ անենք:

— Սիրէ... — մտքի տունն ընկած ասաց կոյրը և

յոնքերը կիտեց, նա ահանջ էր դնում այդ ծանօթ խօսքի իրեն համար նոր հնչիւններին...:—Վերէ՛,—կրկնեց նա առաւելող յուզմունքով:

—Անշուշտ: Ես էլ, դու էլ, մենք երկուսս էլ սիրում ենք միմեանց...: Ինչ անհասկացողն ես: Դէ ինքզմտածիր,—կարող էիր դու այստեղ մենակ, առանց ինձ մնալ...:

Կոյրի դէմքը լանկարծ գունատուեց, և նրա անլոյս աչքերը կանգ առին՝ խոշոր ու անշարժ:

—Վճեռնէի,—խուլ ձայնով ասաց կոյրը:

Էւելիինայի շրթունքները դողդողացին, ինչպէս իրենց հանդիպման առաջին օրը, և նա դժուարութեամբ, թոյլ ու մանկական ձայնով ասաց.

—Ես էլ նոյնպէս...: Առանց քեզ, մենակ... Հեռու աշխարքում...

Կոյրը աղջկայ մանրիկ ձեռքը հուպ տուեց իւր ձեռքի մէջ: Նրան տարօրինակ էր թւում, որ Էւելիինան մեղմօրէն էր պատասխանում իւր ձեռք սեղմելուն, որ բոլորովին նման չէր առաջուանին—նրա մանրիկ մատների թոյլ շարժումն արձագանգ էր տալիս իւր սրտի խորքում: Առ հասարակ բացի նախկին, իւր մանկութեան ընկեր Էւելիինայից, նա մի այլ, նոր աղջիկ էր զգում նրա մէջ: Նա ինքն իրեն թւում էր զօրաւոր և ուժեղ, իսկ Էւելիինան՝ թոյլ և լաց լինող: Այն ժամանակ խորին զգացմունքի ազդեցութեամբ, մի ձեռքով գրկախառնեց աղջկան, իսկ միւս ձեռքով սկսաւ նրա մետաքսանման մազերը շոյել:

Եւ նրան թուաց, թէ իւր բոլոր վիշաք լուց իւր սրտի խորքում և թէ ոչ մի բուռն յոյզ ու ցանկութիւն չունի այլ ևս, այլ ներկայ բոլէն էր, որ գոյութիւն ունէր:

Սոխակը, որ քանի ժամանակ է իւր ձայնն էր փոր.

ձուժ, սուշեց և անզուսպ դայլայլիկը սփռեց պարտիզի մէջ: Աղջիկը սթափուեց և ամօթխածուժեամբ հեռացրեց Պետրոսի ձեռքը:

Կոյրը չընդգրկմացաւ և նրան բաց թողնելով լիակուրծն շուռնչ քաշեց: Նա լսում էր, թէ ինչպէս Էւե. լինան իւր մազերն էր ուղղում: Նրա սիրտը ուժգին, բայց հաւասարաչափ և հաճելի կերպով բաբախում էր. զգում էր, թէ ինչպէս տաք արիւնը մի կեդրոնացած ոյժ էր տարածում ամբողջ մարմնի մէջ: Երբ մի բուպէից Էւելինան իւր սովորական ձայնով ասաց. «Յէ, այժմ գնանք հիւրերի մօտ», նա զարմացմամբ լսում էր այդ սիրալիւր ձայնը, որի մէջ այժմ բոլորովին նոր հնչիւններ էին լսուում:

## IX

Հիւրերն ու տանտէրերը փոքրիկ ընդունարանումն էին հաւաքուել. միայն Պետրոսն ու Էւելինան էին պակաս: Մակսիմը իւր հին բարեկամի հետ էր խօսում. երիտասարդները լուռ նստած էին բաց պատուհանների առաջ. փոքրիկ հասարակութեան մէջ տիրած էր այն մի առանձին խաղաղ տրամադրութիւնը, որի խորքում, թէպէտ ոչ ամենքի համար պարզ, բայց բոլորին էլ հասկանալի դրամա է զգացւում: Խիստ զգալի էր կոյրի ու աղջկայ բացակայութիւնը: Մակսիմը խօսակցութեան միջոցին մերթ ընդ մերթ կարճ, ակնկալու հայեացք էր ձգում դրան կողմը: Աննա Միխայլովնան տխուր ու ասես թէ մեղապարտ դէմքով յայտնապէս աշխատում էր ուշադիր և հաճելի տիրուհի լինել. միայն ինչպէս միշտ, բարեհոգի և բաւական կրօնացած պան Պոպելսկին էր, որ ընթրիքի սպասելով ներհում էր բազկաթոռի մէջ:

Երբ պարտիզից ընդունարան տանող դաշտակերտի վրայ ոտքի ձայն լսուեց, բոլորի աչքն էլ այն կողմը դարձաւ: Լայն դրան խաւար քառակուսու մէջ երևեցաւ Էւեյրինայի պատկերը, իսկ նրա ետեւից աստիճաններով ծանր-ծանր բարձրանում էր կոյրը:

Նորատի աղջիկը զգաց ամենքի՝ իւր վրայ կեդրոնացած, ուշադիր հայեացքը. բայց այդ նրան չչփոթեցրեց: Նա իւր սովորական համաչափ քայլուածքով անցաւ սենեակի միջով և մի վայրկեան միայն, Մակսիմի յոնքերի տակից ձգած կարճ հայեացքին հանդիպելով, թեթեւակի ժպտաց և նրա աչքերը ծաղրական ու կասեռ մարտակէրի փայլ արձակեցին: Պանի Պոպելսկայան ուշագրաւ իւր զաւակն էր դիտում:

Երիտասարդն աղջկայ ետեւից էր գնում կարծես ինքն էլ լաւ չհասկանալով, թէ ո՛ւր էր տանում իրեն: Երբ դրանը երևաց նրա դժգոյն դէմքը, բարակ իրանը, նա լանկարճ կանգ առաւ այս լուսաւորուած սենեակի շեմքում: Բայց լետոյ անցաւ շեմքն ու արագութեամբ, թէպէտ նոյն կիսամօլոր ու կէսուշադիր կերպարանքով մօտեցաւ դաշնամուրին:

Թէև դաշնամուրը անդորր ապարանքի մէջ սովորական տարր էր կազմել, բայց միևնոյն ժամանակ մըտերմական, այսպէս ասած, զուտ ընտանեկան տարր էր դա: Այն օրերը, որ ապարանքը լցուել էր եկուոր երիտասարդների խաղ ու տաղով, Պետրոսը ոչ մի անգամ դաշնամուրին չէր մօտեցել, միայն Ստաւրուչենկօի աւագ որդին էր նուագում, որ երաժիշտ էր արուեստով: Այսպիսով Պետրոսն աւելի ևս աննկատելի էր մնում կենդանի հասարակութեան մէջ, և մայրը ցաւ ի սիրտ դիտում էր իւր զաւակի մութ կերպարանքը, որ կորչում էր այս ընդհանուր փայլի և կենդանացման մէջ: Այժմ առաջին անգամն էր, որ Պետրոսը

Համարձակ և մինչև իսկ կարծես ոչ լիովին զիտակցաբար մօտենում էր իւր սովորական տեղին.. : Ըստ երեւութին նա մոռացել էր օտարների ներկայութիւնը: Ասենք նրա ներս մտնելու միջոցին ընդունարանում մի այնպիսի լուութիւն էր տիրած, որ կոյրը կարող էր սենեակը դատարկ համարել:

Նա բաց արաւ դաշնամուրի խուփը, թեթեակի դիպաւ ստեղներին և մի քանի արագ, թեթեւ դաշնակներ հնչեցրեց: Թուում էր, թէ նա մի բան է հարցնում ո՛չ զիտես դործիքին, ոչ զիտես՝ իւր սեփական արամազրութեանը:

Ապա, ձեռները ստեղների վրայ մեկնած, նա մտքի ծովն ընկաւ և ընդունարանի լուութիւնն աւելի ևս խորը դարձաւ:

Պատուհանների խաւար բացուածքից նայում էր գիշերը. լամպարի լուսով լուսաւորուած տերեւների կանաչ խումբերը պարտիզից, տեղ տեղ, հետաքրքրութեամբ զիտում էին ներսը: Հիւրերը, գեռ նոր լուած դաշնամուրի նսեմ գոբրդից նախապատրաստուած, մասամբ էլ կոյրի գունատ գէմքի վրայ սաւառնոց տարօրինակ ոգևորութեամբ համակուած, նստած էին լուս սպասողութեան մէջ:

Իսկ Պետրոսը, կոյր աչքերը վեր ամբարձած, լուս էր դեռ և կարծես շարունակ դեռ մի բանի ականջ էր դնում: Բազմազան զգացողութիւնները, խռովուած ալիքների նման, բարձրանում էին նրա հոգու մէջ: Ինչպէս ծովի ալիքներն ափին, աւազի վրայ, երկար և հանգիստ մնացած նաւակը կորզում են տանում, այնպէս էլ անյայտ կեանքի յորձանքն ընդգրկել էր նրան.. : Գէմքի վրայ արտայայտուում էր ապշութիւն, հարցում, — իսկ մի տեսակ էլ առանձին լուզում արագասահ

ստուերի նման անցնում էր նրա վրայով: Կոյր աչքերը խորն էին թւում և մութը:

Մի առ վայրկեան կարելի էր կարծել, թէ նա իւր Հոգու մէջ չէ գտնում այն, ինչ բանի որ այնպիսի անյագ ուշադրութեամբ ունկնդրում էր: Բայց յետոյ, թէպէտ դարձեալ միևնոյն սպշած կերպարանքով և դարձեալ ասես թէ իւր ցանկացածին չհասած, նա ցնցուեց, ստեղները շարժեց և խուժած զգացմունքի նոր կոհակին մատնուած, անձնատուր եղաւ լիալիր սահուն, քաղցրահունչ, երգակ դաշնակներին... <sup>1)</sup>:

X

Առ հասարակ կոյրի համար շատ զժուար բան է ձայնախաղեր գործածելը: Ինչպէս և սովորական գրեւորը, ձայնախաղերն էլ դուրս են ցցուած լինում. ձայները (տոն) <sup>2)</sup> նշանակում են առանձին նշաններով և

✓x

1) Ինչպէս յայտնի է, հիմնական ձայները 7 են՝ փո, է, վէ, բէ, խո, նէ, պա (գո, բէ, միւ ֆա, սօլ, լա, սի). երբ գրանցից առնուակն երեքը, մէջ ընդ մէջ առած, միանան՝ կազմում են ակկորդ, դաշնակ, օրինակ՝ փո վէ-խո կամ է-բէ-նէ, կամ վէ խո պա: Բայց ակկորդը կարող է կազմուել նաև 4 ձայներից, արտակարգ դէպքերում նոյն իսկ 5, 6, 7 ձայներից և լինում է երկու տեսակ՝ ներդաշնակ (կոնսոնանս) և անդաշնակ (դիսսոնանս). ներդաշնակ են, երբ ձայներն իրար բռնում են, ինչպէս վերևում բերած օրինակներում, իսկ անդաշնակ—երբ ձայներից մէկն ու մէկը չի բռնում միւսներին. օրինակ փո-վէ-խո-պա, ուր առաջին և վերջին ձայներն իրար չեն բռնում: Գաշնակ կազմող ձայները միանուակ, մէկ անգամից են երգում կամ ածում իրրն մի ձայն, ինչպէս օրինակ եռաձայն կամ քառաձայն երգեցողութեան միջոցին կամ դաշնամուր ածելիս, և դաշնակի ձայները սովորական միջոցին գրւում են իրար տակ, իսկ կոյրերի համար գրւում են մի շարքով, իրար ետևից՝ հարցական նշաններով իրար հետ միացած:

2) ձայներէն ձայն բառը գործ է ածւում անխտիր—մարդու ձայն, գանգակի ձայն, քամու ձայն, օտքի ձայն: Ձայնը, ինչպէս յայտնի է, առաջանում է մարմնի մասնիկների տատա-

Հարուած են լինում մի կարգի, ինչպէս գրքի տողերը: Ցոյց տալու համար, թէ ձայներից դաշնակ է կազմուած, նրանց միջև դնում են հարցական նշաններ: Հասկանալի է, որ կոյրը պէտք է բերան անէ ալդ ամենը, և այն էլ իւրաքանչիւր ձեռքի համար առանձին: Այսպէսով դա մի շատ բարդ և դժուար աշխատանք է: Սակայն այս անգամ էլ Պետրոսին օգնեց այն սէրը, որ նա ունէր դէպի աշխատանքի բաղադրիչ մասերը: Իւրաքանչիւր ձեռքի համար մի քանի դաշնակ անդիր սովորելուց յետոյ նստում էր դաշնամուրի առաջ, և երբ ալդ դուրս ցցուած նշանագրերի միութիւնից լանկարծ, իրեն համար էլ անակնկալ կերպով վայելչակազմ ներդաշնակութիւն էր կազմուում, մի այնպիսի հաճութիւն էր ստանում և այնպիսի բուռն հետաքրքրութեամբ բորբոքում, որ ալդ տաղտկալի աշխատանքը կարճանում, նոյն իսկ գրաւիչ էր դառնում:

նումներից (ալիքանման): Եթէ տատանումները իրար անկանոն կերպով են յաջորդում, առաջանում է աղմուկ (քամու հուռչը), եթէ կանոնաւոր ընդմիջումներով յաջորդում, առաջանում է դողանջիւն, իսկ եթէ դրանք սլարգ, այսպէս ասած ձօճանակաւոր են, առաջանում է իսկական ձայնը, տոն, որը լինում է բարձր կամ ցած՝ նայելով, թէ որքան արագ կամ դանդաղ տատանումն է գործում մարմինը մի վայրկեանում:

Տոնը ձայնն է, նոտը՝ ձայնի նշանը, ինչպէս հնչիւն և տառ: Երաժշտական ձայնն ունի ոյժ, բարձրութիւն և երանգ: — Եթէ վանդը ուժով հնչեցնենք կամ երկու հատ միատեսակ լարած լար կամ ստեղն միաժամանակ հնչեցնենք, ձայնի ոյժն էլ աւելի զօրեղ կ'լինի. միևնոյնը կ'լինի նաև նման դաշնակներ հնչեցնելիս: Տօնի բարձրութիւնը զանազանում ենք ականջով. ջութակը կարելի է լարել բարձր կամ ցած աօնով, միևնոյն բանը կարելի է բարձր և ցած աօնով երգել: Հեշտ չէ տարբերել, աւելի ևս բացառել տոնի երանգը. — միևնոյն ձայնը տարբեր գործիքների վրայ միևնոյն աստիճանում տարբեր երանգ ունի — սրիճը, ջութակը, դաշնամուրը օրինակ: Այդ առաջանում է նրանից, որ իւրաքանչիւր ձայն, բացի հիմնական ձայնից, տոնից, ունի նաև լրացուցիչ, բարձր երաժշտական տոն, որը իւրաքանչիւր գործիքի համար տարբեր է լինում. ահա այդ տարբեր լրացուցիչ տոներն են, որ երանգ են տալիս:

Բայց և այնպէս թղթի վրայ նշանագրած պիէսի ու այդ պիէսը եղանակի վերածելու միջև, այս դէպքում խիստ շատ միջանկեալ գործողութիւններ կային լինելու: Մինչև որ նշանագրերը մարմնանային ու մեղեդի դառնային, պէտք է գրանք անց կենային կոյրի ձեռների տակով, հաստատուէին լիշողութեան մէջ և այնուհետև չետտգարձ շաւղով հասնէին մինչև մատների ծայրը: Միևնոյն ժամանակ կոյրի խիստ զարգացած երաժշտական երևակայութիւնը միջամտում էր սերտողութեան բարդ աշխատանքին և նկատելի կերպով իւր անձնական դրոշմը գնում ուրիշի պիէսի վրայ: Պետրոսի երաժշտական զգացումը ձուլուել, հէնց այն ձևերն էր ստացել, ինչ ձևերով որ նա սկզբում ըմբռնել էր մեղեդին, իսկ յետոյ էլ՝ ինչ ձևերով որ արտայայտուում էին մօր նուազները: Այդ ժողովրդական երաժշտութեան ձևերն էին, որ անխափան հնչում էին իւր հոգու մէջ, և որոնց միջոցով իւր հոգու հետ խօսում էր հարազատ բնութիւնը:

Եւ այժմ, երբ թրթռուն սրտով և խանդալից հոգով իտալական մի պիէս էր նուագում, հէնց որ առաջին դաշնակը հնչեցրեց, նրա ածուածքի մէջ մի այնպիսի ինքնուրոյն բան էր արտայայտուում, որ ունկրնգիրներն ապշեցան: Սակայն մի քանի բուպէից հիացումը պատեց բոլորին և միայն Ստաւրուչենկօի աւագ որդին, որ արուեստով երաժիշտ էր, գեռ երկար ժամանակ ուշադրութեամբ ունկնդրած լսում էր ածուածքը՝ աշխատելով ըմբռնել այդ ծանօթ պիէսը և միևնոյն ժամանակ վերլուծել դաշնակահարի ինքնատեսակ ածելու եղանակը:

Լարերը հնչում էին, դղորդում և լքցուելով սենեակը, տարածուում լուռ պարտիզի մէջ...:

Երիտասարդների աչքերը աշխուժութեամբ ու հե-

տաքըքրութեամբ փայլում էին: Սկզբում ծերունի Ստա-  
րուչենկոն գլուխը քաշ նստած լուռ ահանջ էր դնում,  
բայց լետոյ սկսաւ աւելի ու աւելի ոգևորուիլ, արմու-  
կով հրհրում էր Մակսիմին ու շշնջում:

— Ա՛յ ինչ կ'ասեմ. ածելը սրան կ'ասեն: Հ՞ը: Այն-  
պէս չէ՞:

Գաշնամուրի ձայների աճելովը, ծերունի վիճաբա-  
նի միտքը բան էր ընկնում, երևի իւր երիտասարդու-  
թիւնը լիչեց, որովհետև աչքերն առ կայծեցին, դէմքը  
կարմրեց, մարմինն ուղղուեց և, ձեռքերը վեր բարձ-  
րացնելով, մինչև անգամ ուզում էր բռունցքով սեղա-  
նին զարնել, բայց ինքն իրեն զսպեց և առանց մի ձայն  
հանելու, ձեռքը ցած թողեց: Նա արագ հայեացք ձը-  
գեց իւր կտրիճների վրայ, շփեց բեխերը և դէպի Մակ-  
սիմը կռանալով ասաց:

— Ուզում են ծերերին դէն ձգել...: Ո՛նց չէ...: Մի  
ժամանակ մենք էլ, եղբայր, նոյնպէս...: Հէնց այժմս  
էլ...: Ուղե՞ղ է թէ չէ:

Մակսիմը, որ սովորաբար բաւական անտարբեր էր  
վերաբերում դէպի երաժշտութիւնը, այս անգամ մի  
ուրիշ բան էր զգում իւր սանի ածուածքի մէջ և, ծխի  
բարդերով շրջապատուած, լսում էր, գլուխը շարժում  
և աչքերը Պետրոսի վրայից Էւելինային դարձնում: Այս  
անգամ էլ նրա ծրագրի մէջ խուժել էր անմիջական  
կեանքի բուռն ոյժը ո՛չ այնպէս, ինչպէս ինքն էր ու-  
զում...: Աննա Միխայլովնան նոյնպէս հարցական նշան  
էր ձգում Էւելինայի կողմը և ինքն իրեն հարց տալիս,  
— ինչ է սա. երջանկութիւն է հնչւում իւր զաւակի  
նուազի մէջ, թէ՞ վիշտ...: Էւելինան նստած էր լուսամ-  
փոփի ստուերում, և լոկ նրա խոշոր ու մթազնած աչ-  
քերն էին երևում կիսամութի մէջ: Միայն նա էր ու-  
րոյն, իւր հանգի հասկանում այդ հնչիւնները, — այդ

նուազի մէջ նա լսում էր հին ջրարգելի արանքներից հոսող ջրի խոխոջը և մթնած ճեմելիքում կեռասենու շշուկները:

## XI

Եղանակը վաղուց արդէն փոխուել էր: Պետրոսը իտալական պիէսը թողած իւր երեւակայութեանն էր անձնատուր եղել: Այդտեղ կար այն ամենը, որ խոնուում էր նրա լիշողութեան մէջ, երբ նա մի րոպէ առաջ լուռ, գլուխը խոնարհած ականջ էր գնում իւր անցկացրած կեանքի տպաւորութիւններին: Այդտեղ կային բնութեան ձայները, քամու հունչը: անտառի շշուկները, գետի վշտոցը և անյայտ հեռաւորութեան մէջ լուռ անմեկին ժխորը: Այս ամենը ընդելուզւում էր և հնչում այն առանձին խոր և սիրտ լայնացնող զգացողութեան շուքի (ֆոն) վրայ, որ բնութեան խորհրդաւոր զրոյցը ծնեցնում է հոգու մէջ և որին շատ դժուար է մի որոշում տալը...: Թախի՛ճ է...: Բայց ինչի՞ ուրեմն այդքան ախորժ...: Ի երկրանք...: Բայց ինչի՞ դա այսքան խոր, այսքան անսահման ախուր է:

Մերթ ընդ մերթ հնչիւնները զօրանում էին, աճում, ամբանում: Երաժշտի գէմքը տարօրինակ կերպով խոժոքում էր: Կարծես նա ինքն էլ էր զարմանում այս նոյն իսկ իրեն համար անակնկալ մեղեդիների ոյժի վերայ, և դարձեալ մի ուրիշ բանի էլ սպասում...: Թուում էր, թէ հէնց այս է, մի քանի՛ բաղխումով պիտի կարող լինի այս ամենը մի հզօր և սքանչելի ներգաշնակութեան վայելչակազմ հոսանքի վերածել, և այդպիսի վայրկեաններին ունկնդիրները թալիանում էին ակնկալութեամբ: Բայց դեռ չլրացած, մեղեդին մի տեսակ աղերսալի տրտունջ էր հանում և, փրփուր ու ցայտեր դար-

ձող ալիքի նման, խորտակոււմ, և դառն վարանման ու հարցման ձայները թալկանալով հնչում էին դեռ երկար:

Կոյրը մի առ վայրկեան դադարոււմ էր և ընդունարանոււմ կրկին լռութիւն տիրում, որ միայն պարտիզի տերևների շշուճովն էր խանդարոււմ: Ունինդերներին պաշարած և նրանց այս համեստ պատերից հեռու հեռու սլացնող տպաւորութիւնը փշանում էր, և փոքրիկ սենեակը չորս բոլորքից մօտենում նրանց, և գիշերը մութ պատուհաններից ներս գիտում, մինչև որ երաժիշտը նորից ոյժերը հաւաքած՝ կրկին ստեղներին էր բաղխում:

Եւ ձայները կրկին հաստատուն էին դառնում ու, կարծես մի բան որոնելով, իրենց ամբողջականութեամբ աւելի բարձրանում, աւելի զօրանում...: Ժողովրդական երգի մեղեդիները, որ մերթ սէր և թախիժ էին արտայայտում, մերթ անցեալ տանջանքների ու փառքի լիշատակ, մերթ խիզախ երիտասարդական քէֆ և լոյս, ընդելուզոււմ, անորոշ ու շփոթ զոդանջիւն և զաշնակների խոււ աղմուկ էին կազմում.— կոյրը փորձում էր իւր զգացումները պատրաստի և իրեն լաւ ծանօթ ձեւերով արտայայտել:

Բայց երգն էլ նոյն անվճիռ մնացած հարցումների վշտահար հնչիւններն արձակեց և, փոքրիկ ընդունարանի մէջ դողդողալով, լռեց:

## XII

Երբ վերջին անմեկին դժգոհ ու վշտալի հնչիւններն էլ դողդողացին, Աննա Միխայլովնան նայեցաւ իւր որդուն և նրա գէմքի վրայ տեսաւ մի արտայայտութիւն, որ ծանօթ էր թւում իրեն՝— մօր լիշողութեան մէջ արթնացաւ հեռաւոր գարնան արեգակնա-

լին օրը, երբ իւր երեխան, գարնանային գրգռիչ բնութեան չափազանց պայծառ տպաւորութիւններից ընկճուած, ընկել էր գետափին:

Բայց այդ արտայայտութիւնը միայն մայրը նկատեց: Ընդունարանում ազմկալի խօսակցութիւն սկսուեց: Ստաւրուչենկօ-Հայրը Մակսիմին մի բան էր գորգուում. երիտասարդները, դեռ յուզուած ու զրգուած, երաժշտի ձեռքն էին սեղմում և նրան գեղարուեստագէտի մեծանունն հռչակ գուշակում:

— Եւ այդ ճշմարիտ է, — հաստատեց մեծ եղբայրը: — Ժողովրդական մեղեդիի իսկական բնաւորութիւնը գարմանալի կերպով կարողացել էք իւրացնել: Դուք ըմբռնել և լիովին տիրել էք նրան: Բայց, ասացէք խնդրեմ, այն ինչ պիէս էր սկզբի ածածներդ:

Պետրօսը իտալական պիէսի անունը տուաւ:

— Հէնց այդպէս էլ կարծում էի, — պատասխանեց երիտասարդը: — Սյդ պիէսն ինձ մասամբ ծանօթ է... Բայց դուք գարմանալի ինքնուրոյն ձև ունիք: Շատերն են ձեզանից լաւ ածում, բայց այդ պիէսը դեռ ոչ ոք ձեզ նման ածած չէ: Դա... կարծես իտալական երաժշտական լեզուի մալաուուսական թարգմանութիւն է... Զեզ կանոնաւոր դալրոց է պէտք, և այն ժամանակ...

Կուրն ուշադրութեամբ լսում էր: Առաջին անգամն էր, որ նա այդ ջերմ խօսակցութիւնների կեդրոն էր գարձել, և նրա հոգու մէջ ծնունդ էր առնում իւր ութերի հպարտ գիտակցութիւնը: Միթէ այս հնչիւնները, որոնք երբէք իւր կեանքում այսչափ անդոհունակութիւն ու տանջանք պատճառած չէին իրեն, ինչպէս այս անգամ, միթէ դրանք կարող են այսպիսի ներգործութիւն ունենալ: Ապա ուրեմն ինքն էլ կարող է կեանքի մէջ պիտանացու լինել: Նա, ձեռները ստեղների վրայ մեկնած, նստած էր իւր աթոռի վրայ,

երբ այս խօսակցութեան աղմուկի միջոցին մի ջերմ հպում զգաց իւր ձեռքին: Այդ էւելինան էր նրան մօտեցել և, աննկատելի կերպով նրա մատները սեղմելով, ուրախ յուզմունքով շնչաց.

— Լսեցի՞ր: Դու էլ անելու գործ կունենաս...: Մի տեսնէիր, մի գիտենայիր, թէ ի՞նչ կարող ես անել մեզ ամենքիս...:

Կոյրը ցնցուեց և շտկուեց:

Բացի մօրից ոչ ոք չնկատեց այդ կարճ տեսարանը: Մայրը կարմրատակեց, կարծես նորաբողբոջ սիրոյ անդրանիկ համբոյրը ստացած լինէր:

Կոյրը գեռ էլի նստած էր նոյն տեղը: Նա մաքառում էր իւր վրայ զեղուած նոր երջանկութեան տպաւորութիւնների գէժ, բայց գուցէ և զգում էր մօտալուտ փոթորիկը, որ արդէն անկերպարան և ծանր, սեւաթուր ամպի նման բարձրանում էր իւր ուղեղի խորքերից:

---

## Ձ. ԳԼՈՒԽ

---

### I.

Յաջորդ օրը Պետրոսը վաղ գարթեցաւ: Սենեակում հանգստութիւն էր տիրում. գեռ ևս տան մէջն էլ ցերեկուայ շարժումը չէր սկսուել: Պատուհանից, որ ամբողջ գիշերը բաց էր մնացած, վաղ առաւօտուայ թարմութիւնը պարտիզից զեղւում էր ներս: Պետրոսը, չը նայելով իւր կուրութեան, շատ լաւ զգում էր բնութիւնը: Նա գիտէր, որ գեռ վաղ է, որ իւր պատուհանը բաց է՝ տերեւների սօսաւիւնը, որ ոչնչով բաժանուած և հեռացած չէր, լսւում էր մեկին և մօտիկ: Պետրոսն այսօր այս ամենը առանձնապէս սլարգ

էր զգում—մինչև անգամ նա դիտէր, որ արևը լուսաւորել է իւր սենեակը և եթէ ձեռքը պատուհանից դուրս մեկնէ, թփերից ցօղ կ'թափուի: Բացի դրանից նա այս էլ էր զգում, որ նրա ամբողջ հուծիւնը լցուած է մի տեսակ նոր, դեռ չճաշակած զգացողութեամբ:

— Ահա քանի ըստէ է նա անկողնում պառկած ականջ էր դնում պարտիզում երգող մի թռչնի թոյլ ճռուողին և իւր սրտում աճող մի տարօրինակ զգացման:

«Այս ինչ էր եղել ինձ» — մտածեց նա և միևնույն միջոցին նրա լիշողութեան մէջ հնչեցին այն խօսքերը, որ երեկ երեկոյեան, մթնշաղին, հին ջրաղացի մօտ ասել էր Էւելինան. «միթէ դու երբէք չէիր մտածել այդ մասին...: Ինչ անհասկացողն ես եղել...»:

Այո, նա այդ մասին ամենեւին չէր մտածել: Էւելինայի մօտիկութիւնը իրեն հաճօյք էր պատճառում, բայց մինչև երէկ նա այդ բանը չէր հասկանում, ինչպէս որ մենք չենք զգում օդը, որ շնչում ենք: Այդ պարզ խօսքերը երէկ ընկան նրա հոգու մէջ այնպէս, ինչպէս բարձրութիւնից ընկնում է քարը վճիտ ջրի անդօրը մակերևութի վրայ, — դեռ մի վայրկեան առաջ անշարժ էր նա և խաղաղ անգրադարձնում էր արևի լոյսն ու կապոյտ երկինքը... բայց մի հարուած — և նա մինչև լատակը լուզուեց:

Այժմ նա զարթել էր վերանորոգուած ոյժով, և Էւելինան, իւր վաղուցուայ բարեկամուհին, մի նոր լուսով լուսաւորուած երևեցաւ նրան: Մանրամասն բար լիշելով այն բոլորը, որ պատահել էր երէկ, նա զարմացմամբ ականջ էր դնում նրա «նոր» ձայնի եղանակին, որը նա երևակայութեամբ նորոգում էր իւր լիշողութեան մէջ: «Սիրեցի... ինչ անհասկացող ես...»:

Պետրոսն արագութեամբ վեր թռաւ տեղից, շորերը հագաւ և պարտիզի ցողապատ ուղիներով գէպի հին

չրադացր վագեց: Զուրը խոխոչում էր, որպէս երէկ, և կեռասենիները նոյնպէս շշնջում, միայն երէկ մութն էր, իսկ այժմ արեգակնային պայծառ առաւօտ: Եւ երբէք նա լոյսն այսպէս պարզ «չէր զգացել»: Ասես թէ անուշաբոյր խոնաւութեան հետ, առաւօտուայ թարմութեան զգացողութեան հետ միասին նրա մէջն էին թափանցում նաև այս զուարթ օրուայ ծիծղուն ճարագայթները, որ խտխտում էին նրա շղերը:

## II

Կարծես ամբողջ ապարանքն աւելի պայծառացած ու զուարթացած լինէր: Ասես թէ Աննա Միխայլովնան ինքն էլ էր երիտասարդացել: Մակիմը յաճախակի կտակներ էր անում, թէպէտ և դարձեալ ծուխի ամպերի միջից, որպէս մօտից անցնող փոթորկի որոտ, լաւում էր նրա փնթփնթոցը: Նա տրտնջում էր, թէ՛ ինչպէս երևում է ոմանք կարծում են, որ կեանքս մի հասարակ վէպի նման մի բան է՝ որը ամուսնութեամբ պիտի վերջանայ, և թէ կեանքի մէջ կան այնպիսի բաներ, որոնց վրայ արժէր որ ոմանք մտածէին: Պան Պոպելսկին, որ մի շատ հետաքրքրական կլորիկ մարդ էր դարձած—կարմիր գէմքով, հաւասարապէս ու գեղեցիկ սպիտակացող մազերով,—երևի կարծելով թէ այդ խօսքերն իրեն էին ուղղուած, այսպիսի գէպքերում միշտ համաձայնում էր Մակիմի հետ և անմիջապէս վեր կենում ու իւր գործին գնում. իսկ նրա գործերը շատ լաւ էին գնում: Երիտասարդները քմծիծաղ էին տալիս և ինչ որ ծրագրիրներ կազմում: Պետրոսը պէտք է իւր երաժշտական կրթութիւնն աւարտէր:

Վրոպուկ Միանգամ, աշնան, երբ արդէն հունձը վերջացած էր, Պոպելսկիներն ամբողջ ընտանիքով Ստաւրուչենիօ-

լին հիւր գնացին: Ստաւրուչենկոյի կալուածքը Պոպելսիու ապարանքից 70 վերստ հեռու էր գտնուում, բայց այդ տարածութեան վրայ տեղի դիրքը բոլորովին փոխուում է՝ Կարպատեան լեռների վերջին ճիւղերը, որոնք դեռ ևս Վոլքնում ու Բուզի մերձակայքում երևում են, այստեղ անհետանում են և երկիրը տափաստանային Ուկրայինայի փոխարկւում: Այդ հարթավայրում, որ տեղ-տեղ ձորերով է կտրատուած, գտնուում են պարտեզների ու այգիների մէջ թաղուած գիւղերը, և վաղուց վարած ու ոսկեգոյն խոզաններով ծածկուած հորիզոնի վրայ այստեղ-այնտեղ երևում են բարձր շէրիմներ:

Առ հասարակ Պոպելսկիներն այսպիսի հեռաւոր ճանապարհորդութիւն անելու սովորութիւն չունէին: Պետրոսը իւր ծանօթ և շատ լաւ ուսումնասիրած գիւղի և մօտակայ դաշտերի սահմանից դուրս մոլորուում էր, խիստ կերպով զգում իւր կուրուծիւնը և դիւրագրգիռ ու անհանգիստ էր դառնում: Բայց նա այժմ հրաւերն ուրախութեամբ ընդունեց: Արժանայիշատակ երեկոյից լետոյ, երբ նա միանգամից գիտակցել էր իւր զգացմունքն ու տաղանդի զարթնող ոյժը, աւելի համարձակութեամբ էր վերաբերւում դէպի մութ ու անորոշ տարածութիւնը, որով շրջապատուած էր նրա արտաքին աշխարհը: Այդ տարածութիւնը նրա երևակայութեան մէջ աւելի ու աւելի ընդարձակուելով, սկսել էր հրապուրել նրան:

Մի քանի օրեր շատ շուտ անցան: Պետրոսն այժմ երիտասարդների շրջանում անհամեմատ աւելի ազատ էր զգում իրեն: Նա անյագ ուշադրութեամբ լսում էր աւագ Ստաւրուչենկոյի հմուտ նուագն ու կոնսերվատորիայի և մայրաքաղաքում սարքուող նուագահանդէսների մասին պատմածները: Եւ ամեն անգամ, որ երի-

տասարդ հիւրընկալը սկսում էր ոգևորութեամբ գովասանել նրա երաժշտական թէպէտ անմշակ, բայց զօրեղ զգացմունքը, Պետրոսի գէմքը կարմրում էր: Նա այժմ արդէն հեռաւոր անկիւններում չէր թաք կենում, հաստ, որպէս հաւասար մէկը, թէպէտ և փոքր ինչ իրեն զսպած, մասնակցում էր ընդհանուր խօսակցութեան: Անհետացել էր նաև Եւելինայի մօտերքս ցոյց տուած սառնութիւնն ու զգուշութիւնը: Նա իրեն ազատ և ուրախ էր պահում ու իւր անակնկալ և պայծառ գուարթութեամբ, որ առաջ չունէր, ամենքին հրապուրում:

Կալուածքից մի տասը վերստ հեռու գտնուում էր Ք. վանքը, որ այդ կողմերում մեծ համբաւ ունէր: Մի ժամանակ դա մեծ գեր է խաղացել տեղական պատմութեան մէջ՝ շատ անգամ են թաթարների հրոսակները մտնելի նման պաշարել այդ վանքը և նետի ամպեր արձակել պարսպի վրայով. երբեմն ևս լեհական խաչտաճամուկ գունդերը խիզախելով մագլցել են պարիսպների վրայ, կամ ընդհակառակն, կազակները կատաղաբար լարձակուել են, որպէս զի լետ խլեն այդ կռուանը թագաւորական զինուորների ձեռքից... Այժմ հին աշտարակները քանդուել են, պարսպի փոխարէն տեղ-տեղ միայն ցանկապատ է քաշած՝ գիւղական գործունեայ տաւարի երեսից բանջարանոցը ազատ պահելու համար, իսկ լայն խրամների մէջ կորեկ է բուսած:

Մի անգամ, աշնան վերջին, մի պայծառ և փազաքուշ օր տան տէրերն ու հիւրերն այդ վանքը գնացին: Մակսիմն ու կանայք նստած էին լայն ու արձակ կառք, որ մեծ նաւակի նման օրօրում էր իւր բարձր բարձերի վրայ, իսկ երիտասարդները, ի թիւս որոց և Պետրոսը, ձիով էին:

Կոյրը ընտելացած միւս ձիերի տոփիւնին ու առջևից գնացող կառքի անիւները ձայնին, ազատ ու ար-

ձակ քշում էր ձին: Նայելով նրա ճարպիկ ու համար-  
ձակ հեծուածքին, գժուար էր կարծել, թէ այդ հեծեա-  
լը իւր ճանապարհը չէ տեսնում, հապա միայն սովոր  
է խիզախօրէն անձնատուր լինել իւր ձիու բնազդին:  
Սկզբում Աննա Միխայլովնան վախվիւելով լետ էր դարձ-  
նում գլուխը, երկիւղ կրելով, որ ձին օտար էր և ճա-  
նապարհն էլ անճանօթ, իսկ Մակսիմը մենտորի հպար-  
տութեամբ աչքի պոչովը դիտում էր ու քմծիծաղում  
կանացի երկիւղի վրայ:

— Գիտէ՞ք ինչ կայ... — ասաց ուսանողը ձին կառ-  
քի մօտ քշելով: — Այս բոպէիս միտս ընկաւ մի հետա-  
քրքրական շերիմ, որի պատմութիւնը մենք իմացանք  
վանքի հնութիւնները քրքրելիս: Եթէ կամենաք կա-  
րող ենք այն կողմը գնալ, հեռու չէ, գիւղի ծայրին է:

— Այդ ինչի՞ցն է, որ հէնց մեր ընկերութեան մէջ  
են ձեր միտքն ընկնում այդպիսի փխուր լիշողութիւն-  
ներ, — ուրախ-ուրախ ծիծաղեց Էւելինան:

— Դրա պատասխանը վերջը կ'տամ: Շուռ տուր գէ-  
պի կայողնա, Օստապի .ցանկը, մուտքի մօտ կանգ կառ-  
նես, — կանչեց նա կառապանին և, ձիու գլուխը լետ  
դարձնելով, քշեց գնաց իւր ընկերների մօտ:

Մի քանի բոպէից, մինչև կառքը փոշու մէջ թե-  
թեակի գլորդալով ու տատանուելով գիւղական նեղ ճա-  
նապարհով առաջ էր գնում, երիտասարդները սրարշաւ  
անցան նրա մօտից և վէր գալով ձիանը կապեցին ցածն-  
կապտօտից: Նրանցից երկուսն ընդառաջեցին, որ կանանց  
օգնեն, իսկ Պետրոսը իւր ձիու թամբին լեռնած և, ըստ  
սովորութեան, գլուխը քաշ, մտադրութեամբ ականջ էր  
դրել, որ կարողանայ այս անճանօթ վայրում իւր գիր-  
քը որոշել:

Այս աշնանային պոչծառ օրը խաւար գիշեր էր  
նրա համար, որ լոկ ցերեկուայ պոչծառ ձայներով էր

կենդանացած: Նա լսում էր ճանապարհով եկող կառքի ձայնն և նրան ընդառաջող երիտասարդների ուրախ կատակները: Իւր կողքին ձիերը, սանձի պողպատեայ մասերը զնգզնգացնելով, գլուխները ցանկապատի միւս կողմը, դէպի քարձր արօտն էին մեկնում...: Մօտակայքում մի տեղից, երևի բանջարանոցից, երգի թոյլ ձայն էր գալիս, որ մեզմ քամու հետ դանդաղ ու մտախոհ տարածոււմ էր: Ծառերի տերեւները խշխշոււմ էին, մի տեղ արագիլն էր ճռճոււմ, լսելի էր թռչնի թևերի աղմուկն ու կարծես յանկարծ մի բան միտքն ընկած աբլորի կուկուլիկուն, ջրհորի գլխին շինած ջրհանի ճրուռընչիւնը—այս բոլորը ցոյց էր տալիս, թէ գիւղական աշխատաւոր օրը հեռուն չէ:

Եւ արդարև, նրանք ամենաճաշի պարտիզի ցանկապատի մօտն էին կանգ առել...: Հեռաւոր ձայների մէջ տիրապետողը վանքի զանգակի բարձր ու զիւ դողանջիւնն էր: Այս զանգակի ձայնիցն էր, թէ քամու հունչից կամ թէ մի ուրիշ, գուցէ և դեռ իրեն համար էլ անյայտ նշաններից, Պետրոսն զգում էր, որ այն կողմը, վանքի քամակին մի տեղ հողը յանկարծ կտրոււմ է, գուցէ դետի ափին, և ապա տարածուած է հարթավայրը, որտեղից գալիս հասնում են խաղաղ կեանքի անորոշ, դժուար ըմբռնելի հնչիւնները: Այդ հնչիւններն իւր ականջին հասնում էին բեկբեկ ու թոյլ և լսողական տալաւորութիւն թողնում հեռաստանի մասին, որի մէջ առփալլում է, զգացւում մի լարուած, անորոշ բան աչնայէս, ինչպէս որ մեզ համար երեկոյեան աղջամուղջի մէջ առփալլում են հեռու տարածութեան գծերը...:

Քամին շարժում էր նրա մազերի խոպուպը, որ դուրս էր ընկած գլխարկի տակից և, էօլեան<sup>1)</sup> քնարի երկար

1) Էօլեան քնարը—մի երկայն և նեղ արկղ է, որի մէջ

ձայնի նման, անցնում ականջի մօտով: Ինչ որ անմեկին լիշողութիւններ, հեռաւոր մանկութեան ընկերները շարժուած էին նրա մտքում և, երևակայութեամբը անցեալի մոռացութիւնից դուրս կորզուած, կենդանանում որպէս խարբալանք, հպումն, հնչիւն...: Նրան թւում էր, թէ այս հեռաստանի զողանջիւնով ու երգի բեկորներով ընդելուզուած քամին իրեն մի հնաւուրց տխուր հեքեաթ է ասում այս երկրի, նրա անցեալի մասին, կամ անորոշ ու մութ ապագայի մասին:

Շուտով մօտ եկաւ կառքը, ամենքն էլ դուրս եկան և ցանկապատն անցնելով մօտան ներս: Այդտեղ մի անկիւնում ընկած էր մի լայն տապանաքար, որ մոլախոտով ու արօտով ծածկուած, խորը մօել էր գետնի մէջ: Արօտի միջից աչքի էին ընկնում ագրիկոնի կանաչ տերևներն իրենց ալ կարմիր ծաղիկներով, լայնանիստ կռատուկը, որոմն իւր բարակ ցօղունով, որոնք տատանւում էին քամուց, և Պետրոսը լսում էր շիրմի վրայ նրանց լամբաձայն զրոյցը:

— Մենք դեռ նորերս իմացանք այս մահարձանի գոյութիւնը, — ասաց երիտասարդ Ստաբուլչենկոն, — մինչդեռ գիտէք սով է այդտեղ հանգչում: Մի ժամանակ յայտնի կարիճ Իգնատ Խաժիկը:

— Այստեղ ես հանգիստ դտել հն, այժմ ծեր աւաղակ, — ասաց Մակսիմը մտախոհ: — Ինչպէս է եղել, որ դա այստեղ, Կալոգնիա է ընկել:

— Հազար եօթհարիւր... թուին կազակներն ու թաթարները պաշարել են այս վանքը, որին լեհական զօր-

---

մի քանի լարեր են ձգուած՝ դաշնակաւոր լարուած. դեռում են բարձր տեղեր, քամու առաջ. քանի քամին մեղմ է, այնքան թոյլ է հնչում նաև քնարը, իսկ քանի քամին զօրեղանայ, այնքան ուժեղ է հնչում նաև քնարը: Եօլը քամու թագաւոր էր:

Մ. Թ.

քերն են տիրած եղել...: Գիտէք արդէն, որ թաթարները միշտ վտանգաւոր դաշնակից են եղած...: Երևի պաշարուածները կարողացել են մի կերպ միրզային կաշառել, և գիշերը թաթարները լեհացիները հետ միաժամանակ յարձակուել են կազակների վրայ: Այստեղ, կալոդնիայում մթնով զարհուրելի կոտորած է եղել: Կարծեմ թաթարները ջարդուում են և վանքը էլի կազակների ձեռքն ընկնում. բայց գիշերուայ կուռի միջոցին կազակների տտամանն ընկնում է:

— Այս արկածին, — մտախոհու թեամբ շարունակեց երիտասարդը, — մասնակից է եղել նաև մէկ ուրիշ անձ. նրա տապանաքարն էլ ենք այստեղ որսնել: Բայց իզուր: Մի հին ձեռագրի խօսքերին նայած, որ մենք գտել ենք վանքում, Իգնատի կողքին թաղուած է մի երիտասարդ աշուղ, որ ուղեկցել է տտամանի արշաւանքներին և... կոյր է եղել...:

— Կոյր... արշաւանքների՞ն, — վախեցած բացականչեց Աննա Միխայլովնան, որ իսկույն երևակայեց իւր որդուն գիշերային սարսափելի կոտորածի մէջ:

— Այո, կոյր: Ինչպէս երևում է գա Զապարոփիւում յայտնի երգիչ է եղած... գոնէ նրա մասին այդպէս է ասում ձեռագիրը, որ լեհ-մալաուուս-եկեղեցական տարօրինակ լեզուով է գրուած: Որքան յիշում եմ, միտքն այս է. «նրա հետ էր նաև կազակաց բանաստեղծ Իւրկոն, որ երբէք Խաթիկից չէր բաժանուում և շատ սիրելի էր: Պիղծ թշնամին Խաթիկին սպանելով, մահացրեց նաև այդ Իւրկոյին, որի երգն ու քնարը նույն իսկ անապատի գալլերին կարող էին մեղմացնել, բայց անիծեալները գիշերային յարձակման միջոցին չխնայեցին նրան: Եւ ասպետն ու երգիչը ամփոփուած են իրար մօտ, յիշատակն արգարոց օրհնութեամբ եղիցի յաւիտեանս ամէն...»:

—Տապանաքարը բաւական լալն է,—նկատեց մէկը: —Գուցէ հէնց երկուսն էլ այստեղ են հանգչում...

—Եւ ճշմարիտ որ, բայց տապանագիրը մամուռտել, փչացել է...: Ա՛յ, տեսէք, վերևում տտամանի գնդագլուխ դաւազան ու փնջուխն է նկարած: Մնացածը մամուռից բոլորովին կանաչած է:

—Սպասեցէք, — ասաց Պետրոսը, որ խիստ մեծ յուզմունքով լսում էր այս ամենը:

Նա մօտեցաւ տապանաքարին, կռացաւ վրան և նրա բարակ մատները ազահաբար կպան տապանաքարի երեսը ծածկող մամուռի շերտին: Նա մամուռի արանքից շօշափում էր քարի դուրս ցցուած պինդ մասերը:

Մի բոպէ, գէժքը բարձրացրած, յօնքերը կիտած նստած էր նա: Յետոյ սկսաւ կարգալ:

. . . «Իգնատիյ, մականուանեալ Խաթիկ... կամօքն Աստուծոյ... թաթարաց նետից խոցուած...»

—Այդ մենք էլ էինք կարգացել, — ասաց ուսանողը:

Կոյրի մատները, որոնց յօդերը շղաձգաբար լարուած ու ծռուած էին, տապանաքարի տողերի վրայով աւելի ու աւելի ներքև էին իջնում:

—«Որին սպանեց»...

—«Պիղծերի զօրքը»... Խսկոյն վրայ բերեց ուսանողը... այդ խօսքերը գործածուած էին նաև Իւրկօյի մահուան նկարագրութեան մէջ... ուրեմն ուղիղ է, նա էլ այս միևնոյն տապանաքարի տակն է թաղուած...

—Այո,—«Պիղծերի զօրքը»—կարգաց Պետրոսը,— այնուհետև ամեն ինչ եղծուած է... սպասեցէք, ահա դարձեալ. «թաթարների թրերով կոտորուած»,... կարծես էլի մի խօսք կալ... բայց ոչ, էլ ոչինչ չէ մնացել: Սրգարև, այնուհետև երգչի յիշատակը կորած էր հարիւրլիսնամեայ տապանաքարի լալն վէրքի մէջ...

Մի քանի բոպէ խորին լուսթիւն տիրեց, որ լոկ

տերևները շշիւնով էր խանգարուած: Մի երկար, երկիրզած հառաչանք խզեց լուսթիւնը: Այդ մարզի տէրը Օստապն էր, որ վաղնջականութեան զօրութեամբ տիրացել էր հնաւուրց ատամանի վերջին բնակարանին և այժմ պարոններին մօտ եկած ապշած նայում էր, թէ ինչպէս մի երիտասարդ, անշարժ աչքերը վերև ուղղած, շօշափելով կարգում էր այն բառերը, որ անձրևն ու փոթորիկը հարիւրաւոր տարիների ընթացքում ծածկել էին աչք ունեցողներին:

— Փննքդ շատ, Աստուած, — ասաց նա երկիրզածութեամբ Պետրոսին նայելով: — Ինչ որ Աստուած տեսանողներին ծածկել է, կոյրին է ցոյց տալիս...

— Այժմ հասկանում էք, օրիորդ, ինչն է երգիչ Իւլիոն միտս ընկաւ, — հարցրեց ուսանողը, երբ հին կառքը նորից փոշոտ ճանապարհով դանդաղաբար գէպի վանքն ուղղուեց:

— Ես ու եղբայրս զարմանում էինք, թէ ինչպէս կարող էր կոյրը Խաժիկի ու նրա արագաշարժ գնդին ուղեկցել: Ինքնք թէ այն ժամանակ Կաշեվոյ <sup>1)</sup> չէր, ալ պարզ խմբապետ: Բայց լայտնի է, որ նա միշտ կամաւոր հեծեալ կազակների պարագլուխ է եղած, և ոչ հասարակ հայրամակներին <sup>2)</sup>: Սովորաբար աշուղները աղքատ ծերունիներ էին լինում, որ տուրակն ուսերին տաղ ու խաղ ասելով գիւղէ գիւղ էին շրջում...: Մի-

<sup>1)</sup> Զապարոժցիները կառավարում էին գետամանով Կաշեվոյի ընդհանուր իշխանութեան տակ. վերջինս էր նրանց դատն ու դատաստանն անողը: Մ. Թ.

<sup>2)</sup> Հայրամակները լեհաց բաժնում կազմուած գապառօթեան կազակների զինեալ խմբերն են. նրանք երբեմն լեհական գիւղերի վրայ էին յարձակուած ու աւարի առնում և երբեմն պրաւուսլաւնիներին: Յայտնի էր 1769-ին Մերոն Գուրայի խումբը, որ 700 հոգուց էր բաղկացած և մեծ աւերածոյք էր գործում ռուսաց բաժնում և նոյն իսկ կանոնաւոր զօրքերին նեղում: Մ. Թ.

Ք  
միայն այսօր, մեր Պետրոսի վրայ նայելով, լանկարձ  
աչքիս առաջ պատկերացաւ կոյր Իւրկոյի պատկերը՝  
փանդիւն ուսին, ձիւ վրայ...

— Գուցէ և կոիւնների մէջ մտած...: Գոնէ արշա-  
ւանքների, ինչպէս նաև վտանգի մէջ մտած...: մտա-  
խոհ շարունակեց երիտասարդը: Ինչ ժամանակներ են  
եղել մեր Ուկրաինայում:

— Ինչ զարհուրելի բան, — հառաչեց Աննա Մի-  
խայլովնան:

— Ինչ հիանալի բան, — պտտասխանեց երիտա-  
սարդը...

— Ներկայումս ոչ մի այգալիսի բան չկայ. — կորեց  
Պետրոսը, որ նորնպէս կառքին էր մօտեցել:

Յոնքերը վեր բարձրացրած և սկանջ դրած ձիա-  
նոնց ստանաձայնին, նա իւր ձին բշուժ էր կառքի կող-  
քով: Նրա գէմքը սովորականից դժգոյն էր և ներքին  
խոր յուզմունք արտայայտում...: — Այժմ այդ ամենն  
անհետ կորել է, — կրկնեց նա:

— Ինչ որ կորչելու էր՝ կորել է, — մի տեսակ սառ-  
նուժեամբ ասաց Մակսիմը...: — Նրանք ապրել են այն-  
պէս, ինչպէս հասկացել են, իսկ դուք որոնում էք ձերը:

— Ձեզ համար հեշտ է ասելը, — պտտասխանեց ու-  
սանողը, — դուք արդէն ձեռն առել էք կեանքից...

— Եւ կեանքն էլ իմն է առել ինձանից, — քմծի-  
ծաղեց զարնբալդիական ծերունի զինուորը իւր անթա-  
ցուպերին նայելով:

Ապա, լռելուց յետոյ, աւելացրեց.

— Մի ժամանակ ես էլ եմ երազել Սեչայի, նրա  
աղմկալի հրապոյրների ու ազատութեան մասին... Նոյն  
իսկ Թիւրքիայում Սադրկի մօտ եմ եղել <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Չայկովսկին, որ Ուկրաինացի ռոմանտիկ է և յայտնի

✓ —Յետոյ, —հարցրին երիտասարդները շտապով...

— Հէնց որ ձեր «ազատ դազախներին» տեսայ թուրք բռնակալի ծառայութեան մէջ՝ բժշկուեցայ...: Պատմական գիմակահանգէս է միայն և խարդախութիւն...: Ես հասկացայ, որ պատմութիւնն արդէն այդ ցնցոտին դուրս է շարտել և թէ խնդրի գլխաւոր էութիւնը ոչ թէ այդ գեղեցիկ ձևերի մէջն է, այլ նպատակի...: Ես ահա այնուհետև վեր կեցայ ու գնացի Խալիա: Նոյն իսկ այդ մարդկանց լեզուն չհասկանալով հանգերձ, ես պատրաստ էի նրանց նպատակների համար մեռնել:

Մակաիմը լուրջ և մի տեսակ անկեղծ ծանրութեամբ էր խօսում: Սովորաբար նա չէր մասնակցում այն բուռն վէճերին, որ լինում էին Սաաւրուչէնկոյի ու որդոց մէջ, այլ միայն ծիծաղում էր բարեսրտութեամբ ժպտալով, երբ երիտասարդները, կարծելով թէ նա իրենց գաշնակիցն է, նրան էին գիմում: Այժմ, երբ այդ սրտայուզ գրամայի արձագանգները, որ բոլորի համար էլ այսպէս անակնկալ կերպով կենդանութիւն էր առել է Սաղբի-փաշա անունով, աշխատում էր դազախութիւնը Թիւրքիայում կազմակերպել որպէս մի ինքնուրոյն քաղաքական ոյժ. Ծ. 2.

Միխայիլ Չայկովսկին (1808—1886) լեհական շարժումից յետոյ (1830 թ.) շատ նշանաւոր լեհացիների հետ տեղափոխուեցաւ Պարիզ, ուր յոյս ունէին Քրանսիական կառավարութեան միջոցով լեհաստանի անկախութիւնը ձեռք բերել: Ֆրանսիական կառավարութիւնը նրան ուղարկեց Կ. Պոլիս, ուր ծառայութեան մասնելով հաւատը փոխեց և մինչև փաշայութեան աստիճանի հասաւ: Նրա նպատակն էր ենիչէրիներից և այլ խիզախ տարրերից դազախների նման զօրք կազմակերպել իւր հայրենիքը՝ լեհաստանն ազատելու համար: Նրան միացան նաև ուրիշ նշանաւոր լեհացիներ, որոնց մէջ էր նաև հռչակաւոր լեհացի բանաստեղծ Ադամ Միցկևիչը (1798—1855), որ Իտալիայում լեհական լեզուի կազմակերպելու անաջող փորձից յետոյ Արիմի պատերազմի միջոցին անցաւ Կ. Պոլիս, միացաւ Սաղբի փաշային և այնտեղ էլ մեռաւ: Չայկովսկին վերջերս հաշտուեցաւ ռուսաց կառավարութեան հետ, փոխադրուեցաւ Ռուսիա և անձնասպանութեամբ վերջ տուեց իւր կեանքին: Ծ. Թ.

հնաւուրց մամուալատ շիրմի վրայ, շօշափեցին Մակ- սիմին և ս, նա զգում էր, որ այդ անցեալի դիպուածքը մի զարմանալի կերպով, ի դէմս Պետրոսի, կապ ունէր իրենց ամենքի սրտին մօտիկ ապագայի հետ...:

Երիտասարդներն այս անգամ չհակաճառեցան, — գուցէ մի քանի ընդէ առաջ Օստապի մարգում զգացած տպաւորութեան տակ, — շիրիմը պարզ կերպով ապացու- ցանում էր, որ անցեալը մեռած էր, — կամ գուցէ և հին զինուորականի անկեղծութեան ազդեցութեան պատճա- րով...:

— Ուրեմն ի՞նչ է մնում մեզ անել, — կարճ լուռ թիւնից լետոյ հարցրեց ուժանոզը:

— Շարունակել նոյն մշտական կռիւր: — *պախար*

— Ո՞ւր: Ի՞նչ ձևով:

✓ — Որոնեցէք, — կարճ պատասխանեց Մակսիմը:

Ինչպէս երևում է Մակսիմը մի անգամ թողնելով իւր սովորական, թեթևակի հեզնական եղանակը, տրամադիր էր լրջօրէն խօսել: Իսկ այժմ այդ խնդրի մասին լրջօրէն խօսելու համար ժամանակ չէր մնացել...: Կառքը մօտեցաւ վանքի դրանը և ուսանողը, կռանա- լով, բռնեց Պետրոսի ձիու սանձից, Պետրոսի գէմքի վը- րայ, ինչպէս հայելու մէջ, պարզ երևում էր ներքին խոր լուզումը:

### III

Սովորաբար վանք գնացողները՝ գնում էին դիտե- լու հին եկեղեցին, բարձրանում էին զանգակատունը, որտեղից հեռաւոր տեսարան էր բացւում: Եղանակը պարզ եղած միջոցին աշխատում էին տեսնել նահանգա- կան քաղաքի սպիտակ բծերը և հորիզոնի վրայ Գնեպը գետի արտացոլումը:

Սրեն արդէն գէպի մուտքն էր խոնարհում, որ

փոքրիկ խումբը, Մակսիմին վանական խուցերից մէկի պատշգամբում թողած, մօտեցաւ զանգաւիտաւ գոց դրան: Մի երիտասարդ, բարակ մարմնով մոնթ, վերարկուն հագին և սրածայր գլխարկը գլխին, մի ձեռքով գոց դրան կողպէքը բռնած կանգնել էր կամարի տակ: Նրանից ոչ հեռու, ահաբեկ եղած թուչունների երամի նման կանգնած էին մի խումբ երեխաներ, երևում էր, որ երիտասարդ մոնթի և այս կայտառ մանուկների խումբի միջև ընդհարում էր պատահել: Նրա բռնած փոքր ինչ սպանական զիրքից և դրան կողպէքը բռնելու ձեռից երևում էր, որ երեխաներն ուզում էին պարոնների ետեւից իրենք էլ զանգաւիտուն բարձրանան, իսկ մոնթը չէր թողնում: Նրա գէմբը բարկացաւ էր և դժգոյն, և միայն տեղ-տեղ գէմբի վրայ կարմրած խայտեր էին երևում:

Մոնթի աչքերը տարօրինակ կերպով անշարժ էին...: Աննա Միխայլովնան առաջինն եղաւ, որ նկատեց այդ գէմբի ու աչքերի արտայայտութիւնը և ջղաձգաբար բռնեց եզերինայի ձեռքը:

— Կոյր է,— թեթեւակի վախեցած շշնջաց ազդիկը:

— Կամաց, — պատասխանեց մայրը, — բացի դրանից և...: Նկատում ես:

— Այո...:

Գծուար էր չնկատել այն նմանութիւնը, որ կար մոնթի և Պետրոսի գէմբի մէջ: Նոյն ջղալին գժգունութիւնը, նոյն մօքուր, բայց անշարժ բերելը, նոյն յոնքերի անհանգիստ շարժումները, յոնքերի, որոնք ամեն մի ձայնի վրայ լարում էին և աչքերի վերելում շարժում, հէնց իմանաս վախեցրած միջատի շօշափուկներ լինին...: Նրա գիմագծերն աւելի կոպիտ էին, շարժումներն անտաշ, — բայց հէնց դրանից էլ աւելի աչքի էր ընկնում նմանութիւնը: Երբ որ նա ձեռքով կուրծ-

քը բռնած խուլ կերպով հազաց, Աննա Միխայլովնան աչքերը լայն բացած նայում էր նրան, ասես թէ նրա առաջ յանկարծ ուրուական էր երևացել...:

Մոնթը հազը վերջացնելով բաց արաւ դուռը և, շեմքում կանգնած, փոքր ինչ խոստով ձայնով հարցրեց.

— Երեխերքն այստեղ չե՞ն: Կորէք, անիճեակներ, — ասաց նա ամբողջ մարմնով դէպի մանուկների կողմը ձգուելով և ապա, երիտասարդներին ներս թողնելով, մի այնպիսի ձայնով, որի մէջ շողօքորթուածիւն ու ագահութիւն էր արտայայտուում, ասաց.

— Ժամահարիս մի բան կ'ըստէք...: Զգոյշ գնացէք, — մութն է...:

Ամբողջ խումբը սկսաւ աստիճաններով վեր բարձրանալ: Աննա Միխայլովնան, որ սկզբում տատանոււմ էր անյարմար և դիք աստիճաններով բարձրանալու համար, այժմ մի տեսակ խոնարհութեամբ գնում էր միւսների ետևից:

Կոյր ժամհարը դուռը գոցեց...: Լուսը մարեցաւ և միայն մի քանի ժամանակից յետոյ Աննա Միխայլովնան, որ վեհերկօտ կանգնած էր ներքևում, մինչ երիտասարդներն իրար բոթբոթելով սանդուխքի պտույտներից վեր էին բարձրանում, կարողացաւ նկատել մի աղօտ, մթնշաղի նման լոյսի հոսանք, որ քարէ հաստ բանուածքի միջից շեղակի անցքով ներս էր թափանցում: Այդ լոյսի դէմ ու դէմ երևում էին մի քանի փոշոտած, անկանոն ձևի քարեր...:

— Քեռի ջան, քեռի, թո՛ղ մտնենք, — դրան ետևից լսում էին մանուկների բարակ ձայնը:— Մեզ էլ թող, քեռի, սիրելի քեռի:

Ժամհարը բարկացած վազեց դէպի դուռը և բռունցքներով կատաղաբար թակեց դրան երկաթածածկը:

— Կորէք, կորէք անիճուածներ... Գրողը տանի

ձեզ... — գոռում էր նա խոպոտ ձայնով և շարութիւնից թուքը կուլ տալով:

— Գոռ սատանայ, — լանկարծ մի քանի զիլ ձայներ պատասխանեցին նրան և դրան ետեւից լուսեցան տասնեակ բոբիկ ոտների վազելու ձայներ...

Ժամհարը տկանջ գրեց և ազատ շունչ քաշեց:

— Գետինը մտնէք... իժի ծնունդներ... սև ցաւի հանդիպէք...: Օ՛հ, Տէր, Տէր արարիչ Աստուած իմ... քնդէր թողեր զիս... — լանկարծ բոլորովին ուրիշ ձայնով սասց նա, և նրա ձայնի մէջ արտայայտուում էր քաղմաշարչար և տանջուած մարդու լուսահատութիւն:

— Ո՛վ է այտեղ...: Ինչո՞ւ ես մնացել, — սասց նա խստութեամբ, երբ ընդհարուեց Աննա Միխայլովնային, որ առաջին աստիճանների վրայ մնացել էր սառած:

— Գնացէք, գնացէք: Ոչինչ, — աւելացրեց նա աւելի մեղմ կերպով: — Սպասեցէք, բռնեցէք ինձանից...: Ժամհարին մի բան կ'բախշէք, — կրկին հարցրեց նա առաջուայ անխորժ շոյրքորթող ձայնով:

Աննա Միխայլովնան քսակից թղթէ փող հանեց և մթնում տուեց նրան: Կոյրը շտապով փողը խլեց տիկնոջ ձեռքից, որ մեկնած էր դէպի նա և, աղօտ լուսով, որին արդէն հասել էին նրանք, Աննա Միխայլովնան տեսաւ, թէ ինչպէս նա թուղթը կպցրեց երեսին և սկսաւ մատներովը շօշափել: Տարօրինակ կերպով լուսաւորուած և դժգոյն գէմքը, որ այդքան նման էր իւր որդու գէմքին, լանկարծ միամիտ և ազահ ուրախութեան արտայայտութիւնից այլակերպեցաւ:

— Ա՛յ շնորհակալ եմ, շնո՞ւ շնորհակալ եմ: Իսկապէս մանէթ է...: Կարծում էի ծաղր է... ծիծաղել էք ուզում կոյրի վրայ...:

Խեղճ կնոջ ամբողջ գէմքն արտասուքից թրջուած էր: Նա շտապով սրբեց արտասուքը և բարձրացաւ վե-

րև, ուր լուում էին իրենից առաջ անցած խմբի խառնակ ձայներն ու ոտքի խուլ տրոփը, կարծես պատի ետևում ջուր թափուելիս լինէր:

Երիտասարդները պտույտքներից մէկի մօտ կանգ առան: Նրանք արդէն բաւական բարձրացել էին և նեղ լուսամուտից, աւելի թարմ օդի հետ, ներս էր թափանցում աւելի մաքուր, թէպէտ և շաղուած լուսոյ փոքրիկ հոսանք: Այդտեղ պատի վրայ, որն առաւել ողորկ էր, բաներ էին գրուած: Պրանք մեծ մասամբ այցելուների անուններն էին:

Երիտասարդներն ուրախ-ուրախ նկատողութիւններ էին անում և իրենց ծանօթների անունները գտնում:

— Ահա և մի առած, — ասաց ուսանողը և փոքր ինչ դժուարութեամբ կարգաց. «շատերն են սկսում, բայց քչերն աւարտում»... — Հաւանօրէն խօսքը այս զանգակատունը բարձրանալու մասին է, — աւելացրեց նա հանաքով:

— Ինչպէս ուզում ես հասկացիր, — կոպտութեամբ նկատեց ժամհարը՝ ականջը նրա կողմը դարձնելով, և նրա լոնքերն արագ ու անհանգիստ կերպով շարժոււմ էին: — Այստեղ մի տուն էլ կայ, փոքր ինչ ներքև է: Ահա այդ կարգա...:

— Ո՛ւր է. այստեղ ոչինչ չկայ:

— Պու պնդում ես թէ չկայ, իսկ ես ասում եմ, որ կայ: Զեղանից, աչք ունեցողներից, շատ բան ծածուկ է մնում...:

Նա երկու աստիճան ցած իջաւ և միմում, ուր ցերեկուայ լոյսի թոյլ ցլմունքն արդէն անհետացած էր, ձեռներով շօշափելուց յետոյ ասաց.

— Ահա այստեղ է: Լաւ ոտանաւոր է, բայց ինչ օգուտ, առանց լապտերի չպիտի կարողանաք կարդալ...:

Պետրոսը մօտեցաւ նրան և ձեռքով պատը շփե-

լով հեշտութեամբ գտաւ գրուածքը, որ փորած էր պատի մէջ գուցէ գարեր առաջ վախճանած մարդու ձեռքով:

Մտիդ լինի մահու ժամը,

Մտիդ լինի փողի ձայնը,

Մտիդ լինի քու վախճանը, ✓

Յաւիտենական տանջանքը:

— Նոյնպէս առած է, — դարձեալ ուզեց կատակ անել ուսանողը, բայց կատակը չսագեց:

— Իւրը չեկաւ, — նենգութեամբ ասաց ժամհարը: — Ի հարկէ, դու դեռ երիտասարդ ես, բայց նոյնպէս... ո՞վ գիտէ: Մահուան ժամը հասանէ որպէս Տէրն ի գիշերի...: Լաւ ստանաւոր է, — ասաց նա նորից բարբոս վին ուրիշ եղանակով...: — «Մտիդ լինի մահուանդ ժամը, մտիդ լինի փողի ձայնը...: Ահ, տեսնես թէ ինչ է լինելու այնտեղ, — վերջացրեց նա իւր խօսքը չարացած:

Մի քանի աստիճան էլ բարձրանալով նրանք բուրն էլ հասան զանգակատան առաջին հրապարակին: Արդէն այս տեղն էլ բաւական բարձր էր, բայց պատի միջի բացուածքը առաւել անխորմար անցքով աւելի ևս բարձրն էր տանում: Վերջին հրապարակից ընդարձակ և հիանալի տեսարան էր բացուում: Արևը արևմտեան կողմում դէպի հորիզոնն էր խոնարհում, ցած տեղերում երկայն ստուեր էր ընկած, արևելքում մթին ամպ էր հաւաքուած, հեռաստանը կորչում էր երեկոյեան մշուշի մէջ և միայն տեղ տեղ առիշեղ ընկած ճառագայթները կապտաւուն ստուերների միջից լուսաւորում էին մերթ սուղաճ խրճիթի սպիտակ պատը, մերթ սուտակի նման բորբոքուող պատուհանի ապակին, մերթ հեռաւոր զանգակատան խաչի վառ կալձը:

Ամենքն էլ լուռ էին: Բարձրից փչող քամին, ազատ և երկրի գուլորշիներից մաքուր քամին, անցնում էր զանգակատան բացուածքներից ու շարժում զանգակների թուկերը և, նոյն իսկ զանգակների մէջ մտնելով, ժամանակ առ ժամանակ երկարաւուն արձագանգ տալիս: Զանգակները մետաղական խաղաղ հունչ էին արձակում, և այդ հունչի մէջ մարդու սկանջին խփում էր նաև մի ուրիշ բան, հէնց իմանաս հեռուից անորիշ նուազող երաժշտութիւն լինէր կամ թէ չէ այդ պղինձն էր խոր թառանչ արձակում: Անվրդով հանգիստ և խորին խաղաղութիւն էր սփռուած ստորև բացուած ամբողջ տեսարանի վրայ:

Բայց փոքրիկ խմբակի մէջ տիրող լուռութեանը մի ուրիշ պատճառ էլ կար: Կոյրերն երկուսն էլ, մի ընդհանուր պատճառից զրգուած, որ հաւանօրէն ծագում էր բարձրութեան և իրենց անօգնական վիճակի զգացողութիւնից, մօտեցան զանգակատան անցքին և, երկու ձեռքով բացուածքի պատին լենած, գէմքերը դարձրին գէպի երեկոյեան մեղմ քամին:

Այժմ ամենքի համար էլ նկատելի էր նրանց տարօրինակ նմանութիւնը: Ժամհարը տարիքով փոքր ինչ մեծ էր. լայն վերարկուն ծալքեր կազմած կախուած էր նրա վտիտ մարմնի վրայ, գէմքի գծերն էլ կուպիտ էին և կոշտ: Ուշագրութեամբ նայելուց աչքի էին ընկնում նաև նրանց տարբերութիւնը՝ ժամհարը շիկահեր էր, քիթը կոր, շրթունքները բարակ, նրա բեխն արդէն դուրս էր եկել, իսկ խճուճ մօրուսը ծածկել էր կզակը: Սոկայն նրանց թէ շարժումները և թէ գիմագծերը, մանաւանդ շրթունքների ջղալին ծալքերն ու յոնքերի անդադրում շարժումները, մի այնպիսի տարօրինակ նմանութիւն ունէին, որ կարծես երկու կոյրերն էլ մի և նոյն բնագրի պատճէնները լինէին:

նրանց մէջ երևում էր այն առանձին, ասես թէ ազգակցական նմանութիւնը, որով շատ սապտողներ գէձքով նման են լինում իրարու, հէնց զխաբնաս հարագատ եղբայր լինին:

Պետրոսի գէձքը փոքր ինչ աւելի խաղաղ էր: Նրա վրայ ելևում էր սովորական թախիժը, որը ժամհարի վրայ աւելի սաստիկ էր թուում նրա սուր մաղձոտութեան և երբեմն չարասրտութեան պատճառով...: Սակայն այժմս կարծես նա էլ էր հանգստացել: Քամու միապաղաղ հունչը կարծես թէ հարթում, հաւասարում էր նրա գէձքի բոլոր կնճիռները և նրա վրայ ևս զեղում այն խաղաղութիւնը, որ սփռուած էր անլոյս ասքերից ծածկուած տեսարանի վրայ...: Նրա յոնքերը քանի գնում աւելի ու աւելի հանդարտ էին շարժւում:

Բայց ահա միաժամանակ նորից ցնցուեցան նրանց երկուսի յոնքերն էլ, կարծես ներքեւում հովտից նրանց ականջին դիպաւ մի ձայն, որ մնացեալներից ոչ ոքի համար լսելի չէր.

— Զանգ են տալիս, — ասաց Պետրոսը:

— Այդ քսան վերօտ հեռուն Սգորիէի զանգն է, — բացատրեց ժամհարը: — Նրանք երեկօյեան ժամը միշտ մեզանից կէս ժամ առաջ են ասում...: Գու էլ լսեցիր: Ես էլ եմ լսում, ուրիշները չեն լսում:

— Ինչքան լաւ է այստեղ, — ասաց նա ցնորքների անձնատուր եղած: — Մանաւանդ տօներին: Գուք իմ զանգակ խփելս լսել էք:

Այդ հարցի մէջ արտայայտւում էր նրա միամիտ փառասիրութիւնը:

— Մի անգամ եկէք լսելու: Հալը Պանֆիլին... Գուք հայր Պանֆիլուն չէք ճանաչում: Նա յատուկ ինձ համար բերել տուաւ այս երկու մանր զանգակները:

Նա պատից հեռացաւ և քնքշութեամբ շօշափեց երկու մանր զանգակները, որոնք դեռ ևս, միւսներէ նման, չէին սևացել:

✓ — Երեւելի ձայն են պահում...: Հէնց գիտենաս երգում են, ճիշտ որ երգում են...: Մանաւանդ Զատիկին...:

Նա վեր առաւ զանգակների թօկը և մասներէն արագ շարժումով գողգողացրեց նրանց արագ, հատընդհատ խփելով: Զանգակների լեզուակներն այնքան թոյլ էին դիպչում և միևնոյն ժամանակ այնպէս պարզ էին հնչեցնում զանգակները, որ զանգահարութիւնը լսելի էր բոլորին, բայց ըստ ամենայն հաւանականութեան ձայնը զանգակաւանից դուրս չէր գնում:

— Իսկ ահա այս — դոն, գոն, գոն...:

✕ ✕ Այժմ նրա գէմքը փայլեց մանկական ուրախութեամբ, որի մէջ սակայն մի ինչ որ խղճուկ և ցաւալի բան կար:

— Բայց ինչ անեմ որ, զանգակներ բերել տուեց, իսկ նոր մուշտակ կարել չէ տալիս: Ժլտտ մարդ է: Սառչում եմ այս զանգակատանը...: Ամենից վատն աշնան է... Յնւրա...:

Նա կանգ առաւ և փոքր ինչ ականջ գնելով շարունակեց.

— Ներքեւից կողը ձեզ է կանչում: Գնացէք ժամանակ է:

— Գնանք, — ասաց Էվելինան ամենից առաջ վեր կենալով տեղից. նա մինչև այժմ, կարծես հմայուած, անթարթ նայում էր ժամհարին:

Երիտասարդները դէպի մուտքը գնացին, իսկ ժամհարը վերը մնաց: Պետրոսը, որ սկսել էր մօր ետեւից գնալ, լանկարծ կանգ առաւ:

— Գնացէք, — ասաց նա հրամայական ձայնով: —

Ես էլ այս բոպէիս կ'գամ:

Ոտքի ձայները կտրուեցան, միայն էվելինան, Աննա Միխայլովնային իրենից առաջ հանելով, պատին կպած, շունչը բռնած մնաց կանգնած:

Կոյրերը կարծում էին վերևում մենակ են: Մի քանի վայրկեան, անշարժ ու անհամարձակ, մնացել էին մի բանի ականջ դրած:

— Ո՞վ կալ այստեղ, — հարցրեց ժամհարը:

— Ես:

— Գու՞ էլ կոյր ես:

— Կոյր եմ: Գու՞ վաղ՞ուց ես կուրացել, — հարցրեց

Պետրոսը:

— Այդպէս եմ ծնուել, — պատասխանեց ժամհարը:

— Այստեղ մի ուրիշ կոյր էլ կալ, Ռոմանը, — նա եօթը տարեկանից է կուրացել...: Գու՞ կարո՞ղ ես զիշերը ցե՛րեկից ջոկել:

— Կարող եմ:

— Ես էլ: Զգում եմ, որ լոյսը բացւում է: Ռոմանը չէ կարողանում: Բայց և այնպէս նրա վիճակն աւելի թեթեւ է:

— Ինչո՞ւ, — իսկոյն վրալ բերեց Պետրոսը:

— Ինչո՞ւ: Զգիտե՞ս ինչո՞ւ: Նա լոյս տեսել է, իւր մօրը չիշում: Հասկացա՞ր, — որ զիշերը չի քնում, մայրը երազն է գալիս...: Միայն թէ նրա մայրն այժմ արգէն պառաւել է, մինչդեռ նա միշտ նորատի է՛ տեսնում նրան...: Իսկ դու երազ տեսնո՞ւմ ես:

— Ոչ, — խուլ ձայնով պատասխանեց Պետրոսը:

— Հէնց այդ է է: Երազ տեսնում են նրանք, որոնք յետոյ են կուրացել, իսկ ով որ կոյր է ծնուել...

Մռայլ ու խոժոժ կանգնած էր Պետրոսը. հէնց իմանաս ամպել էր նրա գէմքը: Ժամհարի լոնքերն էլ լանկարձ վեր-վեր բարձրացան և նրա աչքելի մէջ երևաց այն տանջանքը, որ շատ լաւ ծանօթ էր էվելինային:

— Մարդ շատ անգամ մեղքի մէջ է ընկնում: Տէր Արարիչ Աստուած, Ամենասրբուհի Աստուածածին... թողէք գէթ մէկ անգամ, գէթ երազիս մէջ լոյս-խնդու-թիւնը տեսնեմ...

Նրա գէմքը ջղայնաբար ձգձգուեց և առաջուայ մտղձոտ եղանակով ասաց.

— Բայց չէ, չեն տալիս... կարծես երազումդ մի բան տեսնում ես, բայց որ զարթեցար—ամեն ինչ մոռանում ես...:

Նա լանկարծ կանգ առաւ և տկանջ գրեց: Նրա գէմքը դժգունեց և մի ինչ որ ջղաձգական չար արտայայտութիւնից բոլորովին այլանդակեցան գիմագծերը:

— Սատանի ճետերին ներս են թողել:— ասաց նա չարացած:

Արդարև, ներքևը նեղ անցքից, հեղեղի ձայնի նրման, լսում էին մանուկների քայլերն ու աղաղակները: Մի բոսէ ամեն ինչ լուեց. հաւանօրէն երեխաները բարձրացել էին միջին հրապարակը և աղմուկը գէպի դուրս էր զնում: Բայց չետոյ մութ անցքը խողովակի նման զօղանջեց և մանուկների գուարթ խումբը, միմեանց առաջկարուկ անելով, անցաւ Եվելինայի մօտով: Աստիճանների գլխին նրանք մի առ վայրկեան կանգ առան, բայց չետոյ միմեանց ետևից ճլիուեցան կոյր ժամհարի կողքից, որ չարութիւնից այլանդակուած գէմքով բռունցքները դէս ու դէն էր ուղղում՝ աշխատելով փախուստ տուողներից մէկն ու մէկին հարուածել:

Յանկարծ անցքից դուրս եկաւ մի նոր մարդ: Երևի այդ Ռոմանն էր: Նրա գէմքը լայն էր, ծաղկատար և չափազանց բարի: Փակ կոպերը ծածկել էին աչքի խոռոչները, շրթունքների վրայ ժափա էր խաղում: Նա անցնելով պատին հուպ եկած Եվելինայի կողքով, բարձ-

բացաւ վեր: Կոյր ընկերոջ բռուկնքի հարուածը կողքեց նրա վզին զիպաւ:

— Եղբայր, — ձայն տուաւ նա կիծային, հաճելի ձայնով, — Եգոր, դարձեալ կուռի մէջ ես:

Նրանք ընդհարուեցան և սկսան իրար շօշափել:

— Ինչի՞ ես այս գետերին ներս թողել, — սրտնեղած հարցրեց Եգորը:

— Եհ, վնաս չունի, — բարեհոգութեամբ պատասխանեց Ռոմանը. — անմեղ թռչնակներ են: Ինչ ես դրանց այդպէս նեղում: Հը', չարածճիներ, այստեղ էք...

Երեխերը վանդակապատի անկիւնները քաշուած կուճ էին եկել, և նրանց աչքերից խորամանկութիւն և մասամբ երկիւղ էր ցայտում:

Եվելինան միծնում համը քայլեր փոխելով արդէն առաջին անցքի կէսն էր հասած, որ իւր ետևից լսեց երկու կոյրերի հաստատուն ոտնաձայնը, իսկ վերևից նրան հասնում էր երեխաների ուրախական կանչն ու ճիչը, որոնք ամբողջ խմբով ընկել էին իրանց հետ մնացած Ռոմանի վրայ:

Խուճը լամբաքայլ դուրս էր գալիս վանքի լայն դռնից, որ զանգակատնից լսուեց զանգի առաջին ձայնը: Այդ Ռոմանն էր երեկոյեան ժամը խփում:

Արևը մայր մտու, կառքը սյանում էր մթազնած դաշտերով, լուռւմ էր զանգի համաչափ, մեղամաղձոտ ձայնը, որ կորչում էր երեկոյեան կապուտ մթնշաղի մէջ...

Ամբողջ ճանապարհին մինչև տուն հասնելը ոչ ոք ձայն չհանեց: Երեկոյեան երկար ժամանակ Պետրոսը չէր ելևում: Նա պարտիզի մութ անկիւններից մէկը քաշուած նույն իսկ Եվելինայի ձայնին, որ կանչում էր նրան, պատասխան չտուեց, և շօշափելով հասաւ իւր սենեակն այն ժամանակ, երբ արդէն տանը ամենքն էլ պառկած էին...:

IV

Պոպելըսիկները մի քանի օր էլ մնացին Ստաւրու-  
չենկոյի տանը: Պետրոսը ժամանակ առ ժամանակ լի-  
նում էր նոյն տրամադրութեան մէջ, ինչ որ ունէր մի  
քիչ առաջ. նա կենդանանում էր և իւրատեսակ գուար-  
թանում, փորձում էր նուազել իրեն. համար նոր գոր-  
ծիքներ, որոնց բաւական հարուստ ժողովածուն կար  
Ստաւրուչենկոյի տաղ որդու մտ և որոնք խիտ հե-  
տաքրքրում էին Պետրոսին՝—իւրաքանչիւրն իւր յա-  
տուկ ձայնն ունէր և զգացմունքի առանձին կոյմերն  
արտայայտում: Բայց և այնպէս նրա վրայ նկատելի էր  
մի առանձին մուլլ տրամադրութիւն, և հոգու սովո-  
րական դրութիւնն այժմ միայն պատահական սուղա-  
ծումն էր թւում ընդհանուր, աւելի ու աւելի մթա-  
ղնոյ ստուերի վրայ:

Կարծես լռելեայն պայման էին կապել, որ ոչ ոք  
խօսք չբանայ վանքում պատահած դիպուածի մասին,  
այնպէս որ այդ ամբողջ ուղևորութիւնը հէնց իմանաս  
բոլորովին մտքից ելած, մոռացուած լինէր: Սակայն  
նկատելի էր, որ դա խոր ապաւորուել էր կայրի հոգու  
մէջ: Ամեն անգամ որ մենակ էր մնում, կամ երբ բո-  
ւական ընդհանուր լռութիւն էր տիրում, երբ նրան  
չէին գրաւում շրջապատողների խօսակցութիւնը, Պե-  
տրոսը մտքի տունն էր ընկնում և մի տեսակ դառնու-  
թեան արտայայտութիւն երևում նրա դէմքին: Դա  
ամենքին էլ արդէն ծանօթ արտայայտութիւն էր, մի-  
այն թէ այժմ դա աւելի ազգու էր թւում և... խիտ  
նմանում կոյր ժամհարին:

Դաշնամուրն ամելիս, երբ բոլորովին անձնատուր  
էր եղած լինում, այժմ շատ անգամ արդէն նրա ա-  
ծուածքի մէջ խառնուում էր գանգոկների մանրաբեկ-

բեկ զօղանջիւնն ու բարձր զանգակատան պղնձի երկնի թառանջը...: Եւ այն, որի մասին ոչ ոք սիրտ չէր անում խօսել, — պարզ կերպով պատկերանում էր ամենքի առաջ՝ — մօռլ անցքերը, ժամհարի բարակ կազմն ու նրա թոքախտաւորի կարմրութիւնը, նրա քինախնդրի կանչն ու մազձոտ տրտուկը բազրի դէմ... Այա և երկու կոյրերը միեւնոյն դիրքով զանգակատանը կանգնած, դէմքի միատեսակ արտայայտութեամբ, զգայիւն յոնքերի միատեսակ շարժումներով...: Այն, ինչ որ հալազատները Պետրոսի անձնական առանձին լատիւթիւններն էին համարում, այժմ կազմում էր մի ընդհանուր կնիք այն խաւար տարրի, որ իւր խորհրդաւոր իշխանութիւնը միակերպ տարածում է իւր բոլոր գոհերի վրայ:

— Ինչ եմ ասում, Անիա, — Մակիմը տուն վերադառնալուց լետոյ հարցրեց քրոջը: — Զգիտե՞ս, մեր ուղևորութեան միջոցին ինչ է պատահել...: Տեսնում եմ, հէնց այդ օրից Պետրոսը փոխուել է:

— Ախ, այդ բոլորը կոյրին հանդիպելու հետևանքն է, — հառաչելով պատասխանեց Աննա Միխայլովնան:

Նա հէնց նորերս երկու տաք մուշտակ ու փող էր ուղարկել վանք հայր Պանֆիլիին և նամակով խնդրել, որ ըստ չափու հնարաւորութեան թեթեւացնէ երկու կոյրերի վիճակը: Առ հասարակ նա բարի սիրտ ունէր, բայց սկզբում Ռոմանին մոռացել էր և միայն Եվելինան էր որ լիշեցրեց, թէ հարկաւոր է երկսի վրայ էլ խնամք տանել: «Ո՛հ, անշուշտ, անշուշտ», — պատասխանեց Աննա Միխայլովնան, բայց պարզ երևում էր, որ նրա միտքը միայն մէկ կոյրովն էր զբաղուած: Նրա զթասրտութեան միացել էր նաև մի սնտախալաշտական զգացմունք՝ — նրան թւում էր, թէ այդ նուիրաբերութեամբ պիտի կարողանար գութը շարժել մի խաւար

գորութեան, որ արդէն մռայլ ստուերի նման կուտակ-  
ւում էր իւր զաւակի գլխի վրայ...:

— Ի՞նչ կուրի, — զարմացած հարցրեց Մակսիմը:

— Ա՛յն կուրի, էլի... զանգակատան...:

Մակսիմը զայրացած անթացուպերը գեանին բաղ-  
խեց:

— Սա ինչ անէ՞ժք է, ոտագուրկ կոճղ լինելը: Մո-  
ռանում ես, որ ես զանգակատներ չեմ բարձրանում,  
ինչպէս երևում է կանանցից ոչ մի բան կարելի չէ ի-  
մանալ: Եվելինա, գոնէ դու փորձիր մի կարգին պատ-  
մելու, թէ ի՞նչ պատահեցաւ զանգակատներ:

— Այնտեղ, — ցած ձայնով պատասխանեց Եվելինան,  
որ այս քանի օրս նոյնպէս դժգունել էր, — կուր ժամ-  
հար կայ...: Եւ նա...:

Նա կանգ առաւ: Աննա Միխայլովնան ձեռներով  
ծածկեց իւր այրուող դէմքը, որի վրայով արտասուքն  
էր հոսում:

— Եւ նա շատ նման է Պետրոսին...:

— Եւ դուք ինձ ոչինչ չէք ասել: Ե՛հ, յետո՛յ: Այդ  
դեռ բաւական պատճառ չէ լաց ու սուգ անելու, Ա-  
նիա, — աւելացրեց նա թեթեւ կշտամբանքով:

— Ա՛հ, սարսափելի բան է, — պատասխանեց Աննա  
Միխայլովնան ցած ձայնով:

— Ի՞նչն է սարսափելի: Որ նա քո որդուդ է նը-  
ման:

Եվելինան բազմիմաստ հայեացք ձգեց ծերունու  
վրայ, և նա լռեց: Մի քանի րոպէից Աննա Միխայլով-  
նան դուրս գնաց, իսկ Եվելինան իւր մշտական ձեռա-  
գործը ձեռին մնաց տեղը:

— Երևի դեռ ամեն բան չես պատմել դու, — ըո-  
պէական լռութիւնից յետոյ հարցրեց Մակսիմը:

— Ոչ: Երբ ամենքը ցած իջան, Պետրոսը մնաց: Նա

հրամայեց մօրը գնալ միւսներին ետեւից, իսկ ինքը մնաց կոյրի հետ: Ես... նույնպէս մնացի:

— Թաքուն լսելով, — համարեա մեքենաբար կրկնեց ճերուհի մանկավարժը:

— Չկարողացայ... հեռանալ... — ցած ձայնով պատասխանեց Կլեւինան: — Նրանք իրար հետ խօսում էին որպէս...

— Որպէս համանման վշտի ընկերներ:

— Որպէս կոյրեր... Յետոյ Եգորը Պետրոսին հարցրեց, թէ երազում մօրը տեսնում է: Պետրոսը պատասխանեց. «չեմ տեսնում»: Բայց այն մէկն էլ չէ տեսնում: Մինչդեռ միւս կոյրը, Ռոմանը երազում տեսնում է իւր մօրը նորատի հասակում, թէպէտ մայրն արդէն պառուել է...

— Լաւ լետո՞յ:

Կլեւինան մտքի մէջ ընկաւ և ապա, ճերուհու վրայ ձգելով իւր կապույտ աչքերը, որոնց մէջ այժմ մաքառումն և տանջանք էր երևում, ասաց.

— Միւսը, Ռոմանը, բարի է և հանգարտաբարոյ: Նրա դէմքը տխուր է, բայց չար չէ...: Նա աչքը բաց է ծնուել...: Իսկ սա...: Նա չափազանց տանջւում է, — յանկարծ խօսքը փոխեց Կլեւինան:

— Ի սէր Աստուծոյ, ուղղակի ասա, — անհամբերութեամբ ընդհատեց Մակսիմը. — իսկ սա չարասիրտ է...:

— Այո: Նա ուզում էր երեխերանց ծեծել և անիծում էր նրանց: Իսկ Ռոմանին երեխերքը սիրում են...:

— Չար է և Պետրոսին նման...: Հասկանում եմ, — մտախոհութեամբ ասաց Մակսիմը:

Կլեւինան դարձեալ լռեց և լետոյ, կարծես այդ խօսքերը ներքին ծանր մաքառման պատճառ լինէին, բոլորովին ցած ձայնով ասաց.

— Դէմքով երկուսն իրար նման չեն... դիմազօծե-

րը տարբեր են: Բայց արտայայտութիւնը...: Ինձ թւում էր, թէ առաջ Պետրոսի զէմքի արտայայտութիւնը փոքր ինչ նման էր Ռոմանին, բայց այժմ աւելի ու աւելի յաճախ նմանում է միւսին... բացի այդ...: Ես վախենում եմ... ես կարծում եմ...

— Ինչից ես վախենում: Եկ այտեղ, իմ խելացի փոքրիկս, — ասաց Մակսիմը չափազանց մեծ քնքշութեամբ: Եւ երբ աղջիկը, այդ գուրգուրանքից մեղմացած, աչքերն արտասուքով լի մտտեցաւ նրան, Մակսիմը իւր խոշոր ձեռներով շոյելով աղջկայ մետաքսանման մազերը, ասաց.

— Ի՛նչ ես կարծում: Ասա: Ինչպէս տեսնում եմ դու կարողանում ես մտածել:

— Ես կարծում եմ, որ... նա այժմ հաւատացած է, թէ... բոլոր կոյր ծնուողները չարասիրտ են լինում: Եւ նա համոզած լինի ինքն իրեն, թէ ինքն էլ... անպատճառ...

— Հ՛ր. դու բանը տես..., — ասաց Մակսիմը լանկարձ ձեռքը քաշելով: — Հապա զաւակս, մի չիբուխս ինձ տուր... Ա՛յ, այնտեղ պատուհանի վրայ է:

Մի քանի րոպէից ծխի բարդերը բարձրացան նրա գլխի վերևը:

— Հ՛րմ... հա՛... վատ է, — մրթմրթում էր նա ինքն իրան: — Ես սխալուել եմ...: Անիան իրտուռնք ունէր՝ — կարելի է տխրել և տանջուել այն բանի համար, որը ոչ մի անգամ չես փորձել: Իսկ այժմս բնազդման սիացել է նաև զիտակցութիւնը, և այդ երկուքն էլ միևնոյն ուղղութեամբ պիտի գնան: Անիճեալ զէպք... Սակայն: Ինչպէս ասում են բիզը ջուալում չի ծածկուել... Անպատճառ մի տեղից ծայրը պիտի դուրս գար...:

Նա բոլորովին թաղուեց կապուտ ծուխի մէջ...: Ծերունու քառակուսի գլխում նոր մտքեր ու նոր վճիռներ էին վխտում...:

V

Զմեռը եկաւ: Խորունկ ձիւնը եկել, ճանապարհ-  
ները, դաշտերը, գիւղերը ծածկել էր: Ապարանքն ամ-  
բողջապէս սպիտակել էր, փափուկ ձիւնի ծիւերը բըռ-  
նել էին ծառերի ճիւղերը, հէնց գիտենաս պարտէզը  
նորից սպիտակ տերեւներ էր արձակել...: Մեծ բուխ-  
րու մէջ կրակը ճարճատուժ էր, ամեն մի դրօնից ներս  
մտնող թարմութիւն և փափուկ ձիւնի հոտ էր բերում  
հետը...:

✓ Զմեռային առաջին օրուայ հրապուրը<sup>v</sup> իւր տեսա-  
կին մատչելի էր նաև կոյրին: Առաւօտը զարթնելով,  
նա միշտ մի առանձին առուգութիւն էր զգում և ձմե-  
ռուայ գալը իմանում էր խոհանոց մտնող ծառաների  
ոտքի տրոփից, դռների ճոնչոցից, ամբողջ տան մէջ  
տարածուող հազիւ զգալի, սուր հոտանքներից, դրսում  
քայլերի ճոնչոցից, արտաքին ձայների մի առանձին ✓  
«սառնութիւնից»: Եւ երբ Իօխիմի հետ նոր-նոր բա-  
ցուած ճանապարհով ձի նստած դաշտ էր դուրս գա-  
լիս՝ — մեծ հաճութիւն լսում էր սահնակների հնչիւն ճը-  
ռինչն ու մի ինչ որ խուլ շրխկոցի ձայներ: որ գետի  
միւս կողմից անտառը փոխարինում էր ճանապարհի ու  
դաշտի հետ:

Այս անգամ առաջին սպիտակ օրը կոյրի վրայ ա-  
ւելի ևս տխրութիւն ձգեց: Առաւօտուանից իւր մեծ  
ճտքանի կօշիկը հագած, նա կուսական ձիւնի վրայ ոտ-  
քի հետքերը թողնելով — դէպի ջրաղացը գնաց:

Պարտիզում կատարեալ խաղաղութիւն էր տիրում:  
Քնքուռ սաւանով ծածկուած ստուած գետինը բոլորո-  
վին լռել, ոչ մի ձայն չէր արձակում. բայց օդը, ընդ-  
հակառակն, աւելի զգայուն էր գարձած և պարզ ու  
լրիւ կերպով հեռուները հասցնելով և՛ ազաւելի կուս-

ւիւնը, և՛ կացնի հարուածը, և՛ ջարդուող ճիւղի թեթեւ ճալթոցը...: Ժամանակ առ ժամանակ լուում էր մի տարօրինակ հնչիւն, ապակու ձայնի նման, որ ամենաբարձր աստիճանի հասնելով կարծես ահագին հեռաւորութեան մէջ խաղաղ լուում էր: Այդ մանուկներն էին քարեր արձակում գիւղական լճակի վրայ, որն առաւօտեան անդրանիկ սառցի բարակ ծածկոյթով էր բռնուած...:

Ապարանքի լճակն էլ էր սառել, բայց ջրաղացի գետակը, թէպէտ ծանրացած ու մթագնած, դեռ շարունակում էր ծորել իւր բամբկուն ակերի միջով ու ջրարգելի արանքներում քչքչում:

Պետրոսը մօտեցաւ ամբարտակին և, ականջ կախելով, կանգ առաւ: Զրի ձայնը փոխուել էր — ծանր էր ու մեղեգուց զուրկ: Կարծես մահացած շրջապատի ցրտութիւնն էր զգացւում նրա մէջ...:

✕ ✕ Պետրոսի հոգին էլ սառն էր և մռայլ: Մութ զգացմունքը, որը դեռ այն երջանիկ երեկոյեան ծագում էր իւր հոգու խորքից երկիւղ, անգոհունակութիւն և հարցապնդում ծնեցնելով, այժմ ընդարձակուել և հոգու մէջ բռնել էր այն տեղը, որ առաջ բերկրանքի և երջանկութեան զգացողութիւններին էր պատկանում:

Եվելինան ապարանքում չէր: Եասկուլսիկները աշնանը գնացել էին իրենց բարերար պառաւ գրաֆուհի Պտտոկցու մօտ, որը ծերունիներից պահանջել էր, որ իրենց աղջկանն էլ հետները տանեն: Սկզբում Եվելինան ընդդիմանում էր, բայց լեռոյ զիջաւ հօր պահանջին, որին միացել էր նաև Մակսիմը:

Այժմ Պետրոսը, ջրաղացի մօտ կանգնած, մտաբերում էր իւր առաջուայ զգացողութիւնները, աշխատում էր վերականգնել նրանց նախկին ամբողջականու-

Թիւնն ու լրութիւնը և հարց էր տալիս իրեն, թէ զգո՞ւմ է արդեօք Եվելինայի բացակայութիւնը: Նա այդ զգում էր, բայց և գիտակցում, որ նրա ներկայութիւնն էլ իրեն երջանկութիւն չէ տալիս, հաստ միայն պատճառում է մի առանձին տանջանք, որը նրա բացակայութեան միջոցին փոքր ինչ բթացել էր:

Գեռ նորերս էր, որ նրա ականջին հնչում էին Եվելինայի խօսքերը, յարութիւն առնում սիրոյ առաջին բացատրութեան բոլոր մանրամասնութիւնները, նա իւր մատների վրայ զգում էր նրա մետաքսանման մաշկերը, իւր կրծքի վրայ զգացել նրա սրտի բաբախումները: Եւ այդ բոլորից կազմակերպուել էր մի պատկեր, որ բերկրութեամբ էր լցնում նրան: Այժմ մի անկերպարան բան, նման այն ուրուականներին, որոնցով լցուած էր նրա երեւակայութիւնը, իւր մահաբեր շունչը փչել էր այդ պատկերի վրայ և ցերեւցան արել: Նա այլ ևս չէր կարողանում միաւորել իւր լիշողութիւնները և կազմել այն զգացմունքների ներդաշնակութիւնը, որով զեղուն էր նա առաջին ժամանակները: Արդէն հէնց սկզբից այդ զգացմունքի հիմքում ընկած էր մի ուրիշ բանի սերմը, և այժմ այդ «ուրիշ բանը» տարածուած էր նրա վրայ, որպէս մրրկալից սեւաթուր ամպ, որ բռնած է ամբողջ հորիզոնը:

Եվելինայի ձայնի հնչիւնները նսեմացել էին, և երջանկ երեկոյեան պայծառ տպաւորութիւնների տեղ դատարկութիւն էր մնացել: Եւ կոյրի հոգու խորերից ծանր ճիգ գործ դնելով այդ դատարկութեան ընդառաջում էր մի բան, որպէս զի լքցնէ այդ դատարկութիւնը:

Գոյրն ուզում էր Եվելինային տեսնել:

Առաջ նա միայն հոգեկան բութ տանջանք էր զգում, բայց դա նրա հոգու մէջ անմեկին ձև ունէր,

նրան անորոշ կերպով էր վրդովում, ինչպէս տօթացող  
ատամնացաւը, որի վրայ դեռ ուշադրութիւն չենք  
դարձնում:

Կոյր ժամհարին հանդիպելուց այդ ցաւը գիտակ-  
ցական տանջանքի սրութիւն էր ստացել...:

Նա սիրել էր Էվելինային և կամենում էր նրան  
սեանել:

Այսպէս էին անցնում օրերը լուռ և ձիւնով ծած-  
կուած ապարանքում:

Փամանակ առ ժամանակ, երբ երջանկութեան ըն-  
պէները պայծառ ու կենդանի կերպով պատկերանում  
էին նրա առջ, Պետրոսը փոքր ինչ աշխօժ էր ստա-  
նում և դէմքը բացւում: Բայց այդ երկար չէր, իսկ  
ժամանակ անցնելուց յետոյ նոյն իսկ այդ պայծառ ըն-  
պէներն էլ մի ատեսի անհանգիստ բնակորութիւն ստա-  
ցան՝ կարծես կոյրը վախենում էր. թէ մի գուցէ ան-  
հետանան և մէկ էլ չգառնան: Պրանից նրա վարձուէն  
տնկանոն էր դառնում. բուռն քնքշութեան և զօրեղ  
նեարդային գրգիռին յաջորդում էին ճնշուած, անլոյս  
թախիծի օրերը: Բրիկուենները մութ ընդունարանում  
գաշնամուրը լաց էր լինում և խորին ու ցաւազար  
ախրութեամբ ողբում, և նրա ամեն մի հնչիւնը ցաւ  
էր պատճառում Աննա Միխայլովնայի սրտին: Վերջա-  
պէս նրա ամենավատ երկիւղը կատարուեց՝ պատանու  
մանկական յուզիկ երազները նորոգուեցան:

Մի առաւօտ Աննա Միխայլովնան որդու սենեակը  
մտաւ: Որդին դեռ քնած էր, բայց տարօրինակ կերպով  
տնհանգիստ էր այդ քունը՝ աչքը կիսաբաց էր և ազօտ  
նայում կիսով չափ բարձրացած կոպերի տակից, դէմքը  
տփռոյն էր և անհանգստութիւն արտալայտում:

Մայրը ցանկանալով գտնել անհանգստութեան  
պատճառը, կանգ առաւ և ուշադիր հայեացքով դիտեց

որդուն: Բայց նա տեսնում էր միայն, որ այդ անհանգստութիւնը քանի գնում աւելանում էր և քնածի գէմքի վրայ աւելի ու աւելի պարզ կերպով դրոշմւում էր լարուած ճիգի արտայայտութիւնը:

Յանկարծ անկողնի վրայ մի հագիւ նկատելի շարժում զգաց: Զմերային շլացուցիչ արևի պայծառ ճառագայթը կուրի գլխավերևը պատին դիպչելով կարծես դողդողաց և թեթևակի ներքև սահեցաւ: Գարձեալ, դարձեալ... լուսաւոր շերտը զաղտագողի մօտենում էր կիսախուփ աչքերին, և քանի մօտենում էր, այնքան աւելանում էր նաև քնածի անհանգստութիւնը:

Աննա Միխայլովնան մնացել էր անշարժ, կարծես մղձաւանջի մէջ լինէր, և ահաբեկ աչքը չէր կարողանում հեռացնել հրաբորբոք շերտից, որը այնպէս էր թւում, թէ թեթև, բայց և այնպէս նկատելի բաբախումներով, մօտենում էր իւր որդու գէմքին: Եւ այդ գէմքն աւելի ու աւելի գունատւում էր, երկարում և ծանր ճգունքի արտայայտութիւն առնելով սառչում, մնում: Ահա դեղնաւուն ցուքը հրհրատեցաւ մագերի մէջ, վառուեց պատանու ճակատի վրայ: Մայրն աւելի ու աւելի գէպի առաջ էր թեքւում՝ բնագդմամբ կամենալով պաշտպանել իւր որդուն, բայց ոտները չէին շարժւում, ասես ճիշդ մղձաւանջի մէջ լինէր: Մինչդեռ կուրի կոպերը բոլորովին բացուեցան, անշարժ բըբերի մէջ ճառագայթները ցուցին և գլուխը, գէպի լոյսն ընդառաջելով, նկատելի կերպով բաժանուեց բարձից: Ժպտի կամ լացի պէս մի բան ջղաձգաբար արտայայտուեց ու անցաւ կուրի շրթունքների վրայով և ամբողջ գէմքը կրկին սառեց բուռն արտայայտութեան մէջ մնալով:

Վերջապէս մայրը լաղթեց իւր անդամները կաշկանդող անշարժութեան և, մահճակալին մօտենալով,

ձեռքը որդու գլխին դրաւ: Կոյրը ցնցուեց և զարթեցաւ:

— Մայրիկ, դո՛ւ ես, — հարցրեց նա:

— Այո, ես եմ:

Կոյրը վեր կացաւ: Կարծես դեռ թանձր մառախուղը ծածկել էր նրա գիտակցութիւնը: Բայց մի րոպէից ասաց.

— Ես գարձետլ երազ տեսայ...: Այժմ շուտ շուտ եմ երազ տեսնում, բայց... ոչինչ չեմ լիշում...:

## VI

Պատանու տրամադրութեան մէջ անփարատելի տխրութեան փոխարինում էր ջղային ցասկոտութիւնը և, միևնոյն ժամանակ, աւելանում էր նաև նրա զգացողութիւնների զարմանալի նրբութիւնը: Լսողութիւնը չափազանց սրուել էր. լոյսն զգում էր իւր ամբողջ մարմնակազմով, և այդ բանը մինչև անգամ գիշերն էլ զգալի էր՝ նա կարողանում էր լուսնեակ գիշերը ջուկել խաւար գիշերից և շատ անգամ, մինչ ուրիշները քնած էին, նա լուռ և տխուր զբօսնում էր բակում՝ լուսնի երազական և բանդազուշային լուսին անձնատուր եղած: Եւ այդ ժամանակ նրա գունատ դէմքը միշտ դարձած էր լինում կապուտ երկնակամարի վրայ սահող հրալին գնդի կողմը և, սառն ճառագայթների պէճպէճին տուող ցոլքերը արտափայլում էին նրա աչքերի մէջ:

Երբ այդ գունդը, որ քանի երկրիս մօտենում, այնքան էլ մեծանում էր, կարմրագոյն մէգով պատած հանգարտ կերպով սպիտակափառ հորիզոնի տակն էր մտնում, կոյրի դէմքն աւելի խաղաղում էր ու մեղմանում: Նա բարձրանում էր վերև և իւր սենեակը քաշւում:

Պժուար էր ասել, թէ ինչ էր մտածում նա այս երկար գիշերները: Ով որ որոշեալ հասակում ճաշակել է կատարեալ գիտակցական գոյութեան քաղցրութիւններն ու դառնութիւնները, նա էլ շատ կամ քիչ չափով ենթարկուած կ'լինի հոգեկան ճգնաժամի: Մարդս կեանքի գործունէութեան շեմքում կանգնած միջոցին աշխատում է որոշել իւր տեղը բնութեան մէջ, իւր նշանակութիւնը, իւր յարաբերութիւնը դէպի շրջապատող աշխարհքը: Այդ մի տեսակ «մեռեալ կէտ է», և երանի նրան, որին կենսական ոյժի թափը անփորձ անց կ'կացնէ այդ գրութիւնից: Պետրոսի այս հոգեկան ճգնաժամն աւելի ևս բարդացած էր. այն հարցման, թէ՛ «ինչո՞ւ ենք ապրում», աւելացնում էր՝ «ինչո՞ւ է աշխարհումս կոյրն ապրում»: Աերջապէս այս ուրախութիւնից զուրկ մտածութեան աշխատանքի մէջ մտնում էր նաև մի տեսակ կողմնակի բան, մի տեսակ անգոհունակ կարիքի համարեա թէ Ֆիզիկական ճնշումն, և այս արտայայտւում էր նրա բնաւորութեան վրայ:

Ծննդեան վրայ Եասկուլսկիները վերագարձան, և Էվելինան, ուրախ և զուարթ, ձիւնը մազերին, տմբողջովին թարմութեամբ ու ցրտով զեղուն, իրենց ազարակից դէպի ապարանք վազեց և սկսաւ գրկախառնել և համբուրել: Աննա Միխայլովնային, Մակսիմին ու Պետրոսին: Սկզբում Պետրոսի դէմքն անակնկալ ուրախութիւնից փայլեց, բայց յետոյ նորից լամառ տխրութիւնը տիրեց նրան:

— Գարծում ես թէ ես քեզ սիրում եմ, — խիստ կերպով հարցրեց նա նոյն օրը, երբ Էվելինայի հետ մենակ մնաց:

— Հաւատացած եմ, որ սիրում ես, — պատասխանեց Էվելինան:

— Իսկ ես՝ չգիտեմ, — խոժոռած նկատեց Պետրո-

սը: — Այո, չգիտեմ: Առաջ ես էլ հաւատացած էի, թէ աշխարհիս վրայ ոչ ոքին քեզանից աւելի չեմ սիրում, բայց այժմ՝ չգիտեմ: Թո՛ղ ինձ, քանի դեռ ուշ չէ հետեւիր նրանց առածին, որոնք քեզ գէպի կեանք են հրաւիրում:

— Ինչի՞ ես տանջում ինձ:

— Տանջո՞ւմ եմ, — կրկնեց պատանին և նրա դէմքը դարձեալ յամառ եսականութիւն արտայայտեց: — Անշուշտ տանջում եմ: Եւ այսպէս ամբողջ կեանքի մէջ պիտի տանջեմ, և չտանջել կարող չեմ: Ես ինքս էլ չբզիտէի այդ, բայց այժմ գիտեմ: Եւ ես մեղաւոր չեմ: Նոյն այն ձեռքը, որ դեռ չճնուած ինձ զրկել է ատութիւնից, այդ դաժանութիւնը դրել է իմ մէջս...: Մենք ի ծնէ կոյրերս ամենքս էլ այդպէս ենք: Թո՛ղ ինձ... ամենքդ էլ թողէք ինձ, որովհետեւ ես սիրոյ փոխարէն լոկ տանջանք կարող եմ պատճառել...: Տեսնել եմ ուզում — հասկանո՞ւմ ես, ցանկանում եմ տեսնել և չեմ կարողանում այդ ցանկութիւնից ազատուել: Թէ որ գէթ մի անգամ, գէթ երազումս կարողանայի տեսնել երկինքն ու երկիրս, արեգակը...: Թէ որ այդպէսով կարողանայի տեսնել մօրս, հօրս, քեզ և Մակիմին, գոհ կ'լինէի...: Ես միտս կ'պահէի, ես այդ լիշողութիւնը կ'տեղափոխէի բոլոր մնացեալ կեանքիս խաւարի մէջը...:

Եւ նա տարօրինակ յամառութեամբ կրկին նոյն միտքն էր արծարծում: Մենակ մնացած միջոցին նա վեր էր առնում զանազան առարկաներ, անօրինակ ուշադրութեամբ շօշափում էր և ապա մի կողմ դնելով աշխատում էր ըմբռնել ուսումնասիրած ձեւերը: Միևնոյն կերպով նա աշխատում էր ըմբռնել նաև զանազան պայծառ գունաւոր մակերևութիւնների տարբերութիւնը, որ նեարդային համադրութեան լարուած դիւրազգայնութեան շնորհիւ շօշափման միջոցով նսեմակի զգում

էր: Բայց այս ամենը նրա գիտակցութեան մէջ թափանցում էր միմիայն հէնց այն տարբերութեամբ, որ ունէին միմեանցից, բայց զուրկ զգայնական բովանդակութիւնից: Այժմ մինչև անգամ արեգակնային օրը գիշերային խաւարից նրանով էր տարբերում, որ պայծառ լոյսի ներգործութիւնը, մեր գիտակցութեանը անմատչելի ճանապարհներով ուղեղին հասնելով, լոկ աւելի զօրեղ կերպով էր գրգռում նրա յօյզերը:

## VII

✕ Մի անգամ Մակսիմն ընդունարան մտնելով տեսաւ, որ Եվելինան ու Պետրոսն այնտեղ են: Աղջիկը շփոթուած էր երևում: Պատանու դէմքը մռայլ էր: Կարծես Պետրոսի համար տանջուելու նոր պատճառներ գրանելն ու գրանով թէ իրեն և թէ ուրիշներին չարչարելը մի տեսակ կարիք էր դարձած:

— Ահա այժմ էլ նա հարցնում է, թէ ի՞նչ է նշանակում «կարմիր զօղանջիւն», — ասաց Եվելինան Մակսիմին:— Ձեմ կարողանում բացատրել:

— Ի՞նչ է ուզեցածդ, — կարճ կերպով հարցրեց Մակսիմը Պետրոսին դառնալով:

Նա ուսերը վեր ձգեց:

— Ոչինչ առանձին: Եթէ հնչիւնները գոյն ունին և ես այդ գոյները չեմ տեսնում, նշանակում է, որ մինչև անգամ հնչիւններն էլ լրիւ մատչելի չեն ինձ:

— Երեխայութիւն և դատարկ բաներ, — պատասխանեց Մակսիմը խտուրտութեամբ: — Ինքդ էլ լաւ գիտես, որ ասածդ ուղիղ չէ: Հնչիւնները քեզ առաւել լրութեամբ են մատչելի, քան թէ մեզ:

— Բայց ի՞նչ է նշանակում այդ ոճը...: Հօ պէտք է դա մի բան արտայայտելիս լինի:

Մակսիմը մոքի մէջ ընկաւ:

— Գա պարզ համեմատութիւն է, ասաց նա: — Որովհետև թէ ձայնը և թէ լոյսը իսկապէս շարժումից են առաջանում, ուստի և պէտք է որ նրանք շատ յատկութիւններով նման լինին իրարու:

— Ի՞նչ յատկութիւններ կարող են լինել այստեղ, — յամառութեամբ շարունակեց հարց ու փորձ անել Պետրոսը: — «Կարմիր զօղանջիւն»... ինչպիսի՞ զօղանջիւն է դա իսկապէս:

Մակսիմը մտքի մէջ ընկաւ:

Նա մտաբերեց այն բացազրութիւնը, որ վերաբերւում է ատտանման թուերի <sup>\*)</sup> յարաբերութեան, բայց և գիտէր, որ Պետրոսին հարկաւորն այդ չէր: Մանաւանդ նա, որ առաջին անգամ լոյսի ածականը գործ էր դրել հնչիւնի համար, անկասկած բնագիտութիւն չէր իմանում, մինչդեռ մի որ և իցէ նմանութիւն տեսել էր դրանց մէջ: Որտե՞ղ է այդ նմանութիւնը:

Ծերունու գլխում մի այսպիսի նմանութիւն ծնուեց.

— Սպասիր, — ասաց նա: — Բայց չգիտեմ, թէ պիտի կարողանամ ինչպէս հարկն է հասկացնել քեզ...: Թէ ինչ բան է կարմիր զօղանջիւնը, այդ ինքք էլ կարող ես ինձ չափ իմանալ՝ — դու ալք շատ անգամ լսել ես քաղաքում, մեծ տօներին, միայն մեր կողմերում ոճի այդ դարձուածքը գործածական չէ...:

— Այո, այո, սպասիր, — ասաց Պետրոսը արագութեամբ դաշնամուրի խուփը բանալով:

Նա իւր վարժ ձեռներով բաղխեց ստեղները և օճեց տօնական զանգահարութեան նմանութեամբ: Նմա-

<sup>\*)</sup> Ռուսաց եկեղեցիների զանգահարութիւնը նման չէ մեր զանգահարութեան. մինչ մեր զանգերը հատ ընդ հատ են խրփում, ուստացը բոլոր 4, 5, 6 և աւել զանգերը միասին, որոշ կարգով են խփում, որի միջոցին երկու մանր զանգակները շարունակ զնգզնգում են և ձայն պահում: Մ. Թ.

նութիւնը կատարեալ էր: Մի քանի ոչ-բարձր հնչիւնները զաշնակը (ակկորդ) կարծես մի տեսակ ստուեր էր կազմում խորքում, իսկ նրա վրայ, ցատկոտելով ու տատանուելով, նկատուում էին առաւել շարժուն և պայծառ հնչիւնները: Ընդհանուր առմամբ դա նոյն բարձր և զուարթարար զօղանջն էր, որով զեղուն է լինում տօնական օրուայ օգը:

— Այ՛ո, — ասաց Մակսիմը, — շատ նման է, և մենք, աչք ունեցողներս, քեզանից լաւ չէինք կարող իւրացնել այդ: Գիտես ինչ կայ... երբ ես մի մեծ կարմիր տարածութեան եմ նայում, դա իմ աչքի վրայ նոյնպէս մի տեսակ առաձգաբար յուզուող բանի անհասկիտ տպաւորութիւն է գործում: Այնպէս է թւում, թէ այդ կարմրութիւնը փոխուում է՝—իւր ներքեւն առաւել խոր, մութ շուք թողնելով, նա տեղ-տեղ առաւել պայծառ, արագութեամբ երես բարձրացող և նոյնպէս արագութեամբ էլ իջնող շարժումներ, ալիքներ է կազմում, որոնք չափազանց խիտ ներգործում են աչքի վրայ, — գոնէ իմ աչքիս վրայ:

— Այդ ճշմարիտ է, ճշմարիտ է, — աշխուժով ասաց Էվելինան, — ես էլ նոյնն եմ զգում և չեմ կարողանում երկար ժամանակ նայել կարմիր մահուկէ սրբոնցի ...

— Ինչպէս որ շատերն էլ չեն կարողանում տօնական զանգահարութիւնը լսել: Շատ կարելի է, որ իմ համեմատութիւնս ուղիղ է, և ես ուզում եմ իմ համեմատութիւնս աւելի առաջ տանել: Կայ նաև «չիկակարմիր» (մորու գոյն) զանգահարութիւն, ինչպէս նաև այդպիսի գոյն: Գրանք երկուսն էլ շատ մօտ են կարմրին, միայն առաւել խոր են, միապաղաղ և քնքուշ: Երբ զանգակը երկար ժամանակ գործածուի, այն ժամանակ նրա ձայնը լարդարւում, կանոնաւորւում է: Նրա

ձայնի մէջ անհետանում են ականջ ծակող կողմերը, և ահա այդ ժամանակ դրա ձայնը կոչւում է շիկակարմիր (մորիի գոյն): Նոյն տպաւորութիւնն է ստացւում նաև երբ մի քանի յարմարաւոր ձայն պահողներ են ընտրւում խմբի մէջ:

Գաշնամուրը Պետրոսի ձեռների տակ փոստային կառքի զանգակների ձայն հանեց:

— Ոչ, — ասաց Մակսիմը. — Ես կ'ասէի, որ այդ չափազանց կարմիր է...:

— Հն, լիշեցի:

Եւ գործիքն աւելի հարթ ձայներ հանեց: Զայները բարձրից, աշխուժով և պայծառ սկսուելով քանի գնում աւելի ու աւելի քնքուշ էին դառնում: Այդպէս են հնչում եռաձի կառքի կամարի տակ յարմարաւոր ընտրութեամբ կախուած զանգակները, երբ կառքի զընգ-զընգոցը հանդարտ ու համաչափ, առանց զիլ հնչման, աւելի ու աւելի խաղաղելով հեռանում է փոռոտ ճանապարհով երեկոյեան անյայտ տարածութեան մէջ, մինչև որ վերջին ձայները կորչում, անհետանում են հանգիստ դաշտերի լուսթեան մէջ:

— Հէնց այդ է, ասաց Մակսիմը: Տարբերութիւնը հասկացար: Մի ժամանակ, — գեռ երեխայ էիր, — մայրդ աշխատում էր քեզ ձայների միջոցով հասկացնել գոյները:

— Այո, միտքս է: Ինչո՞ւ այն ժամանակ չթողիր, որ շարունակէր: Քուցէ կարող կ'լինէի հասկանալ:

— Ոչ, — պատասխանեց ծերունին մտախոհութեամբ, — ոչինչ չէր դուրս գալ: Սակայն, ես կարծում եմ, որ ընհանրապէս գոյներից ու ձայներից ստացուող տպաւորութիւնները հոգեկան որոշեալ խորութեան մէջ միահանգոյն են դարսւում: Ասում ենք՝ — նա ամեն բան կարմիր լուսով է տեսնում: Այդ նշանակում է, թէ մարդս ուրախ տրամադրութեան մէջ է: Միևնոյն տրամադրու-

Թիւնը կարելի է առաջ բերել նաև ձայների որոշեալ համագասուլթեամբ: Առ հասարակ ձայներն ու գոյները համանման հոգեկան շարժումների նշանակներ են:

Ծերունին չիրուխը վառեց և ուշադրութեամբ Պետրոսին նայեցաւ: Կոյրն անշարժ նստած էր և, ըստ երեւոյթին, ագահութեամբ ականջ դնում Մակսիմի ասածներին: «Շարունակեմ արդեօք», մտածեց ծերունին և միքիչ լետոյ, մտախոհութեամբ, կարծես ականայ իւր մը տածուլթեան տարօրինակ ուղղութեան անձնատուր եղած, շարունակեց:

— Հը՛մ, հը՛մ: Տարօրինակ մտքեր են ծնւում գըլխումս...: Պատահակա՛ն երևոյթ է սա թէ բնական, որ մեր արիւնը կարմիր է: Գիտես... երբ գլխումդ մի միտք է ծնւում, երբ այնպիսի երազներ ես տեսնում, որոնց ազդեցութիւնից, վարժներուց լետոյ, գողում ես կամ արտասուում, երբ մտքս բոյսրովին իւր կրքերին է անձնատուր լինում, — այդ նշանակում է, որ արիւնը սրտից աւելի ուժով է խփում և կարմիր առուակներով դէպի ուղեղը հասնում: Եւ նա կարմիր է...:

— Կարմիր... ջերմ..., — մտախոհութեամբ ասաց պատանին:

— Հէնց այդ է, որ կարմիր և ջերմ է: Եւ ահաւասիկ կարմիր գոյնը, ինչպէս նաև «կարմիր» հնչիւնները մեր հոգու մէջ թողնում են լոյս, գրգիռ և կրքի մասին մի գաղափար, որ անուանւում է «ջերմ», բուռն, տաք: Զարմանալի է, որ նկարիչներն էլ կարմրաւուն երանգներին «ջերմ» անունն են տալիս:

Մակսիմը մեկնուելով և իրեն ծխի քուլաներով շրջապատած, շարունակեց:

— Եթէ դու գլխիդ վերևը ձեռքովդ շարժում գործես, կիսաշրջան կ'գծես: Այժմ երևակայիր, որ ձեռք անսահման երկայն է: Եւ եթէ որ այն ժամանակ ձեռ-

քովդ նոյն շարժումն անէիր, անսահման հեռաւորութեան մէջ մի մեծ կիսաշրջան գծած կ'ընէիր.. : Ահա այդպէս էլ մենք հեռու երկինքի կիսագնդածե կամարն ենք տեսնում մեր գլխի վերևը. դա հարթ է, անսահման և կապոյտ.. : Երբ երկինքը կապոյտ ենք տեսնում, մեր հոգու մէջ անգորութեան և պարզութեան տպաւորութիւն ենք զգում: Իսկ երբ սևաթոյր ամպերը լուզուող և պզտոր գծագրութիւններով ծածկում են երկինքը, այն ժամանակ մեր հոգու պարզութիւնն էլ խառնակուում է անորոշ վրդովմունքով: Հօ դու էլ ես ըզգում, երբ մրրկաբեր ամպ է մօտենում:

— Այո, զգում եմ, թէ ինչպէս կարծես մի բան վրդովում է հոգիս... :

— Ուղիղ է: Մենք սպասում ենք, թէ երբ է ամպերի ետևից դարձեալ այդ խորին կապուտակն է երեւալու: Փոթորիկը կանցնի և երկինքը վերստին միևնույնն է մնալու. մենք այդ զիտենք և այդ պատճառով էլ խաղաղ սպասում ենք փոթորկի անցնելուն: Մօրդ աչքերը կտպոյտ են, Եվելինայինը նոյնպէս:

— Ինչպէս երկինքը... — ասաց կոյրն յանկարծ զարթնած քնքշութեամբ:

— Այո: Կապոյտ աչքը պարզ հոգու նշան է համարում: Այժմ քեզ կանաչ գոյնի մասին ասեմ: Երկիրս ինքն ըստ ինքեան սև է, ծառերի բուններն էլ սև կամ գորշ են դարնանը. բայց հէնց որ ջերմ ու լուսաւոր ճառագայթները սկսում են տաքացնել մութ մակերեւոյթները, սկսում են դրանց միջից կանաչ արօտ, կանաչ տերև դուրս գալ: Կանաչի համար լոյս ու ջերմութիւն է պէտք, բայց ոչ չափազանց լոյս ու ջերմութիւն: Դրա համար էլ կանաչը խիստ հաճելի է մարդուս աչքին: Կանաչը ասես թէ մի տեսակ ջերմութեան խառնուրդն է խոնաւ զովութեան հետ. դա

մարդուս լիշեցնում է խաղաղ և գոհ կեանք, առողջութիւն, բայց ոչ կիրք և ոչ էլ այն, ինչ որ մարդիկ երջանկութիւն են անուանում...: Հասկացար արդեօք:

— Ա...չ. պարզ չէ...: Բայց և այնպէս, խնդրեմ շարունակիր:

— Է՛հ, ինչ արած...: Լսիր, շարունակեմ: Քանի ամառը տաքանայ, այնքան էլ կարծես կանաչը կենսական ոյժի առատութիւնից կ'ճնշուի. տերեւները խոնջացած ներքև են խոնարհւում և եթէ արևի տօթն անձրևի խոնաւ զովութեամբ չմեղմանայ, կանաչը բուրովին կարող է գունաթափ լինել: Պրա փոխարէն աշնան վրայ թափացած սաղարթի միջև պտուղն է լցւում ու հասունանում: Պտղի այն կողմը, որ դէպի լոյսն է դարձած, աւելի կարմիր է լինում. ասես թէ բուսական բնութեան կեանքի ամբողջ ոյժը, բոյր կիրքը դրա մէջ լինի կեդրոնացած: Ինչպէս տեսնում ես կարմիր գոյնն այստեղ էլ—կրքի գոյնն է և դա՛ կրքի նշանակն է կազմում: Այդ գոյնը յափրութեան, մեղսագործութեան, կատաղութեան, զայրոյթի և վրէժխնդրութեան գոյնն է: Ամբոխը խռովութիւնների ժամանակ իւր ընդհանուր զգացմունքի արտայայտութիւնը տեսնում է կարմիր գրօշակի մէջ, որը որպէս բոց փողփողում է նրա գլխին...: Բայց գու զարձեայ չես հասկանում:

— Ոչինչ, շարունակիր:

— Հասնում է աշնան վերջը: Պտուղը ծանրացել է. դա պոկ է գալիս և գետին ընկնում...: Նա մեռնում է, բայց նրա մէջ ապրում է սերմը, իսկ այդ սերմի մէջ, «հնարաւոր դրութեամբ», ապրում է նաև նրա ամբողջ ապագան իւր շքեղ սաղարթով և իւր նոր պտղով: Սերմը գետնի վրայ է ընկնում. իսկ երկրի վերև արդէն խոնարհ բարձրանում է սառն արևը, փչում

է սառն քամին, անցնում են սառն ամպերը... Ոչ մի-  
այն կիրքը, հապա նոյն իսկ կեանքն էլ հանդարտուում  
է խաղաղ, աննկատելի կերպով...: Երկիրս աւելի ու ա-  
ւելի իւր սևութեամբ երևան է գալիս կանաչի միջից,  
երկնքի երեսին սառն գոյներ են տիրապետում...: Եւ  
ահա հասնում է այն օրը, երբ այս խաղաղած ու լը-  
ռած, ասես այրիացած երկրի վրայ միլիօնաւոր ձիւնի  
հատիկներ են թափուում, և ամբողջ երկիրս դառնում  
է հարթ ու հաւասար, միագոյն, սառն և... սպիտակ:  
Սպիտակը — սառն ձիւնի գոյնն է, ամենաբարձր ամպե-  
րի գոյնը, — որոնք սահում են երկնային բարձունքի  
անհասանելի ցրտութեան մէջ, — այլև վեհապանծ և  
անպտուղ լեռնային գագաթների գոյնն է...: Պա նշա-  
նակ է անաչառութեան և սառն, բարձր սրբութեան,  
ապագայ անպտուղ կեանքի նշանակ: Իսկ ինչ վերաբեր-  
ւում է սև գոյնին...

— Գիտեմ, — ասաց կոյրը: — Պա նշանակում է —  
չկան ձայներ, չկայ շարժում... գիշեր է...:

— Այո, և դրա համար էլ դա տխրութեան և  
մահու նշանակն է...:

Պետրոսը ցնցուեցաւ և խուլ ձայնով ասաց.

— Ինքզ ասացիր՝ մահուան: Իսկ ինչ համար ամեն  
բան սև է... միշտ և ամեն տեղ սև է:

— Ո՛չ, ուղիղ չէ, — խիստ կերպով պատասխանեց  
Մակսիմը, — քեզ համար գոյութիւն ունին ձայներ, ջեր-  
մութիւն, շարժում... քեզ շրջապատում է սէրը... Շա-  
տերն իրենց աչքերի լոյսը կ'տային փոխարէն այն ա-  
մենի, որ դու անմտաբար արհամարհում ես...: Բայց  
դու չափազանց եսամոլութեամբ գուրգուրում ես քու  
վիշաղ...:

— Այո, — բացականչեց Պետրոսը կրքով, — բայց ես  
աւամայ եմ գուրգուրում վիշտս. որտե՞ղ փախչիմ նրա

ձեռքից, երբ նա ամեն տեղ հետս է:

— Եթէ որ դու կարողանայիր հասկանալ, թէ աշխարհուս այնպիսի վիշտ կայ, որ հարիւր անգամ ծանր է քու վշտից, մի այնպիսի վիշտ, որի հետ համեմատած քու ապահով և կարեկցութեամբ շրջապատուած կեանքդ, երանութիւն է, — այն ժամանակ...

— Սուտ է, սուտ է, — բարկութեամբ ընդհատեց կոյրը նույն չափազանց զրգուած ձևով: — Աերջին աղքատի հետ կ'փոխէի կեանքս, որովհետև նա ինձանից քաղդաւոր է: Կոյրերին ամենեւին հարկաւոր էլ չէ հոգատարութեամբ շրջապատել. դա մեծ սխալ է...: Պէտք է կոյրերին ձգել ճանապարհի վրայ, այնտեղ էլ թողնել, — թող ողորմութիւն խնդրեն: Եթէ ես հասարակ աղքատ լինէի, նուազ դժբաղդ կ'իինէի: Սուտ տիղ կ'մտածէի այն մասին, թէ ինչպէս պէտք է ճաշ ճարեմ, կ'հաշուէի ստացած կուպէկները և կ'վախենայի, թէ քիչ եմ ստացել: Այնուհետև կուբախանայի, որ ժողովարարութիւնս աջող է եղել, այնուհետև փող կը հաւաքէի գիշերելու տեղի համար: Բայց եթէ այդ չը լաջողուէր, այն ժամանակ քաղցից ու ցրտից կ'տանջուէի... իսկ այս ամեն օրական մանր հոգսերից լետոյ ես ոչ մի ազատ ըրպէ չէի ունենալ, և այդ զրկանքներից աւելի քիչ կ'տանջուէի, քան թէ այժմս եմ տանջուում...:

— Կարծում ես, — սառն կերպով հարցրեց Մակսիմը և Եվելինայի կողմը նայեցաւ: Ծերունու հայեացքի մէջ վիշտ և կարեկցութիւն ցուաց: Աղջիկը նստած էր գոգոյն և մտախոհ:

— Աստահ եմ, — լամառութեամբ և կոշտութեամբ պատասխանեց Պետրոսը: — Ես այժմ շատ անգամ նախանձում եմ Եգորին, այն՝ որ զանգակատանն էր: Շատ անգամ առաւօտները զարթնելով, մանաւանդ երբ դուր-

որ բուք ու բորան է լինում, լիշում եմ Եգորին՝— ահա նա բարձրանում է վեր...

— Նա մրսում է, — վրայ բերեց Մակսիմը:

— Այո, մրսում է, գողում, հազում: Եւ նա անիծում է Պանֆիլին, որ մուշտակ կարել չէ տալիս: Յետոյ նա սառած ձեռներով բռնում է թոկերն ու առաւօտեան ժամն է տալիս: Եւ մտռանում է, որ կոյր է...: Որովհետեւ այդտեղ աչք ունեցողն էլ կ'մրսէր...: Իսկ ես չեմ մոռանում և ես...

— Եւ դու անիծելու տեղիք չունիս:

— Այո: Անիծելու ոչ մի տեղիք չունիմ: Իմ կեանքըս լոկ կուրութեամբ է լի: Ոչ որ լանցաւոր չէ, բայց ամենայնպէս աղքատից էլ անբաղդ եմ...

— Չեմ վիճիլ, — սառն կերպով ասաց ծերունին: — Գուցէ և ճշմարիտ է այդ: Յամենայն դէպս, եթէ քու վիճակդ աւելի վատ էլ լինէր, զոնէ գուցէ ինքդ աւելի լաւ կ'լինէիր:

Նա դարձեալ իւր վշտակցական հայեացքը ձգեց աղջկայ վրայ և անթացուպերը թրխկացնելով դուրս գնաց սենեակից:

Այս խօսակցութիւնից յետոյ Պետրոսի հոգեկան դրութիւնն աւելի ևս վատացաւ և նա աւելի ևս խորատուզուեց իւր չարատանջ աշխատանքի մէջ:

Երբեմն նա աջողութիւն էր ունենում՝— նա առ վայրկեան մի գտնում էր այն զգացողութիւնները, որոնց մասին խօսել էր Մակսիմը, և դրանք միանում էին այն գաղափարի հետ, որ նա կազմել էր տարածութեան մասին: Մութ և տխուր երկիրս գնում հեռանում էր մի ինչոր հեռաւորութեան մէջ. նա չափում էր բայց սահման չկար: Իսկ դրա վերևում կար մի ուրիշ բան...: Յիշողութեան միջից անցնում էր գղրգող որստը, լարութիւն առնում ընդարձակութեան

կառքը առաջ շարժուեց, բայց ծերունին դեռ երկար ժամանակ իւր ետէն էր գառնում:

Անուի գրգռիւնը շուտով հեռաւորութեան մէջ լը-  
ռեց: Կոյրերը դարձեալ շարք ընկան և խճուղով առաջ  
շարժուեցին...:

— Թեթեւ ձեռք ես ունեցել, Իւրիչ, ասաց կոյր  
ծերունին: — Շատ լաւ էլ ածում ես...:

Մի քանի րոպէից մէջ տեղի կոյրը հարցրեց.

— Որ Պոչաե ես գնում, սեխա ես արել...: Հոգուդ  
համար:

— Այո, — պատասխանեց պատանին ցած ձայնով:

— Կարծում ես աչքդ կ'ըսացուի...: — նորից հարց-  
րեց նա գառն ժպիտով...:

— Պատահում է, — փափկութեամբ ասաց ծերու-  
նին...:

— Շատ եմ ման եկել, այգալիսի բանի չեմ պատա-  
հել, — խոժոռած նկատեց ծաղկատարը և նրանք դար-  
ձեալ լուռ իրենց ճանապարհը շարունակեցին:

Արևն աւելի ու աւելի էր բարձրանում. երևում  
էին միայն խճուղու սպիտակ գիծը, որ լարի պէս ձը-  
գուած էր ուղիղ, կոյրերի մութ պատկերն ու առաջից  
գնացող կառքի սև կէտը: Կառքը Կիւ էր գնում, կոյ-  
րերը կրկին գիւղական ճամբան գուրս գալով գէպի Պո-  
չաե ուղղուեցան:

Շուտով Մակսիմը Կիւից նամակ ուղարկեց: Նա  
գրում էր, թէ երկուսն էլ առողջ են և ամեն բան  
լաւ է գնում:

Իսկ այդ միջոցին երեք կոյրերը միշտ առաջ էին  
գնում: Այժմ երեքի քայլերն էլ համաչափ էին: Առ-  
ջևից կրկին փայտը թրխթրխկացնելով գնում էր Կան-  
դրբան, որ ճանապարհները շատ լաւ գիտէր և տօնե-  
րին ու տօնալաճառներին միջոցին միշտ կարողանում էր

իւր ժամանակին հասնել մեծ գիւղերը: Ամբօխը փոքրիկ խմբի ներդաշնակ ձայների վրայ հաւաքուած էր նրանց շուրջ և փողերը զնգզնգալով շարունակ թափուած էին Կանդըբայի գլխարկի մէջ:

Երկիւղն ու վրդովմունքը վաղուց էին պատանու երեսից հեռացել և տեղի տուել մի այլ զգացմունքի: Սմեն մի նոր քայլին նրան ընդ առաջ էին գալիս անձանօթ, ընդարձակ, անպարփակելի աշխարհի հնչիւնները, որոնք այժմ փոխարինում էին խաղաղ ապարանքի ծով և օրօրող շշունչին...: Անլոյս աչքերը լայնանում էին, կուրծքն ընդարձակուած, ականջն առաւել և սրանում. նա կարողացաւ ճանաչել իւր ուղեկիցներին՝ բարեհոգի Կանդըբային և մաղասկոտ Կուզմային. երկար ժամանակ թափառեց չուժակների ճռնչացող սալերի հետ, գիշերներ անց կացրեց դաշտում խարոյկի մօտ, լրսեց տօնավաճառանոցների ու վաճառանոցների ժխորն ու աղմուկը, ճանաչեց աչազուրկների ու տեսնողների վշտերը, որից նրա սիրտը վշտահար ճճւում էր...: Եւ զարմանալի բան — նա այժմ այդ բոլոր զգացողութիւնների համար իւր հոգու մէջ տեղ էր գտնում...: Նա բոլորովին ընտելացել էր կոյրերի երգին և Օր օրի վրայ, այդ մեծ ծովի աղմուկի ներգործութիւնից, նրա հոգու խորքում աւելի և աւելի լուծւում էին անձնական ձգտումները գէպի անհնարինը...: Եւ իւր սուր չիշողութեամբ նա իսկոյն ըմբռնում էր ամեն մի նոր երգ և մեղեդի, իսկ երբ ճանապարհին սկսում էր իւր գործիքի վրայ փորձել անել, մինչև անգամ Կուզմայի մաղձոտ գէմքի վրայ էլ հանդարտ գորով էր երևում: Քանի մօտենում էին Պոչաւին, այնքան էլ կոյրերի խմբերն էին աւելանում:

Աշնան վերջերքին, ի գարմանս ամենքի, պանիչը անակնկալ կերպով, աղքատի շորեր հագած, երկու կոյրերի հետ ձիւնապատ ճանապարհով ապարանք վերադարձաւ: Բոլորն էլ այն էին ասում, թէ ուխտ արած լինելով Պոչաւ էր գնացել, որպէս զի Պոչաւի Աստուածածնից բժշկութիւն գտնէ:

Սակայն նրա աչքերը դարձեալ առաջուայ նման վճիտ էին և առաջուայ նման էլ չէին տեսնում: Բայց հոգին, անկասկած, բժշկուել էր: Սարսափելի մղձաւանջը կարծես բոլորովին անհետացել էր ապարանքից...: Երբ որ Մակսիմը, որ շարունակում էր Կիւեից գրել, վերջապէս նոյնպէս վերադարձաւ, Աննա Միխայլովնան այս խօսքերով զիմաւորեց նրան.

— Ես երբէք, երբէք այդ արածդ չսխալի ներեմ:— Բայց նրա գէմքը բոլորովին հակասում էր իւր խիստ խօսքերին...:

Երկար գիշերներին Պետրոսը պատմում էր իւր թափառական կեանքի մասին, և մթնշաղի միջոցին դաշնամուրն այնպիսի մեղեդիներ էր ածում, որ առաջ ոչ ոք լսած չէր...: Կիւ գնալու միտքը մի տարով լետած գեցին և ամբողջ ընտանիքը Պետրոսի յոյսերով ու ծրագրներով էր ապրում...:

---

Է ԳԼՈՒԽ

I

Նոյն աշնան Էվիլինան ծերունի Եասկուլսկիներին լայտարարեց, որ հաստատապէս վճռել է «ապարանքի» կոյրի հետ ամուսնանալ: Պառաւ-մայրը լաց եղաւ, իսկ հայրը, պատկերների զիմացը աղօթելուց լետոյ լայտ-

նեց, թէ իւր կարծիքով հէնց այդպէս է Աստուծոյ կամ-  
քը այդ խնդրի վերաբերմամբ:

Հարսանիքն արին: Պետրոսի համար նորաբողոքը, եր-  
ջանիկ կեանք սկսուեցաւ, բայց այդ երջանկութեան մէջ  
իսկ մերթ ընդ մերթ մի տեսակ անհանգստութիւն էր  
երևում՝ — ամենաքաղցր բոստաններում նա այնպէս էր ժպտ-  
տում, որ այդ ժպտի արանքից երևան էր գալիս մի տը-  
խուր տարակուսանք, թէ ինքն այս երջանկութիւնն օրի-  
նական և հաստատուն չէ համարում: Իսկ երբ որ նրան  
հաղորդեցին, թէ գուցէ նա և հայր լինի, նա երկիւղի  
արտայայտութեամբ լսեց այդ լուրը:

Բայց և այնպէս նրա ներկայ կեանքը, որ անց էր  
կացնում ինչպէս լրջօրէն իւր վրայ աշխատելով, այն-  
պէս և վրդովմամբ իւր կնոջ և որդու վրայ միտք անե-  
լով, նրան ժամանակ չէին տալիս իւր առաջուայ ան-  
պտուղ տանջանքների վրայ կեդրոնանալու: Ժամանակ  
առ ժամանակ, այս հոգսերի միջոցին էլ, իւր հոգու մէջ  
դարձեալ լտրութիւն էին առնում իւր լիշողութիւնը՝  
կոյրերի խղճալի ողբի մասին: Այդ ժամանակ նա գնում  
էր գիւղ, որի ծայրին այժմ Փէօդոր Կանգրբայի նոր  
խրճիթն էր շինած: Կանգրբան վեր էր առնում իւր դոր-  
ծիքը, կամ երկար ժամանակ նրանք նստած զրոյց էին  
անում, և Պետրոսի մտքերը խաղաղ ընթացք էին ստա-  
նում, իսկ ծրագրներն նորից հաստատուում, ամրանում:

— Նա այժմ դէպի արտաքին լուսական գրողամենե-  
րը նուազ զգայուն էր դարձել, իսկ առաջուայ ներքին  
աշխատութիւնն հանգստացել էր: Օրգանական վրդովիչ  
ոյժերը քնել էին. և այլ ևս կամքի գիտակցական ձրգա-  
մամբ չէր զարթեցնում նրանց— որպէս զի տարբեր զգա-  
ցողութիւններն ի մի ձուլէ: Այս անպտուղ տանջանքի  
տեղ այժմ կենդանի լիշողութիւններ և լուսեր էին բըռ-  
նել: Բայց, ո՞վ զիտէ, — հոգեկան անդորրութիւնը գուցէ

նպաստում էր միայն օրգանական անգիտակ աշխատութեանը, և այդ նսեմ, բաժան-բաժան զգացողութիւնները միմեանց ընդառաջելու համար աւելի ևս աջողութեամբ ճանապարհ էին բանում նրա ուղեղի մէջ: Այսպէս, շատ անգամ ուղեղը մարդուս քնած ժամանակն ակատորէն այնպիսի գաղափարներ ու պատկերներ է ստեղծագործում, որ նա երբէք կամքի միջոցով չպիտի կարողանար ստեղծագործել:

## II

Նոյն այն սենեակում, ուր Պետրոսն էր ծնուել, լռութիւն էր տիրած և այդ լռութեան մէջ միայն եքեղի հեկեկացող լացի ձայնն էր լսուում: Նրա ծնուելուց արդէն մի քանի օր էր անցած, և Էվելինան արագ-արագ կազդուրւում էր: Բայց դրա փոխարէն Պետրոսը այդ քանի օրերը ճնշուած էր՝ կարծես մօտալուտ վտանգ զգալով:

Բժիշկը, մանկանը իւր ձեռքն առնելով, տարաւ պատուհանին մօտիկ տեղաւորեց: Նա արագութեամբ բաց արաւ վարագոյրը, ներս թողեց պալժառ լոյսի ճառագայթը և գործիքները ձեռին խոնարհեցաւ մանկան վրայ: Պետրոսն էլ գլուխը քաշ ձգած, դարձեալ միևնոյն կերպով ճնշուած ու անզգայ, այդտեղ էր նըստած: Ըստ երևոյթին նա բժշկի արածներին ոչինչ նշանակութիւն չէր տալիս և կանխօրէն գիտէր հետևանքը: — Անշուշտ նա կօր է, — կրկնում էր Պետրոսը: — Երանի ծնուած չլինէր:

Երիտասարդ բժիշկը չէր պատասխանում և լուռ իւր գիտողութիւններն էր շարունակում: Վերջապէս նա վեր գրեց իւր աշադէտ գործիքն ու սենեակի մէջ լսուեց նրա վստահ և հանգարտ ձայնը:

— Ի՞նչը կձկուում է, կասկած չկայ, երեխան տեսնում է:

Պետրոսը ցնցուեց և արագապէս ոտքի ելաւ: Այդ շարժումն ապացոյց էր, որ նա բժշկի խօսքերը լսել էր. բայց նրա դէմքի արտայայտութեանը նայելով, պէտք էր կարծել, թէ նա այդ խօսքերի իմաստը չէր հասկացել: Իողգոջուն ձեռքով պտուհանի տախտակին լեցած, նա կանգնած տեղը սառած մնաց՝ նրա գրգռոյն դէմքը վերև էր նայում, գիմագծերն անշարժ էին:

Մինչև այդ բոպէն նա մի տարօրինակ լուզման մէջ էր: Նա կարծես ինքն իրեն չէր զգում, սակայն, միևնոյն ժամանակ նրա բոլոր ջղերն արթուն էին և ակնկալութիւնից գողգողում:

Նա ճանաչում էր խաւարը, որով շրջապատուած էր: Նա անշատել էր իրենից այդ խաւարը, նա զգում էր, որ դա իրենից դուրս է՝ իւր բոլոր անսահմանութեամբ: Խաւարը կուտակուում էր իւր վրայ, իսկ ինքը գրկում էր նրան, կարծես ուզում էր մենամարտել հետը: Նա ընդառաջ էր գնում այդ խաւարին և ուզում էր իւր գաւակը պաշտպանել այդ խաւ խաւարի անպարփակելի և տատանուտ ովկիանոսի դէմ:

Եւ, քանի բժիշկն իւր պատրաստութիւններն էր տեսնում, բոլոր ժամանակ նա այդ դրութեան մէջ էր: Նա առաջ էլ էր վախենում, բայց առաջ նրա սրտում յուսոյ նշույլներ կային, բայց այժմ տաժանելի և զարհուրելի վախը լարման ծայրահեղ աստիճանին էր հասել և տիրապետել վերջին աստիճանի գրգռուած նեարդերին, իսկ յօյսը, սրտի ամենախոր գաղտնարաններում թագ կացած, կտրուել էր: Եւ յանկարծ այս խօսքերը, թէ «երեխան տեսնում է», տակն ու վրայ արին նրա արամադրութիւնը: Վախը ական թոթափել յորձանք տուաւ, յօյսն էլ վայրկենապէս հաւտտ դարձաւ և լու-

սաւորեց կոյրի զգայուն կերպով ոգևորուած հոգեկան կազմը: Դա յանկարծական լեղաշրջումն էր, կատարեալ հարուած, որ կայծակի նման շշմեցնող, պայծառ ճառագայլի պէս ներս խուժեց խաւար հոգու մէջ: Բժըշկի երկու խօսքերը կարծես այրել, կրակէ ճանապարհ էին բացել նրա ուղեղի մէջ...: Կարծես նրա ներսում մի տեղ կայծ բորբոքուեց և լուսաւորեց մարմնակազմի բոլոր գաղտնարանները... նրա ներսն ամեն ինչ ցնցուեց, և նա ինքն էլ գողգողաց, ինչպէս գողգողում է պինդ ձգուած լարը յանկարծական հարուածից:

Եւ նրա դեռ նախ քան ծնուելը խաւարած աչքերի առաջ, ցոլացող փայլակից լեռոյ, յանկարծ տարօրինակ ուրուականներ լուսավառուեցան: Ճառագայլիներ էին գրանք, թէ հնչիւններ, նա իրեն հաշիւ չէր տալիս: Դրանք փայլում էին՝ նման երկնակամարի գմբէթի, թաւալուծ էին՝ նման երկնքի երեսի պայծառ արեգական, ալեկոծուծ էին՝ նման կանաչ տափաստանների շշուռչին ու խշխշոցին, տատանուծ էին՝ նման մտախոհ թեղօշի տերեւներին:

Սա միայն առաջին ակնթարթն էր, և նրա լիշուղութեան մէջ միայն առաջին ակնթարթի խառն զգացողութիւնները մնացին: Միւս բոլոր մնացեալը նա լեռոյ մտահան էր արել: Նա միայն յամառութեամբ սլընդում էր, թէ ալգ մի քանի ակնթարթի միջոցին նա տեսել է:

Թէ ինչ էր տեսել, և ինչպէս էր տեսել, և տեսել էր իսկապէս, — բոլորովին անյայտ մնաց: Նրան շատերն ասում էին, որ ալգ անկարելի է, բայց նա իւրն էր պնդում և հաւատացնում, թէ տեսել է երկինքն ու երկիրս, մօրը, կնոջն ու Մակսիմին...

Մի քանի վայրկեան նա կանգնած մնաց՝ դէմքը պայծառացած ու վերև բարձրացրած: Նա այնքան տա-

րօրինակ էր, որ ամենքն էլ գէպի նրան դարձան և լուեցին: Ամենքին էլ այնպէս էր թւում, թէ այդ սե- նեակի մէջ տեղը կանգնած մարդը, որին խիստ լա- ճանաչում էին, նա չէր, հապա մի ուրիշ, անծանօթ մէկը: Իսկ այն, առաջուայ մարդը, լսնկարձ տիրած խորհրդաւորութեամբ շրջապատուած, անհետացել էր:

Եւ նա այդ խորհրդաւոր դրութեան մէջ միայն մի քանի վայրկեան էր մենակ մնացել...: Ժամանակ անց- նելուց յետոյ այդ վայրկեաններից մնացել էր միայն գո- հացում ստանալու զգացմունքն ու այն տարօրինակ հա-ւատը, թէ այն ժամանակ ինքը տեսել է:

Կարող էր մի այդպիսի բան պատահել:

Կարող էր լինել, որ լուսական անորոշ և անմե- կին զգացողութիւնները, որոնք մեզ անլուս ճանապարհ- ներով թափանցում էին խաւար ուղեղի մէջ, այն ըո- պէններին, երբ կոյրն ամբողջովին սարսման մէջ էր և ձգտում էր ընդառաջելու արև օրուան, — այժմս, ոգե-ւորութեան յանկարծական ըոպէին, արտայայտուէին ուղեղի մէջ, ինչպէս որ լուսանկարչական միզամած նեգատիւի (տպակի) վրայ արտայայտուում են պատկեր- ները...:

Եւ նրա անլուս աչքերի առաջ պատկերացաւ կա- պոյտ երկինքը և պայծառ արևը, և վճիտ գետակն այն բլրակի հետ, որի վրայ նա այնքան շատ տպաւո- րութիւններ էր ստացել և դեռ մանկական հասակում այնքան լաց էր եղել...: Եւ ապա ջրաղացը, և աստղա- զարդ գիշերները, երբ նա սաստիկ տանջւում էր, և տխուր ու լուռ լուսինը...: Եւ փոշելից գիւղական ճա- նապարհը, և խճուղու գիծը, և սսլերի շարքն իրենց ախիւների փայլփլուն դողերով, և խայտածամուկ ամ- բոխը, որի մէջ նա ինքը կոյրերի երգն էր երգել...:

Գուցէ նրա ուղեղի մէջ կուտակուած էին, ցնո-

րական երևույթների նման, անյայտ լեռներն, և հեռուն ընկած էին անյայտ հարթավայրերը, և երևակայական հրաշալի ծառերը տատանոււմ էին անյայտ գետերի խողազ մակերևութի վրայ, և երևակայական արեգակն իւր պայծառ լուսով լուսաւորում էր այս պատկերը, — այն արևը, որին նայել էին նրա նախորդների անթիւ սերունդները...:

Կամ գուցէ այս բոլորը անկերպարանք զգացողութիւններ կազմած վիտտում էր նրա խաւար ուզեղի այն խորքում, որի մասին խօսել էր Մակսիմը, և ո՞տեղ ճառագայթներն ու ձայները միապէս գուարթ կամ տխուր, ուրախ կամ թախծագին տպաւորութիւն են գործում...:

Եւ նա գուցէ լետոյ լիշեւ էր այն վայելչագեղ դաշնակը, որ առ վայրկեան մի հնչել էր նրա հոգումէջ, մի դաշնակ, որի մէջ ի մի էին ձուլուած բոլոր նրա կեանքից ստացած տպաւորութիւնները, բնութիւնից ստացած զգացողութիւնները և կենդանի սէրը:

Ո՞վ գիտէ...:

Միայն այսքանս էր լիշում, թէ ինչպէս այդ խոր հրդաւոր գրութիւնն իջել էր իւր վրայ և ինչպէս հեռացել էր իրենից: Այդ վերջին ակնթարթին պատկեր-  
ձայներն իրար խառնուել, իրար էին հիւսուել՝ զնգզնգալով ու տատանուելով, գողգողալով ու լռելով, ինչպէս գողգողում է և լուում ձիգ քաշած լարը՝—նախ բարձր և ուժեղ կերպով, ապա աւելի ու աւելի նուաղ, հազիւ լսելի ձայնով...: Այնպէս էր թւում, թէ մի բան հսկայական շառաւղի վրայով գլորում է գէպի խոլ խաւարը...:

Ահա դա գլորուեց և լռեց:

Խաւար և լուս թիւն...: Գեւ մի ինչ որ անմեկին երևույթներ փորձում են վերածնուել խորին մթութեան

միջից, բայց դրանք արդէն ոչ ձև ունին, ոչ եղանակ,  
ոչ գոյն...: Միայն ներքևում մի տեղ հեռուից հնչե-  
ցին ձայնաշարերի հիւսերը, խայտաճամուկ շարքերով  
ակօսեցին խաւարը և նոյնպէս գլորուեցան տարածու-  
թեան մէջ.....:

Սյն ժամանակ յանկարծ արտաքին ձայները դար-  
ձեալ իրենց սովորական ձևով հասան նրա ականջին:  
Նա կարծես զարթնեց, բայց դեռ էլի կանգնած էր  
պայծառացած և բերկրալից, և մօր ու Մակսիմի ձեռ-  
ներն էր սեղմում:

—Սյա ինչ եղաւ քեզ,—վրդովուած ձայնով հարց-  
րեց մայրը:

—Ոչինչ... ինձ թւում է, թէ ես... ձեզ բոլորիդ  
տեսայ: Ես հօ... քնած չեմ:

—Իսկ անի՞ստ,—յուզուած հարցրեց մայրը:—Յիշում  
ես, պիտի լիշէս արդեօք:

Կոյրը խոր թառանջ քաշեց:

—Ոչ, — պատասխանեց նա ուժգնութիւն գործ  
դնելով:—Բայց վնաս չունի, որովհետեւ... ես այդ ա-  
մենը... նրան... երեխին... և ամենքին... տուի:

Նա օրօրուեց և ուշքը կորցրեց: Նրա գէմքը դեղ-  
նեց, բայց բերկրալից գոհութեան ցոլքը դեռ խաղում  
էր նրա գոգոյն գէմքի վրայ:

Թ...  
M  
2

## Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Երեք տարի էր անցել:

Կիււում, կոնտրակտի \*) միջոցին խուռն ժողովուրդ էր հաւաքուած մի օտարոտի երաժշտի նուագը լսելու համար: Նա կոյր էր, բայց հրաշալի համբաւ էր պըտըտում նրա երաժշտական տաղանդի և նրա անձնական ճակատագրի մասին: Պատմում էին, որպէս թէ թափառաշրջիկ կոյրերի խումբը նրան մանուկ հասակում գողացած է եղել մի հարուստ ընտանիքի միջից, մինչև որ յայտնի պրոֆեսսորը ուշադրութիւն է դարձրել նրա երաժշտական գարմանալի տաղանդի վրայ: Ուրիշներն ասում էին, թէ նա ինքն է, մի ինչ որ սիրալին գիպուածից դրդուած, գնացել մուրացկանների մօտ, Ինչ և իցէ, կոնտրակտի դահլիճը լեփ լեցուն էր, և արգիւնքը (որ հասարակութեան համար անյայտ բարեգործական նպատակի էր յատկացրած) կատարեալ էր:

Գահլիճում խորին լուութիւն տիրեց, երբ դարեւանդակի վրայ երևաց խոշոր, գեղեցիկ աչքերով և զբոգոյն դէմքով երիտասարդը: Ոչ ոք չէր կարծիլ թէ նա կոյր է, եթէ որ աչքերն անշարժ չլինէին և եթէ նրան չառաջնորդէր մի նորատի, խարտեաշ կին, ինչպէս ասում էին, երաժշտի կինը:

— Զարմանալի չէ, որ նա այդպէս զօրեղ տպաւորութիւն գործէ,— քննադատի մէկը խօսում էր հասարակութեան մէջ:— Զարմանալի եղբերգական կերպարանք ունի:

Եւ արգարև, այս մտադիր ուշադրութիւն արտայայտող զբոգոյն դէմքը, և անշարժ աչքերը, և ամբողջ

\*) Յիշեցնենք, որ Կիւի տօնավաճառանոցը կոնտրակտ է կոչուում: Մ. Հ.

կերպարանքը մարդկանց տրամադրում էին հանգիստաօտօս լինելու մի առանձին, անսովոր բանի:

Հարաւային-Ռուսիայի հասարակութիւնը առ հասարակ իւր ազգային մեղեդիները սիրում է և զնահատում, բայց այստեղ նոյն իսկ կոնտրակտ եկած խառնիճազանճ ամբոխն անգամ մի անգամից ենթարկուել էր երաժշտական չափազանց անկեղծ արտայայտութեան ներգործութեանը: Հայրենի բնութեան կենդանի զգացմունք և ժողովրդական մեղեդիի անմիջական աղբիւրների հետ զգաստ ինքնուրոյն կապ էր արտայայտուում այն յանպատրաստից հնչող եղանակների մէջ, որ հոսում էր կոյրի մատներէ տակից: Այդ եղանակը, որ հարուստ էր զոյներով, զիւրաթեք էր և երգեցիկ, հնչուն հոսանքի նման առաջ էր խաղում՝ մերթ բարձրանալով որպէս հանգիսաւոր օրհներգ, մերթ զեղգեղելով որպէս սրտաբուխ տխուր նուագ: Ժամանակ առ ժամանակ թւում էր՝—մէկ՝ փոթորիկն է զղրգալով որոտում երկնքի երեսին անսահման տարածութեան մէջ ճայթելով, մէկ՝ լոկ տափաստանի քամին է մեղմիկ հնչում արօտի մէջ, բլրակի վրայ՝ անցեալի անմեկին անուրջքները երգելով:

Երբ կոյրը դադար առաւ, ահագին դահլիճը լցուեց հիացմամբ պաշարուած ամբոխի բուռն ծափահարութեամբ: Կոյրը զլուխը քաշ զցած նստել էր և զարմացած ականջ զնում այս զղորդին: Բայց ահա նա դարձեալ բարձրացրեց ձեռները և ստեղներին խփեց: Բազմամբոխ դահլիճն ական թոթափել լուեց:

Այդ միջոցին ներս մտաւ Մակսիմը: Նա ուշադրութեամբ զիտեց ամբոխը, որ մի զգացումով համակուած իւր հրաբորբոք, անյագ աչքերը կոյրին էր սևեռած:

Ծերունին ունկնդրած սպասում էր: Այս ամբոխի մէջ ամենից աւելի նա էր հասկանում այս հնչիւնների կենդանի զրաման: Նրան թւում էր, թէ կոյրի յան-

պատրաստից արտադրած այս գորեղ նուազը, որ այսպիսի ազատութեամբ բղխում էր կոյրի հոգուց, յանկարծ, առաջուայ նման, կընդհատուի մի այնպիսի լուզիչ, ցաւագար հարցմամբ, որ կարող է նոր վերք բանալ իւր կոյր սանի հոգու մէջ: Բայց ձայները քանի գնում աճում էին, ամբանում, լրանում, աւելի ու աւելի տիրանում և նելգործում միացած և շնչասպառ ամբոխի վրայ:

Եւ քանի Մակսիմն աւելի ականջ էր դնում, այնքան էլ կոյրի նուազի մէջ պարզ կերպով լսում էր իրեն յայտնի եղանակը:

Այո սա նոյնն է, այդ աղմկալից փողոցը: Լուսագեղ, որոտընդոտ, կենսալի ալիքը փշրուելով, փայլելով և հազարաւոր հնչիւնների բաժանուելով առաջ է գլորուում: Գա մերթ բարձրանում է, մեծանում, մերթ կրկին իջնում և հեռաւոր, անլուռ զրգոց դառնում և բոլոր ժամանակը պահպանում իւր հանդարտ, սիրուն-անկիրք, սառն և անկարեկից ձևը:

Եւ յանկարծ Մակսիմի սիրաբ կոտրուեց: Առաջուայ նման երաժշտի ձևների տակից հառաչանք դուրս եկաւ:

Գուրս եկաւ, հնչեց և սառած մնաց: Եւ դարձեալ կենդանի գղորղը հնչեց՝ առաւել<sup>և</sup> պայծառ և գորեղ, փայլուն և շարժուն, երջանիկ և լուսավառ...

Այս լոկ անձնական հառաչ, լոկ կոյր տանջանք չէր արգէն: Արտասուքի կաթիլները դուրս ծորեցին ձերունու աչքերից: Արտասուք էր երևում նաև նրա հարեանների աչքերի մէջ:

— Նրա աչքը բացուել է արդարև, այո, նրա աչքը բացուել է, — մտածում էր Մակսիմը...

Պայծառ և առույգ մեղեդու միջից, որ տափաստանի քամու նման երջանիկ էր հնչում և ազատ, և որ-

պէս դա՛ անհոգ, կեանքի խալտաճամուկ և ընդարձակ ազմուկի միջից, ժողովրդական երգի մերթ թախճալի և մերթ վեհ եղանակի միջից, աւելի ու աւելի լաճախ աւելի ու աւելի լամառօրէն ու զօրեղ կերպով դուրս էր պրծնում մի ինչ որ սրտաճմլիկ ձայն:

— Այդպէս, այդպէս, զաւակս, — իւր մտքում քաջալերում էր Մակսիմը, — ուրախութեան և երջանկութեան միջոցին վրայ հասիր դրանց...:

Մի րոպէից արդէն ահագին դահլիճի մէջ կախարդուած ամբոխի վրայ զօրեղ և սրտաճմլիկ կերպով միմիայն կոյրերի երգն էր իշխած:

— Ողորմութիւն արէք... ողորմեցէք:

Բայց դա լուի ողորմութեան խնդիր չէր և ոչ խըղճալի աղերս, որ խեղդուում է փողոցի ժխորի մէջ: Դրա մէջ զար այն ամենը, ինչ որ առաջ էլ կար, երբ, դրա ազդեցութիւնից, Պետրոսի դէմքը գունատուել էր և նա չկարողանալով գիմանալ իւր սիրտը կրծող ցաւին թողել էր դաշնամուրն ու փախել: Այժմ նա իւր մէջ յաղթել էր այդ փոքրօգութիւնը, և կենսական ճշգրութեան խորութեամբ ու սարսափով ընկճում էր այս ամբոխի հոգիները...: Դա մի խաւար էր պոյճառ լոյսի վրայ, դա վշտի լիշողութիւն էր՝ երջանիկ կեանքի մէջ...:

Կալճես ամբոխի գլխին կայծակ լինէր արաքած և ամեն մի սիրտ դողդողում էր, հէնց իմանաս կոյրը իւր արագ սահող ձեռներով շօշափելիս լինէր նրանց սիրտը: Դաշնամուրը վաղուց էր չուել, բայց ամբոխը մեռելային լուութիւն էր պահում:

Մակսիմը գլուխը խոնարհած մտածում էր.

«Այո, նրա աչքը բացուած է...: Նա իւր հոգու մէջ փոխանակ կոյր և եսական անյագ տանջանքի կրում է կեանքի զգացողութիւնը, նա զգում է և մարդկային վիշտ, և մարդկային բերկրանք. նրա աչքը բացուել է

և նա կարող կ'ընի բաղաւոր մարդկանց լիշեցնել, թէ աշխարհումս անբազմ մարդիկ էլ կան...»:

Եւ ծերունի զինուորականն աւելի ու աւելի ցած էր խոնարհում իւր գլուխը: Ահա առիկ ինքն էլ կատարեց իւր գործը, ինքն էլ իգուր չէր սպրել աշխարհումս. դրան ապացոյց էին այս կատարեալ ուժը, այս տիրական հնչիւնները, որ զեզուած էին դահլիճի մէջ, իշխել էին ամբօրի վրայ . . . . . :

Այսպէս ահա առաջին սնգամ ասպարէզ մտաւ կոյր երածիշար:

Ապագայի հ  
1912 թ. 13  
28 / 10 / 1912  
13  
28

1912 թ. 13

Վ Ե Ր Զ

Սոյս շքերտ  
Բուկու  
Մամբուս  
2-սերունի  
Հարստիկ  
Էլեւս  
Կարտուսի  
Սարկուս  
Բարսաբուս  
Եւկուս  
Սոյս  
Չեւկիս  
Կրկուս

## Երես Տող

5	20—23	իսկ շինականներին... որ ամենախաղաղ	բայց ներողամիտ էր դէպի շինականներին այնպիսի կա- մայականութիւնն ու կոպ- տութիւնը, որոնց
12	24	շօջափման	շօջափման
16	10	կողկից	կողբից
16	32	ամպերով	ուճպերով
19	21	և եկող	եռ եկող
20	2—3	համատկերի	համապատկերի
23	10	Մակսիմի	Մակսիմը
25	4	և	,
34	7	Վօշբի	Վօշկի
35	6	իւր	իւր հոգու
44	23	ածած	օծած
46	11	ամեն	ամեն մի
>	25	բաղցրերգահ	բաղցրերգակ
47	13	զգաստ	զգաստ
48	21	լոսել	լսել
79	ծան. 4	էնցիկլոպեդիայի	էնցիկլոպեդիան
83	5	յշյերը	յշյերը,
>	28	ինչ նրան	ինչ որ
85	3	երկնից	իրննից
>	4	խուսափող	խուսափող
88	ն. 4	շեղոււմ	շեղոււմ
91	ն. 7	խուրդոնից	խուրդանից
99	17	էր	էլ
102	14	խաղացել	խաղաղել
109	ն. 10	և	ևս



6





